

«Զորավար Սեպուհ» պատմաքաղաքական վերլուծական կենտրոն

«Zoravar Sepouh» historical-political analytical center

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ԹԻՎ 6(17)

HISTORY AND POLITICS

ACADEMIC JOURNAL

№6(17)

ԵՐԵՎԱՆ-2021

Հանդեսը տպագրվում է «Զորավար Մեպուհ» պատմաքաղաքական վերլուծական կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Խմբագրական խորհուրդ

Աշոտ Ենգոյան, Արմեն Ճուղուրյան, Արմեն Սահակյան, Բագրատ Էսդուգյան (Թուրքիա, Ստամբուլ), Գարիկ Քեռյան, Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյան, Էդիկ Մինասյան, Ժիրայր Լիպարիտյան (ԱՄՆ, Բոստոն), Հովսեփ Աղաջանյան, Մարտին Գիլավյան, Վալերի Միրզոյան, Վալերի Թունյան, Ռաֆիկ Նահապետյան

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Արտաշես Ղազարյան

Պատասխանատու քարտուղար՝ Թամարա Սարգսյան

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՄՆ ԿՈՂՄԻՑ ՀՀ ՄԱՆԴԱՏԻ ՍՏԱՆՁՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԵՎ ԴՐԱ ՁԱԽՈՂՄԱՆ ՊԱՌՃԱՌՆԵՐԻ ՔՆՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Բանալի բառեր – ԱՄՆ, Վիլսոն, Հայաստանի մանդատ, քաղաքական գործընթաց, դաշնակիցներ, Թուրքիա, Հարբորդ, Բրիստոլ, Սենատ, քեմալական շարժում, բոլշիկներ, Սևրի պայմանագիր, Լոզանի խորհրդաժողով, պայմանագիր:

ԱՄՆ նախագահ Վիլսոնը 1918թ. հունվարի 8–ին իր երկրի քաղաքական դիրքորոշումն արտահայտեց «14 կետերով», որոնցից 12–րդ կետը վերաբերում էր Թուրքիայի լծի տակ տառապած քրիստոնյա ժողովուրդներին: Այնտեղ ասվում էր. «Օսմանյան կայսրության թուրքական մասերը իրենց ներկայիս կազմով պետք է ստանան ապահովված և հաստատուն վեհապետություն: Իսկ ներկայումս թուրքերի իշխանության տակ գտնվող մյուս ազգությունները իրենց գոյության համար պետք է ստանան աներկբա երաշխիք, ինչպես նաև ինքնուրույն զարգացման անխախտելի պայմաններ»[1]:

Այստեղ կարևոր է այն, որ ԱՄՆ-ը վերջապես Թուրքիայի ճնշված փոքրամասնությունների նկատմամբ հանդես է գալիս քաղաքական դիրքորոշմամբ, որը չի նախատեսում նրանց անկախություն կամ ապակենտրոն վիճակ: Նույնիսկ նա դեմ չէր Թուրքիայի՝ որպես պետության, քաղաքական ասպարեզում մնալուն:

Գերմանիայի և Թուրքիայի անվերապահ կապիտուլյացիայից հետո, Փարիզի վեհաժողովում ԱՄՆ-ը մտնում է «Չորսի» խորհրդի մեջ՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի հետ միասին: Այս խորհուրդը ճանաչում է հայ ժողովրդի՝ սեփական պետություն ունենալու իրավունքը և որոշում է ստեղծել միջազգային մի հանձնախումբ, որը տեղեկություններ պետք է հավաքեր նախկին Օսմանյան կայսրությունից անջատվելիք տարածքնե-

[1] **A. W. V. Temperlev,** A History of the Pease Conferense, 1926, 6, p.26.

րի վրա ապրող կամ, հայության պարագայում, ապրած ժողովուրդների մասին: Սակայն, այդ հանձնախումբը չի կազմվում: Կարծում ենք՝ պատճառն այն էր, որ Անգլիան և Ֆրանսիան այնքան էլ շահագրգռված չէին նման հանձնախմբով: Այնուամենայնիվ, ամերիկացիները 1919 թ. հունիս–հուլիս ամիսներին կատարում են ուսումնասիրություններ և քննություններ: ԱՄՆ-ի երկու պատվիրակների՝ Քինկի և Քրեյնի ծրագրով Օսմանյան կայսրության Փոքր Ասիայի տարածքում պետք է ստեղծվեին երեք պետություններ, որոնցից մեկը պետք է լիներ հայկական՝ ԱՄՆ-ի հոգատարության տակ: Առավել խորը ուսումնասիրություն կատարելու նպատակով Արևելյան Անատոլիա և Հայաստան ուղարկվեց մի նոր պատվիրակություն՝ զոր. Հարբորդի գլխավորությամբ: Նա պետք է կատարեր անհրաժեշտ ուսումնասիրությունները, որոնք պետք է հիմնավորեին Հայաստանի մանդատը վերցնելու անհրաժեշտությունը կամ աննպատակահարմարությունը: Հարբորդի առաքելությունն արդեն նշանակում էր ԱՄՆ-ի քաղաքական դիրքորոշում Հայաստանի առջև կանգնած խնդիրների առումով և հայ–ամերիկյան հարաբերությունների բնույթի փոխակերպման միտում: Սակայն, Հայաստանում ԱՄՆ-ի քաղաքական դերակատարություն ունենալու հանգամանքը կախված չէր միայն նախագահ Վիլսոնի ցանկություններից: Միանգամայն ճիշտ է Ալ. Խատիսյանը, երբ գրում է <<Միացեալ Նահանգները Հայաստանի մէջ իսկապէս քաղաքական գործօն դեր չկատարեցին, բայց կրնային վճռական դեր խաղալ, եթէ իրագործուէր Ուիլսընի գաղափարը Ամերիկայի կողմէն Հայաստանի մանդատը ընդունելու մասին: Սակայն այդ գաղափարը հաւանութիւն չգտավ Ամերիկայի մէջ եւ Ամերիկայի դերը այնպէս էլ մնաց զուտ մարդասիրական>>[1]:

Հարբորդի հանձնախումբը անցնում է ամբողջ Թուրքիայով, լինում է Սեբաստիայում, Էրզրումում, Սարիղամիշում, Կարսում, Երևանում, Թիֆլիսում, Բաթումում և վերադառնում է Ամերիկա: Երևանում նրան ջերմ ընդունելություն է ցուցաբերվում, մատուցվում է պահանջված տեղեկությունը: Զերծ մնալով մանրամասնություններից, կուզենայինք ուշադրություն դարձնել երկու հանգամանքի վրա: Առաջին. Հարբորդն այն կարծիքն է Երևանում հայտնում, որ եթե ԱՄՆ-ը ստանձնի մանդատը, ապա այն <<պետք է ըլլայ ոչ միայն Հայաստանի, այլ ամբողջ Փոքր Ասիոյ եւ Անդրկովկասի վրայ, Ալեքսանտրեթէն սկսած մինչեւ Բաքու, այսինքն՝ Միջերկրականէն մինչեւ Կասպից ծով>>[2]: Հանձնախումբն այս եզրակացությանն էր եկել՝ հաշվի առնելով հիմնականում ծովային առևտրական ճանապարհները: Եթե, օրինակ փակվեր Դարդանելը, նրանք ինչպե՞ս էին

[1] **Ա. Խատիսեան,** Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ, 1968, էջ 189:

[2] Նույն տեղում, էջ 191:

պահպանելու Հայաստանի հետ կապը: Սա լուրջ հարցադրում էր: Երկրորդ. Հարբորդն արդեն Երևանում հասկացնում էր, որ մանդատի խնդիրը չի լուծվելու, բայց հայ քաղաքական ղեկավարները դրան լուրջ նշանակություն չեն տալիս: Այդ են վկայում Ալ. Խատիսյանի հետևյալ տողերը. «Ի միջի այլոց, պէտք է ըսեմ, որ զօր. Հարբորտը ինձ հետ մինակ մնալով իմ առանձնասենեակի մէջ, պատմեց, թէ ինձ ողջոյն է բերած Անգորայի կառավարութեան նախագահ Րէուֆ պէյէն, որուն հետ ես ծանօթ էի դեռ Տրապիզոնի բանակցութիւններու ժամանակէն, եւ որ Րէուֆ պէյը պատրաստ էր անմիջապէս բանակցութիւններու մէջ մտնել Երեւանի կառավարութեան հետ: Զօր. Հարբորտ իր կողմէն խորհուրդ կու տար սկսիլ այդ բանակցութիւնները: Մենք այդ խորհուրդին չհետեւեցանք, հավատացած ըլլալով, որ մեր խնդիրը պիտի լուծուի Փարիզի մէջ»[1]:

Այս փաստերը մղում են հետևյալ եզրակացությանը՝ ԱՄՆ–ը չէր ստանձնելու Հայաստանի մանդատը, քանի որ, առաջին. անհնար էր ԱՄՆ–ին մանդատի տրամադրում, որը կվերաբերվեր Փոքր Ասիային և Անդրկովկասին, Միջերկրականից մինչև Կասպից ծով Դաշնակիցների կողմից, երկրորդ. միայն Հայաստանի մանդատի ստանձնումը նրան ձեռնտու չէր, քանի որ Դարդանելի հնարավոր փակման և Բաքվի դուրս մնալու դեպքում, նա չէր կարող կատարել իր ստանձնած պարտավորությունները: Այս ամենի անհնարության գիտակցումն է, որ ստիպում էր Հարբորդին՝ խորհուրդ տալ՝ բանակցելու թուրքերի հետ: Սա նշանակում է, որ արդեն Երևանում պարզ էր, որ ԱՄՆ–ի կողմից Հայաստանի մանդատի ստանձնման հարցը խիստ կասկածելի է: Մինչև Հարբորդի զեկուցագրի սենատում քննարկմանն անցնելը, հարկ ենք համարում շեշտել, որ չսպասելով դրան, սենատոր Վիլյամսը դեռևս 1919 թ. սեպտեմբերի 8–ին սենատի քննարկմանն է ներկայացնում մի բանաձև, որը նախատեսում էր ամերիկյան զորքեր ուղարկել Հայաստան[2]: Բանաձևը քննարկվում է սենատի արտաքին գործերի կոմիտեում, որը ղեկավարում էր ապագա նախագահ Հարդինգը: Քննարկումները տևում են շուրջ երկու ամիս, առանց իրական արդյունքի, ապա վերսկսվում են 1920 թ. մայիսի 14–ին: Գ. Գալոյանը գրում է, որ 1919 թ. հոկտեմբերի 7–ի հեռագրով բրիտանական դեսպանությունն իր կառավարությանը տեղեկացնում է, որ Վիլյամսի «բանաձևը նախատեսում է հավանություն տալ ամերիկյան զորքեր Հայաստանում օգտագործելուն, հետևաբար դա Մերձավոր Արևելքում մանդատ ստանալու համար ամերիկյան կարծիքի ստուգում է»[3]:

---

[1] Նույն տեղում, էջ 191-192:

[2] **Գ. Գալոյան,** Հայաստանը և մեծ տերությունները, Երևան, 1999, էջ 209:

[3] Նույն տեղում, էջ 209:

Այստեղից պետք է ենթադրել, որ տակավին հստակ չէր, թե սենատում ինչպիսի վերաբերմունքի կարժանանար այս հարցը:

Հետաքրքիր եզրակացության են մղում Գ. Գալոյանի հետևյալ տողերը. «Սեպտեմբերի 17–ին պրեզիդենտ Վիլսոնը հանձնարարել էր պետական քարտուղարին հանդիպել սենատոր Վիլյամսին և ներկայացնել առաջարկ Հայաստան զորքեր ուղարկելու նպատակահարմարության վերաբերյալ: **Պրեզիդենտը միաժամանակ հայտնել էր, որ ինքը կողմնակից է դրան, բայց ցանկանում է հարցի լուծումը հետաձգել, եթե Ֆրանսիան բավարար քանակությամբ զորքեր ուղարկի Հայաստան և համագործակցի ԱՄՆ–ի հետ:**

Սեպտեմբերի 20–ին պետական քարտուղարը պատասխանել է, որ սենատորի հետ հարցը քննելիս եկել են եզրակացության, որ **Հայաստան զորքեր ուղարկելու առաջարկը պետք է հանվի օրակարգից, քանի որ Հայաստանից անգլիական զորքերը դուրս բերելուց հետո ֆրանսիացիները մտադրություն էին հայտնել իրենց զորքերն ուղարկել այնտեղ և երկրորդ, որ սենատի արտաքին հարաբերությունների կոմիտեն դեմ էր Հայաստան զորքեր ուղարկելուն: Սենատորը և պետքարտուղարը առաջարկում էին պրեզիդենտին օգնել Հայաստանին զինելու իր բանակը**»[1]: (Ընդգծումները մերն են – Ա. Ն.):

Մեր ընդգծած նախադասությունները հետևյալ կարևոր եզրակացությունների տեղիք են տալիս.

Առաջին. որպես հայտնի հայասեր Վիլսոնը այնքան էլ կտրուկ չի եղել իր դիրքորոշումներում՝ կապված Հայաստանին օգնելու հետ և այդ հարցը կախյալության մեջ է պահել Դաշնակիցների որոշումներից:

Երկրորդ. սենատոր Վիլյամսը իսկապես ավելի շատ փորձել է սենատում ճշտել կարծիքը Հայաստան զորքեր ուղարկելու վերաբերյալ, քան իրականում հակված է եղել դրան: Եվ, ի վերջո, գերադասելի է համարվել ոչ թե զորքեր ուղարկելը, այլ՝ հայոց բանակին օգնելը՝ զինվելու:

Սա նույնպես նշանակում է, որ խիստ կասկածելի էր մանդատի ստանձման հարցը:

Որ նպատակահարմար չի գտնվել Հայաստան ամերիկյան զորքեր ուղարկել, երևում է նաև Հարբորդի Հայաստանի մասին Թիֆլիսից 1920 թ. ապրիլի 27-ի մի զեկույցից, ուր նախ, խոսվում է Հայաստանի մանդատի ստանձման կամ մերժման հիմնավորումների մասին: Կողմ եղածները ներկայացրել են հետևյալ հիմնական պատճառաբանությունները.

1. Ամբողջ երկրում խաղաղության հաստատումը:

2. Սատարումը մարդասիրական գործին:

[1] Նույն տեղում, էջ 209–210:

3.Մերձավոր Արևելքի ազգերի ամերիկյան կառավարումը ցանկացած ուրիշից նպատակահարմար համարելը:

4.Այն փաստը, որ Դաշնակից մեծ տերությունները չեն ընդունել Հայաստանի մանդատը և նախընտրում են, որ ԱՄՆ–ն ընդունի այն:

5. Մանդատի ստանձնելու դեպքում եկամուտները կծածկեն վնասները և դա կօգնի ամերիկացիներին կապիտալ ներդրումներ իրականացնել:

6. Մանդատի ընդունումը չի առաջացնի Թուրքիայի ներկա իշխանության առարկությունը:

Իսկ դեմ արտահայտվողները ներկայացրել են հետևյալ պատճառաբանությունները.

1. Միացյալ նահանգների ներքին ծանր դրությունը:

2. ԱՄՆ միջամտությունը այսպես կոչված Հին Աշխարհի գործերին հակասում է Մոնրոյի դոկտրինային:

3. ԱՄՆ–ն ոչ մի կապ չունի Մերձավոր Արևելքի ներկայիս ծանր դրության հետ:

4. Մեծ Բրիտանիան, Ռուսաստանը և մյուս մեծ տերությունները հիասթափված են այս տարածաշրջանից, թեպետ Անգլիան ունի հարուստ փորձ և միջոցներ՝ հաստատելու կայուն վերահսկողություն այդ տարածաշրջանի վրա:

5.Միացյալ Նահանգները չի կարող երկար իրականացնել միատեսակ արտաքին քաղաքականություն, որը ներկայիս կոնգրեսը կորդեգրի (Մերձավոր և Միջին Արևելքում), քանի որ այն չի կարող կապել ապագա կոնգրեսին:

6. Անհրաժեշտ չէ հատկացնել դրամական մեծ միջոցներ, երբ եկամուտներն աննշան են լինելու[1]:

Այս զեկույցի հետ կապված Վիլսոնը Հարբորդին դիմում է հետևյալով. «Միացյալ Նահանգներն իրապես ընդունում է իր վրա պարտավորությունը՝ կարգավորելու արտաքին քաղաքականության մեր հետաքրքրությունները առանձնապես շոշափող մի շարք հարցեր, անկախ մեծ նշանակության ներքին գործերից: Բայց և այնպես, ամերիկյան միջամտությունը հայկական գործին պահանջում է 100 ից մինչև 200 հազ. զինվոր: **Միացյալ Նահանգները կարող է իր վրա վերցնել այսպիսի ծանրություն միայն Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի հետ վերջնական համաձայնությունից, ինչպես նաև Ռուսաստանի և Գերմանիայի հստակ արտահայտությամբ հավանությունից հետո, հատկապես վերաբերվող Թուրքիային և**

[1] Армения в документах государственного департамента США 1917-1920гг., составитель **Г. Г. Махмурян**, с. 401 – 402.

Անդրկովկասին: Միջամտության ծախսերի թիվը առաջին տարվա համար նշվում 275 մլն.դոլլար»[1]: (Ընգծումը մերն է - Ա. Ն.):

Վիլսոնի այս տողերը բավական լուրջ եզրակացությունների տեղիք են տալիս: Դրանք կասկածի տակ են առնում Հայաստանի մանդատը ստանձնելու նրա ջանքերի անկեղծությունը, որի վիճարկումը մեզանում կարող է շատերի համար ցավալի ընկալվել: Բայց պատմական ճշմարտությունը վեր է ամեն ինչից: Փաստորեն Վիլսոնը մանդատի ստանձնումը կախյալ էր համարում Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի դիրքորոշումից, ինչպես նաև Ռուսաստանի և Գերմանիայի վերաբերմունքից: Եվ հետաքրքիրն այն է, որ այս ամենը նա գրել է այն օրերին, երբ արդեն սենատի քննարկմանն էր ներկայացրել Հարբորդի զեկուցագիրը: Թերևս նա գիտեր, որ այն մերժելու է, բայց ըստ երևույթին չէր ցանկանում կորցնել մարդասերի իր կերպարի նկատմամբ հայության բուռն համոզմունքը: Բացի այդ, նա արդեն գիտեր, որ գալիք ընտրություններում պարտվելու է, ուրեմն ինչու խաթարեր այդ կերպարը:

Նա թերևս միանգամայն անկեղծ էր, երբ Բոստոնում, դեռևս 1919թ. փետրվարի 26-ին ունեցած ելույթում հետևյալն էր շեշտում. «Մտածել եք երբևէ Հայաստանի տառապանքների մասին: Դուք ձեր դրամը չխնայեցիք՝ հայերին օգնելու համար իրենց տառապելուց հետո. հիմա ուժ գործադրեք, որ նրանք այլևս չտառապեն»[2]: Նույն թվականի մարտի 9-ին Վիլսոնն ստանում է հայերին ի նպաստ մի գրություն, որի տակ ստորագրել էին 45 նահանգապետեր, հարյուր եպիսկոպոսներ, 250 համալսարականներ և քոլեջների տնօրեններ, 2500 կաթոլիկ և բողոքական հոգևորականներ[3]: Սա նշանակում է, որ այս շրջանում նա կարող էր անկեղծ լինել իր ջանքերի մեջ, մանավանդ, որ ԱՄՆ–ում քիչ չէին հայոց խնդրով շահագրգիռ և իրենից լուծում սպասող տարրերը: Բայց 1920թ. գարնանը իրավիճակը կտրուկ փոխվեց:

Հարկ է նշել նաև, որ հայությունն իրեն բնորոշ ոգևորություն է ապրում՝ ԱՄՆ-ի կողմից մանդատի ստանձման հնարավորության խնդրով պայմանավորված: Կաթողիկոս Գևորգ Ե Տփխիսեցին 1919թ. դեկտեմբերի 26–ին մի խնդրագիր է հղում Վիլսոնին, որպեսզի նա և յուրաքանչյուր ամերիկացի օգնության հասնեն Հայաստանին: Այն տանում և անձամբ նախագահին է հանձնում Խորեն արք. Մուրադբեկյանը: Մինչև այդ նախա-

[1] Նույն տեղում, էջ 402:

[2] American Committee Opposed to the Lausanne Treaty, The Lausanne Treaty, Turkey and Armenia, New York, 1926.

[3] Hearings before the Subcommittee on Future Foreign Policy Research and Development of the Committee on International Relations, House of Representatives, 94th Congress, Second session, Washington, 1976, p. 34.

գահն արդեն կոնգրեսից պահանջել էր՝ ընդունել Հայաստանի մանդատը: 1920թ. ապրիլի 23–ին ԱՄՆ–ը դե ֆակտո ճանաչում է Հայաստանի Հանրապետությունը: Սակայն, 1920թ. հունիսի 1–ին երկար վիճաբանությունից հետո, սենատը մերժում է ընդունել Հայաստանի հոգատարությունը:

Այժմ տեսնենք, թե ինչպիսի քննարկման արդյունքում է այն մերժվում: Մայիս ամսին տեղի ունեցած քննարկումները անցնում են այն հարցերի պատասխանների որոնումներով, թե, ա) ինչպիսի տարածքներով պետք է սահմանափակվել՝ ընդունելով Հայաստանի մանդատը, բ) ինչպիսի դիրքորոշում կունենան Հայաստանի նկատմամբ մեծ տերությունները, նաև Ռուսաստանը և քեմալական Թուրքիան, գ) ԱՄՆ պատրաստ է Հայաստանին ցույց տալ անհրաժեշտ օգնությունը: Բավական հետաքրքիր առաջարկներ է կատարում Բեյկերը, այն է՝ սահմանափակվել 55–60 հազ.քառ. կմ տարածքով Հայաստանով, որը Հարբորդի նախատեսած տարածքի 1/6–րդն էր միայն՝ 3 մլն բնակչությամբ, որի օկուպացման համար պահանջվում էր 27 հազ. ամերիկյան զինվոր: Ընդ որում Բեյկերը գտնում էր, որ Հայաստանին կարելի է պաշտպանել արտաքին հարձակումից, եթե Ազգերի Լիգայի մեջ մտնող պետությունները երաշխավորեին նրա անկախությունը: Հակառակ դեպքում, ըստ նրա, Հայաստանում ամերիկյան ուժեր պահելը գործնական նշանակություն չէր ունենա: Իսկ Հայաստանին սպառնացող վտանգը նա տեսնում էր Ռուսաստանից, որի ռազմական ուժերն արդեն մտել էին Բաքու[1]:

Երեք օր տևած վիճաբանություններն ընդհատվում են հարցի լրացուցիչ ուսումնասիրության համար, մայիսի 21–ին և վերսկսվում են հունիսի 1–ին: Սենատորները նախ դժգոհություն են հայտնում, որ զեկուցագրում հստակեցոած չեն Հայաստանի սահմանները: Այն հանգամանքը, որ Ռուսաստանը սկսում է ամրապնդել իր դիրքերը Հարավային Կովկասում, ավելի վճռական է դարձնում մանդատը մերժելու կողմնակիցներին: Սենատոր Սմիթը իր ելույթում վախ է հայտնում, որ ստեղծված պայմաններում ԱՄՆ-ից կպահանջվեր Հայաստանում ունենալ մեկ միլիոնանոց զորք[2]:

Գ. Գալոյանի վկայությամբ որոշ սենատորների վրա մեծ ազդեցություն է թողնում Հարբորդի հետ զրույցում Մ. Քեմալի՝ իրեն ԱՄՆ բարեկամ ներկայացրած լինելու հանգամանքը: Որոշ սենատորներ սկսում են համակրանքով խոսել Քեմալի նպատակների մասին, քննադատելով Անգլիային, որն ուզում էր սևծովյան նեղուցները վերցնել իր վերահսկողության տակ: Ոչ պակաս հետաքրքիր է նաև այն, որ քննադատություն է սկսվում նաև մյուս դաշնակից պետությունների նկատմամբ, որոնք ձգտում էին բաժանել Թուրքիան: Հետաքրքիր էր նրանց հարց տալ, թե ե-

[1] **Գ. Գալոյան,** նշվ. աշխ.,էջ 226:

[2] Նույն տեղում:

թե հաղթեր Գերմանիան, ապա նա չէ՞ր տիրելու նեղուցներին, կամ չէ՞ր բաժանելու ռուսական նախկին շատ տիրույթներ: Պարզ է, որ կեղծ առիթներ էին հորինվում մանդատի մերժումը հիմնավորելու համար: Պատահական չէ, որ սենատոր Բրենդիջը նշում է, որ արդեն կասկածի տակ է դնում մանդատի ընդունումն այն պատճառաբանությամբ, որ Հարբորդի զեկուցագրով նրա մեջ պետք է ներառվեր նաև Թուրքիան, որն արդեն անհնար է[1]: «Իսկ առանց Թուրքիայի,- շեշտում է սենատոր Թոմասը, միայն Հայաստանի մանդատը վերցնելը նշանակում է նախօրոք կանխորոշել մանդատի խղճուկ ապագան»[2]:

Հետաքրքիր են մանդատը չընդունելու հետևյալ հիմնավորումները:

«Սենատոր Բրենդիջ-Չլինելով Ազգերի Լիգայի անդամ, պրեզիդենտն իր ուղերձում խնդրում է կոնգրեսից ընդունել մանդատ Ազգերի Լիգայից, որի կազմում մտնելու առաջարկը մենք մերժել ենք: Հայաստանի մանդատի ընդունումը կհակասի ԱՄՆ սահմանադրության սկզբունքներին, որի պատճառով էլ 48 նահանգներից ոչ մեկը չի վավերացնի այն:

Սենատոր Լեոնռութ - Եթե մենք ունենանք Հայաստանի մանդատը, կներքաշվենք համաշխարհային մասշտաբի պատերազմի մեջ՝ Խորհրդային Ռուսաստանի նրա դեմ հարձակվելու դեպքում»[3]:

Ինչպես համոզվում ենք՝ սենատի կողմից մանդատի ընդունումը հակասող էր դիտվում ԱՄՆ սահմանադրությանը և եթե ընդունվեր էլ, հնարավոր էր նահանգների կողմից նրա չվավերացնելը: Բացի այդ, արդեն ընկալելի էին Հարավային Կովկասում բոլշևիկյան նպատակադրումները, որոնք ԱՄՆ-ին զգուշանալու հիմքեր էին տալիս:

Հունիսի 1–ին սենատորները պահանջում են մանդատի համար նախատեսվող գումարները ներկայացնել ըստ հոդվածների, նախատեսված ծախսերում փոփոխություններ են մտցնում, «սակայն նկատի առնելով Հայաստանի սահմանների անորոշությունը, ինչպես նաև անպաշտպանվածությունը, կասկած հայտնվեց, որ Հարբորդի զեկուցագրում նախատեսված ծախսերի գումարն անհամեմատ ավելի մեծ կլինի, քան ենթադրվում էր»[4]:

Սենատոր Ուոլշը հղում է անում Հարբորդի զեկուցագրում ընդդեմ մանդատի ընդունման այն փաստարկին, որ դրա ստանձնումը կարող է «թուլացնել և ցրել մեր ուժերը, որոնք պետք է պահպանվեն ամերիկյան մայրցամաքում և Հեռավոր Արևելքում հետագա պատասխանատվության

[1] Նույն տեղում, էջ 226–227:

[2] Նույն տեղում, էջ 227:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում, էջ 227:

համար: Կ. Պոլսի հետ կապի գիծը գտնվում է այլ տերությունների ձեռքում…»[1]:

Գ. Գալոյանի մեջբերած փաստերը, որոնք նա կատարում է առանց եզրահանգումների մենք մեջբերում ենք՝ հետևյալ եզրահանգման համար՝ ԱՄՆ–ի շատ սենատորների մոտ կային սեփական պետության շահերը վտանգելու աննպատակահարմարության համոզմունքները Հայաստանի մանդատի ընդունման դեպքում: Եթե փորձենք դատել՝ զերծ մնալով զգացմունքայնությունից, պետք է շեշտենք, որ այդ համոզմունքները հիմնավոր էին: Խնդիրը այսպես էր դրված՝ ԱՄՆ-ը ընդունելով մանդատը կարող էր ներքաշվել համաշխարհային քաղաքական գործընթացների մեջ, որից տվյալ դեպքում խուսափում էր, կամ մերժել մանդատը: Բնականաբար, նախընտրելի դարձավ երկրորդը: Նույն հունիսի 1 –ին քվեարկությամբ ԱՄՆ–ի կոնգրեսը որոշում ընդունեց մերժել Հայաստանի մանդատի ստանձնումը: Կողմ քվեարկեցին 34 սենատորներ, դեմ՝ 43, քվեարկությանը չմասնակցեցին 19-ը[2]:

Այն տեսակետը կա, որ սրանում կարևոր դեր է ունենում սենատոր Հենրի Քեփըտ Լաճը, որը Վիլսոնի հակառակորդներից է[3]: Բայց նա հակառակորդ էր այնքանով, որքանով հակառակ կուսակցության՝ հանրապետականների ներկայացուցիչն էր: Բայց մանդատը մերժվեց, քանի որ անհնար էր նրա իրագործումը հանձնախմբի նախորոշած սահմաններով: ԱՄՆ–ի համար տակավին պարզ չէր, թե ինչպիսին է լինելու Ռուսաստանի վերաբերմունքը: Բացի այդ, ձևավորվում էր քեմալական շարժումը: Սրանք լուրջ գործոններ էին, որոնք անհնար էր հաշվի չառնել: Այսպիսով, քաղաքական դերակատարության առումով ԱՄՆ–ի նախագահի նպատակադրումները Հայաստանի նկատմամբ չիրականացան և ընթացքի մեջ մնացին մարդասիրականները, որոնք իրականացնում էր Հայաստանում ԱՄՆ գերագույն կոմիսար Հասկելը: Հայաստանի մանդատն ընդունելն աննպաստ էր ԱՄՆ քաղաքական շահերի տեսանկյունից և դա չպետք է մեզ զարմացնի: Այս մերժումից հետո ԱՄՆ–ն այլևս գործնականում որևէ դերակատարություն չունեցավ Հայաստանի քաղաքական ճակատագրի առումով:

Սակայն, կարևոր ենք համարում ավելացնել, որ մանդատի մերժումից հետո էլ դեռևս հայ որոշ ղեկավարների մեջ շարունակում են իշխել դրական ակնկալիքների հույսերը՝ կապված ԱՄՆ հետ: Եվ սա այն դեպքում, երբ 1920թ. հուլիսին, Կ. Պոլսում ԱՄՆ դերծովակալ Բրիստոլը հա-

[1] Նույն տեղում, էջ 228:

[2] Նույն տեղում, էջ 229:

[3] Հայկազյան հայագիտական հանդես, Պէյրութ, 1977–78, հ. Ջ. տես Ջ. Մսըրլեան ԱՄՆ–ի արտաքին քաղաքականութիւնը եւ Հայկական հարցը(1900–1976թթ.), էջ 74–75:

կառակ խորհուրդն է տալիս Ալ. Խատիսյանին: Վերջինս անգլիական կոմիսար ծովակալ Դեթոբեկի և ֆրանսիական կոմիսար Դելաֆրանսի և այլոց հետ տեսնվելուց հետո հանդիպում է Բրիստոլին: «Մանաւանդ, խոր տպավորութիւն թողուց իմ վրայ պատմական զրոյցը ամերիկեան դեր–ծովակալ Բրիստոլի հետ,- գրում է նա: Կ'ըսեմ պատմական, որովհետեւ ան կը հակասէր այն ժամանակուայ ընդհանրացած տեսակէտին Ամերիկայի եւ նախագահ Ուիլսոնի դերի վերաբերմամբ Հայաստանի քաղաքական վիճակի մասին, բայց եւ այնպէս անոր բոլոր խօսքերը եւ վստահացումները շատ կարճ ժամանակէ ետք միանգամայն արդարացան:

Երբ Բրիստոլին յայտնեցի իմ խորին երախտագիտութիւնը Ամերիկայի կողմէ հայ ժողովրդին ցոյց տրուող խոշոր մարդասիրական օգնութեան համար, ան այդ երախտագիտութիւնը ընդունեց հաճութեամբ եւ ըսաւ, թէ կը հաղորդէ իր կառավարութեան: Բայց երբ յոյս յայտնեցի Ամերիկայի օգնութեան վրայ Հայաստանի քաղաքական կազմակերպութեան համար, յիշատակելով այդ առթիւ նախագահ Ուիլսոնի խոստումը, ծովակալ Բրիստոլ անմիջապէս յայտարարեց հետեւեալը.

«Ուիլսոնը բոլորովին չ'արտայայտեր իր ժողովուրդի կարծիքը. ան կ'ըսե այն, ինչ որ բոլորովին չի համապատասխաներ Ամերիկացիներու շահերուն ու տեսակետներուն: Դուք այդ մասին պատրանքներ պետք չէ ունենաք»:

Երբ ես պատասխանեցի Բրիստոլին, թէ կը զարմանամ լսելով այդպիսի կարծիք նախագահ Ուիլսոնի ներկայացուցչէն, ան պատասխանեց, որ Ամերիկայի ժողովուրդը առաջիկայ ընտրութիւններուն ցոյց կու տայ իր կամքը եւ այդ կամքը յայտնապէս կ'ըլլայ ոչ յօգուտ Ուիլսոնի գաղափարներուն, եւ այդ պատճառով, շարունակեց Բրիստոլ, Հայերը պետք է իրենք փնտռեն Թուրքերու հետ մերձեցման ճանապարհներ: Ան հարց տուաւ ինձ, թէ չե՞մ լսած արդեօք Պոլսոյ հայերէն իր մասին այնպիսի կարծիքներ, որ ինքը չի սիրեր Հայերը եւ աւելի կը պաշտպանէ Թուրքերը: Պատասխանեցի, որ, այո, լսեր եմ: Ատոր վրայ Բրիստոլ ըսաւ, թե առհասարակ ինք իր պարտքը կը համարէ նախազգուշացնել հայ քաղաքական գործիչները, որ իրենք փնտռեն մերձեցում Թուրքերու հետ՝ իրենց պահանջները հասցնելով նուազագոյնի, հակառակ պարագային անոնց կը սպասէ ծանր ապագայ: Ահա իր նման յայտարարութիւններն են, անոր կարծիքով, որ անոր մասին ստեղծեր են Հայերու թշնամիի համբաւ:

Արդարութիւնը կը պահանջէ անգամ մըն ալ ըսել, որ գրեթէ նոյնանման խորհուրդ տուաւ ինձ նաեւ զօրաւար Հարբորտը, բայց աւելի մեղմ ձեւով»[1]:

Այս ընդարձակ մեջբերումից հարկ է կատարել եզրահանգումները.

[1] **Ա. Խատիսեան,** նշվ. աշխ., էր 230 – 231:

Առաջին. Փաստորեն Բրիստոլը հասկացնում էր, որ հայ քաղաքական ղեկավարները չպետք է հույսեր կապեն ոչ միայ ԱՄՆ–ի, այլ՝ առհասարակ դաշնակիցների հետ:

Երկրորդ. Նա ամենևին էլ հայ ժողովրդի թշնամին չէր և իրատեսական խորհուրդներ էր տալիս հայ քաղաքական ղեկավարներին, որոնք, ցավոք, անտեսվեցին:

ԱՄՆ-ը չի մասնակցում Սևրի դաշնագրի ստորագրմանը: Բայց դաշնագրի 89-րդ հոդվածն ուներ հետևյալ բովանդակությունը. «Թիւրքիան և Հայաստանը, այլ և ուրիշ բարձր դաշնագիր կողմերը, համաձայնվում են Ամերիկ. Միաց. Նահանգների նախագահի իրաւարար վճռին յանձնել սահմանի որոշումը Թիւրքիայի եւ Հայաստանի միջեւ Էրզրումի, Տրապիզոնի, Վանի եւ Բիթլիսի վիլայէթներում եւ ընդունել նրա վճիռը, այլ եւ բոլոր այն միջոցները, որ կարող է նա հրահանգել Հայաստանի դէպի ծով ելք ունենալու եւ յիշեալ սահմանին կից գտնուող օսմանեան որևէ հողի զինաթափման մասին»[1]:

Քաղաքականապես շատ միամիտ պետք էր լինել՝ հավատալու, որ այս կետը իրականանալի է դառնալու, մանավանդ այն պայմաններում, երբ Քեմալի շարժումը հաղթական ելք էր նախատեսում և Ռուսաստանի տերն արդեն բոլշևիկներն էին:

Սակայն, հայ քաղաքական ղեկավարները դեռևս շարունակում էին հույսեր կապել Վիլսոնի հետ: Այսպես, ՀՀ արտաքին գործերի նախարարի ԱՄՆ-ում ՀՀ դեսպան Գ. Փաստրմաճյանին ուղարկած 1920թ. օգոստոսի 19-ի գրության մեջ մասնավորապես կարդում ենք. «Մեր սահմանների համար Ձեր կողմից ձեւակերպված պահանջներին Կառավարությունը հավանություն է տալիս, ինչպէս նաեւ միւս հարցերում Ձեր ունեցած տեսակետներին եւ ընդհանրապէս Ձեր գործունեութեան. թէեւ պիտի ասեմ որ մենք չենք յուսար Խարբերդի սանճակը մեզ թողնւի նոյն իսկ ուրիշ վիլայեթների մասերի փոխարինութեամբ: Սահմանների հարցում ես Ձեր յատուկ ուշադրութիւնն եմ խնդրում Բաթումի շրջանի վրայ. այս հարցում կառավարութիւնը միշտ կանգնած է իր տեսակետի վրայ՝ ելք դեպի ծով Ճորոխի հովտով եւ սեփական հողամասով Բաթումի նավահանգստում: Պետք է ամեն ճիգ գործ դնել ձեռք բերելու այս հարցում Ամերիկեան աջակցութիւնն ապահովելու համար մեր իրավունքներն ու շահերը Բաթումի շրջանում»[2]:

Համակ միամտությամբ է շնչում Պողոս Նուբարի և Ավ. Ահարոնյանի հեռագիրն՝ ուղղված Վիլսոնին արդեն նոյեմբեր ամսին, երբ նրան էր տրված ՀՀ սահմանները որոշելու իրավունքը: Ահա այն.

---

[1] **Ս. Վրացեան,** Հայասատանի Հանրապետություն, Պէյրութ, 1958, էջ 440:

[2] ՀԱԱ, ֆ. 200,ց. 1, գ. 431, թ. 1:

«Անսահմանորեն յերջանիկ ենք, վոր Գերագույն խորհուրդը անկախ Հայաստանի սահմանների վորոշումը ձեզ է հանձնել: Ամբողջ հայ ազգը իր աչքերը ուղղած է ձեզ վրա, հուսալով տեսնել, վոր իր իրավունքները պաշտպանված պիտի լինի ձեզանից:

Հայաստանի պետության հովանավորության ընդունումը Ամերիկայի կողմից միայն կարող է իրականացած դարձնել մեր յերազները ունենալ լիյակատար Հայաստան: Բայց յեթե Ամերիկան հանձն չառնե այս պարտականութիւնը, մենք ձեզ թախանձում ենք պնդել, վոր գեթ Հայաստանի պետության մաս կազմեյին Բիթլիսի նահանգը առանց Սղերդ գավառի, Վանի նահանգը առանց Հեքարի գավառի, ամբողջ Կարնոյ նահանգը, վորի գլխավոր քաղաքները Կարին յեվ Երզնկան անհրաժեշտ են Հայաստանի պաշտպանության համար, ամբողջ Խարբերդի գավառը, վոր շնորհիվ ամերիկյան միսիոնարների գործունեյության դարձավ այնքան փառավոր հայկական մտավորական կենտրոն մը, նայեվ ունենալ յելք Սեվ ծովու վրա, Ճորոխի հովիտը, վոր անհրաժեշտ ե մեր երկաթուղիներու շինության համար, յեվ ամբողջ Անդրկովկասյան Հայաստանը:

Հույս ունենք, վոր համենայն դեպս Ամերիկան ցույց կուտա իր առատաձեռն ու հզոր աջակցությունը Հայաստանին:

Այն հայկական հողամասերը, վորոնք դուրս պիտի մնան անկախ պետությունից, այսինքն Սեբաստյան, Տիգրանակերտի, Մալաթյան հողամասերը, նայեւ ամբողջ Կիլիկյան, մենք ցանկանում էինք, վոր դաշնակիցները զրկեյին թյուրք վարչությունից յեւ ոժտվեյին Յեվրոպական կառավարության հատուկ րեժիմով, դաշնակիցների վերահսկողության ներքո»[1]:

Մնում է միայն զարմանալ, թե քաղաքականապես ինչ աստիճանի միամիտ կարելի էր լինել՝ նոյեմբեր ամսին գրելու, կարելի է ասել, այս ադերսագիրը: Այն տպավորությունն է ստեղծվում, որ հայ ղեկավարները չէին տեսնում աշխարհաքաղաքական գործընթացների փոփոխությունները բոլշևիկ–քեմալական դաշինքի պայմաններում, չէին տեսնում այն օրհասական դրությունը, որը ապրում էր թուրքերի հետ պատերազմում գտնվող Հայաստանը: Եվ փոխարենը հույս էին կապում ինչ-որ մի քարտեզի հետ, որը պետք է գծեր Վիլսոնը, այն էլ կոնգրեսի կողմից Հայաստանի մանդատի մերժումից հետո: Եվ սա այն դեպքում, երբ վերոհիշյալ Բրիստոլը դեռևս 1920թ. սեպտեմբերի 18–ին պետքարտուղար Կոլբիին հետևյալն էր հեռագրել. «Ոչ ոք չի կարող հավատալ, որ թուրքերը դուրս կբերեն իրենց զորքերը՝ Հայաստանին տարածքների փոխանցումով, եթե չստիպեն նրանց դա անել…: Եվ ծայրահեղ պարզ է, որ Դաշնակիցները Հունաստանի օգնությամբ գնում են ստիպելու նրանց ճանաչելու պայմանագիրը: Պայմանագիրը Թուրքիայի հետ Հայաստանին տալիս է միայն

[1] ՀԱԱ, ֆ. 200,ց. 2, գ.114, թ.1:

այն մասերը արևելյան վիլայեթների, որոնք կարող են որոշվել նախագահի իրավարարությամբ: Այսօր այդպիսի շրջաններում պրակտիկորեն հայեր չկան, իսկ հայրենադարձությունը Երևանյան հանրապետությունից կբերի անկարգությունների, եթե չապահովվի պաշտպանությամբ[1]:

Ինչպես համոզվում ենք, Բրիստոլը կասկածի տակ է առնում վիլայեթների, որոնք հստակեցված չէին, Հայաստանին տալու հարցը, քանի որ դա չէին հանդուրժի թուրքերը և անհնար էր հայրենադարձությունը դեպի այդ տարածքները առանց լուրջ պաշտպանության: Իսկ այդ պաշտպանությունը թե ո՞վ էր իրականացնելու, հստակ չէր:

Այն, որ Բրիստոլի Ալ. Խատիսյանի խորհրդին չհետևելը և դաշնակիցների ու ԱՄՆ–ի փոխարեն Թուրքիայի հետ լեզու չգտնելը կարող էր հայերի համար դժբախտ հետևանքների հանգեցնել, երևում է նույն Բրիստոլին Թիֆլիսում ԱՄՆ հյուպատոս Մոզերի ուղարկած հեռագրից՝ 1920թ. հոկտեմբերի 4–ին (ստացված հոկտեմբերի 12–ին, իսկ հոկտեմբերի 10–ի ուղարկված նաև պետքարտուղար Կոլբիին), ու կարդում ենք. «Հայկական կառավարությունը այսօր երեկոյան տեղեկացրել է ինձ, որ Հայաստանը գտնվում է Թուրքիայի հետ սկսված պատերազմի մեջ: Հայտարարվել է 35 տարեկանից բարձր տղամարդկանց համընդհանուր մոբիլիզացիա, իսկ երկաթուղային ճանապարհը տրվել է զինվորական իշխանություններին: Տեղեկացվում է, որ Վրաստանը համաձայնվել է օգնել հայերին և պարտադրել ծառայության Հայաստանում Վրաստանի բոլոր հայ տղամարդկանց, համապատասխան ազգային պատկանելության: Թուրքերը վերցրել են Սարիղամիշը, որում Մերձավոր Արևելքի Օգնության նշանակալի պահեստներն են և մենք ապրում ենք զգալի տագնապ ՄԱԱՆԿ-ի աշխատակիցների համար, հատկապես Կարսում: Այսօր Թիֆլիսում կանգնեցրել են ժամապահ զինվորներ, որպեսզի պաշտպանեն ռուտիկանական տեղամասերը և կառավարական ձեռնարկությունները թուրքնացիոնալիստներին աջակցող հնարավոր բոլշևիկյան ցույցերից»[2]:

Ինչպես համոզվում ենք՝ արդեն ամերիկյան այն ըմբռնումը կար, որ թուրք-բոլշևիկյան դաշինքը գործում է, որի դեպքում առավել զգույշ մարտավարություն էր նախընտրում ԱՄՆ-ը, որն այդպես էլ չեն ընկալում հայ քաղաքական ղեկավարները: Նրանք ռուսների հետ լեզու գտնելու փոխարեն շարունակում էին հույսեր կապել ԱՄՆ-ի հետ:

Ոչ պակաս հետաքրքիր է Բրիստոլի նոյեմբերի 30–ի հեռագիրը պետքարտուղար Կոլբիին, ուր կարդում ենք. «Հայաստանից ստացվել են վստահելի տեղեկություններ Երևանից հենց նոր վերադարձած մարդկանցից: Տեղեկացվում է, որ Հայաստանի վերջը տրվել է: Հայակական զոր-

[1] Армения в документах государственного департамента США 1917-1920гг., с. 418.

[2] Նույն տեղում:

քերն ունեցել են քանակային առավելություն Կարսում և Ալեքսանդրապոլում, սակայն նրանց ջախջախել են և շատ դեպքերում նրանք փախել են: Թուրքերը գրավել են Իգդիրը և գտնվում են Ղարաքիլիսայից մի քանի կմ հեռու: Հայերին հիմա գլխավորում է գեներալ Դրոն(Կանայան) և կարծես նա պահում է դիրքերը: Այժմ գործում է երկրորդ զինադադարը և ընթանում են հաշտության բանակցություններ: Ինչպես հաղորդվում է, թուրքական դիրքերում բոլոր ամերիկացիներն անվտանգության մեջ են: Բոլշևիկները և թուրքնացիոնալիստները պայմանավորված են: Անհիմն է հայտարարությունը, որ Ալեքսանդրապոլը և Կարսը հետ են վերցված հայերի կողմից և չկա հավանականություն, որ դրանք կվերադարձվեն»[1]:

Ամերիկացիների համար վերջնականապես պարզ էր, որ ռուսները և թուրքերը Հայաստանի նկատմամբ մշակված ծրագիր են իրականացնում, ինչը հայ ղեկավարությունը տակավին լրջորեն չէր պատկերացնում: Չէր պատկերացնում, որ ստեղծված պայմաններում անզոր է ԱՄՆ–ը, որն, ինչպես համոզվեցինք, ամենևին չէր ցանկանում միջամուխ լինել մի խնդրի, որը կարող էր նրա համար ավելորդ գլխացավանք առաջացնել: Այդ ցանկությունն իսպառ բացակայեց 1920թ. հայ–ռուսական համաձայնագրից հետո, որով ՀՀ–ն խորհրդայնացվեց: Նույն օրը, թերևս անտեղյակ ՀՀ խորհրդայնացումից, Ազգերի Լիգայի Խորհրդի նախագահ Պ. Գիմանսը Ժնևից հետևյալն է հեռագրել Վիլսոնին, որն արդեն կատարել էր իր իրավարար վճիռը. «Ազգերի Լիգայի Խորհրդի անունից շնորակալություն ձեզ նոյեմբերի 30–ի հեռագրի համար, որով դուք համաձայնվում եք հանդես գալու որպես միջնորդ հայերի և քեմալիստների միջև: …Խորհուրդն ինձ խնդրեց ձեզ հայտնելու, որ իսպանական կառավարությունը հայտարարել է իր պատրաստակամության մասին մասնակցելու բարոյական և դիվանագիտական բնույթի ցանկացած գործունեության՝ Հայաստանին պաշտպանելու, և որ բրազիլական կառավարությունը հայտնել է իր պատրաստակամությունը մասնակցելու, միայնակ կամ այլ տերությունների հետ, նրա համար, որ վերջ դրվի Հայաստանում ներկայիս իրավիճակին: Այդ պատճառով Խորհուրդը խնդրել է այս երկու կառավարություններին ուղիղ կապվելու ձեզ հետ: …Բանակցությունները կարելի է սկսել չմիջնորդավորված, հայկական կառավարության հետ Երևանում: Ինչ վերաբերվում է քեմալիստներին, ապա Խորհուրդը նախաձեռնում է քայլեր, որպեսզի ճշտի, ինչպես կարելի է առավել արդյունավետ կապ ստեղծել նրանց հետ, իսկ հետո ինչքան հնարավոր է արագ տեղեկացնել ձեզ այդ մասին»[2]:

Այս գրությունը կարդալիս մի կողմից այն տպավորությունն ես ստանում, որ իսկապես եղել է անկեղծ ձգտում՝ Հայաստանին դուրս հա-

[1] Նույն տեղում, էջ 429:

[2] Նույն տեղում, էջ 429:

նելու այն իրավիճակից, որում հայտնվել էր քեմալականների հետ պատերազմի արդյունքում, բայց մյուս կողմից էլ՝ զարմանք ես ապրում այն ցանկության հետ կապված, որ կարելի էր քեմալականների հետ դրական լուծում գտնել Հայաստանի հարցում, որն իր քայլերը համաձայնեցրել էր բոլշևիկների հետ: Մի բան ակնհայտ է, **որ ԱՄՆ–ը և Դաշնակիցներն արդեն սպառել էին իրենց գործնական աջակցությունը հօգուտ Հայկական հարցի լուծման և արդեն նրանց հայտարարություններն հօգուտ Հայաստանի կրում էին ծիսական բնույթ:**

Այդ ծիսականությունն ավելի է զգալի դառնում ՀՀ խորհրդայնացումից հետո, որի մասին դեկտեմբերի 4–ի հեռագրով տեղեկացնում է պետքարտուղար Դեվիսին: Այնտեղ կարդում ենք. «Դեկտեմբերի 2–ին Երևանում պաշտոնապես հայտարարվել է, որ Հայաստանը հռչակվել է խորհրդային հանրապետություն: Նոր կառավարությունը կազմված է հինգ բոլշևիկ կոմիսարներից և դաշնակցություն կուսակցության երկու անդամից՝ գեներալ Դրո/ Կանայանից/ և Հ. Տերտերյանից, նրանցից առաջինը նշանակվել է զինվորական դիկտատոր, Օ. Սիլինի հետ միասին – հավանաբար Ռուսաստանի զինվորական կոմիսարի: Խորհրդային Ռուսաստանի դեսպանը հայտնել է, որ Ռուսաստանը ճանաչում է նոր խորհրային հանրապետությունը»[1]:

Այն, որ այս պայմաններում Դաշնակիցների և ԱՄՆ –ի միջամտությունն այլևս անհնար էր, երևում է Ազգերի Լիգայի նախագահ Գիմանսի Վիլսոնին դեկտեմբերի 26–ին ուղարկած հետևյալ հեռագրից. «Հետևյալը պրն. Լլոյդ Ջորջից. … Կոստանդնոպոլսում և Թիֆլիսում բրիտանական ներկայացուցչության կողմից ձեր դեկտեմբերի 2–ի հեռագրի քննարկումից հետո, լավագույն գործելաոճը կլինի, որպեսզի Վիլսոնը հեռագրի հրահանգները Կոստանդնոպոլսի բարձրագույն կոմիսարին, որն իր կոլեգաների հետ ձեռնարկի միջոցներ՝ քննարկելու այդ առարկան: Այժմ ստացվել է տեղեկություն, որ հայկական կառավարության և … (հեռագրում երկրորդ կողմը չի նշվում, որը հասկանալի է, թե ով է - Ա.Ն.)կնքվել է խաղաղության պայմանագիր և Խորհուրդն, անկասկած, տեղեկացված է, որ ներկա ժամանակում Հայաստանը գտնվում է Խորհրդային Ռուսաստանի վերահսկողության տակ և դաշնակցություն կուսակցության առաջադեմ թևի: Ջ. Քերզոն: «Պ. Գիմանս»[2]:

Ահա այս հեռագրով փաստորեն մեծ տերությունների համար վերջ են գտնում հօգուտ հայոց միջամտության բոլոր հնարավորությունները և արժեզուրկ է դառնում Վիլսոնի իրավարար վճիռը:

[1] Նույն տեղում, էջ 429–430:

[2] Նույն տեղում, էջ 432:

1920 թ. նոյեմբերի 22–ին, իր հեռանալուց առաջ, Վիլսոնը կայացրեց իր քաղաքական վճիռը, Սևրի պայմանագրի՝ իրեն տված իրավական հիմքով, գծելով Հայաստանի քարտեզը: Սակայն, այսօրվա հեռավորությունից այն պետք է դիտարկել ավելի շատ մարդասիրական, քանի որ այդ օրերին արդեն վճռված էր հայոց ճակատագիրը՝ Հայաստանը բաժանվում էր քեմալականների և բոլշևիկների միջև: Իսկ ի՞նչ էր այն ներկայացնում իրենից: Վիլսոնի գծած սահմաններով, Արևելյան Հայաստանը, որն ուներ 71.330 քառ. կմ տարածություն, իրեն միավորելու էր Արևմտյան Հայաստանից 90.000 քառ կմ տարածություն, որով ՀՀ սահմանը կազմելու էր 161.330 քառ. կմ: Արևելյան Հայաստանին միավորվելու էր.

- Վանի նահանգի 39.300 քառ. կմ տարածքից՝ 20.000 քառ. կմ:
- Էրզրումի նահանգի 49.700 քառ. կմ տարածքից՝ 40.000 քառ. կմ:
- Բիթլիսի նահանգի 27.100 քառ. կմ տարածքից՝ 15.000 քառ. կմ:
- Տրապիզոնի նահանգի 32.700 քառ. կմ տարածքից՝ 15.000 քառ կմ[1]:

Ավելի հստակ պատկերացում կազմելու համար, թե որոնք էին հիշյալ նահանգներից անջատվելիք մասերը լինելու, հարկ ենք համարում դիմել նույն Լազյանի մեջբերած փաստերին: Ըստ դրանց՝ «Ուիլսոնեան սահմաններով Արեւմտեան Հայաստանի մաս պիտի կազմէին Վանի նահանգի Վանի Սանճաքը, Բաղէշի (Պիթլիսի) նահանգէն Բաղէշ եւ Մուշի Սանճաքները, Էրզրումի նահանգը գրեթէ ամբողջութեամբ, Էրզրումի, Հին Պայազիտի եւ Երզնկայի Սանճաքները, Տրապիզոնի Սանճաքին եւ Կիւմիշխանէին ալ արեւելեան մասերը:

Սահմանը կը սկսի Սեւ ծովի վրայ գտնուող Տրապիզոնէն, մօտ մէկ ժամ արեւմուտքէն Բլաթանտ պստիկ քաղաքէն, մէջ կ՝ առնէ Երզնկա քաղաքը, կ՝անցնի Տէրսիմի լեռներու հիւսիսէն եւ հարաւ արեւելք ծռելով՝ մէջը կ՝առնէ Մշո դաշտը եւ Սասունի մեծ մասը: Հոս իր հարաւային սահմանն է Տաւրոսի շղթան, ուրկէ Վանայ լիճի արեւելքէն կը դիմէ դէպի հիւսիս, Մասիս, Պարսկաստանի եւ Թուրքիոյ ներկայ սահմանագլուխը:

Այս ձեւով Արեւմտեան Հայաստանը իր մէջ կ՝առնէ ամբողջապէս Վանայ լիճը, Արածանիի եւ Արեւմտեան Եփրատի վերին եւ միջին հովիտները, Ճորոխի վերին եւ միջին հովիտը»[2]:

Ահա այսպիսի սահմաններով Հայաստան էր նախատեսում ստեղծել Վիլսոնը, որոնցով ժամանակին անչափ ոգևորվել էին հայ շատ քաղաքական գործիչներ և որով ցայսօր էլ շատերը մնում են ոգևորված և որոնց չիրականանալու պատճառներն արդեն մատնանշեցինք:

---

[1] **Գ. Լազեան,** Հայաստան եւ Հայ Դատը, հայկոռուս յարաբերութիւններու լոյսին տակ, էջ 215, նաև՝ Լ. Խուրշուդյան, Հայկական Հարցը, Երևան, 1995, էջ 49:

[2] Նույն տեղում, էջ 214: Վիլսոնի նախորոշած սահմանները տե՛ս նաև՝ Армения в документах государственного департамента США 1917-1920гг., с. 421–427.

Վիլսոնի հաջորդ Հարդինգի հայանպաստ հայտարարություններն արդեն նորից ծիսական էին հնչում: Այսպես, 1921թ. մայիսի 30–ին նա հետևյալն է հայտարարում. «Ես դեռևս կողմնակից եմ Հայաստանի անկախության. ամերիկյան ժողովուրդը և կառավարությունը հնարավորը կանեն Հայաստանի վերաշինության համար[1]:

Ի՞նչ անկախության մասին կարող էր արդեն խոսք լինել, երբ արդեն ճնշված էր Փետրվարյան ապստամբությունը և կանխորոշված Հայաստանի ճակատագիրը. այն վերջնականապես խորհրդայնացված էր և բաժանված 1921թ. մարտի 16–ի Մոսկվայի պայմանագրով:

Նույնը պետք է պնդել նրա 1921թ. նոյեմբերի 26–ի հայտարարության մասին՝ կապված Կիլիկիայի հայության հետ: Նա հայտնում է, որ Կիլիկիայի հարցը պետքարտուղար Հյուզի ուշադրության տակ է և հավաստիացնում, թե տեղի հայերը զինվորական պաշտպանություն կստանան[2]:

Բայց սա կնշանակեր հանդես գալ Թուրքիայի դեմ, որին նույն թվականի հոկտեմբերի 20-ի պայմանագրով Ֆրանսիան թողնում էր Կիլիկիան, ընդ որում ճանաչելով Մուստաֆա Քեմալի գլխավորած կառավարությունը (Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովը – ԹԱՄԺ - ն) և հրաժարվում էր նրա դեմ հետագա պայքարից[3]:

Հարց է առաջանում՝ այս պայմաններում ինչու՞ պետք է իր հարաբերությունները Թուրքիայի հետ սրեր ԱՄՆ–ը:

Վերջապես, արդեն Լոզանի կոնֆերանսում վերացավ ԱՄՆ–ի Հայաստանի նկատմամբ ունեցած դիրքորոշման ծխածածկույտը:

1922թ. դեկտեմբերի 30–ին Լոզանի կոնֆերանսում (սկսված նոյեմբերի 20 - ին) ԱՄՆ–ի ներկայացուցիչը արտահայտվում է հայերին Թուրքիայում <<օջախ տրամադրելուն ի նպաստ: Սակայն, հաջորդ օրն իսկ կոնֆերանսի զեկուցատախտակի վրա հայտնվում է մի գրություն, թե նախորդ օրվա հայտարարությունը պաշտոնական չէր>>[4]:

Թուրքիայի նկատմամբ ճնշումներին դեմ էր հատկապես դերծովակալ Բրիստոլը, որը Լոզանի կոնֆերանսում ԱՄՆ պատվիրակներից մեկն էր և որը ժամանակին զգուշացրել էր Ա. Խատիսյանին՝ հույսեր չկապել Վիլսոնի հետ և աշխատել առանձին լեզու գտնել թուրքերի հետ[5]:

---

[1] American Committee Opposed to the Lausanne Treaty, The Lausanne Treaty, Turkey and Armenia, New York, 1926, էջ 211:

[2] Նույն տեղում:

[3] **Ա. Ներսիսեան,** Մովսէս Տէր Գալուստեան, Երեւան, 2011, էջ 126:

[4] D. Boyajian, Armenia, The case for a forgotten Genocide, Westwood, N. J. , 1972, p. 279.

[5] Տես **Ա. Ներսիսյան**, Սևրի պայմանագրի ձախողման պատճառները, «Հյուսիսափայլե, թիվ 1, 2010, էջ 22:

Լոզանի կոնֆերանսը Թուրքիայի՝ շատ հարցերի հետ կապված տարաձայնությունների պատճառով հետաձգվում է 1923թ. փետրվարի 4–ին և կրկին վերաբացվում է ապրիլի 23–ին: Նրա աշխատանքների ընթացքում Իսմեթ փաշան մի նամակ է գրում ԱՄՆ դեսպան Գրինին՝ առաջարկելով կնքել բարեկամության և առևտրական համագործակցության պայմանագիր: ԱՄՆ–ը չի ստորագրում Լոզանի պայմանգրի տակ, բայց անտարբեր կեցվածք է ընդունում Հայկական Հարցի՝ այնտեղ ստորագրած հուլիսի 24–ի պայմանագրով փաստացի թաղման վերաբերյալ: Ավելին, 1923թ. օգոստոսի 6–ին կնքվում է ԱՄՆ–Թուրքիա բարեկամության և առևտրական համագործակցության պայմանագիրը, որի շուրջը բանակցություններ էր տանում Գրինը[1]:

Ընդհանրացնենք.

Առաջին. ԱՄՆ – Հայաստան հարաբերություններում մարդասիրականից քաղաքական դիրքորոշում է որդեգրվում Վիլսոնի կառավարման շրջանում, բայց նրա ջանքերը Հայաստանի հովանավորությունն ստանձնելու ուղղությամբ չեն դիտվում համահունչ ԱՄՆ ընդհանուր քաղաքական շահերին Մերձավոր և Միջին Արևելքում, որի պատճառով նրա ծրագիրը ձախողվում է:

Երկրորդ. Վիլսոնի իրավարար վճիռը, որը կատարվում է Սևրի պայմանագրի համաձայն, չի իրականանում, քանզի քաղաքական նոր գործընթացները արդեն կանխորոշել էին նա ապագան, հիմք հանդիսանալով այն նույնպես մարդասիրական որակելու համար:

Երրորդ. Վիլսոնից հետո ԱՄՆ–ի արտաքին քաղաքականության մեջ չենք հանդիպում կտրուկ դրական դիրքորոշման Հայկական Հարցի առումով, ուստի նա լռին համաձայնվում է Լոզանի պայմանագրին՝ հետամուտ իր տնտեսական և առևտրական շահերին:

Ашот Нерсисян, Анализ процесса получения мандата США и причины его провала - Попытка США получить мандат Армении была уязвимой с самого начала. Он был направлен на то, чтобы взять на себя мандат не только Армении, но и всей Малой Азии, Закавказья, что, однако, было невозможно, так как, с одной стороны, союзники этого не хотели, а с другой стороны, Россия и кемалистская Турция. . Кроме того, многие политики США были против, так как это требовало больших финансовых затрат и, возможно, войны. В сложившейся ситуации мандат был отклонен. Севрский договор дает Соединенным Штатам право распоряжаться армяно-турецкой границей. Арбитражное решение Вильсона от 22 ноября не име-

[1] «Gurrent Historyե, October, 1923.

ло оснований для исполнения, поскольку большевистско-кемалистский союз разделил Армению. Статья представляет собой анализ упомянутых политических процессов.

Ashot Nersisyan, The Analysis of the US Mandate acquisition process and the Reasons for Its Failure - The US attempt to take over the Armenian mandate has been vulnerable from the beginning. It aimed to assume the mandate not only of Armenia, but of the whole of Asia Minor, Transcaucasia, which, however, was not possible, as on the one hand the allies would not want it, and on the other hand Russia and Kemalist Turkey. In addition, many US politicians were opposed to it, as it demanded large financial costs, and perhaps a war. In the current situation, the mandate was rejected. The Treaty of Sevres gives the United States a legal ruling on the Armenian-Turkish border. Wilson's arbitral award on November 22 had no basis to be implemented, as the Bolshevik-Kemalist alliance had divided Armenia. The article is an analysis of the mentioned political processes.

«ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԸ» ՈՐՊԵՍ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼ

ՎԼԱԴԻՄԻՐ ՊՈՂՈՍՅԱՆ

Բանալի բառեր - «Սառը պատերազմ», հակամարտություն, խաղերի տեսություն, մրցակցություն-համագործակցություն, կառավարելի հակամարտություն, Ալ-Քաիդա, Թալիբան։

Պետական ինստիտուտների կազմավորման հզորագույն խթաններից մեկը գրեթե միշտ եղել է սեփական ժողովրդով բնակեցված տարածքի պաշտպանության և ռազմատենչ հարևանների սպառնալիքներին դիմակայելու անհրաժեշտությունը։ Բայց, միևնույն ժամանակ, դա չի նշանակում, որ արտաքին քաղաքական հարաբերություններում թշնամանքի ու անվստահության առկայությունը մշտապես կարելի է անվանել «Սառը պատերազմ»։ Մասնագիտական շրջանակներում կան հետազոտողներ, որոնք պատրաստ են ցանկացած հակամարտություն և բախում հայտարարել «Սառը պատերազմ»։

1940-1980-ական թվականներին ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջև ծավալված «Սառը պատերազմը» իրենից ներկայացնում էր միջազգային հակամարտության առանձնակի, յուրահատուկ ձև, որում փոխգործակցում էին գաղափարական պայքարի, քաղաքական և դիվանագիտական մրցակցության, ուժի կիրառման սպառնալիքի գործոնները։

Խորհրդային-ամերիկյան հարաբերությունների հետպատերազմյան շրջանի պատմությունն ավելի լավ հասկանալու համար հարկավոր է հնարավորինս ճշգրիտ հասկանալ, թե ինչ է տեղի ունեցել նրանց միջև։ Իսկ տեղի է ունեցել թշնամանքի և մրցակցության բավականին բարդ և ոչ տիպական գործընթաց՝ համադրված համագործակցության ոչ պակաս կարևոր և որոշիչ տարրերի հետ, որտեղ երկու գերտերություններն օգնել են միմյանց կառուցել և պահպանել որոշակի համաշխարհային կարգ, իսկ մյուս երկրներին՝ գոյատևել սուր մրցակցության և թշնամանքի պայմաններում։

1991 թվականին Մեծ Բրիտանիայում հրապարակվեց միջազգային հարաբերությունների ոլորտի մի խումբ մասնագետների, այդ թվում՝ ամերիկյան և խորհրդային, կոլեկտիվ աշխատանքը՝ «Սառը պատերազմը՝ որպես համագործակցություն. գերտերությունների փոխգործակցությունը տարածաշրջանային հակամարտություններում» խորագրով[1]։ Մենագրության հեղինակներն առաջին անգամ «Սառը պատերազմը» դիտար-

[1] **Kanet R., Kolodziej E.** The Cold War as Cooperation: Superpower Cooperation in Regional Conflict Management. London: Macmillan, 1991. 384 p.

կում էին ոչ թե որպես առանձնահատուկ մրցաձև, այլ համագործակցության որոշակի ձև, որի դեպքում երկու կողմերն էլ տարբեր պատճառներով, հիմնականում պատասխան սպառնալիքի ազդեցության տակ, բացառում էին միմյանց նկատմամբ ռազմական ուժի ուղղակի օգտագործումը:

Հակամարտության կողմերի վարքագծային դրսևորումները ուսումնասիրվել և մշակվել են դեռևս 1950-ական թվականներին: Առաջնային էտապում վերլուծվեցին հակամարտության գերիշխող տեսակները՝ հետաքրքրությունների և դրանց մասնակիցների ավանդական ընկալման տարբերության համապատկերում: Առանձնացվեց հակամարտության երկու հիմնական տեսակ՝ անտագոնիստական հակամարտություն, ոչնչացման պատերազմ, որտեղ մի կողմի հաղթանակը ճիշտ հավասար է մյուսի պարտությանը (մաթեմատիկայում՝ *«զրոյական գումարով խաղ»*), և մյուս կողմից՝ խառը (դրդապատճառներով) հակամարտություն (*մրցակցություն-համագործակցություն*), որտեղ մասնակիցները դիմակայում, պայքարում են միմյանց դեմ, բայց միևնույն ժամանակ պահպանում են վարքագծի որոշակի կանոններ, որոնք իռացիոնալ վարքագծի այլընտրանք են *(«ոչ զրոյական գումարով խաղ»)*[1]:

Տեսաբանները կարևորում են ոչ այնքան հակամարտության առաջացման պատճառը, որքան քաղաքական բնույթը, թե որքանով է այն կարևոր հակամարտության կողմերի և մասնակիցների համար: Եվ կախված հակամարտության առարկայից (պետության և դրա կառուցվածքի, բնակչության, քաղաքների, մշակույթի և այլ արժեքների ճակատագիրը) և նրա դրսևորման դաժանությունը կարող է ստեղծել մի հոգեվիճակ, որի դեպքում մասնակիցները չեն մտածում այն մասին, թե ինչ կլինի հետո: Հակամարտության կողմերը կարևորում են թշնամու անհապաղ ոչնչացումը և շատ հաճախ դրանով «ախտահարվում» են ամբողջ քաղաքական համակարգեր[2]:

Կախված հակամարտության բնույթից և նրա մասնակիցների վարքագծից՝ Թ. Շելլինգը սահմանել է նրանց ռազմավարությունների երկու տեսակ՝ պայքար մինչև վերջ («թույլ կողմերի խաղ»), որի մասնակիցները

---

[1] **Schelling T. C.** Strategy in Conflict. Cambridge (Mass.): Harvard University Press, 1960. 328 p. Հակամարտության կողմերի վարքագծային դրսևորումները ուսումնասիրողը, թերևս, պրոֆեսոր Շելլինգն է (ԱՄՆ), որը տնտեսագիտության ոլորտում արժանացել է Նոբելյան մրցանակի, ով դեռևս 1950-ականներին վերջերին մշակել և նկարագրել է հակամարտող կողմերի վարքագծի սկզբունքները: 1960 թվականին Հարվարդի համալսարանի հրատարակչությունում լույս է տեսել վերջինիս «Հակամարտության ռազմավարություն» գիրքը, որում գիտական հետազոտության է ենթարկել հակամարտության վարքագծի որոշ քիչ ուսումնասիրված հարցեր:

[2] **Burton, John W.** Conflict: Resolution and Provention. London: Macmillan and New York: St. Martins Press. 1990a, p. 231.

ձգտում են նախ և առաջ ոչնչացնել միմյանց՝ իրենց առջև չդնելով գոյատևման խնդիրներ, և պայքար, որի ժամանակ երկու մասնակիցներն էլ ցանկանում են խուսափել ինքնաոչնչացումից և այդ պատճառով միմյանց պահում են ուշադրության կենտրոնում՝ չսադրելով միմյանց «սպազմատիկ» գործելաոճը[1]: Այս ռազմավարությունը ստացել է «բանտարկյալի երկընտրանք» անվանումը: Ի տարբերություն «թույլ կողմերի խաղի»՝ «բանտարկյալի երկընտրանքը» արդեն ենթադրում էր ընտրություն առանց կանոնների պայքարի և պայքարի միջև, որտեղ պահպանվում են որոշակի նորմեր, որոնք թույլ են տալիս խուսափել ծայրահեղություններից և շարունակել դիմադրությունը գոնե մինչև ավելի հարմար ժամանակաշրջանը (օրինակ՝ մինչև որևէ «հրաշք զենքի» ի հայտ գալը):

Պետք է նշել, որ խելամիտ համակարգերում որոշումները ընդունվում են, որպես կանոն, առկա տեղեկատվության վերլուծության վրա, իսկ ոչ ռացիոնալ համակարգերում որոշումները թելադրում է կրոնը կամ գաղափարախոսությունը, քանի որ երկուսն էլ հավակնում են «բարձրագույն բանականության» կարգավիճակին:

Թ. Շելլինգի ուսումնասիրությունները տվեցին հակամարտության ճշգրիտ և վառ նկարագրությունը, որում կիրառվեցին մաթեմատիկական վերլուծության հնարավորությունները, որոնք բարդ չեն և թույլ են տալիս քաղաքական գործիչներին և հասարակական գիտությունների ներկայացուցիչներին այլ կերպ ընկալելու հակամարտության վարքագծային խնդիրները՝ հակամարտության արդյունավետ կառավարման համար ռացիոնալ լուծման ընտրության անհրաժեշտությամբ[2]: **Հակամարտությունը կառավարելի է**՝ ահա նրա տեսության առանցքային հասկացությունը[3]:

Առաջին տիպի հակամարտությունները (*«զրոյական գումարով»*) մտահոգության զգացում են առաջացնում, քանի որ դրանցում համադրվում են երկու մեծություններ՝ հնարավոր շահումը (հակառակորդի ջախջախումը) և դրա գինը (իրենց երկրին հասցված վնասը), ինչը կասկածի տակ է դնում իրադարձությունների ընթացքի վերահսկողության հնարավորությունը: Որպես հետևանք՝ իրական քաղաքականության մեջ Միացյալ Նահանգների կողմից Խորհրդային Միության ոչնչացման մասին գաղափարներն սկսել են ուղեկցվել պատասխան հարվածի հնարավոր հետևանքների առավել մանրակրկիտ վերլուծությամբ, ինչը մեծապես նպաս-

[1] **Kahn H.** On Escalation: Metaphors and Scenarios. New York: Praeger, 1965. 326 p.

[2] **Белянин А.,** Томас Шеллинг, Роберт Ауман и теория интерактивных взаимодействий // Вопросы экономики. № 1, 2006, с. 4-21.

[3] Տե՛ս **Zeckhauser, Richard 1.,** (1989), Distinguished Fellow: Reflections on Thomas Schelling, The Journal ofConflict Resolution, 6 (1), 88-95.

տեց ռազմաքաղաքական մտածողության ճկունությանն ու իրատեսության բարձրացմանը:

Այստեղ երկու փուլ պետք է առանձնացնել: Առաջինի առանձնահատկությունն այն է, որ 1940-ականների վերջից և գրեթե մինչև 1950-ականների վերջը խորհրդային զինված ուժերը հնարավորություն չունեին զանգվածային հարված հասցնել ամերիկյան տարածքին: Այս հանգամանքը կարող էր «համոզիչ զսպման» դեր խաղալ: Գուցե խորհրդային առանձին ռազմավարական ռմբակոծիչներ կարող էին պատերազմի դեպքում հասնել ԱՄՆ-ի տարածքին, բայց նրանց ճանապարհը փակում էին նոր հակաօդային համակարգերը[1]: Այդ պատճառով ԱՄՆ-ին զսպելու նպատակով Խորհրդային Միության կողմից օգտագործվել է Եվրոպայում խորհրդային զորքերի խմբավորումը, որը կարող էր հարված հասցնել ԱՄՆ-ի եվրոպական դաշնակիցներին և նրանց տարածքում տեղակայված ամերիկյան զորքերին: Բոլորովին այլ իրավիճակ էր ստեղծվեց հետագայում, երբ ԽՍՀՄ-ը մշակեց և սպառազինության մեջ ներդրեց միջուկային զենքի առաքման միջմայրցամաքային միջոցներ, որոնք ԱՄՆ վարքագծի վրա զգալի սթափեցնող ազդեցություն ունեցան: Այս հիմնախնդրի և վերջինիս իրական ասպեկտների ենթախորքին տեղի ունեցան 1962 թվականի Կարիբյան ճգնաժամի իրադարձությունները:

Երկրորդ տեսակի հակամարտությունները *(«ոչ զրոյական գումարով խաղ»*) սկսեցին ավելի մեծ հետաքրքրություն առաջացնել, քանի որ թույլ են տալիս տարբեր կերպ համադրել ռազմական և ոչ ռազմական պայքարի եղանակներ՝ պլանավորելով ավելի ճկուն և ԱՄՆ-ի համար պակաս վտանգավոր գործողությունների ռազմավարություն: Աշխարհի ստրատեգիական փոփոխության հետ միասին՝ սկսեց փոխվել նաև ԱՄՆ ռազմաքաղաքական մտածողությունը՝ «մեծ պատերազմի» տեսությունից մինչև «փոքր պատերազմի» և «ճկուն հակազդեցության», որոնց շրջանակում ռազմավարական ուժերի զանգվածային կիրառման սպառնալիքը մղվեց հետին պլան:

Խառը (դրդապատճառներով) (*մրցակցություն-համագործակցություն*) հակամարտության վարքագծի վերաբերյալ ևս կատարվել են որոշակի ուսումնասիրություններ, քանի որ ԽՍՀՄ սպառազինության մեջ ներդրված միջուկային զենքի առաքման միջմայրցամաքային հնարավորությունները ամերիկյան հանրային կարծիքի և մասնագիտական շրջանակներում տիրապետող դարձրին ԱՄՆ-ի համար միջուկային հակամարտության անցանկալիության համոզմունքը:

[1] NOBAD North American Aerospace Defense Command - Հյուսիսամերիկյան մայրցամաքի օդատիեզերական պաշտպանության միացյալ հրամանատարություն:

ԽՍՀՄ-ի հետ հակամարտության խնդիրների վերաբերյալ տեսական մոտեցումների տարբերությունը լիարժեքորեն արտացոլում են իրականությունը: Ընդհանուր առմամբ, «Սառը պատերազմի» ժամանակ Խորհրդային Միության նկատմամբ ԱՄՆ-ի քաղաքականությունն ու ռազմավարությունը անվանում ենք «զսպման» քաղաքականություն: Խոսքն ամենատարբեր միջոցառումների՝ ռազմական պատրաստությունների, դիվանագիտական գործողությունների, քարոզչական պատերազմի և այլնի մասին էր, որոնք պետք է սահմանափակեին համաշխարհային մասշտաբով խորհրդային ղեկավարության արտաքին քաղաքական ակտիվությունը[1]: «Զսպում» հասկացությունը՝ որպես այդ ուղղությամբ ԱՄՆ-ի քաղաքականության բնութագրիչ, առաջարկել է 1945-1947 թվականներին ԽՍՀՄ-ում ԱՄՆ դեսպանության խորհրդական-դեսպանորդ, Ռուսաստանի գծով հայտնի մասնագետ Ջորջ Քեննանը[2], իսկ պաշտոնական ռազմավարության մեջ այդ հասկացությունը մտցրեց պետքարտուղար Դինա Աչեսոնը[3]: Քեննանը, խոսելով խորհրդային էքսպանսիայի «զսպման» մասին, նկատի ուներ նկատառումների մի ամբողջ համալիր: 1944 թվականին խորհրդային զորքերը, ազատագրելով իրենց տարածքը, դուրս եկան 1941 թվականի ԽՍՀՄ պետական սահմանագիծ և ծառացավ հաջորդ հարցը՝ ինչպիսին կլինի Մոսկվայի հետագա վարքագիծը: Հաշվի առնելով խորհրդային ժողովրդի հսկայական կորուստները՝ միանգամից տեղին էր ակնկալել, որ Ստալինը որոշում կկայացնի կանգ առնել այդ գծի վրա, որպեսզի երեքամյա պատերազմից հետո զորքերը հանգիստ առնեն: Որոշ արևմտյան քաղաքական գործիչներ չէին բացառում նաև ԽՍՀՄ-ի և Գերմանիայի միջև ինչ որ բանակցությունների հնարավորությունը (հիշողության մեջ դեռ կենդանի էր «Մոլոտով-Ռիբենտրոպ» պակտը): Հաշվի առնելով ԽՍՀՄ-ի՝ Արևելյան Եվրոպայի երկրների հետ մինչ Երկրորդ աշխարհամարտն առկա բարդ հարաբերությունները, հարաբերությունների լարումը Մոսկվայի կողմից կարող էր ոչ ռացիոնալ համարվել, որի արդյունքում պատերազմի ողջ ծանրությունը կընկներ Դաշնակիցների վրա: Այս տարբերակի զարգացման հնարավորությունները Վաշինգտոնի կողմից դիտարկվել էին դեռևս 1942 թվականին և 1943-ի հունվարին Կասաբլանկայում կայացած խորհրդաժողովում ընդունված Դաշնակիցների հռչակագրում: Որպես գլխավոր խնդիր՝ որդեգրվեց նաև հիտլերյան ռեժի-

[1] **Кременюк В. А.,** «Холодная война»: как это было и как закончилось, «США Канада», 2014, №10, с. 9.

[2] **Кеннан Дж.,** Дипломатия Второй мировой войны глазами американского посла в СССР, М: Центрополиграф, 2002, с. 250.

[3] **Acheson D.** Present at the Creation: My Years in the State Department. New York: W.W. Norton and Co, 1969. 816 p.

մի անվերապահ կապիտուլյացիայի մասին կետ: Հռչակագրին հետագայում միացավ ԽՍՀՄ-ը: Այսպիսով, դաշնակիցներից որևէ մեկի ելքը պատերազմից կարող էր դիտարկվել որպես թշնամական գործողություն (Արևմուտքում դեռևս հիշում էին 1918 թվականի Բրեստ Լիտովսկի հաշտության մասին)[1]:

Այդ պատճառով Վաշինգտոնում և Լոնդոնում թեթևությամբ ընդունեցին լուրն այն մասին, որ Խորհրդային Միությունը 1944 թվականի ամռանը շարունակել է ռազմական գործողությունները արևելաեվրոպական երկրների տարածքներում: Ըստ էության, ֆաշիզմի ջախջախումից հետո Խորհրդային Միությունն ուներ բոլոր իրավունքները, որպեսզի ապահովի իր անվտանգությունը Եվրոպայում՝ վերահսկողություն սահմանելով Լեհաստանի, Չեխոսլովակիայի, Հունգարիայի, Հարավսլավիայի, Ռումինիայի և Բուլղարիայի նկատմամբ[2]: Եվ դատելով Յալթայում (1945 թ. փետրվար) և Պոտսդամում (1945 թ. հուլիս-օգոստոս) դաշնակցային կոնֆերանսների արդյունքներից, այդ ըմբռնումը գոյություն ուներ:

Բոլորովին այլ բնույթ ուներ իրավիճակի վերահսկողության խորհրդային մոտեցումը: Խորհրդային Միությունը կարող էր ազատագրված երկրներում տեղակայել զորքեր, պահպանել կոմունիկացիաները, որը ԽՍՀՄ-ից մեծ ծախսեր և հավելյալ մարդկային ռեսուրսներ էր պահանջում: Մեկ այլ տարբերակով, որն ավելի հարմար էր խորհրդային կողմին, պայմաններ ստեղծել և նպաստել Արևելյան Եվրոպայի երկրների «բարեկամական» կառավարություններում իշխանության գան կոմունիստները: Առավել ևս, որ դա համապատասխանում էր «համաշխարհային հեղափոխության» տեսությանը, որի մասին Կրեմլում երբեք չէին մոռանում: Ահա այս երևույթը միահամուռ բացասական արձագանք առաջացրեց Արևմուտքի երկրներում, որոնց կարծիքով Խորհրդային Միության գործողությունները, սեփական անվտանգության օրինական պաշտպանության կարգից անցնում էին ինքնիշխան երկրների ներքին գործերին անօրինական միջամտության և համաշխարհային հեղափոխության տարածման ծրագրերի իրականացման կատեգորիայի:

Որպես ԽՍՀՄ-ի ղեկավարության վրա ազդեցության միջոց՝ «զսպման» (containment) հայեցակարգը նշանակում էր դաշնակցային քաղաքականության հրաժարում, բայց ԽՍՀՄ-ին տալիս էր ընտրության հնարավորություն՝ կամ դիտարկվող քաղաքական վարքագիծը ԱՄՆ-ի համար անընդունելի է և հանգեցնում է շահերի բախման, կամ ԱՄՆ-ի մտահոգությունների հաշվի առում և կարևորագույն խնդիրների համատեղ

[1] **Кременюк В. А.,** «Холодная война»: как это было и как закончилось, с. 10.

[2] Նույն տեղում:

լուծում: «Զսպման» հայեցակարգը հակամարտությունների վարքագծի տեսության համաձայն խառը հակամարտության անկնհայտ օրինակ էր:

Այսպիսով, 1940-ական թվականների վերջին քաղաքական զարգացումները կարելի է համապատասխանեցնել խառը հակամարտության, իսկ հետագա քաղաքական կուրսը, որը կիրառեց նախագահ Հ. Թրումենը և շարունակեց նախագահ Դ. Էյզենհաուերը (1952-1960 թթ.), նման էր անտագոնիստական հակամարտության («զանգվածային վրեժխնդրության» ռազմավարությունը, որը գերիշխում էր ԱՄՆ արտաքին քաղաքականության մեջ 1952-1958 թթ.): Եվ միայն որոշ ժամանակ անց, երբ դիվանագիտական հարթեցման արդյունքում 1960-ականներին ռազմավարական հարաբերությունների ոլորտում կողմերը հարաբերական հավասարակշռության հասան, երկու տերությունները վերադարձան «ոչ զրոյական գումարով խաղի» կանոններին: Եվ դա տեղի ունեցավ արդեն 1962 թվականի Կարիբյան ճգնաժամից հետո[1]:

Խառը հակամարտությունների վարքագծային դրսևորումների շուրջ ուսումնասիրությունները հետագայում ևս շարունակվեցին՝ համադրելով համագործակցության և մրցակցության առավել օպտիմալ տարրեր: Մասնավորապես, ամերիկացի հոգեբան Ա. Ռապոպորտի «Կռիվներ, խաղեր և բանավեճեր» աշխատանքում[2] (1960 թ.) առանձնացվեց կոնֆլիկտային իրավիճակների երեք տեսակ, որոնցում մրցակցության և համագործակցության համաձայնության տարրերի համադրության տարբեր աստիճաններ են՝ *«կռիվներ»* (որոնցում հնարավոր են վարքի տարբեր կոպիտ մեթոդներ, որոնք չեն հասնում զենքի կիրառմանը), *«խաղեր»* (որտեղ մրցակցությունը սահմանափակված է վարքագծի միակ կանոնի խիստ պահպանմամբ) և *«բանավեճ»* (որտեղ մրցակցում են մտքերն ու գիտելիքները, ոչ թե կոպիտ ուժը): 1962-ի Կարիբյան ճգնաժամից հետո, որի ընթացքում երկու գերտերություններն առավելագույնս մոտեցան մեծ պատերազմի հնարավորությանը, երկուսն էլ նախընտրեցին նահանջել և չհատել խելամիտ շեմը: Ըստ այս մոտեցման՝ զենքի կիրառմամբ կարելի էր մյուս կողմին պարտադրել վարքագծի որոշակի կանոններ, որոնք թույլ են տալիս որպես կարևոր ռեսուրս օգտագործել այն, ինչով ԱՄՆ գերազանցում էր՝ մասնավոր ձեռնարկատիրության կենսաէներգիան, ազատ գիտական միտքը, ժողովրդավարական ազատությունների գրավչությունը և ուժի դրսևորման բազմաթիվ այլ տարրեր: Խոսքը այն քաղաքական մի-

[1] **Богатуров А. Д., Косолапов Н. А., Хрусталев М. А.,** Очерки теории и методологии политического анализа международных отношений. М.: Научно-образовательный форум по международным отношениям, 2002, с. 89-104.

[2] **Rapoport A.,** Fights, Games, and Debates. Ann Arbor: University of Michigan Press, 1960. 416 p.

ջոցների և մեթոդների համակարգի մասին է, որն արդեն «Սառը պատերազմի» ավարտից հետո սկսեց կոչվել «փափուկ ուժ»[1]:

Ընդհանուր առմամբ, 1960-ականների կեսերի ուժի կիրառման հարցերի շուրջ հատկապես սուր բանավեճերի ընթացան ԱՄՆ հասարակական և քաղաքական շրջանակներում[2]: Կարիբյան ճգնաժամը բավական պարզ հասկացրեց, որ ահաբեկման խաղը («սպառնալիքի միջոցով զսպում») ունի իր սահմաններն ու մրցակցություն խնդիրները չեն լուծվում: Այս շրջանակում կարելի է պնդել, որ կոմունիզմի հետ մրցակցությունում ԱՄՆ-ի շահելու հնարավորությունը որոշեց ոչ թե ռազմական ուժն ու ռազմական հաղթանակի ձգտումը, այլ բոլորովին այլ բան՝ «փափուկ ուժը»[3]:

1960-ական թվականների վերջին շրջանառության մեջ դրվեց «Նիքսոնի հայեցակարգը», որը ենթադրում էր տարածաշրջանում ԽՍՀՄ ազդեցության «մեղմ» զսպում՝ միապետական ռեժիմների՝ Սաուդյան Արաբիայի և Իրանի դիրքերի ամրապնդման և սեփական նավթային ընկերությունների շահերի պաշտպանության հաշվին: «Նիքսոնի հայեցակարգի» ենթախորքային ուսումնասիրությունը թույլ է տալիս նկատել նաև այլ ասպեկտներ, որոնք մեծ դեր խաղացին ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հետագա էվոլյուցիայում, մասնավորապես, վերաձևակերպվեց Խորհրդային Միության հետ հարաբերությունների ռազմավարությունը: Դոկտրինը բխում էր հիմնադրույթներ՝ «*ուժ*», «*գործընկերություն*» և «*բանակցություններ*»:

«Ուժի» հիմնադրույթը նշանակում էր ԱՄՆ-ի՝ որպես միջուկային գերտերության համաշխարհային դերի պահպանում, որը կարող է դիմակայել ԽՍՀՄ-ին և ամբողջ «համաշխարհային կոմունիզմին», այդ թվում՝ Չինաստանին: Այս դրույթը, չնայած իր վիճելիությանը, վերանայման ենթակա չէր:

«Գործընկերությունը ԱՄՆ դաշնակիցների համաշխարհային դերի ինքնուրույն աճի խրախուսումն էր, բայց ոչ թե որպես մրցակիցներ, այլ հակառակը՝ որպես ամերիկյան հզորության լրացում, ինչը մեծապես նպաստեց Եվրոպական ինտեգրման գործընթացի արագացմանն ու Ճապոնիայի միջազգային դերի բարձրացմանը:

«Բանակցությունները» վերաբերում էր կոմունիստական երկրների՝ առաջին հերթին ԽՍՀՄ-ի և Չինաստանի հետ հարաբերությունների ներդրմանը՝ սպառազինությունների մրցավազքի շարունակման, միջուկային պատերազմի վտանգի սահմանափակման, սպառազինությունների մրցավազքի վերահսկման յուրատեսակ «վարքագծի կոդեքսի» մշակմամբ,

[1] **Nye J.** Soft Power. The Means to Success in World Politics. New York: Public Affairs, 2005. 191 p.
[2] **Трофименко Г. А.,** США: политика, война, идеология. М: Мысль, 1976. 359 с.
[3] **Кременюк В. А.,** «Холодная война»: как это было и как закончилось, с. 13.

որը ճգնաժամային իրավիճակներում կնվազեցնի ոչ ռացիոնալ մուտեցումները։

Եթե «Սառը պատերազմի» սկզբնական փուլերում ԱՄՆ ռազմավարության մեջ գերիշխում էր միջուկային զենքի (առաջին հարվածի) կիրառման մուտեցումը (1940-ականների վերջ և 1950-ականների սկիզբ), իսկ դրանից հետո՝ հակառակորդի զինված ուժերին, նրա արդյունաբերական օբյեկտներին և ղեկավարման կենտրոններին հարվածելու մոտեցումը, ապա «Նիքսոնի հայեցակարգի» ներդրմամբ՝ ԽՍՀՄ-ի հետ հակամարտության մեջ ԱՄՆ-ի ռազմավարությունը զգալիորեն փոխվեց։ Խոսքը ուժի կիրառման հնարավորությունից հրաժարվելու մասին չէր, բայց դրա հետ մեկտեղ նախատեսվում էին միջոցներ ԱՄՆ-ի տարածքին միջուկային հարվածի վտանգը սահմանափակելու ուղղությամբ, Խորհրդային Միության և Չինաստանի հետ ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերում համագործակցության հնարավորություն (անվտանգություն, զարգացում, շրջակա միջավայր և այլն)։ Նիքսոնի վարչակազմի օրոք ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մեջ այդ ուղղության իրագործումն ուղեկցվեց ակտիվ բանակցություններով և սպառազինությունների վերահսկման ոլորտում համաձայնագրերի ձեռքբերմամբ[1]։

Անշուշտ, դա օրակարգից չհանեց «երրորդ աշխարհում» երկու համակարգերի և նրանց կողմնակիցների միջև ռազմական մրցակցության հարցը։ Կողմերից յուրաքանչյուրի համար հաղթանակի հեռանկարը շարունակում էր մնալ անկյունաքարային։ Միևնույն ժամանակ, ԱՄՆ և ԽՍՀՄ առաջնորդներն արդեն հեռացել էին հակամարտության նախապատրաստման ծայրահեղ արմատական դիրքերից և սկսել էին փոխել իրենց վերաբերմունքը մրցակցության նկատմամբ՝ չհերքելով համագործակցության հնարավորություններն ու նույնիսկ անհրաժեշտությունը։ Ամերիկյան կողմը հույս ուներ ԽՍՀՄ-ի անուղղակի օգնությամբ դուրս գալ վիետնամական պատերազմից, իսկ խորհրդային կողմի համար կարևոր էր հակահրթիռային պաշտպանության ծավալման շուրջ ԱՄՆ-ի հետ պայմանավորվածությունը։

Միևնույն ժամանակ՝ կոմունիզմի զսպման քաղաքականությանը նպաստեցին նաև ԽՍՀՄ ղեկավարության սխալները, որոնք արդյունք էին աշխարհի իրական գործընթացների ոչ ամբողջական ընկալման։ Ստալինի և Տիտոյի, Խրուշչովի և Մաո Ցզեդունի հակասությունները դարձան կոմունիստական կուսակցությունների քաղաքականության և գործելակերպի նկատմամբ վստահության թուլացման պատճառ։ Եվ վերջնարդյունքում հանգեցրեց նրան, որ 1989-1991 թթ-ին կոմունիստական կուսակցությու-

[1] **Трофименко Г. А.,** США: политика, война, идеология, с. 285.

ների մի մասը կազմակերպեցին յուրատեսակ «թերմիդորյան հեղաշրջումներ՝ սոցիալիստական համակարգելի փլուզման վերջնարդյունքով:

20-րդ դարավերջին և 21-րդ դարասկզբին ահաբեկչությունը դարձավ տարբեր հասարակական-քաղաքական համակարգերի առճակատման հանգույց և «Սառը պատերազմի» կարևոր գործիք: Որոշ ուսումնասիրողներ կիսում են այն մոտեցումը, որ Աֆղանստանում Խորհրդային միության դեմ պայքարելու համար ԱՄՆ հատուկ ծառայությունների օգնությամբ և օժանդակությամբ ստեղծվեցին միջազգային ահաբեկչական «Ալ-Քաիդա»[1] և «Թալիբան»[2] կազմակերպությունները: Նրանց անդամները ռազմական պատրաստություն են անցել պակիստանյան ճամբարներում՝ ամերիկյան հրահանգիչների ղեկավարությամբ[3]: Աֆղանստանից խորհրդային զորքերի դուրսբերումից հետո այս կազմակերպությունները որոշակիորեն դուրս եկան վերահսկողությունից և ահաբեկչական պայքարի տարբեր մեթոդների կիրառմամբ շարունակեցին իրենց դիմակայությունը:

Պատերազմները Աֆղանստանում, Իրաքում, Լիբիայում, Սիրիայում, Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ընթացած բազմաթիվ միջպետական և ներպետական պատերազմներ հանդիսանում են «Սառը պատերազմի» «տաք» դրսևորումները, որոնց միջոցով առաջատար տերությունները ձգտում էին համապատասխան տարածաշրջաններում թուլացնել իրենց մրցակիցների դիրքերը: Ընդ որում, վերոնշյալ պայքարում կողմերը ակտիվորեն կիրառում էին այնպիսի միջոցներ և մեթոդներ, որոնք իրենց և ամբողջ աշխարհի կողմից դատապարտելի էին:

Դրա բացառիկ օրինակ է Աֆղանստանից թմրանյութերի ապօրինի շրջանառությունը: Հետազոտողները նշում են երկու հիմնական փուլ՝ խորհրդային զորքերի հետ առճակատման փուլը և դրանից հետո: Առաջին փուլում ԱՄՆ-ից մոջահեդներին ուղղակի ռազմական օգնությունը համալրվեց ափիոնի և հերոինի առևտուրից ստացված եկամուտներով, ինչն անտեսվեց «Սառը պատերազմի» և աշխարհաքաղաքական նկատառումներով: Ըստ Չարլզ Կոհանի՝ տվյալ փուլում Միացյալ Նահանգների հիմնական առաքելությունն էր «որքան հնարավոր է շատ վնաս հասցնել խորհրդայիններին»[4]:

---

[1] **Bergen, Peter** *The Osama bin Laden I Know: An Oral History of al Qaeda's Leader* (2nd ed.). New York: Free Press. 2006, p. 75.

[2] **Rashid, Ahmed,** *Taliban: Militant Islam, Oil and Fundamentalism in Central Asia*, New Haven: Yale University Press, 2000, pp 132, 139.

[3] **Bergen, Peter,** *Holy War Inc.*, Free Press, 2001, p. 68.

[4] The Geography of War and Peace: From Death Camps to Diplomats / ed. C. Flint. Oxford University Press, 2005. 472 p.

Այսպիսին էր երկու կողմերի հարաբերությունների էվոլյուցիան տվյալ էտապում, որին բնորոշ են «գործընկերության» առաջին նշանները, այլ կերպ ասած՝ հակամարտությունը սկսում էր կերպափոխվել (տրանսֆորմացվել):

Владимир Погосян, «Холодная война» как модель конфликта - В статье исследуется «Холодная война» между США и СССР в 1940-1980 гг., которая была особой, своеобразной формой международного конфликта, в которой факторы идеологической борьбы, политико-дипломатической конкуренции, угрозы *применения силы*.

Автор попытался изучить поведенческие проявления сторон «Холодной войны», объединив теоретические модели конфликта, которые разрабатывались с 1950-х годов. Существует два основных типа конфликтов: антагонистический конфликт (в математике «игра с нулевой суммой») и смешанный (мотивированный) конфликт (конкуренция-сотрудничество).

Войны в Афганистане, Ираке, Ливии, Сирии и многочисленные межгосударственные гражданские войны со времен Второй мировой войны являются проявлениями холодной войны, в которой ведущие державы стремились ослабить своих соперников в соответствующих регионах. Более того, в вышеупомянутой борьбе стороны активно использовали такие средства и методы, которые осуждаемы всем миром.

Vladimir Poghosyan, The Cold War as a model of conflict - The article examines the "Cold War" between the USA and the USSR in 1940-1980, which was a special, original form of international conflict, in which the factors of ideological struggle, political and diplomatic competition, the threat of the use of force.

The author tried to study the behavioral manifestations of the parties to the Cold War, combining the theoretical models of the conflict that have been developed since the 1950s. There are two main types of conflicts: antagonistic conflict (in mathematics, a zero-sum game) and mixed (motivated) conflict (competition-cooperation).

The wars in Afghanistan, Iraq, Libya, Syria and numerous interstate civil wars since World War II are manifestations of the Cold War, in which the leading powers sought to weaken their rivals in their respective regions. Moreover, in the aforementioned struggle, the parties actively used such means and methods that are condemned by the whole world.

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՈՒՆ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՎԱՀՐԱՄ ՂԱՐԱԽԱՆՅԱՆ

Բանալի բառեր – Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտե, «Սառը պատերազմ», Հայկական սփյուռք, պետականություն, հայրենիք-սփյուռք հարաբերություններ, հայապահպանություն ԱՄՆ, ԽՍՀՄ, Մերձավոր Արևելք, Սիրիա, Լիբանան, պետանվտանգության աշխատակիցներ, խորհրդային ազդեցություն:

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն ստեղծվել է Հայկ.ԽՍՀ Նախարարների խորհրդի՝ 1964 թ. մայիսի 26-ի՝ թիվ 226 որոշմամբ[1]: Նախապես որոշված էր, որ Կոմիտեն կոչվելու էր «Արտասահմանյան հայրենակիցների հետ մշակութային կապերի հայկական կոմիտե»[2]: Այդուհանդերձ, երբ 1964 թ. հունիսի 25-ին հրավիրվում է նշված կազմակերպության հիմնադիր համագումարը, մասնակիցները հռչակավոր գեղանկարիչ Մարտիրոս Սարյանի առաջարկությամբ կողմ են արտահայտվում «Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտե» ձևակերպմանը[3]: Նախարարների խորհրդի հաջորդ որոշմամբ Կոմիտեի նախագահ է նշանակվում Վարդգես Համազասպյանը[4]:

Հարկ է նշել, որ Կոմիտեի գլխավոր խնդիրը, որի մասին, իհարկե, բացահայտ չէր նշվում, խորհրդային գաղափարախոսության քարոզչությունն էր սփյուռքահայերի շրջանում և ԽՍՀՄ ազդեցության հաստատումն ու ընդլայնումն արտերկրի հայկական համայնքներում: Մյուս կողմից, պետք է ասել, որ պակաս կարևոր նշանակություն չունեին պաշտոնապես հայտարարված նպատակները՝ 1) հայրենասիրական աշխատանքների կազմակերպումը սփյուռքահայության շրջանում, 2) Խորհրդային Հայաստանի մշակութային և տնտեսական ձեռքբերումների լուսաբանումը արտերկրում, 3) արտերկրի «առաջադիմական կազմակերպությունների» և -հայրենակցական միությունների հետ կապերի հաստատումը: Թեպետ մինչև Կոմիտեի ստեղծումը սփյուռքի հարցերով զբաղվել են ՀԽՍՀ Ժողկոմխորհի ներգաղթի հանձնաժողովը, Հայաստանի օգնության կոմիտեն (ՀՕԿ), Ներգաղթի կոմիտեն և Արտասահմանյան երկրների հետ բարեկա-

[1] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 875, ց. 1, գ. 2, թ. 1-2:

[2] Նույն տեղում, գ. 11, թ. 1-18:

[3] Նույն տեղում, ց. 2, գ. 43, թ. 1:

[4] Նույն տեղում, ց. 1, գ. 2, թ. 3:

մության և մշակութային կապի հայկական ընկերությունը, սակայն նշված հաստատությունների ու կազմակերպությունների գործունեությունը հնարավոր չէր արդյունավետ կառավարել՝ ստանալով սպասված ու ցանկալի արդյունքներ:

Տարբեր տարիների Կոմիտեի կազմում գործել են եվրոպական, ամերիկյան, Ասիայի և Աֆրիկայի երկրների, երիտասարդական կազմակերպությունների, գիտատեխնիկական կապերի, մամուլի, նյութական արժեքների և այլ բաժիններ, հանձնախմբեր: Կապեր են հաստատվել ավելի քան 70 երկրների, հազար հայկական միությունների և հազարավոր գիտական, մշակութային, արվեստի գործիչների, լրագրողների հետ: Արտերկրում գործող հայկական դպրոցներ են առաքվել հայոց լեզվի, գրականության, պատմության դասագրքեր և այլն: Կազմակերպվել են դպրոցականների ամառային հանգիստ Հայաստանի ճամբարներում և սփյուռքահայ ուսուցիչների որակավորման դասընթացներ Երևանում:

***

Անշուշտ, Կոմիտեի գործունեությանն անդրադարձել ու անդրադառնում են մի շարք գործիչներ և հետազոտողներ, ինչպես օրինակ այդ կառույցի առաջին ղեկավար Վարդգես Համազասպյանը, ՀԽՍՀ բարձր և ազդեցիկ պետական պաշտոններ զբաղեցրած, ճանաչված գործիչ Կարլեն Դալլաքյանը, ՌԱԿ նշանավոր ներկայացուցիչ Բարունակ Թովմասյանը, Հովիկ Մելիքսեթյանը, արդի շրջանի հետազոտողներից Արման Եղիազարյանը, Մելիք Հովսեփյանը և ուրիշներ: Ընդ որում, պետք է ասել, որ եթե խորհրդային շրջանում գերազանցապես վեր էին հանվում կազմակերպության ջանքերը՝ Սփյուռքում լրջագույնս նպաստելու հայապահպանության գործին և, ընդհանրապես, ամրապնդելու հայրենիք-սփյուռք կապերը, ապա հետխորհրդային ժամանակահատվածում թերևս եզակի էին այն հետազոտողները, որոնք փորձեցին Կոմիտեի գործունեությունը ներկայացնել «Սառը պատերազմի» դարաշրջանի իրողությունների ներքո և - նույն այդ իրողությունների տրամաբանությամբ պայմանավորված: Այդ առումով հիշատակության արժանի են հատկապես Կոմիտեն 1985-1991 թթ. ղեկավարած Կ. Դալլաքյանի հեղինակությամբ լույս տեսած որոշ աշխատություններ, որոնցում տեղ են գտել կազմակերպությանը նվիրված՝ բանաձևային նշանակության հատվածներ ու եզրահանգումներ: Մասնավորապես, Դալլաքյանն իր՝ «Ռամկավար ազատական կուսակցության պատմություն» մենագրության մեջ նշում է հետևյալը. «1964 թվականից ի վեր սկսեց գործել Սփյուռքի հետ կապի մշտական մարմինը՝ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն: Սա հասարակական մարմին էր (ոչ կառավարական), թեպետ ֆինանսավորվում էր կառավարութ-

յան կողմից: Այս մարմնի ստեղծումով մի վիթխարի առաջընթաց քայլ եւս կատարվեց սփյուռքահայության հետ հարաբերությունների վերակառուցման գործում: Պատմության դարակներին հանձնվեց սփյուռքահայության նկատմամբ դասակարգային մոտեցման, դասակարգային շերտավորման քաղաքականությունը, որը պարտադրվել էր Հայաստանի օգնության կոմիտեին (ՀՕԿ) 20-30-ական թվականներին (ընդգծումը՝ Վ. Ղ.): Մշակութային կապի կոմիտեն կարճ ժամանակում իրականացրեց պատմական տարողության աշխատանք: Ստեղծվեց սփյուռքահայության հետ կապերի մի ամբողջ համակարգ: Բուն կապերը տասնյակ անգամներով բազմապատկվեցին ու հարյուրապատկվեցին: Կոմիտեն փաստորեն դարձավ Հայաստանի իշխանությունների և Սփյուռքի կազմակերպությունների միջեւ միմյանց կապակցող կամուրջ»[1]: Նշելով, որ խորհրդային ղեկավարությունը փոխում էր իր մոտեցումը սփյուռքի նկատմամբ՝ դասակարգայինից անցնելով ազգային արժեքների վրա հիմնված քաղաքականության՝ հեղինակը շատ կարևոր մի բանալի էր տալիս ընթերցողին՝ հասկանալու 1960-ականներից մինչև ԽՍՀՄ փլուզումը (1991 թ.) հայրենիք-սփյուռք հարաբերությունների բուն էությունն աշխարհաքաղաքական անցուդարձերի ֆոնին: Ասվածի կապակցությամբ հատկանշական է նաև Ա. Եղիազարյանի հետևյալ միտքը. «Ակնհայտ է, որ Կոմիտեի նպատակներն ու խնդիրները մեծապես ածանցվում էին ժամանակաշրջանի գաղափարաքաղաքական իրողություններին: Առաջին հերթին առաջ քաշելով փոխադարձ ճանաչողության պահանջը՝ խորհրդահայ իշխանությունները մի կողմից հարկ էին համարում ամրապնդել կապերը Սփյուռքի հետ, իսկ մյուս կողմից Սփյուռքը ճանաչելի դարձնել Խորհրդային Հայաստանում և հակառակը: Կոմիտեի ամենակարևոր նպատակը, փաստորեն, Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդումն էր, որը կատարվում էր ամենատարբեր ծրագրերի իրականացմամբ»[2]: Խնդրի առնչությամբ տեղին է մեջբերել նշված հեղինակի ևս մի կարծիք, որը, մտածում ենք, նույնպես բխում է վերը նշված իրողությունից. «Պետք է նշել, որ թեև Սփյուռքի հայ համայնքների հետ կապեր հաստատելիս Կոմիտեն հենվում էր համայնքների հասարակական-քաղաքական բաժանման վրա («առաջադիմական» և «ռեակցիոն» հոսանքներ), սակայն աշխատանքներում հիմնա-

[1] **Դալլաքյան Կ.,** Ռամկավար ազատական կուսակցության պատմություն, Երևան, «Մուղնի» հրատարակչություն, 2007, էջ 229:

[2] **Եղիազարյան Ա.,** *Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների գերակա ուղղությունները (1960-ական թվականներից մինչև օրս),* Հայագիտության հարցեր 3 (9), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2016, էջ 97:

<u>կանում բացակայում էր այդ բաղադրիչը, և շեշտը դրվում էր միայն մշակութային միջոցառումների վրա</u> (ընդգծումը՝ Վ. Ղ.)[1] »

Վերոնշյալից զատ և վերոնշյալից էական, առանցքային է հետևյալ հանգամանքը. Կոմիտեի՝ բարեսիրական ու մշակութային գործունեության՝ զուտ փաստագրական նյութը վեր հանելուց, գնահատելուց առավել կարևորն այդ նույն գործունեության տրամաբանության՝ ամբողջական ընկալումն է: Թեպետ այդ ուղղությամբ ծանրակշիռ, ժամանակատար ու շնորհաշատ աշխատանքներ են տարել Հ. Մելիքսեթյանը[2], Կ. Դալլաքյանը[3], Ա. Եղիազարյանը[4], Մ. Հովսեփյանը[5], սակայն գտնում ենք, որ պարապը դեռևս լցված չէ:

Նշված խնդրի լուծման նպատակով, անխոս, յուրաքանչյուր հետազոտող պետք է նախ խորամուխ լինի խնդրո առարկա դարաշրջանում հայ ժողովրդի համար ստեղծված միջազգային դրության և դրա մանրամասնությունների մեջ: Իսկ որ «Սառը պատերազմի» հենց առաջին տարիներից հայ քաղաքական մտքի համար (ինչպես ՀԽՍՀ-ում, այնպես էլ ար-

---

[1] **Եղիազարյան Ա.,** *Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գործունեության հիմնական ուղղությունները 1964-1985 թթ.,* Պատմություն և հասարակագիտություն, 2015 թ. , N 1, էջ 70, նաև՝ **Եղիազարյան Ա., Անանյան Մ., Հովհաննիսյան Ա., Հովհաննիսյան Է., Հովսեփյան Մ., Վարդանյան Հ.,** Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները 1918 թվականից մինչև մեր օրերը, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2017, էջ 115:

[2] **Մելիքսեթյան Հ.,** Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980-ական թթ.), Երևան, 1985, էջ 366-446:

[3] **Դալլաքյան Կ.,** Հայկական սփյուռքի պատմություն (համառոտ ակնարկ), Երևան, 2004, նույնի՝ Հուշապատում (դեմքեր, իրողություններ, մտորումներ),Երևան, 1998:

[4] **Եղիազարյան Ա.,** *Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գործունեության հիմնական ուղղությունները 1964-1985 թթ.*, Պատմություն և հասարակագիտություն, 2015թ. , N 1, էջ 59-76 էջ

[5] **Հովսեփյան Մ.,** Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի և Մերձավոր Արևելքի արաբական պետությունների հայ համայնքների համագործակցությունը 1964-1991 թթ., է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2020, 170 էջ, նույնի՝ *Մերձավոր Արևելքում Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գործունեության որոշ խնդիրների շուրջ (1964-1985 թթ.),* «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, 2017, էջ 224-229, *Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն և Հորդանանի հայ համայնքը,* «Պատմություն և հասարակագիտություն» տարեգիրք, 2018, էջ 84-92, *Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի համագործակցությունը Լիբանանի հայ համայնքի հետ (1964-1985),* «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, 2018, էջ 261-270, *Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն և իրաքահայությունը 1964-1985 թթ.,* «Էջմիածին», 2018, սեպտեմբեր (Թ), էջ 115-130, *Միրիահայ համայնքը և Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն 1964-1985 թթ.,* «Լրաբեր հասարակական գիտությունների», 2019, № 1, էջ 110-127, *Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն և Եգիպտոսի հայ համայնքը,* «Գիտական Արցախ», 2019, № 1, էջ 372-381:

տերկրի հայկական համայնքներում) պարզ էր այդ դրությունը, վկայված է բազում փաստավավերագրական, արխիվային և այլ նյութերով. ընդ որում, պետք է ասել, որ դեռ հիշյալ պատերազմի վաղորդայնին էր նշմարվել միջազգային ասպարեզում ստեղծվող այն բարդ վիճակը, որը ոչ միայն չէր բխելու հայ ժողովրդի կենսական շահերից, այլև սուր կերպով հակասելու էր դրանց:

Իսկ որո՞նք էին այդ շահերը:

Առաջին հերթին, պետք է ասել, որ հայ ժողովրդի մեծ մասն Օսմանյան կայսրությունում, ապա նաև Թուրքիայի Հանրապետությունում կատարված ցեղասպանության և մասսայական կոտորածների հետևանքով հայրենազրկվածի կարգավիճակով Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո շարունակում էր ապրել հայրենիքից դուրս՝ տարբեր երկրներում (1940-ական թվականների վերջերին դեռևս վաղ էր խոսել «կայացած Հայկական սփյուռք»-ի մասին*), որևէ երկրի կողմից պաշտոնապես չէր ճանաչվել Հայոց ցեղասպանությունը, լուրջ փորձեր չէին արվել ցեղասպանություն վերապրած ժողովրդի՝ արդարացի դատը լուծելու ուղղությամբ, գործնականում ծանրակշիռ որևէ քայլ չէր կատարվել որևէ գերտերության կողմից աշխարհասփյուռ հայերի՝ թեկուզ մեկ հատվածի՝ Թուրքիայի Հանրապետություն (նկատի է առնված Հայաստանի արևմտյան և Օսմանյան կայսրությանն ու քեմալական Թուրքիային անցած հատվածը) հայրենադարձության ուղղությամբ:

Նշված խնդիրներն էին, որ պատերազմից հետո շարունակում էին հուզել հայ ժողովրդին ընդհանրապես, իսկ նրա հասարակական, քաղաքական գործիչներին մասնավորապես, որոնք սկսեցին նոր ուղիներ փնտրել դրանց լուծման համար:

«Սառը պատերազմի» առաջին իսկ տարիներին հայ քաղաքական մտքի համար նախանշվեց այն գիծը, որը պետք է պահվեր մինչև այդ պատերազմի ավարտը: Մասնավորապես, երկփեղկված աշխարհի՝ միմյանց հակադիր գերտերություններում՝ գլխավորապես ԽՍՀՄ-ում և ԱՄՆ-ում, ինչպես նաև նրանց դաշնակից երկրներում բնակվող հայերն ու գործող հասարակական-քաղաքական, ինչպես նաև կրոնական կազմակերպությունները ոչ միայն չէին կարող չեզոքություն պահպանել խնդրո առարկա պատերազմում, այլև շատ դեպքերում հարկադրված էին սպասարկել տվյալ պետությունների շահերը՝ նման ձևով փորձելով նաև նպաստել հայ ժողովրդի ու նրա պետականության բարօրությանը՝ որքան հնարավոր էր:

---

* Հայկական սփյուռքի գոյավորման և կայացման փուլերին մասին հանգամանալից տե՛ս **Դալլաքյան Կ.**, Հայ սփյուռքի պատմություն, Երևան, 1998:

Ընդ որում, հայ ժողովրդի համար միջազգային իրավիճակն աննախադեպ էր մի քանի առումով, որը պահանջում էր տվյալ դրության խորը վերլուծություն և չափազանց նրբանկատ մոտեցում:

Նախ, ԱՄՆ-ում, արևմտյան, ինչպես նաև Մերձավոր Արևելքի երկրներում բնակվող հայերի համար իրավական առումով գրեթե անհնարին էր իրենց քաղաքացիական պարտքը չկատարել իրենց իսկ քաղաքացիության երկրներում, որը, հակիրճ ձևակերպմամբ, նշանակում էր անմնացորդ ծառայություն տվյալ երկրի պետական շահերին, ինչն էլ հաճախ էր խորը հակասության մեջ հայտնվում ԽՍՀՄ (որի մի մասն էր նաև Հայաստանը) շահերի հետ: Այս պարագայում հարց էր առաջանում, թե որ պարտականությունները պետք է կատարվեին ամբողջությամբ, որոնք՝ մասամբ, և որոնք էին, որ պետք է չիրականացվեին:

Մյուս կողմից, հայ ժողովրդի՝ հատկապես աշխարհասփյուռ հատվածը շատ լավ էր հասկանում, թե ինչ ասել էր սեփական պետականություն և խիստ վերապահությամբ էր մոտենում Արևմուտքում ԽՍՀՄ-ին տրվող «չարիք» որակմանը՝ հատկապես Խորհրդային Հայաստանն այդպիսին չհամարելով[1]:

Նման դրության պայմաններում արտերկրի հայ հասարակական ու քաղաքական ուժերի մեծամասնությունը պատրաստ էր սատարել ժամանակի բուն հայկական պետականությանը՝ ՀԽՍՀ-ին և առիթը ներկայանալուն պես դիմում էր գործնական քայլերի: Հատկանշական է, որ ինչպես ԱՄՆ-ի, այնպես էլ վերջինիս ռազմաքաղաքական ճամբարի երկրների՝ ազգությամբ հայ քաղաքացիների ու հայկական կազմակերպությունների մեծամասնությունը հարկադրված էր *<u>հայաստանամետ</u>* գործունեություն ծավալել առավելապես անտեսանելի ձևով, քանի որ նման գործունեությունն Արևմուտքի գնահատմամբ նույնն էր, ինչ խորհրդայնամետը, որը հավասարազոր էր պետական դավաճանությանը:

Իրավիճակը դյուրին չէր նաև ԽՍՀՄ-ում և, մասնավորապես, Հայաստանում: Ավելին, դեռևս ստալինյան բռնատիրության տարիներից, երբ խիստ կասկածամտությունն ու սուտ մատնությունները խորհրդային քաղաքական կյանքի անքակտելի մասն էին, չափազանց ծանր մթնոլորտ էր ստեղծվել Հայաստանի քաղաքական ու պետական վերնախավի համար՝ հետապնդելու երկրի շահերը: Այստեղ ևս շատ խնդիրների լուծումը փորձ էր արվում կատարել համամիութենական նշանակության հարցերի

[1] Տե՛ս, օրինակ, **Դալլաքյան Կ.**, Ռամկավար ազատական կուսակցության պատմություն, գլուխ IV-Սառը պատերազմի պայմաններում, Ե., Մուղնի հրատ., 2007, էջ 177-226, «Սովետական Հայաստան» թերթում տպագրված Ամերիկայի Հայ ազգային խորհրդի հռչակագիրը. 1945 թ. հունիսի 13, № 118 (7371) :

կարգավորման շրջանում, ինչը քիչ ժամանակ ու ջանք չէր խլում Հայաստանի քաղաքական ու պետական ղեկավարությունից:

Ուսումնասիրելով «Սառը պատերազմի» ժամանակաշրջանը և այդ պատերազմում հայերի ու հայկական կազմակերպությունների ներգրավվածությունը՝ գալիս ենք այն եզրահանգմանը, որ թեպետ ՀԽՍՀ-ն ու արտերկրի հայկական կազմակերպությունները չէին կարող չեզոքություն պահպանել և հարկադրված էին մասնակցել պայքարին, սակայն մեծամասնության համար պայքարի ուղենիշը եղել է հայկական պետականությունն ու դրա շահը՝ թեկուզև այդ պետականությունը լիներ խորհրդային ձևով: Սա էր գործելու՝ ժամանակի տրամաբանությունը, սա էր ձգտման առարկան թե՛ Խորհրդային Հայաստանում, թե՛ Սփյուռքում: Եվ, անշուշտ, այս առումով բացառություն չէր Կոմիտեն: Ընդ որում, այստեղ հարկ ենք համարում նշել՝ խորհրդային շրջանի բոլոր ձեռնարկումները, ծրագրերն ու միջոցառումները չէին, որ կեղծ էին: Ուստի, դարաշրջանի՝ հատկապես համահայկական նշանակության իրադարձությունները (ինչպես օրինակ Հայոց ցեղասպանության, Սարդարապատի հերոսամարտի 50-ամյակների նշումը, խորհրդային պատմագրության կողմից շրջանցված ազգային-ազատագրական պայքարի, դրա շատ դրվագների և հերոսների գործունեության՝ գիտական ուսումնասիրություններն ու հրատարակությունները) արդի փուլի պատմագիտական, հայագիտական մի շարք աշխատություններում, մենագրություններում, հոդվածներում և այլուր կեղծ համարելը, ինչ խոսք, արդարացված չէ:

Կոմիտեի բարեսիրական և հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդմանն ուղղված գործունեությունը, իհարկե, խիստ կարևոր էր թե՛ ՀԽՍՀ, թե՛ Սփյուռքի բազում համայնքների համար: Այդուհանդերձ, նկատի առնելով վերն ասվածը,, հարկ է ընդգծել, որ այդ գործունեությունից զատ, խնդրո առարկա կազմակերպությունը մի անփոխարինելի միջոց էր խորհրդային ղեկավարության համար՝ իր ազդեցությունը տարածելու տասնյակ երկրներում, որտեղ կազմավորվել էին հայկական համայնքներ: Այդ տեսանկյունից առանձնահատուկ նշանակություն ունեին Մերձավոր Արևելքի երկրները՝ հատկապես Լիբանանը և Սիրիան, որոնք հնոցի դեր էին խաղում ողջ Սփյուռքի հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքում: Այդ իսկ պատճառով, բացարձակ պատահական չէր, որ Կոմիտեի ղեկավար կազմում ընդգրկվեցին պետանվտանգության մարմինների՝ մասնավորապես Սիրիայում ու Լիբանանում խիստ արդյունավետ գործունեություն ծավալած աշխատակիցներ, որոնք կազմակերպությանն ուղղակի կամ անուղղակի առնչվող ամեն մի մանրուք պահում էին ուշադրության կենտրոնում: Այդ տեսանկյունից առանձնապես կարևոր է խորհրդային հատուկ ծառայություններում աշխատած և փա-

ռավոր ուղի անցած մի այնպիսի ճանաչված անհատի կենսագրության ուսումնասիրությունը, ինչպիսին Պետրոս Պետրոսյանն է:

Գաղտնիք չէ նաև, որ «Սառը պատերազմի» տարիներին Մերձավոր Արևելքը խորհրդային և արևմտյան ճամբարի երկրների համար դարձել էր մրցակցության ու պայքարի կարևորագույն, առաջնային նշանակության թատերաբեմ: Սիրիայում և Լիբանանում բախվում էին ոչ միայն ժամանակի գերհզոր տերությունների՝ ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի ու նրանց դաշնակիցների, այլև Թուրքիայի Հանրապետության և հայ ժողովրդի շահերը: Ուսումնասիրելով ժամանակին կատարված շատ ու շատ գործընթացներ՝ պարզ է դառնում, որ հայ ժողովուրդը պարզապես հնարավորություն չուներ չեզոքություն պահպանելու նշված զույգ տերությունների շահերի բախման շրջանում: Ավելին, ինչպես ՀԽՍՀ-ն, այնպես էլ հայկական բազմաթիվ համայնքներ եռանդուն կերպով ներգրավվեցին «Սառը պատերազմի» և՛ միկրո, և՛ մակրոմակարդակում: Ընդ որում, այդ ներգրավվածությունն արտահայտվում էր կյանքի գրեթե բոլոր ոլորտներում՝ սկսած տարրական, պարզ կենցաղավարությունից, վերջացրած միջազգային նշանակության քաղաքական անցուդարձերով: Եվ այստեղ է, որ Կոմիտեի բուն գործունեությունը խիստ կարևորվում էր ինչպես Հայաստանի ղեկավարության, այնպես էլ Կրեմլի կողմից, որոնք իրական շահագրգռություն էին ցուցաբերում թե՛ խորհրդային ներկայությունը Սփյուռքում անընդհատ ապահովելու, թե՛ հայկական համայքները սերտորեն հայրենիքին կապելու համար:

Vahram Gharakhanyan, The Core Logic of Activities of the Committee for Cultural Relations with Diaspora Armenians-Investigating the Cold War era and the involvement of Armenians and Armenian organizations in that war, we come to the conclusion that Soviet Armenia and Armenian organizations abroad could not maintain neutrality and were forced to take part in the struggle. And one should note that the struggle of the majority of Diaspora Armenians was for the sake of Armenian statehood and its interests, had it been in the Soviet or other form. This was the logic of the time; this was the object of aspiration both in Soviet Armenia and in Diaspora. And, of course, the Committee for Cultural Relations with Diaspora Armenians was not an exception. The Committee's philanthropic efforts to strengthen Homeland-Diaspora ties were, of course, crucial for both Soviet Armenia and the many communities in the Diaspora. However, in view of the above mentioned fact, it should be noted that in addition to these activities, the organization in question was an irreplaceable way for the Soviet leadership of expanding its influence in dozens of countries where Armenian communities were formed. And it is here that the

actual activities of the Committee were strongly used by both the Armenian leadership and the Kremlin, who showed a real interest in ensuring the Soviet presence in the Diaspora constantly and linking the Armenian communities to the homeland closely.

Ваграм Караханян, Истинная логика деятельности Комитета по культурным связям с армянами за рубежом - Исследуя период холодной войны, участие армян и армянских организаций в этой войне, приходим к мысли, что, Советская Армения и армянские организации за рубежом не могли соблюдать нейтралитет и были вынуждены принять участие в упомянутой борьбе. И надо отметить, что борьба для большинства армян Диаспоры велась во имя армянской государственности и ее интересов, будь она в советской или иной форме. Это была логика того времени; к этому стремились как в Советской Армении, так и в Диаспоре. И, конечно же, Комитет по культурным связям с армянами за рубежом не стал исключением. Благотворительная деятельность Комитета по укреплению связей между Родиной и Диаспорой, безусловно, имела решающее значение как для Советской Армении, так и для многих диаспорских общин. Однако, учитывая вышеизложенный факт, следует отметить, что, кроме этой деятельности, рассматриваемая организация была для советского руководства незаменимым средством расширения своего влияния в десятках стран, где были созданы армянские общины. И именно здесь деятельность Комитета активно использовалась как армянским руководством, так и Кремлем, проявившим реальную заинтересованность в постоянном обеспечении советского присутствия в диаспоре и тесной связи армянских общин с родиной.

ՆԵՐՍԵՍ ՄԵԾԻ 364 – 373 ԹԹ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՔՆՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԱՐՇԱԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Բանալի բառեր – Արշակ Բ, Ներսես Մեծ, Հայ – պարսկական պատերազմ, հայոց եկեղեցի, հռոմեական կողմնորոշում, Ձիրավի ճակատամարտ, Մուշեղ Մամիկոնյան, Պապ թագավոր, Շապուհ Բ:

Հռոմի կայսր Հուլիանոս Ուրացողի սպանությունից հետո (363), որին Պարսկաստանի հետ պատերազմելու ընթացքում օգնել հապաղում էր Արշակ Բ - ն, չուզենալով սրել իր հարաբերությունները Շապուհ Բ –ի հետ, այնուամենայնիվ, չկարողացավ խուսափել նոր, մեծ փորձությունից: Արշակի խուսանավելը պայմանավորված էր նրանով, որ ժամանակ շահի մինչև Հուլիանոսի կողմից Սասանյան մայրաքաղաքի գրավումը, ապա նոր միայն խառնվի պատերազմին: Արշակի խնդիրը, որը նրան ներկայացրել էր կայսրը իր զորավարներից Պրոկոպիոսի միջոցով, Կորդուքի և Մոկքի վրայով Կրերեաց լեռնանցքով Մեծ Զավ գետի հովիտ իջնելը և ապա՝ Մարաստանի Խիլիկոմ նահանգի ավերումն էր ու հետո միացումը հռոմեացիների հիմնական ուժերին Աղիաբենում[1]: Արշակը չէր շտապում արագ իրականացնել այս խնդիրը մեր արդեն մատնանշած պատճառով. պարզ էր, որ հաղթելու դեպքում պարսիկները վրեժ կլուծեին հայերից: Սակայն, չնայած Տիգրոնի մոտ հռոմեացիները ջախջախում են պարսիկներին, բայց չեն կարողանում գրավել այն: Հուլիանոսը նահանջում է հյուսիսային ուղղությամբ, այն հույսով, որ իրեն կմիանան Արշակն ու Պրոկոպիոսը: Արշակը, մինչև այդ, այնուամենայնիվ, ավերել էր Խելիկոմը, ենթադրելով թերևս, որ Հուլիանոսը գրավել է Տիգրոնը, սակայն իրականում վերջինս նահանջել էր և սպանվել թշնամու նիզակի զարկից[2]: Կայսր հռչակված Հովիանոսը Պարսկաստանի հետ նույն 363 – ին կնքում է երեսունամյա(363-393) հաշտության պայմանագիր, որն Ամիանոսը համարում է «ամոթալի», քանի որ դրանով Հռոմի դաշնակից Հայաստանը մատնվում էր բախտի քմահաճույքին, Պարսկաստանի հարձակման դեպքում նա պարտավորվում էր չօգնել նրան[3]: Այդ պայմանագրով Անդրտիգրիսյան հինգը գավառ՝ Աղձնիքը, Մոկքը, Ծավդեքը, Ռեհիմենեն և Կորդու-

[1] Հ. Մարկվարտ, Պարսկահայք նահանգը, «Պատմա- բանասիրական հանդես»», թիվ 2, 1961, էջ 240:

[2] **Հակոբ Մանանդյան,** Երկեր, Բ. Երևան, 1978, էջ 181:

[3] Նույն տեղում, էջ 182:

քը տասնհինգ ամրոցների հետ, ինչպես նաև Սինգարան, Մծբինը և Կաստար – Մավրորումը տրվեցին Պարսկաստանին[1]:

Արշակի համար եկավ ծանր փորձության ժամանակաշրջան. Պարսկաստանը հարձակվեց Հայաստանի վրա 364 – ին, սկսվեց հայ – պարսկական պատերազմը, որը փաստացի տևեց մինչև 371թ.-ը: Քանի որ մեր նպատակը բոլորվին այլ է, չենք խորանում պատերազմական իրադարձությունների մանրամասների մեջ: Նշենք միայն, որ այս պատերազմում, չի կարելի պնդել, որ Արշակը պարտվեց, ավելին՝ Շապուհը ձախողվեց Հայաստանում, նաև այն դեպքում, երբ նրա կողմն էին անցել հայ դավաճան նախարարներ, որը ոչնչով չի արդարացվում: Ավելին, եթե ճիշտ համարենք այն տեսակետը, որ հենց այս ընթացքում են նրանք հարձակվել և կործանել Արշակավանը, ապա ավելացնելու բան այլևս չի մնում[2]:

Շապուհ Բ - ի կողմն անցած նախարարներից հատկապես հայտնի դեմքեր էին Մերուժան Արծրունին և Վահան Մամիկոնյանը:

Այս իրադարձությունների ընթացքում, մինչև 368թ.-ին Արշակի խաբեբայությամբ կալանավորումը, ինչպիսի՞ գործունեություն է ծավալել Ներսես Մեծը: Ցավոք այդ մասին տեղեկությունները քիչ են, բայց, դրանով հանդերձ, այն տեսակետն է հիմնավորվում, որ նա Արշակի հետ, մեղմ ասած, լավ հարաբերությունների մեջ չի եղել: Արշակավանի ավերումից հետո, երբ Արշակը վրաց զորքերի օգնությամբ վրեժխնդիր է լինում նախարարներից և ճնշում նրանց փաստացի ապստամբությունը, «Այդ ժամանակ Ներսես Ա կաթողիկոսը որոշում է միջնորդի դեր կատարել: Նրան հաջողվում է թագավորին հաշտեցնել նախարարների հետ և դրանով իսկ կանխել վերջիններիս բնաջնջումը: Այդ հաշտությունը Ներսես Ա-ն օգտագործեց հօգուտ հռոմեացիների, պատանդ ուղարկելով կայսրին թագաժառանգ տակավին մանուկ Պապին և հայոց ավագանու այլ սեպուհների[3]»:

Սակայն, ըստ հղված հատորում զարգացրած տեսակետի, Արշակը դրժում է իր խոստումը և վրեժ լուծում Արշակավանի ավերման համար: Սա նշանակում է, որ այս ամենը եղել է մինչև պատերազմը, քանի որ «ամոթալի պայմանագրից» հետո ամենևին միտք չուներ Պապին Հռոմ պատանդ ուղարկելը, որը ձեռքերը լվացել էր Հայաստանից: Մենք այն կարծիքին ենք, որ Պապը պատանդ է ուղարկվել ավելի շուտ, թերևս Հուլիանոսի ժամանակ կամ նրանից առաջ՝ որպես երաշխիք Հայաստանի Հռոմին հավատարմության և չի բացառվում, որ դրանում դեր է ունեցել նաև Ներսեսը: Թերևս Պապը եղել է այն պատվիրակության կազմում, որը Ներսեսի գլխավորությամբ մեկնեց Հռոմ: Փավստոսը հեքիաթապատում

[1] Նույն տեղում:

[2] Տես Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. 3, Երևան, 1984, էջ 96 – 97:

[3] Նույն տեղում:

զրույցներից հետո նշում է, որ Ներսեսը վերադառնում է Հայաստան, ինչը համընկնում է Արշակավանի դեպքերին: Պատերազմական իրադարձությունների նկարագրության ժամանակ մենք Փավստոսի մոտ Ներսեսի մասին տեղեկությունների չենք հանդիպում: Փավստոսի նկարագրություններից երևում է, որ պատերազմի ընթացքում շատ հայ նախարարներ են դավաճանում Արշակին և անցնում պարսիկների կողմը, որի պատճառով հայոց թագավորությունը քանդվում ու թուլանում է և երկրում մնացածներն էլ գնում են Ներսեսի մոտ: Հարց է առաջանում, այն դեպքում, երբ Արշակը միայն հաղթանակներ է տանում Վասակ սպարապետի հայոց զորքերի հրամանատարությամբ, ապա՝ ինչու՞ են երկրում մնացածները հավաքվում Ներսեսի մոտ և դժգոհում Արշակից: Նրանք պարտություն էին ուզում, ի՞նչ է: Մի բան ակնհայտ է, որ հայերը չեն եղել միաբան, ըստ երևույթին երկու պատճառով պայմանավորված՝ Արշակի քաղաքականության նկատմամբ անհանդուժողականությամբ և պատերազմի ավարտով շահագրգռված, որը կարող էր լինել կամ հաղթանակի դեպքում կամ կապիտուլացիայի: Այնուամենայնիվ, դրանք դատապարտելի դիքորոշումներ էին, մանավանդ, որ Փավստոսն ինչքան էլ չափազանցնի, մի բան ակնհայտ է, որ հայերը հաղթանակներ էին տանում: Ոչ առանց ցավի և ափսոսանքի է հնարավոր կարդալ Փավստոսի հետևյալ տողերը. «Ապա հայոց աշխարհի թագավորության բոլոր մարդիկ հավաքվեցին եկան Հայոց մեծ եպիսկոպոսապետ Ներսեսի մոտ, - մեծամեծներ, նախարարներ, կուսակալներ, կողմնակալներ, գավառատերեր, գործակալներ, գյուղերի համփաներ. սրանք մի տեղ հավաքվելով սկսեցին խոսել Ներսեսի հետ և ասացին. «Տե՛ր, դու ինքդ գիտես, որ ահա երեսուն տարի է մեր Արշակ թագավորի ժամանակ, որ մենք ոչ մի տարի պատերազմից հանգիստ չենք ունեցել, շարունակ մեր երեսների քրտինքը սրբել ենք սրերով, սլաքներով, նիզակների տեգերով: Մենք այլևս չենք կարող դիմանալ, ոչ էլ դուրս գալ պատերազմի. ավելի լավ է, որ մենք էլ հպատակվենք պարսից թագավորին, ինչպես արին մեր ընկերները, որոնք նրան թողին ու գնացին Պարսից թագավորի մոտ. (նկատի ունեն Մերուժան Արծրունուն և Վահան Մամիկոնյանին – Ա. Ն.) մենք էլ նրանց պես պետք է անենք, որովհետև չենք կարող կռվել: Եթե Արշակ թագավորը կամք ունի Շապուհի հետ կռվելու, թող Վասակի և իր աներոջ՝ Անդոկի միջոցով պատերազմի, այլ այս հայոց աշխարհից ոչ ոք, ոչ մի մարդ չի գնա օգնության: Նա ուզում է՝ թող պատերազմի, չի ուզում՝ չպատերազմի, մեր պետքը չէ, մենք նրան թողել ենք[1]»:

Փաստորեն ստացվում է, որ պայքարելու փոխարեն նրանք որոշել են ընդունել պարսից գերիշխանությունը: Ցավալի մի փաստ, որը չունի արդարացում, մանավանդ, որ Արշակը չէր պատերազմ հրահրողը: Ակընթ-

[1] **Փավստոս Բուզանդ**, Պատմություն Հայոց, Երևան, 1968, էջ 208:

հայտ է, որ նախընտրելի է եղել օտար տերության տիրապետության տակ ապրելը, քան պետական դրոշի ներքո միավորվելը: Այս իրավիճակում Ներսեսը, բնականաբար, պետք է նախընտրեր նրանց Արշակին հնազանդեցնելու մոտեցումը, թեկուզ և այն պարզ պատճառով, որ Շապուհը հալածում էր քրիստոնեաներին, որն իրեն լավ բան չէր խոստանում: Եվ դա պարզ երևում է նրա պատասխանից, որից բավական կարևոր եզրակացությունների տեղիք են տալիս հատկապես հետևյալ տողերը. «Դուք ահա բոլորդ կաք ու վկա եք, որ բոլորդ Արշակունյաց տոհմից եք ձեռք բերել ձեր դիրքը. ձեզանից ոմանք նրանից են նշանակվել գավառների տերեր, ոմանք՝ աշխարհների մեծամեծներ, ոմանք՝ խոշոր ավանների և գյուղերի, ոմանք՝ գանձերի և զանազան դաստակերտների: Որովհետև Արշակունյաց պիղծ տոհմը թեպետև հանցավոր է արարիչ աստծու առաջ, բայց ձեզ բոլորիդ աղբից բարձրացրել և ապրեցրել է, մեկին գործ տալով, մյուսին պատիվ, մեկին՝ իշխանություն, մյուսին գործակալություն:

...Իսկ դուք ահա կամենում եք հեթանոսների ծառայության տակ ընկնել,կորցնել ձեր կյանքն աստուծով, մերժել ձեր բնիկ տերերին, որոնք տրված են ձեզ աստծուց, ծառայել օտար տերերի և նրանց անաստված կրոնին ցանկալ: Աստված չանի, որ դուք այդ կրոնը սիրեք, հավանեք ու հանձն առնեք, հեռանալով ձեր աստվածապաշտ թագավորից, որովհետև Արշակը բյուր անգամ էլ չար լինի, սակայն աստվածապաշտ է, որքան էլ մեղավոր լինի, սակայն ձեր թագավորն է[1]»:

Ներսես քահանայապետի խոսքերից եզրակացություններն հետևյալներն են.

1. Նա, որ փաստորեն միացած լինելով կենտրոնախույս ձգտումներ ունեցած նախարարների հետ՝ ընդդեմ Արշակ Բ – ի պետության ամրապնդման քաղաքականության, փաստորեն կոչ է անում միանալ նրան, թեպետ, ըստ նրա՝ Արշակունյաց տոհմը պիղծ է: Բայց եթե այդպես դատենք, նա ինքն էլ պարսկական ծագում ուներ և նրա տոհմը քիչ վնաս չէր պատճառել հայ ժողովրդին: Գրիգոր քահանապետը չէ՞ր արդյոք, որ կործանեց հին հայկական ամբողջ մշակույթը: Այստեղ երկրորդ կարծիք չի կարող լինել:

2. Նա ստիպված պետք է նման կոչ աներ, որովհետև Հռոմի քաղաքական պասիվության պայմաններում, երբ առկա էր պարսկական տիրապետության վտանգը, այլ ելք չուներ Արշակի կողմը թեքվելուց բացի:

3. Եթե նրա այս խոսքերը հետևանք էին պետականությունը պահպանելու ձգտման, ապա ինչու՞ էր նա նախկինում նպաստել դրա թուլացմանը՝ լռին համաձայնվելով Արշակավանի կործանմանը:

[1] Նույն տեղում, էջ 208 – 209:

Անկախ այս ամենից, տվյալ պահին նրա այս դիրքորոշումը ճիշտ էր, որը կարծես թե նրա մոտ եկածները չեն ընդունում, քանի որ «աղաղակ բարձրացրին, իրար ձայն տվին՝ շփոթություն և աղմուկ հարուցելով. «Վեր կենանք, գնանք, - ասում էին նրանք,- քաշվենք գնանք մեր տեղերը. այդ խոսքերը չենք կամենում ընդունել»: Սփռվեցին, գնացին ամեն մեկը իր տունը»[1]:

Այսպիսով, ստացվում է, որ նրանք չեն ընդունում Ներսեսի խոսքերը, որոնք հետևյալ հարցն են հարուցում՝ ինչու՞ են գնացել նրա մոտ, եթե պետք է չանսային նրա խորհրդին: Ենթադրությունը մեկը կարող է լինել՝ նրանք գնացել են տեղյակ պահելու, որ թեկուզ կրոնը փոխելու գնով կընդունեն պարսկական գերիշխանությունը: Հակառակ դեպքում ինչու՞ է Ներսեսը նրանց վախեցնում Աստծո պատժով:

Այնուհանդերձ, Շապուհը չի կարողանում հասնել իր նպատակին, նա փաստացի պարտվում է Արշակից և Վասակից, որին հետևում է նրա դավադիր արարքը: Արտագերսի գրավումից հետո ձերբակալվում և դաժանաբար սպանվում է նաև Փառանձեմը: Հայաստանը փաստորեն գրավվում է: Հետագա քաղաքական և ռազմական իրադարձությունների մանրամասներից զերծ մնալով, շեշտենք միայն, որ Մուշեղ Մամիկոնյանը Հռոմ մեկնելով բերում է Պապին՝ հռոմեական օժանդակ զորքի հետ, որից հետո սկսվում է պայքարը պարսիկների դեմ, իսկ Ձիրավի վճռական ճակատամարտում հայերը վերջնական պարտության են մատնում նրանց: Փաստորեն Մուշեղի և Պապի հետ Հռոմից վերադառնում է նաև Ներսեսը[2], որը նշանակում է, որ նա թերևս հուսահատ, նորից մեկնել է Հռոմ՝ աջակցություն խնդրելու:

Ճակատամարտի ընթացքում Ներսեսն, ըստ Փավստոսի՝ Բագրևանդի Նպատ լեռան վրա էր, ուր աղոթում էր հայոց հաղթանակի համար: Այդ մասին առասպելախառն պատմություն է մատուցում Փավստոսն, այն տպավորությունն ստեղծելով, որ եթե չլինեին նրա աղոթքները, հայերը կպարտվեին: Մի հետաքրքիր փաստի մասին էլ կցանկանայինք մատնանշել: Փավստոսը վկայում է, որ պատերազմից առաջ Պապը չի ցանկացել, որ Մուշեղը գլխավորի զորքին, մտավախություն հայտնելով, որ կմիանա պարսիկներին: Ներսեսը ցրում է նրա կասկածները, բայց միայն Մուշեղի երդումից հետո է Պապը համաձայնվում, որ հրամայի զորքին[3]:

Երբ երկիրը խաղաղվում է Ներսեսը ձեռնամուխ է լինում իր այն գործերի շարունակությանը, որոնք սկսել էր Աշտիշատի ժողովից հետո: Երիցս ճիշտ է Լեոն, երբ գրում է. «Իսկ Ներսեսը, օգտվելով երկրում հաս-

[1] Նույն տեղում, էջ 210:

[2] Հայ ժողովրդի պատմություն, նշվ. հատորը, էջ 102:

[3] Նույն տեղում, էջ 235 – 242:

տատված խաղաղությունից, վերադառնում է, իրեն հատուկ եռանդով և մեծ ձեռներեցությամբ, իր կրթական-բարեսիրական գործունեության, որ այնքան զարգացրել էր Արշակի ժամանակ, բայց որի արդյունքների մեծ մասը, անշուշտ ոչնչացել էր պարսկական արշավանքների տարիներում»[1]:

Հարկավ, նա սա գրում է Փավստոսի տեղեկությունների հիմամբ՝ «Իսկ հայոց Ներսես եպիսկոպոսապետը շինում էր Հայոց աշխարհի բոլոր ավերված տեղերը, խնամում ու մխիթարում էր, դարմանում ու պահպանում էր բոլոր աղքատներին.բորոտների և աղքատների համար ապաստարաններ էր պատրաստում: Ամեն տեղ եկեղեցիներ էր շինում, ավերվածները նորոգում, բոլոր խանգարված կարգերը վերնորոգում էր և ուղղում:... Հայոց իշխանության բոլոր սահմաններում նա շատացրեց եկեղեցու պաշտոնյաների թիվը, ամեն տեղ տեսուչ - եպիսկոպոսներ դրեց և միշտ հետևում էր իր տեսչության ու իշխանության գործերին, քանի դեռ ապրում էր»[2]:

Փաստորեն նա չի հրաժարվում եկեղեցու հզորացման այն քաղաքականությունից, որն իրականցնում էր Արշակի օրոք և որը թերևս պատճառներից մեկն էր նրանց ընդհարումների: Պապը, որը մի խոհեմ և հանճարեղ պետական այր էր, այս ամենին նրբորեն է վերաբերվում Ներսեսի կենդանության օրոք: 373թ. Եկեղյաց գավառի Խախ ավանում Ներսեսի անակնկալ վատանալուց և, շատ չանցած, մահանալուց հետո, Պապը արդեն որդեգրում է եկեղեցու հանդեպ այն քաղաքականությունը, որը ժամանակին իրականացնել փորձեց իր պապ Տիրանը, բայց, ցավոք զոհ գնաց հռոմեացիների կազմակերպած եղկելի դավադրությանը, որի մանրամասներին անդրադառնալը դուրս է մեր այս ուսումնասիրության շրջանակներից:

Ամփոփելով, շեշտենք, որ այսպիսով,

1. Ներսես Մեծը 364 – 371թթ. հայ – պարսկական պատերազմի ընթացքում, որի սկզբնավորումը պայմանվորված էր «ամոթալի դաշինքով» փաստորեն հակվում է դեպի Արշակ Բ – ն, քանի որ Հայաստանը զրկվել էր հռոմեական աջակցությունից, իսկ պարսիկները հալածում էին քրիստոնեաներին: Այս փուլում նա հայոց պետականության պահպանման կողմնակից էր:

2. Արշակի դավադրական ձերբկալությունից ու կալանավորումից և Վասակ Մամիկոնյանի սպանությունից հետո, որոնց հետևում է պասկական արշավանքը, նա կրկին մեկնում է Հռոմ, վերջինիս օժանդակությունը գտնելու և Մուշեղի հետ հռոմեական աջակցությամբ կարողանում է Հայաստան բերել Պապին, որից հետո պարսիկները պատերազմում պարտվում են:

---

[1] **Լեո**, Երկերի ժողովածու, առաջին հատոր, Երևան, 1966, էջ 479:

[2] **Փավստոս Բուզանդ,** Պատմություն հայոց, էջ 254 – 255:

3. Պապի գահակալման տարներին նա կրկին որդեգրում է իր հին քաղաքականությանը՝ միտված եկեղեցու հզորացմանը, որը տևում է մինչև իր մահը:

Аршак Нерсисян, Анализ деятельности Нерсеса Великого 364-373 гг. - В 364 г. началась армяно-персидская война, главной причиной которой стал «позорный договор», подписанный между римским императором Овианосом и Шапухом II в 363 г., по которому он не будет вмешаться в войну, если Персия вторгнется в Армению. Во время этой войны Нерсес Великий не выступал против Аршака II, поскольку имел римскую ориентацию. Он призвал министров оппозиции присоединиться к своему королю. После ареста Аршака он сделал все, что было в его силах, для организации борьбы с персами. После победы армян, во время правления Папа, он продолжил свою прежнюю политику, которая была направлена на укрепление позиций церкви.. Данная статья посвящена анализу этих вопросов.

Arshak Nersisyan, Nerses the Great 364-373 activity examination - In 364, the Armenian-Persian war broke out, the main reason for which was the "shameful treaty" signed between Roman Emperor Hovianos and Shapuh II in 363, by which he would not intervene in the war if Persia invaded Armenia. During this war, Nerses the Great did not oppose Arshak II, because he had a Roman orientation. He called on opposition ministers to join their king. After Arshak's arrest, he did everything in his power to organize the struggle against the Persians. After the victory of the Armenians, during the Pope's reign he continued his previous policy, which was aimed at strengthening the position of the church. This article is dedicated to the analysis of these issues.

ՄԻ ՔԱՆԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԹՈՆԴՐԱԿՅԱՆ ԱՂԱՆԴԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԺՈՐԱ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Բանալի բառեր – Թոնդրակյան աղանդ, Հայ առաքելական եկեղեցի, Սմբատ Զարեհավանցի, այլաղավանություն, Գրիգոր Մագիստրոս, ուսմունք, քրիստոնեություն:

Թոնդրակյան աղանդը ծագել է 9–րդ դարում, որի հիմնադիրն ու գաղափարախոսը Ծաղկոտն գավառի Զարեհավան գյուղում ծնված Սմբատ Զարեհավանցին է: Նրա աղանդի կենտրոնը Թոնդրակ ավանն էր: Ստեփանոս Տարոնեցին վկայում է, որ Հայոց կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցու (898 - 829) օրոք է ի հայտ գալիս Սմբատ Զարեհավանցին. «Սրա օրոք երևաց Սմբատը՝ թոնդրակյաններից առաջինը, Ծաղկոտն գավառի Զարեհավան գյուղից, որ հակառակ էր քրիստոնեական բոլոր կարգերին»[1]:

Գրիգոր Մագիստրոսը (990 - 1058) գրում է, որ թոնդրակյանները երկու հարյուր տարուց ավելի է, որ իրենց գաղափարախոսությամբ ապականում են հայոց երկիրը և մինչև իր ժամանակները 15 քահանայապետեր նզովել են թոնդրակեցիներին, 170 տարի շարունակ հայոց տասներեք կաթողիկոսներ և նույն թվով աղվանից հայրապետներ հանդիմանել, նզովել, անիծել և արտաքսել են նրանց, բայց ապարդյուն[2]:

Պատմաբան Աշոտ Հովհաննիսյանն այն կարծիքին է, որ Թոնդրակյան շարժումն սկզբնավորվել է 9-րդ դարի կեսերին, և նույն ժամանասկ էլ սկսվել են նրա դեմ հալածանքները: Այդ շրջանում Ապահունիքում, որի կենտրոնը Մանազկերտն էր, իշխում էր արաբ ամիրա Աբու-լ-Վարդը, որը մահապատժի է ենթարկում Սմբատ Զարեհավանցուն[3]:

Անվարան կարելի է պնդել, որ դրանում դեր է ունեցել Հայոց Եկեղեցին, քանզի Սմբատին մահապատժի ենթարկելուց առաջ Մանազկերտի մահմեդական իշխողը միայն եկեղեցուց կարող էր իմանալ, որ Զարեհավանցին իրեն Քրիստոս է համարել, ուստի և նրան ասել է, թե Քրիստոսը հարություն առավ երեք օրից, եթե դու երեսուն օրից էլ հարություն առնես, իրոք Քրիստոս ես:

---

[1] Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասօղական Պատմութիւն Տիեզերական, Պետերբուրգ, 1885, էջ 160:

[2] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 65, 165 և 167:

[3] **Աշոտ Հովհաննիսյան,** Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Ա, Երևան, 1957, էջ 337 - 345:

Սակայն հիմնադրի մահից հետո թոնդրակյան այլադավանությունն ավելի լայն թափ է առնում, ուստի և եկեղեցին անընդհատ պայքարում է նրա դեմ: Հայոց կաթողիկոս Անանիա Մոկացին (943-965) հանձնարարում է նշանավոր աստվածաբան Անանիա Նարեկացուն՝ հատուկ աշխատությամբ հերքելու թոնդրակյան ուսմունքը: Վերջինս գրում է այդ աշխատությունը, որը Գրիգոր Նարեկացին համարում է «զզարմանագիծ հակաճառութիւն», «զլիագիտութեամբ զմատեանս, որ ընդդէմ հերձուածողացն»[1], սակայն, ցավոք, այն մեզ չի հասել: Սակայն այստեղ կարևորն այն է, որ Հայ առաքելական եկեղեցին ամեն կերպ ձգտել է հիմնավորել այս աղանդի դեմ պայքարի անհրաժեշտությունը, քանզի այն կոչված էր խարխլելու հայոց հավատը, ինչը լուրջ հարված էր նրա ինքնությանն ու անվտանգությանը: Իսկ թոնդրակյանների ո՞ր պնդումներն է հերքել Անանիա Նարեկացին: Ե-թե Գրիգոր Նարեկացու վկայությամբ թոնդրակյանների ուսմունքի առանցքը կազմել են 14 կետեր, ուստի Անանիա Նարեկացին հենց դրանց հակաճառությամբ է հանդես եկել: Այդ կետերով նրան ժխտում էին.

1. Ձեռնադրությունը, որով ձևավորվում էր եկեղեցու աստիճանական ամբողջ համակարգը:
2. Հաղորդությունը, որը Զարեհավանցին համարում է ոչ թե եկեղեցու խորհուրդ, այլ «հասարակաց կերակուր»:
3. Ծնունդը ջրից և հոգուց, որով, ըստ երևույթին, կասկածի տակ էր առնվում Հիսուսի ծնունդը սուրբ հոգուց և մկրտությունը ջրում:
4. Քրիստոսի հարության լույսը:
5. Ծնրադրությունը:
6. Մկրտության խորհուրդը:
7. Քրիստոսի հարությունն ու անմահանալը, Աստծու հետ միանալը:
8. Ամուսնությունը՝ կողմ լինելով խառն ամուսնության:
9. Երկրպագությունը խաչին:
10. Քրիստոսի աստված լինելը՝ նրան համարելով մարդ:
11. Քահանաների ձեռնադրությունը՝ քահանաներ առաջադրելով իրենցից:
12. Եկեղեցական պսակն ու ամուսնությունը, որովհետև սերն է միավորողը և ոչ եկեղեցին:
13. Մատաղը, զոհաբերությունը:
14. Քրիստոսին Աստված չհամարելով՝ Քրիստոս էին համարում իրենց առաջնորդին[2]:

Փաստորեն նրանք ժխտում էին այն ամբողջ տեսությունը, որն ուներ Հայ առաքելական եկեղեցին, և որին հետամուտ էր գրեթե ողջ հայ ժողո-

[1] Գիրք թղթոց, Տփղիս, 1901, էջ 498, 502:
[2] Նույն տեղում, էջ 499 - 500:

վուրդը: Մասնավորապես Զարեհավանցուն Քրիստոս համարելու փաստը բավական է այն ենթադրության համար, որ թոնդրակյանները նույնպես գաղտնի քաղաքական նպատակ են հետապնդել՝ ստանձնելու Հայոց եկեղեցու դերը և դառնալու ժողովրդի հոգևոր առաջնորդը:

Գրիգոր Մագիստրոսը թոնդրակյաններին բաժանում է երեք խմբի.

Առաջին. Թոնդրակյաններ, որոնք չարի մեջ կատարելագույններն են և էպիկուրյանների պես քարոզում են կատարյալ անհուսություն և անաստվածություն:

Երկրորդ. Թոնդրակյաններ, որոնք մանիքեության հետևորդների նման իրենց անիծածն են գործում:

Երրորդ. Թոնդրակյաններ, որոնք առերես քրիստոնյա են ձևանում՝ հետևելով քրիստոնեության ավանդույթներին, բայց ամենևին քրիստոնյա չեն, այլ դրանով ծածկում են իրենց աղանդավոր լինելը[1]:

Նույն Մագիստրոսը թոնդրակյաններին բնութագրում է նաև ըստ նրանց գաղափարախոսության մեջ առկա ճյուղերի և յուրաքանչյուր բնակավայրի աղանդավորների գաղափարախոսության մեջ առանձնացնում է մոտեցումները քրիստոնեության նկատմամբ:

Մագիստրոսն անհրաժեշտ էր համարում այս աղանդի դեմ հիմնավոր պայքարը, քանզի այն ամբողջովին ուղղված էր քրիստոնեության դեմ և «ի բոլոր օրինադրութիւնս իւրեանց ամենևին արտաքս են հին և նոր օրինաց»[2], այսինքն՝ դուրս են Հին ու Նոր Կտակարաններից:

Եվ վերջապես, ըստ նրա՝ այս հերձվածը միահյուսումն էր ամեն տեսակ չարափառությունների՝ կախարդության, հմայության, անհավատության, չարության, և թոնդրակյանները, թողնելով լուսաշող ճանապարհը, հետևում էին «կուրաշավիղ կորստեան ուղեգնացութեան»[3]:

Մագիստրոսին հաստատում են և՛ Գրիգոր Նարեկացին, և՛ Արիստակես Լաստիվերցին: Եզրակացությունը մեկն է. **թոնդրակյան աղանդը միտված էր քայքայելու հայ քրիստոնեական հավատը, որն ըստ նրա ընդդիմախոսների ուղիղ համեմատական էր հայ ժողովրդի միասնականության քայքայմանը:**

Անհրաժեշտ ենք համարում շեշտել, որ սխալվում են բոլոր նրանք, մասնավորապես խորհրդային շրջանի պատմաբաններն ու ուսումնասիրողները, որոնք ինչպես պավլիկյան, այնպես էլ թոնդրակյան և այլ աղանդների հիմքում փորձում են տեսնել սոցիալական հիմնախնդիրներ, եկեղեցու դեմ նրանց պայքարը համարելով սոցիալական շարժում, բնականաբար, փորձելով արդարացնել այն: Նման տեսակետները բխում են խորհր-

[1] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 158 - 159:

[2] Նույն տեղում, էջ 160:

[3] Նույն տեղում:

դային համակարգի կոնյուկտուրային մոտեցումներից և քննադատության չեն դիմանում հետևյալ պատճառներով: Եթե նման մեկնաբանությունները տարվում էին այն հիմքով, որ եկեղեցին մեծ տեղ էր գրավում ավատատիրական աստիճանակարգության մեջ և կեղեքում էր գյուղացիներին, ապա, բնականաբար, նույնն անում էին նաև աշխարհիկ ավատատեր իշխանները: Այդ դեպքում, տրամաբանորեն, այլադավանների դեմ պայքարը պետք է ուղղված լիներ նաև նրանց դեմ: Այնինչ նրանց պայքարի հիմնական թիրախը եկեղեցին էր: Ուրեմն, թե՛ պավլիկյանները, թե՛ թոնդրակյանները և թե՛ այլ այլադավանություն քարոզողները հետամուտ էին մեկ կարևոր խնդրի՝ թուլացնելու, շարքից հանելու հայ առաքելական հավատը և ստանձնելու Հայոց եկեղեցուն փոխարինելու դերը, ինչը նրանց, բնականաբար, չհաջողվեց, քանզի նրանց դեմ պայքարելու անհրաժեշտության հիմնավորմամբ միշտ գործեց եկեղեցին:

Այսպիսով՝ չի կարելի նույնացնել սոցիալական և աղանդավորական շարժումները: Այլ հարց է, որ աղանդավորները սոցիալական շարժումները կարող էին փորձել ծառայեցնել իրենց քաղաքական նպատակներին: Եվ հենց այս պատճառով էր միայն, որ 11-րդ դարի սկզբներին թոնդրակյան շարժումը բորբոքվեց «ի գաւառն Հարքայ և զբազումց խռովեաց»[1]:

Թոնդրակյան աղանդը դատապարտելի էր թեկուզ և այն պատճառով, որ ձևավորվեց և զարգացավ մի ժամանակահատվածում, երբ գոյություն ուներ հայկական Բագրատունյաց թագավորությունը, որին սպառնացող արտաքին վտանգների պայմաններում (արաբական, ապա բյուզանդական), նպաստում էր ժողովրդի պառակտմանը՝ ուղղակիորեն թուլացնելով հայոց պետականությունը ներսից: Պայքարելով եկեղեցու դեմ առհասարակ,կամ, որ նույնն է, հայոց հավատի և ոչ թե եկեղեցական անհատների, նրանք նպաստում էին հայոց պետականության թուլացմանը:

Жора Мовсисян, Некоторые наблюдения о секте тондракиан - В советской армянской историографии секта тондракиан считалась социально мотивированным движением против церкви. Но на самом деле это не очень правильная концепция. Эта секта действительно была направлена против церкви, но обусловлена мотивом ослабления армянской апостольской веры. В статье сделаны важные наблюдения, направленные на обоснование данной концепции.

Zhora Movsisyan, Some Observations on the Tondrakian Sect - The Tondrakian sect was considered in Soviet Armenian historiography as a socially motivated movement against the church. But in reality it is not a very correct concept. This sect was really directed against the church, but conditioned by

[1] Պատմութիւն Արիստակեսի Լաստիվերտցվոյ, Երևան, 1963, էջ 119:

the motive of weakening the Armenian Apostolic faith. The article makes significant observations aimed at substantiating this concept.

«ЛЕГКО ПРОСНУТЬСЯ И ПРОЗРЕТЬ…» (Б.ПАСТЕРНАК В ПЕРЕВОДАХ ГР.ТАМРАЗЯНА)

ЮЛИЯ ХОДЖОЯН

Ключевые слова - Гр.Тамразян, переводы, пастернаковская метафора, ассоциативный ряд, творческий поиск, сложность поэтики.

Поэзия Б. Пастернака наиболее известна армянскому читателю в переводах Гр.Тамразяна. В 1985 году значительная часть поэтического наследия Б.Пастернака в переводах Гр.Тамразяна была опубликована в Ереване в издательстве “Советакан грох”; примечательно, что в честь 120-летия русского поэта в 2010 году почти одновременно в двух ереванских издательствах (“Наири”, “Иравунк”) большинство переводов Гр.Тамразяна было вновь переиздано, а ряд стихов (“Март”, “Зимняя ночь”, “Чудо”, “Дурные дни”, “Магдалина I”, “Магдалина II”, “Гефсиманский сад” и др.) публиковался впервые. Послесловия и вступительные статьи Гр. Тамразяна, включенные в эти сборники, дополняли его переводческую работу, раскрывая перед читателем глубины пастернаковской поэтики. В статье “Образ мира, явленный в Слове” Гр.Тамразян замечал: “Сложные и многослойные стихи Б. Пастернака каждым поколением будут переосмысляться и интерпретироваться по-новому, так как поэзия автора, будучи неразрывно связанной со своей эпохой, носит вневременной характер”. “Сочетая в своем творчестве новаторство и классические традиции, - продолжал переводчик, - Б.Пастернак прошел длительный путь развития: от новейших исканий века до классической простоты и ясности, библейских мотивов с их неповторимым звучанием”.[11:3]

На протяжении всей своей творческой жизни Б.Пастернак стремился к простоте, к отказу, по словам Лихачева, - “от литературности и литературщины”. В этой своей устремленности Б.Пастернак старался сознательно избегать использования всякого рода “поэтизмов”, распространенных приемов стихотворного выражения, языковых клише. Д.Лихачев уточнял, что борьба автора “за “неслыханную простоту” поэтического языка была борьбой не за его понятность, а за его первозданность, первородность…” [4:22-23] Примечательно, что поэт в конце 20-х годов прибегает к капитальной переделке своих ранних стихов. Так, в письме к О.Мандельштаму от 24 сентября 1928 года Б.Пастернак признавался, что со временем его стало удручать “голое движение темы” в его ранних поэтических текстах (речь шла о книгах “Близнец в тучах” и “Поверх барьеров”). Замечая, что все его

стихи неразрывно связаны “с общим потоком времени” и рассчитаны на его “симпатический подхват, подгон и призвук”, поэт приходил к выводу о невозможности их переиздания в прежнем виде. В письме Б.Пастернак говорил о необходимости тотальной переделки ряда своих стихов, которые “по уходе времени отвращают своей бедностью, превращенной в холостую претензию, чего в них ранее не было”; здесь поэт образно говорил о “разборке своих стихов до последней гайки”, а потом - попытке “собрать их в непритязательный ворох… почти хрестоматийно-институтских документаций…” [7:440] Перерабатывая свои ранние стихи, Б.Пастернак стремился к освобождению от заранее сконструированных словесных оборотов, к упрощению ассоциативного пласта поэтического текста… Обратимся к переводу Гр.Тамразяна программного для Пастернака стихотворения “Пиры”, впервые опубликованного в 1913 г. под названием “Пиршество” и переработанного в 1928г.

В связи с достаточной разработанностью темы пира в русской поэзии (См. Баратынский, Вяземский, Дельвиг, Пушкин, Ф.Тютчев и т.д) сложились определенные “ритуализированные пиршественные формы с повторяющимися поэтическими формулами” (Т.Венцлова); стихи данной тематики характеризуются наличием контрастных мотивов любви и измен, достижений и разочарований, смертельной тоски и светлого умиротворения, небытия/бытия и т.д., при этом эмоциональный строй речи, во многом, оказывается обусловлен пьянящим чувством свободы, в определенной степени, - непредсказуемостью высказывания. Сам Б.Пастернак несколько раз обращался к теме пира (“Пиры” 1913, 1928, “Лето” 1930; “Вакханалия” 1957). Эти произведения современным исследователем В.Альфонсовым по праву называются “модернизированными застольями”. [1:20] В последней редакции стихотворения “Пиры” емко, почти в афористически звучащей форме отражен пласт пережитых поэтом жизненных впечатлений, этапов творческих поисков, неожиданные же образы первоначальной редакции здесь становятся более понятными, прозрачными для восприятия…

Обращает на себя внимание прием композиционного кольца в первой строфе стихотворения - поэтом трижды повторяется слово “пью” в начале, середине и конце четверостишия: так задавалась тема пиршества, застольного слова, опьянения, а также подчеркивалась закольцованность круга жизни. Здесь троекратно звучит выражение “пью горечь”: в начале первой и третьей строк, завершалась строфа в инверсионном виде – “горечь пью”. Все это способствовало созданию определенного эмоционального состояния. Прием повтора не воспроизводится в армянском тексте; в переводе оно употребляется дважды и по-разному: “ըմպում”, “խմում”. Замена

же слова “горечь” – на слово “боль” (“ցավ”) в целом, не нарушала общего настроения высказывания как лирической сентенции и в определенной степени подчеркивала настроение “рыдающей строфы”, силу переживаемых эмоций.

Пью горечь тубероз, небес осенних горечь
И в них твоих измен горящую струю.
Пью горечь вечеров, ночей и людных сборищ,
Рыдающей строфы сырую горечь пью. [6:37]

Բրաբիոնի ցավն եմ ըմպում, աշնան երկինքը տրտմած
Ու նրա մեջ շիթերը՝ խարդավանքիդ ոխերիմ:
Ցավը զօր ու գիշերվա, ամբոխների խռնված
Ցավն եմ խմում ես խոնավ, հեկեկացող տողերի: [9:32]

Вторая строфа, по словам Т.Венцловы, - “дионисийская”[2]; она содержит архаическую лексику (“ветр”, “здравицы”, “исчадья”), которая не воспроизводится в армянском тексте, однако динамизм, торжественность фрагмента, а также чеканность, лаконичность в выражении пережитого переданы Гр.Тамразяном в достаточной мере благодаря инверсиям и повторам. Противопоставление фонетически контрастных армянских звуков: мягкого и твердого “р” (р/ռ) (“աղթնություն չի տրված”, “աղդաք պատառ”, “մատռվակ”, “չեն կատաղվի”) очень удачно подчеркивает ораторскую установку “Пиров”, артистизм говорящего, сочетающего бескомпромиссность своих утверждений (слова с опорой на “р”: “исчадья мастеров”, “трезвости не терпим”, тревожный ветр ночей”) с лирически звучащим риторическим признанием: “…тех здравиц виночерпьем,/Которым, может быть, не сбыться никогда”.

Т.Венцлова в статье “О некоторых подтекстах “Пиров” Пастернака” замечал, что “развитие семантической темы” в стихотворении движется от “темноты”, “ночного хаоса” (первые две строфы) к “свету”, “утреннему космосу” (в последних двух), при этом “высокое сменяется бытовым”, “романтическое - реалистическим”. [2] В третьей строфе становится заметным отход от темы пира, в ней, несмотря на слово “смерть”, описывается более спокойная, светлая повседневность. Возникает образ Золушки как символ детского, непосредственного восприятия жизни. В ранней редакции стихотворения она превращала “неубранные яства / Во груды тубероз”, то есть бытовое – в нечто возвышенное, внебытовое - в то время, как в окончательной редакции ее образ выглядит более традиционно: “Золушка, спеша,

меняет свой наряд” и т.д., что тоже, конечно, у Пастернака имеет глубинный смысл, связанный с рзнообразием форм в искусстве, жизни и т.д… “Смысл заключительной сентенции, - писал Т.Венцлова,- переданный и всей тканью стихотворения, – в том, что искусство может быть и высоким, и низким, что именно в «смене наряда», в стыке противоположностей его сила; что оно есть риск, случайность, игра в мире детерминизма, наследственности и смерти”. [2]

В последней строфе окончательно утверждается спокойная, умиротворенная интонация.

Полы подметены, на скатерти – ни крошки.
Как детский поцелуй, спокойно дышит стих.
И Золушка бежит – во дни удач на дрожках.
А сдан последний грош, - и на своих двоих. [6:37]

Սփոռցին՝ ոչ մի փշուր, մաքրված է հատակը,
Ինչպես մանկան ջերմ համբյուր, երգն է ահա խոր շնչում,
Ու վազում է Մոխրոտը՝ լավ օրերին իր կառքով,
Իսկ երբ գրոշ իսկ չունի, զույգ ոտքերով է թռչում: [9:32]

Очевидно: переводчик ставил перед собой цель передать подлинность настроения и атмосферы пастернаковского стиха.

Интереснейший пласт пастернаковской лирики представляют собой поэтические посвящения Шекспиру, Бальзаку, Ахматовой, Цветаевой, Маяковскому, повлиявших в определенной степени на формирование творческой личности поэта-философа. Кажется, на глазах у читателей рождается живое поэтическое повествование о сущностных основах творчества известных авторов.

В автобиографическом очерке “Люди и положения”, рассуждая о поэзии М.Цветаевой, Б.Пастернак писал об общности их творческих принципов, о сходстве испытанных ими влияний, “одинаковости побудителей в формировании характера”, “однородности отправных точек, целей и предпочтений”. [7:268]

В стихотворном посвящении “Марине Цветаевой” (1929) психологический портрет поэтессы создается на основе метафорического словоупотребления, образов-олицетворений, сравнений; восприятие мира героиней дается через описание явлений природы, неодушевленные предметы; желая воспроизвести душевную жизнь персонажа, Б.Пастернак интуитивно

реконструирует возможные мысли и реакции адресата. Приведем фрагмент из стихотворения:

Ты вправе, вывернув карман,
Сказать: ищите, ройтесь, шарьте.
Мне все равно, чем сыр туман.
Любая быль – как утро в марте.

Деревья в мягких армяках
Стоят в грунту из гуммигута,
Хотя ветвям наверняка
Невмоготу среди закута.

…Мне все равно, чей разговор
Ловлю, плывущий ниоткуда.
Любая быль – как вешний двор,
Когда он дымкою окутан и т.д. [6:160]

С большим трепетом и любовью писал Б.Пастернак о М.Цветаевой в автобиографической прозе. Говоря о сущностных качествах натуры М.Цветаевой, автор подчеркивал ее бескомпромиссность, внутреннюю стойкость. “Цветаева,- писал Б.Пастернак,- была женщиной с деятельной мужской душой, решительной, воинствующей, неукротимой. В жизни и творчестве она стремительно, жадно и почти хищно рвалась к окончательности и определенности, в преследовании которых ушла далеко и опередила всех”. [7:269]

С первых же строк стихотворения Б.Пастернака складывается образ достаточно мужественного, смелого, при этом несколько импульсивного человека, находящегося в противостоянии с государственной системой. (“Ты вправе, вывернув карман, Сказать: ищите, ройтесь, шарьте”). Заметим, во второй строке первой строфы Б.Пастернак использует ряд стилистических синонимов (“ищите, ройтесь, шарьте”), выстроенных таким образом, что, с одной стороны, при их перечислении происходит усиление экспрессии, эмоционального плана, с другой – налицо движение от литературного слова “ишите” – в сторону грубого, разговорного синонима “ройтесь”, а далее – и к жаргонному слову “шарьте”. В переводе, к сожалению, этот прием не сохранен (“Դու զրպաններդ մեկ-մեկ շրջում ես,-Փնտրե՛ք,- ասում ես,- զրպանահատին”); Гр.Тамразян оставляет лишь слово “ищите”.

Лексика посвящений Б.Пастернака, сочетание в них разговорных, заниженных элементов речи с возвышенной лексикой, связанной с философской, бытийной наполненностью содержания, каждый раз создает достаточно неожиданный эффект. Так и с посвящением М.Цветаевой: вторая строфа оригинала насыщена специфической, ярко окрашенной лексикой: разговорной (“наверняка”, “невмоготу”), авторски, метафорически использованной (“Хотя ветвям наверняка Невмоготу среди закута”); обращается автор и к малоизвестному слову “гуммигут”, что означает “смоло-камедь, вытекающая из некоторых деревьев семейства гуммигутовых в восточной Индии, которая употрбляется в медицине и идет на приготовление желтых красок и лака”. [10]

Гр.Тамразян явно избегает обращения к подобной лексике: вся вторая строфа в переводе выглядит стилистически ровно (с опорой на литературную, книжную лексику); метафорическая фраза передается с помощью описательной конструкции (в дословном переводе звучащей как: “Вероятно, ветви бессильные/беспомощные Хотят высвободиться от опутавших их цепей/оков”); слово “гуммигут” связывается с желтоватой окраской земли.

Ծառերը ահա թեթև տարազով
Կպել են հողին դեղին ու անկիրք
Բայց հավանաբար ճյուղերը անզոր
Ուզում են զատվել տանջող կապանքից: [9:77]

На наш взгляд, пастернаковский повтор фразы (“Мне все равно…”) в 1-ой, 4-ой и 5-ой строфах, играющий важное значение для отражения психологического облика М.Цветаевой (независимой, яркой, не отягощенной никакими творческими цепями личности) в переводе мог быть трижды повторен, как и в оригинале, без изменения.Эта фраза Гр.Тамразяном подается в трех близких по значению, или даже тождественных вариантах, но в рамках разных стилистических конструкций:

“Ամեն եղանակ ինձ համար նույնն է”
“Նույն է ինձ համար,թե…”
“Եվ միևնույն է, թե…”

Неудачен выбор переводчиком слова “կավլեն”- “выметут” в 5-ой строфе стихотворения (“Եղյամը կավլեն երազի նման”) при передаче пастернаковской фразы: “Любую быль сметут как сон”, в основе которой намек на действия “полицейского режима” государства.

Д.Лихачев подчеркивал, что в метафорах Б.Пастернака происходит “огромное разрастание вторичного смысла”, взятого автором “из прилегающей действительности”; при этом “переносный смысл осмысляет прямой, получает первостепенное значение”. И тогда “действительность из переносного значения наступает на поэта, подчиняет его себе; ведет за собой”. [4:10] Вот строки Б.Пастернака о судьбе поэта в эпоху разных катаклизмов, построенные на развернутой метафоре.

Клубясь во много рукавов,
Он двинется, подобно дыму,
Из дыр эпохи роковой
В иной тупик непроходимый.

Он вырвется, курясь, из прорв
Судеб, расплющенных в лепеху,
И внуки скажут, как про торф:
Горит такого-то эпоха. [6:160]

В стихотворении прозвучала тема “роковой эпохи”, которая, во многом, предопределила драматизм судеб большого количества представителей русской интеллигенции. Содержательной доминантой стиха – и является история жизни поэта на фоне “грозовой эпохи”. Обратим внимание на пронизанную метафорами фразу: “Он (поэт) вырвется, курясь, из прорв Судеб, расплющенных в лепеху”, в которой 5 переносных смыслов одновременно переплетаясь, соединяются в единое высказывание (“вырвется, курясь…”, “вырвется из прорв”, “курясь из прорв”, “судеб, расплющенных…”, “судеб, расплющенных в лепеху”.

Переводчик, на наш взгляд, находит достаточно удачное решение, он отказывается от нагнетения метафор, что позволяет сохранить внутреннюю логику как пастернаковского высказывания, так и армянского стиха как поэтического целого.

Եվ միևնույն է, թե կյանքը հիմա
Ինչպես կփոխվի ձևի հանդերձի:
Եղյամը կավլեն երազի նման՝
Այնտեղ թողնելով լոկ բանաստեղծին:

Այն ոլորելով երկար թևքերն իր,
Եվ ծխի նման հարթելով ուղին՝

Այս աղետալի դարի անցքերից
Կսողա դեպի մի այլ փակուղի:

Եվ նրա ծուխը մարդկանց կհասնի՝
Կյանքի խմորից զատվելով կրկին,
Ու կասեն ասես կրակի մասին,
Որ դարն է վառվում դա ոմն մեկի: [9:77]

Проблематичность перевода поэзии Б.Пастернака связана не только со сложностью его поэтики; сложны для передачи глубина и динамика мысли поэта, органичная переплетенность в его творческом сознании эмоционального и логического начал. Б.Пастернак замечал: “Искусство реалистично как деятельность и символично как факт… Его нельзя направить по произволу – куда захочется, как телескоп. Направленное на действительность, смещаемую чувством, искусство есть запись этого смещения” (гл.7, вторая часть “Охранной грамоты”). [7:174]

Как правило, философский план стихов Б.Пастернака пополняется биографическими деталями, живыми отголосками пережитых чувств и событий. Приведем фрагменты из стихотворного посвящения З.Нейгауз: “Любить иных - тяжелый крест…” (1931) - признанного шедевра пастернаковской лирики:

Любить иных – тяжелый крест,
А ты прекрасна без извилин,
И прелести твоей секрет
Разгадке жизни равносилен.

…Легко проснуться и прозреть,
Словесный сор из сердца вытрясть
И жить, не засоряясь впредь.
Все это – не большая хитрость. [6:318]

Так звучат эти строки в переводе на армянский язык:
Թե ծանր խաչ է մեկին սիրելը,
Դու գեղեցիկ ես առանց խաբկանքի,
Կեռմաններ չունի շուքդ, իրենով
Նա շղարշել է խորհուրդը կյանքի.

…Հեշտ է արթնանալ ու խաղաղ հայել՝

Խոսքի թափոնը սրտից թափ տալով,
Առանց այդ աղբի ապրել առհավետ,
Դրա համար մեծ խելք չէ հարկավոր: [8:56]

В стихотворении отражен небольшой срез из жизни лирического героя, стремящегося к истинам, не отягощенным премудростями, созданными искусственно. В понимании поэта прелесть жизни в ее философской наполненности и простоте – одновременно. Заметим, что яркую, образную фразу, в основе которой – фразеологический оборот: “человек без извилин” (“ты прекрасна без извилин”) Гр.Тамразян переводит посредством расшифровки смысла метафорического высказывания (“Դու գեղեցիկ ես առանց խարկանքի”, что дословно означает: “Ты красива без иллюзий, обманных хитростей и т.д.”). В данном случае, конечно, сохранен узкий контекст, но переведенная фраза лишена яркого переносного смысла.

Пастернаковская метафора – особого рода микромодель, отражающая персональное восприятие автором мира и места человека в нем. Индивидуально-авторская метафора Б.Пастернака каждый раз рождает широкий ассоциативный ряд, позволяя читателю открывать новые соотношения смысловых понятий. В целом, переводчик выбирает более нейтральные эпитеты, менее яркие метафоры (к примеру, у Пастернака читаем: “Твой смысл, как воздух бескорыстен”- в переводе: “Օդի պես ջինջ է էությունը քո” (т.е. “Твоя сущность чиста/прозрачна, как воздух”). В русском тексте важны как прямое значение слова “бескорыстен” в характеристике человека, так и отдельно взятая метафора, в основе которой – сравнение: “как воздух бескорыстен…”

В заключительном четверостишии у Б.Пастернака говорится о “прозрении”, которое связано с переоценкой жизненных принципов и взглядов лирического героя; “прозрении”, порождающем новую истину – простую, ясную, граничащую с мудростью. Это позволит человеку, в первую очередь, “словесный сор из сердца вытрясть”, а затем “и жить, не засоряясь, впредь”. Заметим, наречие “впредь” (т.е “отныне”, “с этих пор”) логически сязано с прозрением и последующими философскими выводами: данным наречием подчеркивался некий водораздел, подчеркивалась некая грань между прошлым и настоящим. В переводе имеет место замена наречия “впредь” – на наречие “առհավետ -“вечно” и т.д. Замены Гр.Тамразяна в данном стихотворении приводят, в целом, к некоторому упрощению сложных, мыслительных процессов, носителем которых является пастернаковский герой…

“Слово Пастернака ,- писал Гр.Тамразян,- обладает первозданной свежестью”; переводчик подчеркивал, что поэзия автора “воссоздает слитность, взаимосвязь времен и направлена в будущее”. “Именно с будущим,- заклю-

чал Гр.Тамразян,- поэт связывал продолжение своей духовной биографии в таинственной и глубинной связи с новыми поколениями читателей". [11:3]

Говоря о стихах Юрия Живаго, включенных в роман Б.Пастернака "Доктор Живаго", Гр.Тамразян замечал: "Пророческие по своей сути стихи Живаго, неся на себе трагический отпечаток судьбы поэта, были направлены на восстановление гармонии человеческого существования, одухотворение и преображение мира". [11:3] Известный евангельский сюжет о бесплодной смоковнице лежит в основе двадцатого стихотворения живаговского цикла - "Чудо". Конфликт "Христос - смоковница" сконцентрировал в себе основные мысли, посылы автора. Через библейское лирический герой Б.Пастернака воспринимает жизнь реальную и это придает особую глубину всему поэтическому повествованию. "Чудо" написано четырехстопным амфибрахием со множеством внутренних рифм. Простыми, ясными словами поэт воздействует на мысли, волю и чувства человека; учит видеть, думать, верить; находить бессмертные ценности. Приведем фрагмент из стихотворения:

Он шел из Вифании в Ерусалим,
Заранее грустью предчувствий томим.

…И так углубился он в мысли свои,
Что поле в унынье запахло полынью.
Все стихло. Один он стоял посредине,
А местность лежала пластом в забытьи.
Все перемешалось: теплынь и пустыня,
И ящерицы, и ключи, и ручьи.

Смоковница высилась невдалеке,
Совсем без плодов, только ветки да листья.
И он ей сказал: "Для какой ты корысти?
Какая мне радость в твоем столбняке?

Я жажду и алчу, а ты – пустоцвет,
И встреча с тобой безотрадней гранита.
О, как ты обидна и недаровита!
Останься такой до скончания лет".(1947) [6:414]

Прибегая к определенным художественным приемам (так, к примеру, упускаются поясняющие слова Христа, обращенные к ученикам), автор

стремится к тому, чтобы читатель самостоятельно декодировал внутренний, глубинный смысл евангельской притчи и сумел противопоставить страданию - духовную силу.

При первом же знакомстве с переводом Гр.Тамразяна обращают на себя внимание более тяжелые, чем в оригинале, синтаксические конструкции; почти во все строфы привносятся дополнительные эпитеты или глагольные формы, союзы, наречия и т.д. Заметим, что в одной из своих статей Гр.Тамразян говорил о “музыкально-элегической струе, пронизывающей весь цикл “Стихов Юрия Живаго”. Этим, на наш взгляд, во многом объясняется выбранный им стиль перевода; в армянском тексте сохранена масштабность, значимость образов и картин оригинала; в переводе органично соединились эпическая величавость с лирическим началом. Вот фрагмент из перевода Гр.Тамразяна:

Նա Բեթանիայից էր գալիս դեպի Երուսաղեմ,
Ծանր, կանխակալ մի սպասում էր սրտում պահել:

…Ու խորանում էր աշխարհը համայն նրա խոհում-
Օշինդրը բուրեց հեռաստանում դառն ու անապակ:
Լռեց ամենը: Լոկ նա էր կանգնած լուռ ու խոհուն,
Ու մոռացության անխոհ մի խորքում հողն էր պառկած:
Խառնվում էին այնտեղ իրար տապ ու անապատ,
Ամեն աղբրակ, ամեն առու ու ամեն սողուն: [9:153]

Как уже отмечалось, Гр.Тамразян не стремился к краткости строфы; более того, он тяготеет к использованию перечислительных рядов, отсутствующих в оригинале. Так, во второй строфе используются однородные сказуемые (во 2-ой и 4-ой строках): “մնացել ու մակաղել”, “անշարժացել էր ու խաղաղվել”; в третьей строфе (в 1-ой и 3-ьей строках) – однородные определения: “դառն ու խաղաղ”, “փոշոտ, քարքարոտ”; в четвертой строфе (2-ая,3-ья строки) - однородные обстоятельства: “դառն ու անապակ”, “լուռ ու խոհուն”.

Психологически точно в армянском тексте передается кульминационная сцена назидательного характера, когда Иисус карает смоковницу. Произведенные замены раскрывают в определенной степени скрытые в русском тексте посылы, выявляя как глубины библейской притчи, так и пастернаковской трактовки. “Для какой ты корысти? / Какая мне радость в твоем столбняке?”, - говорит Иисус смоковнице у Пастернака, скорее всего связывая состояние столбняка с бездействием, отсутствием внутреннего

роста, развития, духовного движения… Все это у Пастернака вписывается в антитезу: “Я жажду, и алчу, а ты - пустоцвет”. В дальнейшем характеристика, данная смоковнице, пополняется следующими выражениями: “Встреча с тобой безотрадней гранита. / О, как ты обидна и недаровита!”.

Вопрос Иисуса у Тамразяна звучит следующим образом: “Ինչի՞ համար ես ու ի՞նչ բարիք/Քո այս անկենդան, ամուլ փայտով ինձ կպարգևես: ”, т.е. дословно: “Для чего ты и какое благо даруешь мне твоим безжизненным, бесплодным стволом-палкой”. В армянском тексте отчетливо звучит идея ожидания “блага” – в самом широком смысле, включающего в себя огромный спектр понятий, качеств, добродетелей, возможностей, достижений… Примечательно, что характеризуя смоковницу, Гр.Тамразян использует эпитет “ապերախտ” -“неблагодарная”, отсутствующий в оригинале. Переводчиком подчеркивается, что смоковница – создана Богом и создана она для жизни, цветения, плодоношения, а не для “столбняка”.

Важно заметить, что в ряде библейских книг со смоковницей ассоциируется сам еврейский народ, его процветание (См. Книгу Пророка Осии; Второзаконие и т.д.) Идея о спасении “помазанного народа” через наказание звучит и в словах Пророков Аггея, Аввакума… Глубокой верой в божью справедливость и милосердие пронизаны слова Пророка Аввакума, обращенные к богоизбранному народу: “Хотя бы и не расцвела смоковница и не было плода на виноградных лозах, и маслина изменила, и нива не дала пищи, хотя бы не стало овец в загоне и рогатого скота в стойлах, - и тогда я буду радоваться о Господе и веселиться о Боге спасения моего”. [3]

С определенной долей надежды говорил Б.Пастернак в 8-ой финальной строфе о мудрых “законах природы”, которые могли бы “вмешаться”, но не успели (“Найдись в это время минута свободы/У листьев, ветвей, и корней, и ствола,/Успели б вмешаться законы природы”). Гр.Тамразян в переводе уточняет мысль автора, говоря о том, что все части “осужденного дерева” -“корень и лист, ветвь и крона, имея хотя бы один свободный миг, по законам природы дали бы плоды” (дословный перевод) (“Թե ունենային այնժամ գեթ մի պահ ազատության/Արմատ ու տերև, ճյուղն ու սաղարթը ծառի դատված,/ Պտուղ կտային նրանք օրենքով այս բնության”).

У Пастернака есть и мотив внутреннего роптания смоковницы: “По дереву дрожь осужденья прошла…”; это состояние обреченной смоковницы подкрепляется сравнением-“Как молнии искра по громоотводу”, ярко выявляющим силу переживаемых эмоций. У Гр.Тамразяна этот мотив несогласия, протеста не отражен (“Ու այս խոսքերից թզենու բնով մի դող անցավ”) (“От этих слов дрожь прошла по стволу смоковницы”,- говорится в переводе).

Невысказанными в стихотворении Б.Пастернака остались слова Иисуса, непосредственно связанные с названием стиха – его ответ на вопрос удивленных учеников: каким образом “тотчас засохла смоковница?” Христос тогда ответил: “…Истинно говорю вам: если будете иметь веру и не усомнитесь,- не только сделаете то, что сделано со смоковницею, но, если и горе' сей скажете: “поднимись и ввернись в море” - будет; И если, чего ни попросите в молитве с верою, получите”. [5]

Достаточно просто звучащит финал стихотворения с разговорными словами “разброд”, “врасплох”, возвращая читателя в реальность и в то же самое время подчеркивая философский настрой всего поэтического текста.

Так звучат финальные строки стиха в переводе Гр.Тамразяна:

Բայց այնուհանդերձ հրաշքն հրաշք է, հրաշքն Աստված:
Երբ խոռվքի մեջ միտքն է թափառում մեր ցիրուցան,
Լոկ անակնկալ ակնթարթ է նա՝ մեզ աստ տրված: [10:153]

Таким образом, элегическое звучание армянского стиха, разнообразные повторы, включенные Гр.Тамразяном (в отличие от афористически звучащего поэтического текста Пастернака) позволили создать широкую картину библейского, вневременного характера, в которой важен каждый взгляд, сила переживаемых эмоций, каждый эпитет, характеристика и т.д.

Примечательно, что Б.Пастернак, говоря об общей цели переводов (См.”Замечания к переводам из Шекспира”) подчеркивал: “Как сходство изображения и изображаемого, так и сходство перевода с подлинником достигается живостью и естественностью языка… Подобно оригиналу, перевод должен производить впечатление жизни, а не словесности”. [7:306]. Очевидно: живость и естественность языка – неотъемлемая черта большинства переводов Гр.Тамразяна

ЛИТЕРАТУРА

1. Альфонсов В.Поэзия Бориса Пастернака. Монография. Л., “Сов. писатель”, 1990.

2. Венцлова Т. О некоторых подтекстах “Пиров” Пастернака. URL: http://silver-age.info/o-nekotoryx-podtekstax-pirov-pasternaka/13/ (дата обращения 20.09.21)

3. Книга Пророка Аввакума. [Гл.3:17-18]

4. Лихачев Д. С. Борис Леонидович Пастернак // Борис Пастернак. Избранное в 2-х т-х., т.1. М., “Худ.лит”. 1985, с.22-23.

5. От Матфея Святое Благовествование [Гл.21:21-22]

6. Пастернак Борис. Стихотворения и поэмы // Избранное в 2-х т-х. М., “Худ.лит”, т.1,1985

7. Пастернак Борис. Письма // Проза. Стихотворения. М., “Худ.лит”, т.2,1985

8. Пастернак Борис. Стихи (на арм яз.) Пер. Гр.Тамразяна. “Иравунк”. Всемирная поэзия, 2010.

9. Пастернак Борис. Стихи (на арм. яз.) Пер. Гр.Тамразяна. “Наири”. 2010.

10.Словарь иностранных слов. URL: http://www.dic.academic.ru (дата обращения: 27.09.21)

11.Թամրազյան Հր. “Բառում հայտնված աշխարհի պատկեր”// Բորիս Պաստեռնակ: Բանաստեղծություններ: (Թարգմանությունը՝ Հրաչյա Թամրազյանի) “Նաիրի” հրատարակչություն, 2010

Յուլիա Խոջոյան «…Հեշտ է արթնանալ ու խաղաղ նայել» (Բ. Պաստերնակը Հր. Թամրազյանի թարգմանություններում) - Հոդվածը նվիրված է Բ. Պաստերնակի մի շարք հայտնի բանաստեղծությունների թարգմանության վերլուծությանը: Մեր կողմից բացահայտվում են թարգմանչի հիմնական մարտավարություններն ու հնարքները՝ բառագիտական, քերականական, ոճաբանական և թարգմանության այլ խնդիրների լուծման մեջ: Վերլուծության են ենթարկվել նաև Հր. Թամրազյանի հոդվածները, որոնք բացահայտում են պաստերնակյան պոետիկայի խորքերը, ինչպես նաև խոսքի մեծ վարպետի պոեզիայի սեփական ընկալումը:

Yulia Khojoyan, «It’s easy to wake up and see…» (B. Pasternak in translations of Hr. Tamrazyan) - The article is devoted to the analysis of translations of a number of well-known poems of B. Pasternak into Armenian, made by Hr. Tamrazyan. The main strategies and techniques of the translator in solving lexical, grammatical, stylistic and other translation problems are identified by us. Also Hr. Tamrazyan’s articles are involved into the analysis, revealing the depths of Pasternak's poetics, and as well as his own perception of the poetry of the great master of the word.

1963-1964ԹԹ. ԿԻՊՐԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՒՅՆ -ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ

ՌԱՖԱՅԵԼ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Բանալի բառեր - Կիպրոս, Հունաստան, Թուրքիա, ՆԱՏՕ, ՄԱԿ, ԽՍՀՄ, ԱՄՆ, «Սառը պատերազմ», «13 կետեր», միջհամայնքային բախումներ, «Աչեսոնի ծրագիր»:

Թեև 1959-1960 թթ. Ցյուրիխ-Լոնդոնյան համաձայնություններով Կիպրոսը ստացավ անկախություն, այն վերջնական չլուծվեց կիպրական խնդիրը, ավելին՝ Կիպրոսի 1960 թ. սահմանադրությունը և նրա հետ կնքված երեք պետականաստեղծ պայմանագրերը հանդիսացան միջհամայնքային հարաբերությունների սրման նոր լուրջ խթան: Կիպրոսի 1960 թ. սահմանադրությունով, կղզու թուրքական համայնքը, որը կազմում էր կղզու բնակչության 18%-ը, ստանում էր իր բնակչության թվին անհամապատասխան լայն արտոնություններ:

Կիպրոսի թուրքական համայնքը հունական համայնքի հետ ճանաչվում էր Կիպրոսի Հանրապետության իրավահավասար համահիմնադիր: Թուրք-կիպրացիները ստանալու էին լայն իրավունքներ պետական կառավարման ոլորտում: Այսպես օրինակ՝ թուրքական համայնքը ստանալու էր Կիպրոսի օրենսդիր և գործադիր մարմինների պաշտոնների 30%-ը, իսկ բանակում, ոստիկանությունում և ժանդարմերիայում՝ 40%-ը: Բացի սրանից, թուրք-կիպրացիներին էր հատկացվում փոխնախագահի պաշտոնը, ինչը տալիս էր պետական որոշումների վրա վետո կիրառելու իրավունք: Թուրք-կիպրացիները լայն իրավունքներ էին ստանալու դատական համակարգում ևս: Դատական ամենավերին ատյանի՝ Բարձրագույն սահմանադրական դատարանի կազմում ընդգրկվելու էին մեկ թուրք-կիպրացի, մեկ հույն-կիպրացի և մեկ չեզոք երկրի դատավոր, բացի դրանից, ձևավորվելու էին նաև հատուկ թուրք-կիպրացիների գործերը քննող թուրքական դատարաններ: Կիպրոսի 1960 թ. սահամանադրությունով նախատեսվում էր նաև ստեղծել առանձին համայնքային պալատներ, որոնք պետք է զբաղվեին կրթական, մշակութային, կրոնական, դատական, նույնիսկ՝ հարկային հարցերով:

Ըստ էության, Կիպրոսի 1960 թ. սահմանադրությունն իրենից ներկայացնում էր մեծ մի իրավական փաստաթուղթ, որի հիմքում դրված էր համայնքների բաժանման և միմյանց հակադրման սկզբունքը: Սրա հետ մեկտեղ, դեռևս Կիպրոսի անկախությանը նախորդող տասնամյակում, կղզու հունական և թուրքական համայնքների միջև ձևավորվել էր անվստահության և թշնամանքի մթնոլորտ: Հակասությունների խորացմանը նպաստում էր նաև կղզու երկու համայնքների միջև ինտեգրացիոն գործընթացների բացակայությունը և երկու համայնքների միջև թույլ շփումները: Հաշվի առնելով այս ամենը, կարող ենք փաստել, որ Կիպրոսում ի սկզբանե օրենսդրությամբ ամրագրված համայնքների տարանջատումը նվազեցնում էր արդյունավետ և ամուր պետություն դառնալու Կիպրոսի շանսերը;

Կիպրոսի անկախության հենց սկզբից ներքին միջհամայնքային պայքար է սկսվում, ինչն աստիճանաբար ավելի ու ավելի է թեժանում: Մի կողմում հունական համայնքն էր, որը փորձում էր նվազեցնել թուրքական համայնքի դերը և այն համապատասխանեցնել թուրք-կիպրացիների ընդհանուր բնակչության մեջ ունեցած կշռին, իսկ մյուս կողմում թուրքական համայնքն էր, որն ամեն կերպ փորձում էր պահպանել իր արտոնությունները: Կիպրոսում միջհամայնքային պայքարը և սահմանադրական հակասություններն առաջ էին բերել մի իրավիճակ, երբ պետական ապարատի աշխատանքը գրեթե պարալիզացված էր: Սահմանադրական հակասությունները բարդացնում էր նաև այն հանգամանքը, որ ըստ Ցյուրիխ-Լոնդոնյան համաձայնությունների, կիպրացիներն առանց «երաշխավոր» երկրների համաձայնության փոփոխությունների չէին կարող ենթարկել իրենց սահմանադրությունը: Էթնիկ բնույթի բազմաթիվ բողոքներն անհնարին էին դարձրել դատական համակարգի աշխատանքը: Այս ամենի արդյունքում 1963 թ. մայիսի 21-ին Կիպրոսի Բարձրագույն սահմանադրական դատարանի չեզոք նախագահը՝ Էռնստ Ֆորստհոֆֆը և նրա օգնականը հրաժարական են տալիս[1]:

Միջհամայնքային մյուս ճգնաժամային կետը Կիպրոսի սահմանադրությունով նախատեսված ստեղծվելիք կիպրական բանակն էր: Մակարիոսը ցանկանում էր բանակը ստեղծել խառը սկզբունքով: Թուրքական համայնքի ղեկավար Քյուչյուքն իր հերթին առանձին բանակի ստեղծման կողմնակիցն էր, նա հայտարարում էր, որ զինվորները, ովքեր ունեն լեզվական, մշակութային ու կրոնական տարբերություններ, չեն կարող միասին ծառայել: Ավելին, Քյուչյուքը 1961 թ. հոկտեմբերի 20-ին Մակարիոսի միասնական բանակի ստեղծման գաղափարի դեմ կիրառեց իր վետոյի իրավունքը: Իր հերթին Մակարիոսը հայտարարեց, որ Կիպրոսն ընդհան-

[1] **Balci T.,** The Cyprus Crisis and the Southern Flank of NATO (1960-1975), International Review of Turkish Studies, 2012, Vol 2 (3), p. 34.

րապես բանակի կարիք չունի և ազգային բանակի ստեղծման գործընթացը դադարեցրեց[1]:

Միասնական բանակի ստեղծման կասեցումը 1961-1962 թթ. կրկին ակտիվացրեց ընդհատակյա կիսառազմական կազմակերպությունների՝ ԷՕԿԱ-ի և ՏՄՏ-ի նախկին մարտիկների գործունեությունը: Կան տեղեկություններ, որ համայնքային կիսառազմականացված «բանակները» մաքսանենգ ճանապարհով զենք-զինամթերք էին ստանում համապատասխանաբար Հունաստանից և Թուրքիայից, միաժամանակ փորձելով ակտիվորեն համագործակցել Կիպրոսում տեղակայված հունական և թուրքական զորագնդերի հետ[2]:

Ամենասուր խնդիրը սակայն վերաբերվում էր սահմանադրությամբ Կիպրոսի հինգ խոշոր քաղաքներում (Նիկոսիա, Լիմասոլ, Ֆամագուստա, Լարնակա և Պաֆոս) առանձին քաղաքային ինքնակառավարման մարմինների ստեղծմանը: Հույները ցանկանում էին կառավարության նմանությամբ ստեղծել խառը ինքնակառավարման մարմիններ, թուրքերը սակայն պնդում էին, որ պետք է ստեղծվեն աշխարհագրորեն առանձին տեղական ինքնակառավարման մարմիններ:

Որոշ հույն-կիպրացի և այլ հեղինակներ հակված են ենթադրելու, որ թուրք-կիպրացիները ցանկանում էին պահպանել այս տեղական ինքնակառավարման մարմինները որպես բաժանման հիմք: Տեղական ինքնակառավարման մարմինների խնդիրը մոտ էր հանգուցալուծմանը, սակայն վերջին պահին այն մերժվեց: Մերժվեց ոչ թե այն պատճառով, որ չէր համապատասխանում սահմանադրությանը կամ ընդունելի չէր հույն և թուրք-կիպրացիների մեծամասնության համար, այլ որովհետև այն չէր համապատասխանում Թուրքիայի աշխարհագրական բաժանման պահանջին[3]: Այսպես օրինակ՝ Թուրքիայի արտգործնախարար Ֆ. Ջ. Էրքինը, 1963 թ. փետրվարի 17-ին Կիպրոսի խնդրի մասին խոսում էր այնպես, ինչպես Քյուչյուքը կամ թուրք-կիպրացիների այլ առաջնորդ: Նա հայտարարեց. «Չի կարող խոսք լինել այն մասին, որ մենք ինչ-որ բանով հետ կանգնենք մեր իրավունքներից: Հասկանալով մեր դիրքերի ճշմարտացիությունը, մենք ուշադրությամբ հետևում ենք իրադարձություններին՝ լի վճռականությամբ ու սառնասրտությամբ»[4]:

Թուրքիան տեղական ինքնակառավարման մարմինների այս խնդրում փորձում էր ստանալ իր դաշնակից երկրների աջակցությունը,

---

[1] Cyprus a country study, Edited by Solsten E., Fourth Edition, First Printing, 1993, p. 34.

[2] **Степанов В. В.,** Кипрский конфликт: современное восприятие и проблема преодоления, Этничность и религия в современных конфликтах, М., 2012, с. 476.

[3] **Dodd C.,** The History and Politics of the Cyprus Conflict, 2010, p. 47.

[4] **Поцхверия Б. М.,** Внешняя политика Турции после второй мировой войны, М., 1976, с. 213.

սակայն բոլորի համար էլ պարզ էր, որ Կիպրոսի սահմանադրությունը լի էր հակասություններով: Բրիտանական The Guardian ամսագիրը 1963 թ. սկզբին գրում էր. «Մակարիոսը հայտարարում է, որ սահամանադրության հոդվածը, որը նախատեսում էր ստեղծել առանձին տեղական ինքնակառավարման մարմիններ, անհնար է իրագործել, և միգուցե նա ճիշտ է…»[1]: Իր հերթին բրիտանական The Times-ը, 1963 թ. մարտի 28-ին, այս խնդրի մասին գրում էր. «Սա պայքար է օրենքի տառի և առողջ բանականության միջև»[2]:

Միջհամայնքային այս պայքարի արդյունքում, Հունաստանի աջակցությամբ, ԷՕԿԱ-ի նախկին բարձրաստիճան ղեկավար և Կիպրոսի ներքին գործերի նախարար Պ. Գեորկաճիսը ստեղծում է «Ակրիտաս» գաղտնի ծրագիրը: Ըստ այս ծրագրի, հույն-կիպրացիները պետք է միջազգային հանրությանը համոզեին, որ թուրք-կիպրացիներին արված զիջումները բավական լայն են և պետության նորմալ գործունեության համար անհրաժեշտ է բարեփոխել սահմանադրությունը: Այնուհետև, ծրագրի հաջորդ նպատակն էր լինելու «Երաշխիքների» և «Դաշինքի» մասին պայամանագրերի չեղարկումը: Միայն այս ամենն իրականացնելու դեպքում «էնոզիսը» կդառնար իրագործելի: Միաժամանակ այս ծրագրով, եթե թուրք-կիպրացիները հրաժարվեին ընդունել սահմանադրության փոփոխությունները և դիմեին ուժի, անհրաժեշտ էր լինելու մեկ կամ երկու օրվա ընթացքում ուժով հնազանդեցնել նրան՝ նախքան օտարերկրյա ուժերի ներխուժումը[3]:

Մակարիոսը սահմանադրության փոփոխությունների մասին մտածում էր վաղուց: Դեռևս 1962 թ. նոյեմբերին Անկարա այցի ժամանակ, թուրքական կառավարությունը Մակարիոսին բացահայտ զգուշացրել էր, որ սահմանադրությունը փոփոխելու ցանկացած ոտնձգության Թուրքիան կվերաբերվի «չափազանց լուրջ կերպով»: Մակարիոսն այնուհետև հանդիպել էր հունական կառավարության հետ, որոնք խորհուրդ էին տվել արքեպիսկոպոսին խնդրին մոտենալ չափազանց զգույշ: 1963 թ. ապրիլին Մակարիոսը ստանում է Հունաստանի արտգործնախարար Է. Ավերոֆֆ-Տոսիցասի գաղտնի նամակը, որում նա շեշտում էր 1960 թ. համաձայնությունների փոփոխությունների վտանգը, ինչը կփչացներ հույն և թուրք կիպրացիների հարաբերությունները և որպես հետևանք կսպառնար ավելի լայն հույն-թուրքական կոնֆլիկտով[4]:

Մակարիոսը սահմանադրական փոփոխություններ իրագործելու բարենպաստ պայմաններ է ստանում 1963 թ. նոյեմբերին, երբ Հունաս-

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում, էջ 214:

[3] Cyprus a country study, Edited by Solsten E., Fourth Edition, First Printing, 1993, p. 34-35.

[4] **Ker-Lindsay J.,** Britain and the Cyprus Crisis, 1963-1964, Bibliopolis, 2004, p. 22.

տանում Կ. Կարամանլիսի կառավարությանը փոխարինելու է գալիս Կիպրոսի հարցում առավել ակտիվ քաղաքականության կողմնակից Գ. Պապանդրեուի կառավարությունը: 1963 թ. նոյեմբերի 30-ին, նախագահ Մակարիոսը փոխնախագահ Քյուչյուքին է ներկայացնում սահմանադրական փոփոխությունների իր «13 կետերը»: Մակարիոսը շեշտում էր, որ ինքն ի սկզբանե, դեռևս Ցյուրիխ-Լոնդոնյան բանակցությունների ժամանակ, հանդես էր եկել սահմանադրության մի շարք հոդվածների դեմ: Միաժամանակ Մակարիոսը հույս էր հայտնում, որ այս փոփոխությունները կամրացնեն Կիպրոսի հանրապետությունը:

Այս փոփոխությունների հիմնական կետերն էին նախագահի և փոխնախագահի վետոյի իրավունքի վերացումը, միասնական ձայներով խորհրդարանում նրանց ընտրությունը, միասնական տեղական ինքնակառավարման մարմինների, բանակի ստեղծումը, դատական համակարգի միացումը և պետական համակարգում թուրք-կիպրացիներին, նրանց բնակչության ընդհանուր թվին համապատասխան տեղերի հատկացումը: Սահմանադրության մնացած փոփոխություններն ունեին ավելի շուտ տեխնիկական բնույթ[1]:

Մակրիոսի «13 կետերին» առաջինն արձագանքեց Թուրքիան: Նույնիսկ ավելի վաղ, քան դա կաներ Կիպրոսի թուրքական համայնքը: Կտրուկ դեմ հանդես գալով «13 կետերին»՝ Թուրքիայում կրկին ակտիվանում են հակահունական ելույթները, որոնք ուղեկցվում էին «թաքսիմի» կոչերով: Իրավիճակը համայնքների միջև բավական սրվել էր նաև բուն Կիպրոսում: Բախումներ թույլ չտալու նպատակով, թուրքական և հունական համայնքների միջև դրվել էին անցակետեր: Սակայն, այս լարվածությունն ի վերջո, 1963 թ. դեկտեմբերի 21-ի երեկոյան տեղի տվեց, երբ Նիկոսիայի անցակետերից մեկում թուրք-կիպրացի զույգը հրաժարվեց փաստաթղթեր ներկայացնել հույն-կիպրացի ոստիկաններին: Այս վեճը շուտով վերածվեց փոխհրաձգության, ինչի արդյունքում սպանվեցին երկու թուրք-կիպրացներ:

Շուտով բախումները սկսվեցին Նիկոսիայի այլ թաղամասերում ևս: Անտեսելով հանգստություն պահպանելու նախագահ Մակարիոսի և փոխնախագահ Քյուչյուքի կոչերը, արդեն հաջորդ առավոտյան բախումներ տեղի ունեցան Լարնակայում: Հատկապես ծանր մարտեր ընթացան ստրատեգիապես կարևոր Նիկոսիայի արվարձան Օմորֆիտայում: Այս բախումներն ավելի էր թեժացնում այն հանգամանքը, որ բախումների տարբեր կողմերից մասնակցում էին նաև Ցյուրիխ-Լոնդոնյան համաձայնագրով Կիպրոսում տեղակայված հունական և թուրքական զինված ու-

[1] **Tornaritis C. G., Q. C., Attorney**-General of the Republic, II edition, Nicosia, 1980, http://kypros.org/Documents/Tornaritis/docs/nicosia.html, chapter VI.

ժերը: Թուրք-կիպրացիների կիսառազմականացված խմբավորումների կողմն էին անցնել նաև թուրք-կիպրացի ոստիկանների և ժանդարմների մի մասը: Այսպես օրինակ՝ Ֆամագուստայում թուրք-կիպրացի ժանդարմները նույնիսկ փորձել էին գրոհով վերցնել իրենց շտաբը[1]: Ընդհանուր առմամբ, 1963 թ. դեկտեմբերին, ըստ թուրք տարբեր պատմաբանների տվյալների, թուրք-հունական բախումների արդյունքում սպանվեց ավելի քան 50 թուրք[2]:

Հույն-թուրքական այս նոր բախումները Կիպրոսում իրական վտանգ էին ներկայացնում նաև կղզում բնակվող այլ էթնիկ խմբերի՝ մասնավորապես հայերի համար: Բախումների հենց սկզբից, Նիկոսիայում թուրքական աշխարհազորի թիրախում էր հայտնվել հայկական համայնքը, որը ենթադրաբար փորձում էր ուժով դուրս մղել հայերին՝ իրենց ավանդական բնակության վայրերից[3]: Այս ամենի մասին մենք իմանում ենք նաև Կիպրոսի հայերի խորհրդային դեսպանություն փոխանցած արխիվային նյութերից, որտեղ Կիպրոսի հայերը բողոքում էին թուրքերի կողմից հայկական համայնքին պատկանող բազմաթիվ տների ու խանութների ավերումից, առևտրի կաթվածահար լինելուց և որպես հետևանք՝ ֆինանսական ծանր կացությունից[4]:

Կիպրոսում բախումները դադարեցնելու նպատակով, դեկտեմբերի 26-ին, կղզում տեղակայված բրիտանական զինված ուժերը սկսում են տեղակայվել Նիկոսիայի հունական ու թուրքական թաղամասերի միջև, ստեղծելով բաժանարար հայտնի «Կանաչ գիծը»: Միաժամանակ, լարվածությունը նվազեցնելու նպատակով, ԱՄՆ-ն զգուշացնում է Թուրքիային զերծ մնալ ռազմական գործողություններ իրականացնելուց[5]:

1963 թ. դեկտեմբերի 26-ին, Akın թերթում հրապարակված «Օրեր շարունակ սպասված միջամտությունը սկսված է» վերնագրով հոդվածում, Թուրքիայի վարչապետ Ի. Ինոնյուն հայտարարում էր, որ Կիպրոսում գտնվող թուրքական զորագունդը հասել է Նիկոսիայի թուրքական թաղամաս, իսկ թուրքական ռազմաօդային ուժերի միջամտության արդյունքում հաջողվել է Թուրքիայի, Հունաստանի և Մեծ Բրիտանիայի որոշմամբ կղզում հրադադար հայտարարել[6]: Բացի այս ամենից, ինչպես հիշատակում է Ռ. Դենքթաշը, 1964 թ. Ինոնյուի հետ իր ունեցած հանդիպ-

[1] **Ker-Lindsay J.,** նշվ. աշխ., էջ 48.

[2] **Güler E.,** Basında Rauf Raif Denktaş ve Kıbrıs Mücadelesi, Bayterek International Journal of Academic Research, c. 2, s. 1, 2020, s. 106.

[3] **Ker-Lindsay J.,** նշվ. աշխ., էջ 49:

[4] ՀՀ Ազգային արխիվ, ֆ. 326, ց. 1, գ. 372, թ. 2:

[5] Foreign Relations of the United States, 1961-1963, Vol. XVI, Eastern Europe, Cyprus, Greece, Turkey, https://history.state.gov/historicaldocuments/frus1961-63v16/d303

[6] **Güler E.,** նշված աշխ., էջ 106-107:

ման ժամանակ վերջինս խոստացել էր, որ Թուրքիան երբեք միայնակ չի թողնի Կիպրոսի թուրքերին և ցանկացած, նույնիսկ ամենավատ պայմաններում կաջակցի նրանց[1]:

Արևմտյան երկրները, ինչպես Ցյուրիխ-Լոնդոնյան բանակցությունների ժամանակ, այնպես էլ դեկտեմբերյան սրացումներից հետո, կիպրական խնդիրը ցանկանում էին լուծել ՆԱՏՕ-ի շրջանակում, ինչը հնարավորություն կտար Մակարիոսին ստիպելու ընդունել կիպրական խնդրին ՆԱՏՕ-ի միջերկրածովյան քաղաքականությանը համապատասխան լուծում: Այսպես օրինակ՝ Լոնդոնի կոնֆերանսից առաջ, դեռևս հունվարի 22-ին, Հունաստանի արտգործնախարար Քրիստոս Քսանֆոպուլոս-Պալամասն առաջարկել էր առաջիկա Լոնդոնյան կոնֆերանսի ժամանակ ընդունել որոշում և Կիպրոս խաղաղություն հաստատելու նպատակով ուղարկել ՆԱՏՕ-ի խաղաղապահ ուժեր[2]: ՆԱՏՕ-ի խաղաղապահ ուժերի գաղափարը, ըստ էության, ընդունելի էր Լոնդոնյան կոնֆերանսի բոլոր մասնակիցների համար, բացառությամբ Մակարիոսի, ով կտրուկ դեմ հանդես եկավ այս գաղափարին:

Մակարիոսը Կիպրոսի անկախության երեք տարիներն օգտագործել էր բավական արդյունավետ իր արտաքին քաղաքական դիրքերը ուժեղացնելու համար: Կիպրոսը դարձել էր Չմիացած երկրների շարժման անդամ, բացի դրանից Մակարիոսին հաջողվել էր ձեռք բերել ԽՍՀՄ-ի աջակցությունը: Մակարիոսի հիմնական խնդիրը, ըստ էության, Կիպրոսի թուրքական համայնքը չէր, այլ՝ այդ համայնքին ամեն ինչով աջակցող և ռազմական միջամտությամբ սպառնացող Թուրքիան: Հաշվի առնելով սա, ինչպես նաև ՆԱՏՕ-ի առավելապես թուրքամետ դիրքորոշումը, նա առաջարկում է Կիպրոսի խնդրի լուծումը գտնել ՄԱԿ-ի հովանավորությամբ:

Դիմելով ՄԱԿ-ին, Մակարիոսը հետապնդում էր մի քանի նպատակ՝

1. ՄԱԿ-ի անդամ երկրների աջակցությամբ հակակշռել և չեզոքացնել ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ճնշումները,

2. հաստատել իր կառավարության լեգիտիմությունը, որը փորձում էին խարխլել թուրք-կիպրացիները՝ լքելով իրենց պաշտոնները,

3. ՄԱԿ-ի աջակցությամբ Մակարիոսը ցանկանում էր չեղյալ հայտարարել իրեն կաշկանդող «Դաշինքի» և «Երաշխիքների» մասին պայմանագրերը՝ շեշտելով դրանց անհամապատասխանությունը ՄԱԿ-ի կանոնակարգին,

4. և վերջապես, Մակարիոսի համար ՄԱԿ-ի խաղաղապահներն առավել վստահելի էին քան ՆԱՏՕ-ինը:

[1] Նույն տեղում, էջ 107:

[2] **Ker-Lindsay J.,** նշված աշխ., էջ 49-50.

ԽՍՀՄ-ն իր հերթին աջակցելով Մակարիոսին, հետապնդում էր իր ստրատեգիական շահերը: Նախ, Կիպրոսում ներքին քաղաքականության մեջ ամենաազդեցիկ տեղն էր զբաղեցնում կոմունիստական գաղափարներին հարող և խորհրդամետ ԱԿԵԼ կուսակցությունը (Կիպրոսի աշխատավոր ժողովրդի առաջադիմական կուսակցություն): Բացի դրանից, աջակցելով Մակարիոսին, ԽՍՀՄ-ը թեժացնում էր կիպրական խնդիրը և ՆԱՏՕ-ի երկու անդամ երկրների՝ Հունաստանի և Թուրքիայի միջև իրական բախման վտանգ էր ստեղծում: Սրան հակառակ, ԱՄՆ-ը ցանկանում էր հնարավորինս արագ փոխզիջումային լուծում գտնել կիպրական խնդրին, Հունաստանի և Թուրքիայի միջև բախումը բացառելու և որպես հետևանք ՆԱՏՕ-ի հարավ-արևելյան ճակատը չթուլացնելու համար:

Ըստ էության, Կիպրոսի խնդրի քննարկումը ՆԱՏՕ-ի շրջանակից ՄԱԿ-ի հովանու ներքո տեղափոխվեց բացառապես ԽՍՀՄ-ի աջակցությամբ: 1964 թ. փետրվարի 7-ին, խորհրդային արտգործնախարար Ա. Գրոմիկոն ԽՍՀՄ արտգործնախարարություն է հրավիրում Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Հունաստանի և Թուրքիայի դեսպաններին և նրանց է հանձնում Խրուշչովի նամակը, որով նա զգուշացնում էր ՆԱՏՕ-ին զերծ մնալ Կիպրոս ներխուժումից և լիարժեք աջակցություն էր հայտնում Մակարիոսին և հույն-կիպրացիներին[1]:

Նախագահ Մակարիոսի համար արտաքին քաղաքական մեծ հաջողություն հանդիսացավ 1964 թ. մարտի 4-ին ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի կողմից ընդունված 186-րդ բանաձևը[2], որով՝

1. բոլոր շահագրգիռ կողմերին կոչ էր արվում չվտանգել միջազգային խաղաղությունը և Կիպրոսի հանրապետության ինքնիշխանությունը, միաժամանակ ճանաչվում էր Կիպրոսի հունական կառավարության լեգիտիմությունը, որով փաստացի վերացվում էր կղզու հունական և թուրքական համայնքների միջև հավասարությունը,

2. առաջարկվում էր ՄԱԿ-ի հովանու ներքո Կիպրոս ուղարկել խաղաղապահ ուժեր: Ի սկզբանե նախատեսվում էր երեքամսյա ժամկետով կղզի ուղարկել 6500 հոգանոց կորպուս, սակայն, հետագա դրամատիկ իրադարձություններով պայմանավորված, ՄԱԿ-ի խաղաղապահները Կիպրոսում են մինչ օրս (2021 թ. ապրիլի դրությամբ Կիպրոսում է ՄԱԿ-ի խաղաղապահների 1011 հոգանոց անձնակազմը[3]),

3. առաջարկվում էր ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի կողմից Կիպրոսի, Հունաստանի, Թուրքիայի և Մեծ Բրիտանիայի հավանությամբ

[1] Նույն տեղում, էջ 66:

[2] United Nations Security Council Resolution of 4 March 1964 (186), http://www.worldlii.org/int/other/UNSC/1964/1.pdf

[3] United Nations Peacekeeping, https://peacekeeping.un.org/en/mission/unficyp

նշանակել բանագնաց՝ կիպրական խնդրի լուծման նպատակով: Սա, ըստ էության, կիպրական խնդրում ՄԱԿ-ի դիրքերի հաստատումն էր:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 186-րդ բանաձևով, Կիպրոսի հունական համայնքը փաստացի կղզու թուրքական համայնքի նկատմամբ ստացավ էական առավելություն: Զարգացնելով այս առավելությունը, Մակարիոսը սկսում է պետական կառավարման ոլորտում իրականացնել «13 կետերի» ոգուն համապատասխան փոփոխություններ՝ ամրացնելով հունական համայնքի դիրքերը: Մի շարք վիճելի խնդիրներ (հինգ խոշոր քաղաքների խնդիր, նախագահի ու փոխնախագահի վետոյի խնդիր և այլն) գտնում են իրենց երկար սպասված լուծումները: 1964 թ. ապրիլի 4-ին, Մակարիոսը միակողմանիորեն չեղյալ է հայտարարում «Երաշխիքների» և «Դաշինքի մասին» պայմանագրերը[1], որոնք համարում էր իր քաղաքական ծրագրի իրագործման գլխավոր խոչընդոտները:

Կղզու հունական համայնքի դիրքերի ամրապնդմանը զուգահեռ, գնալով վատանում էր թուրքական համայնքի վիճակը: Հույների հետ բախումների հետևանքով, թուրք-կիպրացիները լքել էին իրենց մշտական բնակության վայրերը և հավաքվել թուրքերով բնակեցված կոմպակտ անկլավներում (ամենամեծ անկլավը գտնվում էր Նիկոսիայի հյուսիսում): Թուրքական այս անկլավները (զբաղեցնում էին կղզու 3%-ը) շրջափակվել էին հույն-կիպրացիների կողմից և որպես հետևանք ունեին մատակարարման հետ կապված լուրջ խնդիրներ: 1964 թ. սեպտեմբերին, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարն իր զեկույցում թուրք-կիպրացիների վիճակը գնահատում էր «պաշարվածների վիճակի նման»[2]:

Թուրքիան իր հերթին, կիպրական հարցում անհաջողությունների ֆոնին, իր երկրում պետական մակարդակով սկսում է հակահունական հերթական արշավը: 1964 թ. մարտի 16-ին, Թուրքիայի կառավարությունը պաշտոնապես հայտարարում է, որ միակողմանի կերպով չեղյալ է ճանաչում 1930 թ. Թուրքիայի և Հունաստանի միջև կնքված պայմանագիրը, որը վերաբերում էր Ստամբուլում հունահպատակ հույների բնակության և այլ իրավունքներին: Այս պայմանագրի չեղյալ ճանաչումը Թուրքիայի իշխանություններին տալիս էր իրավական հիմք Ստամբուլում բնակվող Հունաստանի քաղաքացի հույների արտաքսման համար[3]: Ավելին, թուրքական կառավարությունն ի ցույց դնելով պետական մակարդակով հույների գույքն ու ունեցվածքը թալանելու ձգտում, նրանց ամբողջ շարժա-

[1] **Гаджиев Ф.,** Независимость де-факто: Турецкая Республика Северного Кипра, М., 2008, с. 50.

[2] **Бредихин О. Н.,** Эволюция межобщинных отношений на Кипре, https://textarchive.ru/c-2044177-p7.html

[3] **Մելքոնյան Ռ.,** Հույների արտաքսումը Ստամբուլից 1964 թվականին, ՎԷմ, Երևան, 2018, 2 (62), էջ 183:

կան գույքն ու անձնական իրերը արգելում էր հանել Թուրքիայի սահմաններից դուրս[1]: Ընդհանուր առմամբ, թուրքական պետական այս արշավի հետևանքով, Թուրքիան լքեցին մոտ 40 հազար հույներ՝ թողնելով տարբեր հաշվարկներով 200-500 մլն դոլարի միայն անշարժ գույք[2]:

Հակահունական այս արշավը թուրք բարձրաստիճան պաշտոնյաների կողմից բացարձակ չէր թաքցվում, որ կապված է Կիպրոսի հետ, այսպես օրինակ՝ Թուրքիայի նախագահ Ջ. Գյուրսելը 1964 թ. ապրիլի 7-ին հայտարարեց. «Թուրքիայի հույն փոքրամասնության վիճակը սերտորեն կապված է Կիպրոսի խնդրի և թուրք-հունական հարաբերությունների հետ»[3]: Հետաքրքիր է նաև, որ նույն 1964 թ.-ին Կիպրոսի խնդրի սրմանը զուգահեռ, Անկարայում ակտիվորեն տարածվում էին շշուկներ, որ Կիպրոսում հունական սադրանքների դեպքում, թուրքական զորքերը կարող էին օկուպացնել Էգեյան ծովի հունական արշիպելագներից մեկը[4]: Այս ամենը ևս մեկ անգամ փաստում էր, որ կիպրական հարցը Թուրքիայի համար որպես առանձին հարց չէր դիտարկվում, այն դիտարկվում էր որպես բուն Հունաստանի հետ ունեցած բազմաշերտ և փոխկապակցված խնդիրների հերթական բաղադրիչ:

Մինչ Թուրքիայում աճում էին հակահունական տրամադրությունները, Կիպրոսում հունական կառավարությունը շարունակում էր ամրանալ: 1964 թ. հունիսի 1-ին, Կիպրոսի Ներկայացուցիչների պալատն Ազգային գվարդիա ստեղծելու մասին օրենք է ընդունում, որով բոլոր 18-ից 59 տարեկան կիպրացիները պարտավորվում էին վեցամսյա զինվորական ծառայության անցնել: Այս օրենքով հունական կառավարությունը նպատակ էր հետապնդում միավորել բոլոր կիսանկախ հունական ռազմականացված խմբավորումները մեկ ընդհանուր ղեկավարության ներքո: Հետաքրքիր է, որ Ազգային գվարդիայի հրամանատար էր նշանակվելու ԷՕԿԱ-ի հայտնի ղեկավար գնդապետ Գ. Գրիվասը, ով թերևս միակն էր, որ կարող էր ղեկավարել միավորվելիք բազմազան խմբավորումները:

Ազգային գվարդիայի ստեղծումը Թուրքիայի համար դարձավ «համբերության վերջին կաթիլը»: Սկսվեց ակտիվորեն նախապատրաստվել Կիպրոս ներխուժման ծրագիր: Սրան ի պատասխան, Հունաստանը և Կիպրոսը նույնպես սկսում են ակտիվորեն պատրաստվել պատերազմի: Բախումը թվում էր անխուսափելի, սակայն, վերջին պահին ԱՄՆ-ի ջանքերով այն կասեցվում է: 1964 թ. հունիսի 5-ին, ԱՄՆ-ի նախագահ Լ. Ջոնսոնը նամակ է ուղարկում Թուրքիայի վարչապետ Ի. Ինոնյուին, որում

[1] Նույն տեղում, էջ 186:

[2] Նույն տեղում, էջ 188:

[3] Նույն տեղում, էջ 189:

[4] **Шмаров В. А.,** Кипр в средиземноморслой политике НАТО, М., 1982, с. 49.

զգուշացնում էր, որ Կիպրոս ներխուժումը կարող է հանգեցնել ԽՍՀՄ-ի միջամտությանը, ինչի արդյունքում Թուրքիայի անվտանգությունը ՆԱՏՕ-ի կողմից չէր երաշխավորվելու[1]:

ԱՄՆ-ի այս կոշտ զգուշացումը Թուրքիային ստիպեց նահանջել և որոշ չափով զսպել իր հավակնությունները: Միաժամանակ, ԱՄՆ-ը սկսեց ակտիվ քայլեր ձեռնարկել ՆԱՏՕ-ի իր դաշնակիցների հաշտեցման և Կիպրոսի հակամարտության կարգավորման ուղղությամբ: ԱՄՆ-ի նախկին պետքարտուղար և նախագահ Լ. Ջոնսոնի արտաքին քաղաքական հարցերով խորհրդական Դ. Աչեսոնի միջնորդությամբ սկսվում են նոր հույն-թուրքական բանակցություններ: Հետաքրքիր է, որ այս բանակցություններում ներգրավված չէին Կիպրոսի հունական և թուրքական համայնքների ներկայացուցիչները, ինչը ևս մեկ անգամ ընդգծում էր, որ կիպրական հարցը ԱՄՆ-ի համար առաջին հերթին խնդիր էր իր դաշնակիցներ Հունաստանի և Թուրքիայի միջև:

Բանակցությունների ընթացքում ԱՄՆ-ի ներկայացուցիչ Աչեսոնը կողմերին առաջարկում է խնդրի լուծման իր ծրագիրը: «Աչեսոնի ծրագրով».

1. Կիպրոսը պետք է միացվեր Հունաստանի հետ,
2. Թուրքիային կղզում պետք է տրամադրվեր բավական տարածքով ռազմաբազա, որը պետք է դառնար նրա անբաժանելի մասը,
3. Կիպրոսը բաժանվելու էր ութ շրջանների, որոնցին երկուսը պետք է կառավարվերին թուրք-կիպրացիների կողմից,
4. Հունաստանը Թուրքիային էր հանձնելու Կաստելլորիզոն (Դոդեկանեսյան կղզիների ամենաարևելյան, ստրատեգիական մեծ նշանակություն ունեցող կղզի)[2]:

Թուրքիան ընդհանուր առմամբ կողմ էր այս ծրագրին: Հունաստանի և Կիպրոսի կառավարությունները սակայն մերժեցին այս ծրագիրը: Կիպրոսի հունական կառավարությունն ըստ էության հասել էր կղզում իր բոլոր նպատակների իրականացմանը և թուրքերի նկատմամբ զիջումների գնալու պատճառ չէր տեսնում: Բացի դրանից, «Լ. Ջոնսոնի նամակը» և ԱՄՆ-ի ճնշումները Թուրքիայի վրա ստեղծել էին իրավիճակ, որն առավելություն էր տվել հույն-կիպրացիներին: Հույն-կիպրացիներն ԱՄՆ-ի Թուրքիայի վրա կիրառվող ճնշումները մեկնաբանում էին որպես ԱՄՆ-ի աջակցություն և նրանց թվում էր, որ ապագայում ևս թուրքական ցանկացած նկրտում կրկին կբախվի ԱՄՆ-ի ճնշումներին[3]:

---

[1] Foreign Relations of the United States, 1964-1968, Vol. XVI, Cyprus, Greece, Turkey, https://history.state.gov/historicaldocuments/frus1964-68v16/d54

[2] **Гаджиев Ф.,** Независимость де-факто: Турецкая Республика Северного Кипра, М., 2008, с. 51.

[3] **Güney A.,** The USA's Role in Mediating the Cyprus Conflict: A Story of Success or Failure? SAGE Publications, Ankara, 2004, (35), p. 30.

Մինչ ԱՄՆ-ի միջնորդությամբ ընթանում էին բանակցություններ, Կիպրոսում իրավիճակը կրկին պայթյունավտանգ էր դարձել: Երկու համայնքները սկսել էին ակտիվորեն պատրաստվել բախումների: Ամառվա կեսին, կիպրական Ազգային գվարդիայում արդեն հաշվվում էին 24 հազար սպաներ և զինվորներ (մոտ կեսը հունական բանակից): Թուրքական համայնքն իր հերթին թուրքական բանակի աջակցությամբ, ՏՄՏ-ի գլխավորությամբ ստեղծել էր 10 հազար մարտիկներից բաղկացած զինված ուժեր[1]:

Օգոստոսի սկզբին Ազգային գվարդիան սկսում է գրոհել Նիկոսիայից հյուսիս գտնվող թուրքական Կոկկինա և Մանսուրա գյուղերի վրա, որտեղով թուրք-կիպրացիները ռազմական օգնություն էին ստանում Թուրքիայից: Այս գյուղերի տարածքում համառ մարտեր են սկսվում, որոնցում մասնակցություն են ունենում նաև թուրքական ռազմաօդային ուժերը: Օգոստոսի 7-8-ը թուրքական ինքնաթիռները ռմբակոծություններին են ենթարկում Կիպրոսի հյուսիս-արևմտյան շրջանի գյուղերն ու քաղաքները[2]: Ի տարբերություն հունիսյան սրացումներին, ԱՄՆ-ն այս անգամ բախումները կանգնեցելու ուղղությամբ ակտիվ ջանքեր չի ձեռնարկում, հույս ունենալով, որ թուրքական օդային հարվածները կստիպեն Մակարիոսին ընդունել «Աչեսոնի ծրագիրը»:

Մակարիոսին սակայն բախումները դադարեցնելու գործում իր աջակցությունն է հայտնում ԽՍՀՄ-ը: 1964 թ. օգոստոսի 8-ին, թուրքական օդային հարվածներից հետո, խորհրդային ՏԱՍՍ լրատվական գործակալությունը զգուշացնում է, որ Կիպրոս ներխուժելու դեպքում «Խորհրդային Միությունը կօգնի Կիպրոսի Հանրապետությանը պաշտպանել իր անկախությունը և ազատությունը…. միաժամանակ կոչ էր արվում այս խնդրով անմիջապես բանակցություններ սկսել»[3]: Օգոստոսի 9-ին Կիպրոսում կրակը դադարեցնելու վերաբերյալ բանաձև է ընդունում ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը: Կիպրոսին իրենց աջակցությունն են հայտնում նաև Չմիավորված երկրների շարժման անդամ պետությունները:

Օգոստոսյան սրացումներից հետո, ԱՄՆ-ը ևս մեկ փորձ է անում լուծելու կիպրական հարցը: Ներկայացվում է «Աչեսոնի երկրորդ ծրագիրը», որով առաջարկվում էր Կիպրոսում Թուրքիային ռազմաբազա տրամադրել, ոչ թե ցմահ, այլ 50 տարի ժամկետով[4]: Սակայն, այս առաջարկը

[1] Cyprus a country study, Edited by Solsten E., Fourth Edition, First Printing, 1993, p. 216-217.

[2] **Иванова И. И., Колмыков С. Я., Мейер М. С. и др**., 'Республика Кипр', Справочник. 3-е издание, М., 1992, http://geography.su/books/item/f00/s00/z0000086/st014.shtml

[3] **Hale W.,** Turkish Foreign policy since 1774, 3rd edition, London and New York, 2013, p. 108.

[4] **Ker-Lindsay J.,** From U Thant to Kofi Annan: UN Peacemaking in Cyprus, 1964-2004, South East European Studies at Oxford (SEESOX), Oxford, 2005, (5/05), p. 9.

մերժվում է ոչ միայն ԽՍՀՄ-ի աջակցությունը ստացած և բանակցություններում իրեն վստահ զգացող Մակարիոսի, այլ նաև Թուրքիայի կողմից:

Կիպրական խնդրի կարգավորման փորձ է անում նաև ՄԱԿ-ը: 1965 թ. մարտի 26-ին, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը, որպես Անվտանգության խորհրդի փաստաթուղթ, հրապարակում է ՄԱԿ-ի Կիպրոսի հարցով միջնորդ Գալլո Պլազայի զեկույցը: Այս զեկույցով հաստատվում էր Կիպրոսի «անկախությունը, տալով անվտանգության և բոլոր մարդկանց իրավունքների պաշտպանության բավարար երաշխիքներ»: Միաժամանակ բացառվում էր «էնոզիսը», ինչը դիտարկվում էր որպես կոնֆլիկտի «ամենապատակտիչ և … պայթյունավտանգ ասպեկտը»: Մերժվում էր նաև դաշնությունը և «երկու համայնքների աշխարհագրական բաժանումը», ինչն «անխուսափելիորեն բերելու էր պառակտման»[1]: Բացի այս ամենից, «Պլազայի զեկույցով» Կիպրոսը պետք է դեմիլիտարիզացվեր (բրիտանական ռազմաբազաների հարցը պետք է քննարկվեր հետո), պետք է ուղիղ բանակցություններ սկսվեին Կիպրոսի հունական ու թուրքական համայնքների միջև, ինչպես նաև թուրք-կիպրական փոքրամասնությունն իր իրավունքների պաշտպանության վերաբերյալ պետք է ստանար ՄԱԿ-ի երաշխիքներ:

«Պլազայի ծրագիրն» ըստ էության բավական մոտ էր Կիպրոսի խնդրի կարգավորման վերաբերյալ Մակարիոսի տեսակետներին: Այս ծրագրի ի հայտ գալու գործում բավական կարևոր էր ԽՍՀՄ-ի և Չմիավորված երկրների շարժման անդամ պետությունների դերը: Վերլուծելով արխիվային նյութերը և տվյալ ժամանակաշրջանի խորհրդային պարբերական մամուլը, մենք տեսնում ենք, որ ԽՍՀՄ-ն անդրադառնալով կիպրական հարցին, միշտ շեշտում էր Կիպրոսի տարածքային ամբողջականության, անկախության և կղզուց օտարերկրյա ռազմաբազաների դուրս բերման կարևորությունը[2]:

Ի տարբերություն Հունաստանի ու Կիպրոսի կառավարությունների, Թուրքիան և թուրք-կիպրացիների առաջնորդները «Պլազայի զեկույցը» գնահատեցին միակողմանի և հունամետ, կտրուկ հրաժարվելով ընդունել այն: 1965 թ. մարտի 31-ին, Թուրքիայի արտգործնախարարությունը կոշտ կերպով հայտարարեց, որ «միջնորդն այլևս չի կարող շարունակել իր պարտականությունները», քանի որ «դուրս է եկել 1964 թ. մարտի 4-ի Անվտանգության խորհրդի կողմից դրված խնդիրների շրջանակներից»[3]: Թուրքիայում բավական սուր ընդունեցին նաև 1965 թ. դեկտեմբերի

---

[1] **Stavrou M. M.,** Resolving the Cyprus Conflict: Negotiating History, 2009, p. 28.

[2] ՀՀ Ազգային արխիվ, ֆ. 326, ց. 5, գ. 1, թթ. 111-112, "Известия", 23.01.1965,
ՀՀ Ազգային արխիվ, ֆ. 326, ց. 5, գ. 2, թ. 101, "Правда", 25.01.1966,
ՀՀ Ազգային արխիվ, ֆ. 326, ց. 5, գ. 2, թ. 107, ТАСС, 16.12.1966:

[3] **Поцхверия Б. М.,** Внешняя политика Турции после второй мировой войны, М., 1976, с. 223.

18-ի ՄԱԿ-ի XX Գլխավոր Ասամբլեայում 32 «չմիավորված» երկրների կողմից առաջարկված և ընդունված բանաձևը, որով կոչ էր արվում բոլոր երկրներին հարգել Կիպրոսի տարածքային ամբողջականությունը և ինքնիշխանությունը, ձեռնպահ մնալով Կիպրոս ներխուժելուց[1]:

«Պլազայի զեկույցը» ցավոտ ընդունվեց Մեծ Բրիտանիայում ևս, քանի որ զեկույցում արծարծվում էր Կիպրոսում բրիտանական ռազմաբազաների խնդիրը: Ընդհանուր առմամբ, կիպրական հարցում ներգրավված ՆԱՏՕ-ի երկրները՝ ԱՄՆ, Մեծ Բրիտանիան և Թուրքիան կիպրական հարցի լուծումը տեսնում էին միմիայն ՆԱՏՕ-ի շրջանակում, ինչին սակայն վճռականորեն դեմ էր հանդես գալիս Մակարիոսը:

Ընդհանուր առմամբ, վերլուծելով 1963-1964 թթ. կիպրական ճգնաժամը և նրա ազդեցությունը հույն-թուրքական հարաբերությունների վրա, կարող ենք փաստել, որ այս ճգնաժամի հիմքը դրվել էր դեռևս Ցյուրիխ-Լոնդոնյան համաձայնություններով և կիպրական սահմանադրությամբ: Սահմանադրությամբ թուրքական համայնքն ի հակադրություն հունական համայնքի, ստացել էր անհամապատասխան լայն իրավունքներ, ինչը չէր կարող չհանգեցնել պետական համակարգի պարալիզացմանը: Կիպրոսի թուրքական համայնքի լայն արտոնությունները, ըստ էության, Թուրքիայի Ցյուրիխ-Լոնդոնյան բանակցություններում ունեցած առավել ուժեղ բանակցային դիրքերի արդյունքն էին:

1963-1964 թթ. կիպրական ճգնաժամի ազդեցությունը հույն-թուրքական հարաբերությունների վրա ուսումնասիրելու համար, կարևոր է հասկանալ Հունաստան-Կիպրոսի հունական համայնք և Թուրքիա-Կիպրոսի թուրքական համայնք հարաբերությունների բնույթը: Կիպրոսի թուրքական համայնքն, ըստ էության, ամբողջովին կախված էր Թուրքիայից և գործում էր ըստ Թուրքիայի արտաքին քաղաքական գերատեսչության նախորոշած ծրագրերի: Կիպրոսի հունական համայնքը, սակայն, ի տարբերություն թուրքական համայնքի, գործում էր բավական ինքնուրույն, շատ հաճախ արտաքին քաղաքական ուղու վերաբերյալ հակասություններ ունենալով Հունաստանի հետ: Մակարիոսի կառավարությունն ի տարբերություն Հունաստանի, «Սառը պատերազմի աշխարհում» ընտրել էր այլ գործընկերներ և վարում էր բավական ճկուն և բարդ դիվանագիտական խաղ:

Ընթացող «Սառը պատերազմը» և Արևելյան Միջերկրականի վերաբերյալ ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի տարբեր արտաքին քաղաքական տեսլականները նույնպես էականորեն ազդում էին հույն-թուրքական հարաբերությունների վրա: Այսպես օրինակ՝ 1963 թ. դեկտեմբերին և 1964 թ. հունիսին

[1] Նույն տեղում, էջ 225-226:

ԱՄՆ-ի, իսկ 1964 թ. օգոստոսին ԽՍՀՄ-ի գործողությունների հետևանքով հնարավոր եղավ զսպել կիպրական ճգնաժամի հետագա էսկալացիան և կանխվեց ավելի լայն հույն-թուրքական հնարավոր պատերազմը:

Ընդհանրացնելով վերոնշյալը, կարող ենք ավելացնել նաև, որ կիպրական ճգնաժամն իր լուրջ սրացումներով հանդերձ միակը չէր հույն-թուրքական հարաբերություններում: 1963-1964 թթ., կիպրական ճգնաժամի ֆոնին, վերհիշվում են նաև Ստամբուլի հունական համայնքի և Էգեյան ծովի հունական կղզիների խնդիրները, ինչը մեկ անգամ ևս փաստում էր, որ կիպրական հարցը հույն-թուրքական հարաբերություններում բազմաշերտ, բարդ և փոխկապակցված հերթական խնդիրներից մեկն էր միայն:

Рафаэль Хачатрян, Влияние кипрского кризиса 1963-1964 годов на греко-турецкие отношения - В соответствии с принятой в 1960 году на основании цюрихско-лондонских соглашений конституцией Кипра, туркам-киприотам были предоставлены большие привилегии, несоразмерные с их общей численностью населения, что создавало непреодолимые препятствия для эффективного государственного управления. Для решения этой проблемы в 1963 г. президент Макариос представляет свои знаменитые «13 поправок», которые, однако, вызывают резкую реакцию турок-киприотов и Турции. Начавшиеся на Кипре с декабря 1963 года и с небольшими перерывами продолжавшиеся до августа 1964 года греко-турецкие столкновения наложили серьезный отпечаток на дальнейшее развитие проблемы острова, на общие греко-турецкие отношения, поставив два государства-члена НАТО, Грецию и Турцию, под реальную опасность войны друг против друга.

Rafael Khachatryan, The Influence of 1963-1964 Cyprus crisis on Greek-Turkish relations - By the constitution of 1960 adopted on the basis of Zürich-London agreement the Turkish Cypriot got wide privileges not corresponding to the number of their total population which made inspurable difficulties for state effective government. In 1963 president Makarios presented his famous ''13 points'' which led to the rough reaction of Turkish cypriot and Turkey. The conflicts began in Cyprus in December of 1963 lasted till the August of 1964 with some intervals had very serious signs on the Greek-Turkish relations and on the further development of the problem of the island bringing the two NATO member countries Greece and Turkey in front of the serious danger of the war against each other.

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ՄԱՐՏԻՆ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Բանալի բառեր – տեղեկատվություն, էլեկտրոնային կառավարում, տեղեկատվական հասարակություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ, տեղեկատվական համակարգեր:

Տեղեկատվության դերը ժամանակակից աշխարհում անգնահատելի է: Այժմ դժվար է պատկերացնել կենսագործունեության մի բնագավառ, որը կարողանա արդյունավետ գործել առանց տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական համակարգերի: Հասարակության կենսագործունեության կարևորագույն ոլորտներից է կառավարման բնագավառը: Կառավարչական որոշումների կայացման գործընթացում մեծ դեր և նշանակություն է տրվում տեղեկատվությանը, դրա հավաքագրման եղանակներին, վերլուծությանը, պահպանմանը, տարածմանը, որի արդյունքում ձևավորվում են արդյունավետ որոշումներ, և որի հավաստիությունից ու ճիշտ վերլուծությունից է կախված կայացված որոշումների օբյեկտիվությունը ու արդյունավետությունը: Տեղեկատվության արժեքը բնութագրվում է նրանով, որ այն գործողությունների և դրանց գնահատականի հիմնավորումն է:

Այս հետազոտական հոդվածի արդիականությունը այն է, որ վերջին ժամանակահատվածում տեղեկատվությունը առաջնակարագ տեղ է զբաղեցնում մարդկության կյանքում: Տեղեկատվությունը գնալով ավելի է կարևորվում ներկայիս հասարակություններում. այն դարձել է կենսագործունեության տարբեր ոլորտների չափանիշ, այդ թվում նաև, այս կամ այն կերպ՝ ներթափանցելով ազգային մշակութային համակարգ: Այս ամենը մի կողմից առաջ է բերում ամբողջ հասարակության կողմից գիտելիքի մեծ պահանջ, իսկ մյուս կողմից՝ ստեղծում և զարգացնում է առանձին անհատների պահանջմունքների բավարարման համար անհարժեշտ միջոցներ: Այս համատեքստում հետազոտության առանձնակի նյութ է էլեկտրոնային կառավարման առանձնահատկությունները տեղեկատվական հասարակության զարգացմանը զուգընթաց:

Արդի տեղեկատվական համակարգերի և տեխնոլոգիաների ի հայտ գալը օգնում է մարդկանց ոչ միայն տնօրինել հսկայածավալ տեղեկատվությունը, այլև տեղեկատվական տեխնոլոգիաները արմատապես փոխում են զարգացման սոցիալական, մշակութային ընթացքը: Նոր տեղե-

կատվական համակարգերը, աննկարագրելի արագությամբ ներթափանցելով կենսագործունեության բոլոր ոլորտներ, մեծ ազդեցություն են թողնում անձի, ընտանիքի, կենսակերպի ձևավորման վրա:[1] Դրանք փոխում են նաև կրթության համակարգը, բայց, միևնույն ժամանակ, կրթությունը պետք է դառնա այն կառուցակարգը, որը կապահովի անձի համընթաց զարգացումը տեղեկատվական հասարակության տիրույթներում:

Տեղեկատվական գործընթացները (տեղեկատվության հավաքում, մշակում, պահպանում և փոխանցում) միշտ էլ կարևոր դեր են խաղացել գիտության, տեխնիկայի և հասարակության կյանքում առհասարակ: Մարդկության զարգացմանը զուգընթաց մեծացել է այդ գործընացների ավտոմատացման միտումները, չնայած նրանց ներքին կառուցվածքը հիմնականում մնացել է անփոփոխ[2]:

Տեղեկատվական տեխնոլոգաների և տեղեկատվական համակարգերի ի հայտ գալուն զուգահեռ՝ վերջերս ամբողջ աշխարհում լայնորեն սկսել են կիրառել «տեղեկատվական հասարակություն» հասկացությունը: Սա ևս մեկ անգամ վկայում է տեղեկատվության այն հսկայական ազդեցության մասին, որն այն ունի համայն մարդկության համար: «Տեղեկատվական հասարակություն» հասկացությունը առաջին անգամ օգտագործվել է Ճապոնիայում 1960-ական թվականներին: Գիտական գրականության մեջ կան մի շարք տարաձայություններ, թե կոնկրետ ով է առաջին անգամ գործածել այս հասկացությունը: Կան մի քանի տարբերակներ՝ Յիրո Կամիշիմիա, Միչիկո Իգարաշի և Յուջիրո Հայաշի: Նրանք առաջինն էին, որ այս եզրույթը 1964 թվականին կիրառել էին իրենց գրքերի վերնագրերում, սակայն հնարավոր չէր պարզել, թե նրանցից ով է եղել առաջինը[3]: 1969 թվականին Ճապոնիայի Տեխնոլոգիական համալասարանի պրոֆեսոր Հայաշին, կատարելով մի շարք ուսումնասիրություններ, փորձում էր պարզել տեղեկատվական տեխնոլոգիաների և մասնավորապես համակարգիչների ազդեցությունը հասարակության կյանքի վրա: Արդյունքում, նա հանգեց այն եզրակացության, որ այդ տեխնոլոգիաները հանգեցնում են ոչ միայն արտադրական գործընթացի վերափոխման, այլև հասարակության ձևի փոփոխության: Հայաշին այդ հասարկությունը անվանեց «տեղեկատվական հասարակություն» (Information Society): 1960-ական թվականների վերջին այս մոտեցումը զարգացրին Յոնեյի

[1] **Romero-Ruiz, Karin, et al.** "Information and Communication Technologies Impact on Family Relationship." Procedia - Social and Behavioral Sciences, vol. 237, Feb. 2017, pp. 33–35, www.sciencedirect.com/science/article/pii/S1877042817300071, 10.1016/j.sbspro.2017.02.007.

[2] **Гринев В. Ф.**, Инновационный менеджмент: Учеб. Пособие, 2-е изд, К.: МАУП, 2001, с. 5-10:

[3] **Laszló, Z. Karvalics.** Information Society Dimensions. Google Books, JATEPress Kiadó, 2009, p. 14-16:

Մասուդան և Կոնիչի Կոհյման իրենց «Տեղեկատվական հասարակության ներածություն» աշխատության մեջ: Այս տեսաբանները զարգացրին այն միտքը, որ հասարկության շարժիչ ուժերն են լինելու ոչ թե նյութական, այլ տեղեկատվական ռեսուսները[1]:

Տեղեկատվական հասարակության զարգացման գործընթացին զուգընթաց հանրային կառավարման համակարգում սկսեցին ներդրվել և արագորեն տարածվել էլեկտրոնային կառավարման համակարգերը, որոնք լիովին փոխեցին կառավարման մասին մինչ այդ եղած պատկերացումները: Էլեկտրոնային կառավարում հասկացությունը ունի մի շարք սահմանումներ, որոնք բացահայտում են այս հասկացության էությունը տարբեր դիտանկյուններից: Հաշվի առնելով այս հասկացության բազմամակարդակ էությունը՝ ցանկանում ենք կարևորել հատկապես «Միջազգային հանրային հատվածի» (World Public Sector) զեկույցում տրված լայն սահմանումը, համաձայն որի էլեկտրոնային կառավարումը տեղեկատվական համակարգերի և տեխնոլոգիաների ներդրման միջոցով կառավարման ներքին և արտաքին գործընթացների փոխհարաբերությունների ձևափոխման գործընթաց է[2]:

Ամերիկացի քաղաքագետ Ջ.Դեմպսին «էլեկտրոնային կառավարության» համակարգում դիտարկում է երեք փոխկապակցված սկզբունքներ՝ 1. «հրապարակայնություն», 2. «մասնակցություն» և 3. «առցանց-գործառնություն»[3]:

1. «Հրապարակայնության» սկզբունքի համաձայն պետական մարմիններն իրենց կայքերում տեղադրում են օրենքների և նորմատիվ-իրավական ակտերի տեքստերը, վիճակագրական տվյալներ, հայտարարություններ ձևեր, հայտարարագրեր, անդորրագրեր և այլ փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են պետական մարմիններին էլեկտրոնային դիմումներ հղելու համար: Վիրտուալ հրապարակայնության ստեղծման այս փուլում քաղաքացիների և քաղաքացիական հասարակության ինստիտուտների համար իրենց հետաքրքրող տեղեկատվությունից օգտվելու դյուրամատչելիությունն ընդլայնվում է: Ջ.Դեմպսին կարծում է, որ վիրտուալ հրապարակայնության նման եղանակը հնարավորություն է ընձեռում քաղաքացիներին ազատորեն ստանալու իրենց հետաքրքրող տեղեկատվությու-

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] Word Public Sector Report 2003, E-Government at the Crossroads. Department of Ecnomic and Social Affairs. United Nations, 2003, p. 1, http://unpan1.un.org/intradoc/groups/public/documents/un/unpan012733.pdf

[3] **Демпси Дж.**, Электронное правительство и его выгоды для широких масс. Государственное управление в переходных экономиках: ежеквартальное издание программы «Инициатива реформирования местного самоуправления и государственных услуг», Институт открытого общества, 2003., с. 24-27.

նը՝ առանց ավելորդ անգամ պետական և տեղական իշխանության հաստատություններ այցելելու, այս կամ այն մակարդակի ծառայողների մոտ հերթագրվելու[1]: Հրապարակայնության փուլում բյուրոկրատական արգելքների շրջանցման կարևոր տարր է «մեկ պատուհանի» գործընթացը, որը գործում է աշխարհի բազմաթիվ երկրներում: Հայաստանում այն սկսեց բարեհաջող կերպով գործել 2007թ. Երևանի քաղաքապետարանում:

2. «Մասնակցության» սկզբունքը ենթադրում է ընթացիկ և հեռանկարային քաղաքականության հրատապ խնդիրների վերաբերյալ իշխանության կողմից անցկացվող հասարակական կարծիքի մշտադիտարկում: Այստեղ խոսքը պատասխանատու քաղաքական որոշումների մշակման և ընդունման գործընթացին համատեղ մասնակցության մասին է, որում շահագրգռված են ինչպես իշխանական մարմինները, այնպես էլ հասարակությունը: Չաթերը, բլոգները, նամակները, տեսակոնֆերանսները, ինտերնետ-համաժողովները և ինտերակտիվ այլ միջոցները ստեղծում են աննախադեպ հնարավորություններ մասնակցային փուլում: Թեև որոշումների ընդունման ժամանակ «վերջին խոսքը» պատկանում է իշխանական լիազոր մարմիններին, այդուհանդերձ, այդ որոշումների լեգիտիմությունը և իշխանության նկատմամբ հասարակական վստահությունը էականորեն մեծանում են հասարակության նմանօրինակ լայն մասնակցության պարագայում: Որքան խորն ու բովանդակալից ընթանա այս փուլի զարգացումը տեղեկատվական հասարակությունում, այնքան բարձր կլինեն տվյալ երկրում մասնակցության ժողովրդավարության մակարդակն ու նրա սոցիալական կապիտալը:

3. «Առցանց-գործառնության» սկզբունքի համաձայն խոսքը ոչ միայն շփման կամ տեղեկատվության փոխանակման մասին է, այլև քաղաքացիների ուղղակի գործողությունների՝ ինտերնետ-ծառայությունների հիման վրա, որ առաջարկում են կառավարման պետական և տեղական մարմինները: Նման օնլայն գործառնությունների ընդգրկման դաշտը կարող է լինել բավական լայն՝ կոմունալ վճարումներից, հարկային հայտարարագրերի լրացումից մինչև հասարակական միավորումների գրանցում: Այլ կերպ ասած՝ էլեկտրոնային կառավարումը հնարավորություն է ընձեռում պետական կառավարման համակարգի ծառայությունները և տեղեկատվությունը քաղաքացիներին մատուցել էլեկտրոնային միջոցների կիրառմամբ:[2]

Այսպիսի նորամուծությունների հնարավոր առավելությունների շարքում Ջ.Դեմպսին մատնանշում է բյուրոկրատական ընթացակարգերի պարզեցումը և անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպման ժամկետների

[1] Տես նույն տեղում՝ c. 25.

[2] **T. Sharma,** "E-Governance: Process Engineering Approach", Indian Journal of Public Administration, Oct-Dec 2002, p. 607.

զգալի կրճատումը, էլեկտրոնային հաշվառման տեղեկատվական համակարգի ներդրման միջոցով իրավաբանական և ֆիզիկական անձանց ավելի խիստ հարկային հաշվետվելիության ապահովումը, բյուջետային մուտքերի ավելացումը, կոռուպցիայի ծավալների կրճատումը և, համապատասխանաբար, քաղաքացիների՝ իշխանության ինստիտուտների նկատմամբ վստահության աճը: Երբ հասարակության մեջ նշյալ ինտերնետ-ծառայությունների ծավալը մեծանում է (իսկ առցանց գործառնությունների հարմարավետությանն ու շահավետությանը դժվար թե որևէ մեկը կասկածի), ապա իշխանության մարմինների և քաղաքացիների փոխհարաբերություններում սկսում են առաջանալ նոր ցանցային մեխանիզմներ. ՏՀ-ում սկսում է ձևավորվել պետական և տարածքային կառավարման նոր էլեկտրոնային ենթակառուցվածք[1]:

Հայաստանի Հանրապետությունում Էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման գործնական քայլերից էր 2010 թվականին *www.e-gov.am* կայքի ներդրումը: Այս համակարգի ներդրման նպատակը էլեկտրոնային միջոցների կիրառմամբ կառավարության և քաղաքացու (G2C), կառավարության և բիզնեսի (G2B), ինչպես նաև կառավարության տարբեր մարմինների (G2G) միջև փոխհամագործակցության ապահովումն է, որն էականորեն նպաստում է կառավարման, այդ թվում՝ նրա ժողովրդավարական սկզբունքների բարելավմանը՝ապահովելով կառավարության և քաղաքացիների միջև կատարվող գործարքների թափանցիկությունը և հնարավոր դարձնելով անցումը պասիվ տեղեկատվական հասանելիությունից դեպի քաղաքացիների ակտիվ մասնակցություն: Այս համակարգը ապահովում է նաև պետության և մասնավոր հատվածի փոխգործունեությունը՝ նպաստելով մասնավոր հատվածի զարգացմանը ապահով և հուսալի միջավայրում:

Էլեկտրոնային կառավարման համակարգի նպատակներից է նաև՝

- ապահովել որակյալ, արդյունավետ, մատչելի և հասանելի էլեկտրոնային ծառայություններ ողջ բնակչության համար,
- խթանել քաղաքացիների մասնակցությունը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության և քաղաքականության մշակման գործընթացներում,
- բարելավել մասնավոր հատվածի հետ պետական մարմինների փոխհարաբերությունների որակը,

[1] **Демпси Дж.**, Электронное правительство и его выгоды для широких масс. Государственное управление в переходных экономиках: ежеквартальное издание программы «Инициатива реформирования местного самоуправления и государственных услуг», Институт открытого общества, 2003, с. 24-27.

- խթանել մասնավոր հատվածի զարգացումը, մասնավորապես՝ տեղական ՏՀՏ արտադրությունը,
- ապահովել տեղեկատվության արագ փոխանակումը տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինների ու նախարարությունների միջև,
- դարձնել կառավարության վարչարարությունը արդյունավետ և թափանցիկ և այլն:

Էլեկտրոնային կառավարման e-gov.am կայքը օգտվողներին տալիս է լայն հնարավորություններ օգտվել էլեկտրոնային ծառայություններից և տվյալների հսկայական բազայից: Օգտվողները կարող են այս կայքի միջոցով կառավարությանը նամակներ ուղարկել և հետևել իրենց նամակի ընթացքին: Կայքում առկա է նաև հսկայական տվյալների շտեմարան՝ կառավարության բոլոր որոշումները, վարչապետի որոշումները, արձանագրային որոշումները, կառավարության նիստերի օրակարգը, մեկ անձից կատարվող գնումները, ՊՈԱԿ-ների ֆինանսավորումը, ռեեստրները և ցանկերը, ՀՀ վերահսկիչ պալատի կողմից իրականացված վերահսկողության արդյունքները, լիցենզավորված անձանց հաշվետվությունները[1]: Կայքում առանձին ներկայացված է նաև «ինտերակտիվ բյուջե» բաժինը: Այն հնարավորություն է տալիս բավական հետաքրքիր, պատկերավոր և մատչելի կերպով տեսնել բյուջեի եկամուտներն ու ծախսերը առցանց ռեժիմով, զննել բյուջեն պարզ և հարմարավետ, հնարավոր է տեսնել նաև բյուջետային միջոցների հաշվին կնքված պայմանագրերի մանրամասները[2]:

Այսպիսով՝ «Էլեկտրոնային կառավարությունը»՝ որպես տեղեկատվական հասարակության էական կառուցվածքային բաղադրատարր, սկզբունքորեն նոր տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցային ենթակառուցվածք է, որը ապահովում է հասարակությունում գործադիր իշխանության մարմինների՝ սեփական գործառույթների կատարման գործընթացի արդյունավետությունը:

Պետական իշխանության մարմինների և հասարակության միջև տեղեկատվության փոխանակման ժամանակակից մեթոդների զարգացման հիմքի վրա ստեղծվում են սկզբունքորեն նոր հնարավորություններ տեղեկատվության մատչելիության և որոշումների ընդունման հրապարակայնության ապահովման, հասարակության և պետական իշխանության մարմինների միջև փոխգործակցության ու վստահության մակարդակի բարձրացման համար:

[1] https://www.e-gov.am/

[2] https://www.e-gov.am/interactive-budget/

Տեղեկատվական հասարակության կայացման գործընթացում է-լեկտրոնային կառավարման ինստիտուտն արմատական կերպափոխման է ենթարկվում:[1] Նոր տեխնոլոգիաների ներդրման արդյունքում է-լեկտրոնային կառավարման համար ստեղծվել են նպաստավոր պայմաններ՝ ձևավորելով նեթոկրատիա: XX դարի առաջին կեսին, պայմանավորված գիտատեխնիկական հեղափոխությամբ, կապիտալիզմը ենթարկվեց որակական կերպափոխման: Այս ժամանակահատվածից ի վեր «տեղեկատվական տեսություն» կամ «տեղեկատվական տեխնոլոգիաներ», ինչպես նաև «տեղեկատվական կառավարում» հասկացությունները դարձան տնտեսության դինամիկ զարգացման հենասյուներ և իբրև նպատակային արդիականացման գերակա արժեք՝ պայմանավորեցին հանրային կառավարման գիտակիրառական սկզբունքների փոխկապվածությունը: Սոցիալական ընդարձակվող տարածությունում իրական և վիրտուալ աշխարհների փոխպայմանավորված կառավարման արդյունքում սկսեց գործառնել նոր էլիտան՝ նեթոկրատիան: Վերջինս իր շարժունակությամբ ենթադրում է համընդհանուր թափանցիկ՝ ցանցային կառավարում: Համաձայն Ա. Բարդի՝ ո՛չ թափանցիկությունը, ո՛չ ցանցայնությունը չեն խաթարում իշխանական բուրգի բնականոն գործունեությունը. տվյալ բուրգի ամենացածր մակարդակում են անսահամանափակ օգտագործման ցանցում գտնվող սպառողները, որի անդամ կարող է դառնալ յուրաքանչյուրը: Նման ցանցերի գործունեությունը կարգավորվում է վերևից: Համակարգը հուշում է ցանկությունները գովազդների միջոցով, այնուհետև սպառման մակարդակի վրա տրամադրում հիմնարար պաշարներ, որն ընդունելի են կառավարող նոր դասի՝ նեթոկրատների կողմից: Նեթոկրատական իշխանությունը հասարակությունում համընդհանուր արժեքներ պարունակող հարահոս փոփոխությունների համադրման գործընթացի պատասխանատուն է[2]:

Հետևաբար, նեթոկրատիան սոցիալական ֆենոմեն է՝ հիմնված նոր տեխնոլոգիաների աճի արդյունքում առաջարկվող տեղեկատվական և հաղորդակցային հնարավորությունների վրա:

Կերպափոխվող երկրներում, որտեղ տեղի է ունենում տեղեկատվական հասարակության ձևավորման և զարգացման գործընթացը, նոր հանրային կառավարման սկզբունքների իրականացումը ենթադրում է նաև էլեկտրոնային կառավարում, որը միտված է հանրային կառավարման մարմինների հետ թափանցիկ հարաբերությունների հաստատմանն

[1] **Zacher, L. W.** "E-Government in the Information Society." Encyclopedia of Digital Government, 2007, pp. 542–547.

[2] **Александр Бард, Ян Зоберквист**, Нетократия: Новая правящая элита и жизнь после капитализма. Стокгольм, апрель 2003, с. 10-16.

ու որակյալ ծառայությունների մատուցմանը: Էլեկտրոնային կառավարումը, իր հերթին, խթանում է իր սեփական ինստիտուտների ստեղծումը՝ միավորելով ավանդական և նոր կազմակերպչական մոդելները:[1]

Տեղեկատվական հասարակությունը, որի հիմքում գործառնում է էլեկտրոնային տնտեսությունը (e-economy), կառավարությունն (e-government) ու վարչարարությունը (e-administration) նպաստում է քաղաքացի-պետություն թափանցիկ կապերի զարգացմանը և բացահայտում նորարարական տեխնոլոգիաների աճող հաստատուն ազդեցությունը հանրային կառավարման ոլորտում:

«Էլեկտրոնային կառավարման» սկզբունքների ներդրումը պահանջում է հանրային կառավարման մարմինների, ինչպես նաև դրանցում քաղաքացիների, անկախ պետական գործակալությունների, մասնավոր ընկերությունների, սեփական աշխատակիցների միջև փոխհարաբերությունների արմատական կառուցվածքային վերափոխում:

Սա մեծապես պայմանավորված է էլեկտրոնային և կիբեռնետիկական սպառնալիքներով (cyber threats), որոնց պատշաճ կերպով դիմակայելը գլոբալ մակարդակում և՛ ազգային, և՛ հանրային անվտանգության քաղաքականության առաջնահերթ խնդիրներից է դարձել:

Ամփոփելով՝ կարող ենք փաստել, որ պետական կառավարման համակարգի և տեղեկատվական հասարակության բնականոն զարգացումն ապահովելու համար ցանկությունն ու քաղաքական կամքը բավական չեն «էլեկտրոնային կառավարություն» ունենալու և այն արդյունավետ գործառնելու համար, եթե բացակայում են համապատասխան ենթակառուցվածքները: Հետևաբար, տեղեկատվական և հեռահաղորդակցային տեխնոլոգիական ենթակառուցվածքի ստեղծումը հիմնական մարտահրավերն է էլեկտրոնային կառավարման համակարգերի արդյունավետ գործառնման համար: Զարգացող երկրներն «էլեկտրոնային կառավարության» ռազմավարությունը մշակելիս պետք է առաջին փուլի կարևորագույն խնդիր սահմանեն տեղեկատվական-հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ստեղծումը՝ զուգահեռաբար լուծելով բնակչության բոլոր խավերի համար համացանցային տիրույթի մուտքի մատչելիության խնդիրը: Բնական է, առանց համակարգչային տեխնոլոգիաների մատչելիության, նորագույն գիտելիքների իմացության՝ համացանցին միանալու հնարավորությունը կորցնում է իր արդյունավետությունը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ապահովել տվյալ ոլորտում հասարակության բոլոր անդամների շարունակական կրթությունը՝ դարձնելով նրանց «էլեկտրոնային կառավարության» ծառայություններից

[1] **Brown, David**. "Electronic Government and Public Administration." International Review of Administrative Sciences, vol. 71, no. 2, June 2005, pp. 246–251, 10.1177/0020852305053883.

օգտվող կրթված և անվտանգության սկզբունքները գիտակցող հասարակության անդամ, ով կարողանում է զուգամիտել անձնական և հանրային շահերը: Միայն այս դեպքում է հնարավոր ապահովել տեղկատվական հասարակության շարունակական զարգացում և այդ համատեքստում էլեկտրոնային կառավարման ենթահամակարգերի արդյունավետ գործառնումը: Ստեղծված գլոբալ ճգնաժամային իրավիճակում, երբ հասարակությանը սպառնում են գլոբալ աղետներ, առանց էլեկտրոնային կառավարման համակարգերի կիրառման արդյունավետության ապահովման, արդի մարտահրավերին դիմակայելը պարզապես անհնար է:

Мартин Агаджанян, Роль и значение систем электронного управления в процессе развития информационного общества - В этой статье исследуются возникающие тенденции информационных технологий в правительстве и утверждается, что разработка и внедрение систем электронного правительства охватывает больше, чем просто улучшение инструментальных процессов правительства. В статье рассматриваются три взаимосвязанных принципа, присущих системе электронного правительства, а также практические шаги по внедрению этой системы в Республике Армения в 2010 году. В заключение в статье констатируется, что желания и политической воли недостаточно для того, чтобы «электронное правительство» функционировало эффективно, чтобы обеспечить нормальное развитие системы государственного управления и информационного общества, если отсутствует соответствующая инфраструктура.

Martin Aghajanyan, The role and importance of e-governance systems in the process of information society development - This article explores the emerging trends of information technology in government and argues that developing and implementing e-government systems embraces more than merely enhancing the instrumental processes of government. The article discusses three interrelated principles inherent to the e-government system and the practical steps in introducing this system in the Republic of Armenia in 2010. In conclusion, the article states that the desire and political will are not enough for the "electronic government" to function effectively in order to ensure the normal development of the public administration system and the information society if there is no corresponding infrastructure.

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՈՒՐՋ ԵՎՐՈՊԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԻՍԿՈՒՐՍԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

ՍՈՆԱ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Բանալի բառեր - Եվրոպայի ժողովրդական կուսակցություն, Արևելյան գործընկերություն, Եվրոպական միություն, քաղաքական դիսկուրս:

Մուտք - Եվրոպայի Ժողովրդական կուսակցությունը /ԵԺԿ/ ԵՄ քաղաքական համակարգի կարևոր տարրերից մեկն է: Կուսակցությունը նաև ակտիվ գործունեություն է ծավալում ԵՄ սահմաններից դուրս, ներառյալ՝ Արևելյան գործընկերության /ԱլԳ/ տարածաշրջանում: Հոդվածում ուսումնասիրվում է վերոնշյալ կուսակցության՝ մասնակցությունը ԱլԳ ծրագրի շուրջ ծավալած դիսկուրսին և բովանդակային-իմաստային քննության ենթարկվում կուսակցության՝ ԱլԳ-ին առնչվող դիսկուրսիվ դիրքորոշումները: Վերլուծությունը ցույց է տալիս, որ չնայած կուսակցությունը հաճախակի է անդրադարձել ծրագրին, այնուամենայնիվ այն արտաքին քաղաքական առաջնահերթություն չի համարվել: ԱլԳ ծրագիրը դիտարկվել է ԵՄ Հարևանության քաղաքականության, ԵՄ-Ռուսաստան, ԵՄ էներգետիկ և անվտանգային քաղաքականության, ինչպես նաև ԵՄ-ի՝ ժողովրդավարության խթանման դերակատարի համատեքստում: Աշխարհաքաղաքական իրողությունները, ինչպես նաև ԵԺԿ և ԱլԳ անդամ երկրների դիտորդ կուսակցությունների հարաբերություններն ազդեցություն են թողել վերջինիս՝ ԱլԳ-ի շուրջ դիսկուրսի մասնակցության վրա:

Եվրոպայի ժողովրդական կուսակցությունը համաեվրոպական ամենամեծ և ամենահին խորհրդարանական կուսակցությունն է: Այս համաեվրոպական կուսակցության ձևավորումը հիմնված է Արևմտյան Եվրոպայում քրիստոնեա-դեմոկրատական ու ավանդական կուսակցությունների երկարամյա համագործակցության վրա: Չնայած կուսակցությունն ունի տասնամյակների պատմություն՝ վերոնշյալ անվանումը ամրագրվել է միայն 1999թ.-ին: Բեռլինի պատի փլուզումից հետո կուսակցությունը մեծ հետաքրքրություն է դրսևորում նաև Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների կուսակցությունների քաղաքական ներգրավվման հարցում: ԵԺԿ-ի հետաքրքրությունն եվրաինտեգրման գործընթացով պայմանավորված է նաև քրիստոնեա-դեմոկրատական քաղաքական գաղափարախոսությամբ, ըստ որի՝ ինտեգրման անհրաժեշտությունը բխում է եվրոպական առանձին պետություններում ի հայտ եկած սո-

ցիալական, տնտեսական և քաղաքական խնդիրների անդրազգային բնույթով, որոնց լուծումը կուսակցությունը տեսնում է համերաշխության և լրացուցչության սկզբունքների (subsidiarity principle) կիրառմամբ[1]: Հարկ է նշել, որ ԵԺԿ-ին Հայաստանից անդամակցում են երեք կուսակցություն՝ Հայաստանի հանրապետական կուսակցությունը, «Ժառանգություն» կուսակցությունը և «Օրինաց երկիր» կուսակցությունը:

Տվյալ կուսակցության Արևելյան գործընկերության ծրագրի շուրջ դիսկուրսը ուսումնասիրելու համար դուրս ենք բերել 2009թ. մայիս ամսից մինչ 2021թ. նոյեմբերը կուսակցության, ԵԺԿ խորհրդարանական խմբի, երիտասարդական և ԵԺԿ կանանց թևի պաշտոնական կայքերում ու կուսակցության պաշտոնական սոցիալական մեդիայի էջերում տեղադրված հայտարարությունները, կուսակցական դիրքորոշումներն ու ծրագրերը, եվրոպական ԶԼՄ-ներում տպագրված ԵԺԿ հայտարարությունները, մամլո հաղորդագրությունները, կուսակցության գործունեության տարեկան զեկույցները և ԵԺԿ նախագահների, Եվրանեսթ ԽՎ-ի և Եվրախորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ԵԺԿ անդամների հետազոտության թեմայի շուրջ արված ելույթներն ու հարցազրույցները: Հատուկ ուշադրություն ենք դարձրել քաղաքական, արտաքին քաղաքական և միջազգային հարցերի շուրջ կուսակցության հրապարակային դիրքորոշումներին, ԵԺԿ քաղաքական վեհաժողովի հայտարարություններին, ինչպես նաև՝ Եվրոպական խորհրդարանի ընտրությունների ծրագրերին: Այնուհետև, կատարվել է կոնտենտ վերլուծություն և առանձնացվել են ԱլԳ և ԱլԳ անդամ երկրներին և մասնավորապես Հայաստանին առնչվող դիսկուրսիվ միավորները և դրանց հանդիպման հաճախականությունը, այդ միավորների գնահատումն ըստ կուսակցության դիրքորոշման՝ դրական, բացասական, չեզոք և վերջիններիս բովանդակային-իմաստային վերլուծությունը:

Առաջին հերթին նշենք, որ ԱլԳ ծրագրի՝ Պրահայի գագաթնաժողովում տեղի ունեցած առաջին քայլերին հաջորդում են 2009թ. Եվրախորհրդարանի ընտրությունները, որի ընթացքում ԵԺԿ-ն, ինչպես և մյուս համաեվրոպական կուսակցությունները ներկայացնում են իրենց նախընտրական ծրագրերը: Համարելով վերոնշյալ քաղաքական ծրագիրը կուսակցության գաղափարախոսությունն ու փիլիսոփայությունն արտահայտող կարևոր փաստաթուղթ, հարկ է նշել, որ թեև կուսակցությունը մի քանի անգամ անդրադարձ է կատարել ԵՄ-ի արևելյան հարևան երկրներին, Արևելյան Եվրոպայի և Կովկասի երկրների հետ համագործակցության սկզբունքներին և մեխանիզմներին, այնուամենայիվ «Արևելյան գոր-

[1] **T. Jansen and S. van Hecke.** At Europe's Service: The origin and evolution of the European People's Party. Brussels, Centre for European Studies, Springer, 2011, p. 221.

ծրնկերություն» եզրույթն այդպես էլ չի գործածվել: Նույն դիտարկումը վերաբերում է կուսակցության 2014թ. և 2019թ. Եվրախորհրդարանի ընտրությունների ծրագրերին: Կարելի է նկատել, որ ԱլԳ ծրագիրը առանձնակի ուշադրության չի արժանանում, այլ դիտարկվում է միայն Արևելյան հարևանության քաղաքականության շրջանակներում: Տվյալ դիրքորոշումը սպասելի էր, քանի որ ծրագրերը նախատեսված են լինում եվրոպական ընտրազանգվածի համար, և ԱլԳ ծրագիրը վերոնշյալ ընտրողների համար արտաքին քաղաքական առաջնահերթություն չի համարվում:

Չնայած որ ԱլԳ-ն կուսակցության ընտրական ծրագրերում տեղ չի գտել, այնուամենայնիվ, 2012թ. Ռումինիայում կայացած ԵԺԿ համագումարի ընթացքում ընդունված քաղաքական ծրագրում արդեն իսկ անդրադարձ է կատարվում ԱլԳ-ին՝ որպես առանձնակի ուշադրության հարց՝ ոչ միայն ժողովրդավարեցման և մարդու իրավունքների առաջխաղացման, այլ նաև ԱլԳ անդամ երկրների ինքնիշխանության և տարածքային ամբողջականության վերահաստատման համատեքստում[1]:

Հետազոտելով կուսակցության գործունեությունը ԱլԳ տարածաշրջանում՝ ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ ԵԺԿ-ն և հայաստանյան կուսակցությունները քայլեր են ձեռնարկել քաղաքական համագործակցությունը խորացնելու նպատակով: Արդեն իսկ 2012թ. ԱլԳ տարածաշրջանում տեղի ունեցան ԵԺԿ ԱլԳ առաջնորդների գագաթնաժողովները: Բաթումիի, Երևանի և Քիշնևի գագաթնաժողովների հռչակագրերի ուսումնասիրությունն ի հայտ է բերում ԵՄ դիսկուրսում մեկ այլ, համեմատաբար նվազ հանդիպող երևույթ, այն է՝ ԵՄ-ի՝ տարածաշրջանային կոնֆլիկտներում դերակատարության բարձրացումը: Այդ մասին են վկայում նշված գագաթնաժողովների հռչակագրերից քաղված հատվածները, որոնք ներկայացվում են ստորև.

> *Տարածաշրջանում մեծացնել ԵՄ ներգրավվածությունը և դերը հակամարտությունների խաղաղ կարգավորման հարցում՝ ի աջակցություն առկա համաձայնեցված ձևաչափերի և բանակցային գործընթացների, ի թիվս այլոց, ԵՄ դաշտային ներկայության միջոցով, երբ վերջինս տեղին է և անհրաժեշտ*[2]:
>
> *Երևանի գագաթնաժողովի ԵԺԿ ԱլԳ առաջնորդները հավատում են, որ Եվրոպական Միության և տարածաշրջանի երկրների միջև հարաբերությունները նոր ուղիներ և հնարավորություններ են բացել*

[1] Party Platform, EPP Statutory Congress, Bucharest, 2012, p. 31. Retrieved from https://www.epp.eu/files/uploads/2015/09/Platform2012_EN1.pdf.

[2] Batumi Declaration, 1st European Peoples Party Eastern Partnership Summit, 2012, p. 5. Retrieved from https://www.epp.eu/papers/batumi-declaration/.

ԵՄ-ի՝ համակամարտությունների խաղաղ կարգավորման ջանքերում դերակատարության բարձրացման համար՝ ի աջակցություն առկա համաձայնեցված ձևաչափերի և բանակցային գործընթացների, ի թիվս այլոց, ԵՄ դաշտային ներկայության միջոցով, երբ վերջինս տեղին է և անհրաժեշտ[1]*:*

Վերոնշյալ հռչակագրերը համարվում են ԵԺԿ-ի՝ ԱլԳ-ի շուրջ սկզբնական ճանապարհային քարտեզը[2]: Կանխատեսելի էր, որ այն քաղաքական համատեքստը, որում ընդունվել են տվյալ հռչակագրերը, ուղղակիորեն ազդեցություն է թողել վերջիններիս բովանդակության վրա: Առաջին հերթին, այն հանգամանքը, որ գագաթնաժողովները տեղի են ունեցել ԱլԳ անդամ երկրներում և Վիլնյուսի գագաթնաժողովին ընդառաջ, գագաթնաժողովն ու ընդունված հռչակագիրը դարձրել էին այն հարթակը, որտեղ ԵԺԿ-ն և ԱլԳ անդամ երկրների կուսակցությունները հնարավորությունն են ստացել ներկայացնել իրենց սպասելիքներն ու նպատակները և առաջ մղել իրենց շահերը: Ի տարբերություն մյուս հարթակների՝ տվյալ դեպքում ԵԺԿ-ն նաև ջանք է գործադրել բավարարելու ԱլԳ անդամ երկրների կուսակցությունների պահանջները, նվազագույնը՝ դիսկուրսիվ մակարդակում:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ ԵԺԿ-ն իր դիսկուրսում ԱլԳ ծրագրին անդրադառնալուց բացի նաև անդրադարձ է կատարել Ուկրաինայի և Վրաստանի ներքաղաքական իրավիճակին՝ նույնիսկ մինչ 2014թ. ուկրաինական ճգնաժամը: Սա նույնպես զարմանալի չէ, քանի որ ԵՄ-ն ակնկալում էր տվյալ երկրների հետ Ասոցացման համաձայնագրերի կնքումը և ուշադրությամբ հետևում այդ երկրների ներքաղաքական և արտաքին քաղաքական զարգացումներին՝ նրանց ուղղելով համապատասխան ազդակներ: Երկրորդ, Ուկրաինայի և Վրաստանի ԵԺԿ դիտորդ կուսակցությունները օգտագործում էին իրենց կապերը՝ ԵԺԿ-ի կողմից բարենպաստ հայտարարություններ ստանալու, հետևաբար և իրենց քաղաքական կշիռը ազգային և միջազգային մակարդակներում մեծացնելու նպատակով: 2020թ. հետընտրական ճգնաժամից հետո Բելառուսը նույնպես հայտնվում է կուսակցության ուշադրության կենտրոնում:

Վիլնյուսի գագաթնաժողովի նախօրեին ԵԺԿ անդամների և կուսակցության դիսկուրսում շրջանառվում են Ասոցացման համաձայնագրերի կարևորության շեշտադրումները, իսկ հետագայում որոշ անդամ

[1] Yerevan Declaration, 2nd European Peoples Party Eastern Partnership Summit, 2012, p. 4. Retrieved from https://www.epp.eu/papers/yerevan-declaration/.

[2] EPP Annual review. The answer is more Europe, 2012, p. 30. Retrieved from https://issuu.com/eppparty/docs/epp_final_annual_review_2012.

երկրների կողմից տվյալ համաձայնագրերի մերժումը նոր շեշտադրումներ է բերում կուսակցության դիսկուրսում: Մասնավորապես՝ ԱլԳ ծրագիրը սկսում է ավելի ինտենսիվորեն դիտարկվել ԵՄ-Ռուսաստան հարաբերությունների համատեքստում: Օրինակ՝ այս շրջանում ԵԺԿ-ն Եվրանեսթ ԽՎ-ի շրջանակներում առաջարկում է մի բանաձև, ըստ որի՝ «*Ռուսաստանի և Ուկրաինայի միջև առևտրային պատերազմը պարզապես ազդանշան էր այլ երկրներին՝ Ռուսաստանի իրական մտադրությունների և Եվրամիության հետ նրանց ասոցացմանը հակադրվելու մասին: Խոսքը միայն առանձին երկրների մասին չէ, այլ ԵՄ-ի և իր արևելյան հարևանների միջև հարաբերությունների մասին է: Ուկրաինան, Հայաստանը, Մոլդովան և Վրաստանը պարզապես աճող ճնշման մասնիկը չեն, նպատակը ամբողջ Արևելյան գործընկերության ծրագիրը կասկածի տակ դնելն է, որն ԵՄ արտաքին քաղաքականության հիմնասյուներից մեկն է*»[1]: Զարմանալի չէ, որ ուկրաինական ճգնաժամից հետո այս դիսկուրսը ավելի է ուժգնանում, և ԵՄ-Ուկրաինա, Ուկրաինա-Ռուսաստան և ԵՄ--Ռուսաստան թեման հաճախակիորեն է արծարծվում ԵԺԿ-ի՝ ԱլԳ-ի շուրջ դիսկուրսում: Վերոնշյալ թեմային զուգահեռ կուսակցությունն ԱլԳ տարածաշրջանի կարևորությունն ընդգծում է ԵՄ-ի համար կայունության և ժողովրդավարության տարածման տեսանկյունից:

Մյուս կողմից, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ԵԺԿ-ն ԱլԳ ծրագիրը շատ հաճախ դիտարկում է ԵՄ էներգետիկ անվտանգության շրջանակներում, իսկ դիսկուրսում շեշտադրումներ են արվում Հյուսիսային հոսք-2 գազատարի ազդեցության շուրջ, որի մասին է վկայում նաև հետևյալ հատվածը, որը քաղված է ԵՄ էներգետիկ անվանգության արտաքին ուղղվածության շուրջ ԵԺԿ կուսակցական դիրքորոշման փաստաթղթից:

> *Մենք կարծում ենք, որ Հյուսիսային հոսք-2 համաձայնագիրը չի համապատասխանում ԵՄ-ի՝ մատակարարման աղբյուրների և ներկրվող էներգիայի տարանցման ուղիների դիվերսիֆիկացման, ինչպես նաև ԵՄ էներգետիկ անվտանգության ռազմավարությանը և արտաքին քաղաքական, անվտանգային, Արևելյան գործընկերության քա-*

[1] EU must defend its neighbours from Russian pressures deterring them from entering into Association agreements, 2013. Retrieved from https://www.eppgroup.eu/newsroom/news/eu-must-defend-its-eastern-neighbours.

դաքականության նպատակներին՝ ուժեղացնելով ԵՄ-ի կախվածությունը ռուսական գազի մատակարարումից[1]:

Եթե մինչ Վիլնյուսի գագաթնաժողով կուսակցության դիսկուրսում մեծ տեղ էր տրվում արժեքներին և գաղափարներին, ինչպիսիք են՝ ժողովրդավարությունն ու օրենքի գերակայությունն, ապա Վիլնյուսի գագաթնաժողովից հետո ԱլԳ-ի շուրջ դիսկուրսը նաև համալրվում է պրակտիկ քայլերի ու ծրագրի նպատակների շեշտադրումներով, ինչն առավել ակներև է դառնում նաև վերջին շրջանում: Այսպես՝

Կոչ ենք անում ԵՄ կառավարություններին պատրաստել համագործակցության մանրամասն ու հավակնոտ օրակարգ՝ կոնկրետ օգնություն ցուցաբերելով Ուկրաինային, Վրաստանին, Մոլդովային, Հայաստանին, Ադրբեջանին և Բելառուսին… ԵՄ-ն պետք է կոնկրետ խթաններ առաջարկի այդ երկրներին, ինչպիսիք են՝ ռոումինգի վճարներից ազատ գոտիները, տնտեսությունների դիվերսիֆիկացմանը աջակցելը՝ ավելացնելով ՓՄՁ-ներին տեղական արժույթներով տրվող վարկերը և ենթակառուցվածքների զարգացմանն աջակցելը[2]*: Ափսոս, որ ԵՄ կողմից մենք դեռևս չենք կարողանում խոստանալ Արևելյան գործընկերության ինտեգրման ավելի հստակ տեսլական, և դա այդ երկրներում անհարկի հիասթափություններ է առաջ բերում, հուսախաբություններ և երազանքներից հրաժարում: Բայց այն ինչ մենք կարող ենք անել՝ ցույց տալ, թե որտեղ, որ հատվածում են գտնվում ԱլԳ երկրները ինտեգրվելու իրենց ճանապարհին: Եկե՛ք սկսենք պարբերական գնահատման և կանոնակարգման հաշվետվություններ պատրաստել, եկե՛ք համեմատենք, ոչ միայն ԱլԳ երկրները իրար միջև, այլ նաև ԱլԳ և Արևմտյան Բալկանների երկրների ինտեգրման ճանապարհները: Համեմատությունը կբերի առաջընթացի և հետանկարի զգացում, ինչպես նաև մրցակցության դինամիզմ: Դա այն է, ինչը շատ է անհրաժեշտ ԱլԳ տարածաշրջանին*[3]*:*

---

[1] EPP position paper on the External Dimension of the Energy Security, 2015. Retrieved from https://www.eppgroup.eu/newsroom/publications/position-paper-on-the-external-dimension-of-energy-security.

[2] EPP group calls for "tangible engagement" with EU Eastern neighbours, 2020. Retrieved from https://www.eppgroup.eu/newsroom/news/we-want-tangible-engagement-with-eu-eastern-neighbours?fbclid=IwAR3hKPOVNcvD9x35oJk8Z9hQ7YKYA3zKRUf2Wui8uy7dVWFi8qgZMC6CzVI.

[3] **Andrius Kubilius,** Recent developments in the Eastern partnership, debate, European parliament, Brussels 15 December 2020.

ԱլԳ հավակնությունների և կոնկրետ քաղաքական պարտավորությունների շեշտադրումները նկատելիորեն ուժգնանում են Ռիգայի գագաթնաժողովից առաջ, ինչպես նաև կուսակցությունը սկսում է առանձնակի կարևորել Եվրանեսթ ԽՎ-ի բարելավման անհրաժեշտությունը:

Ակներև է, որ հետագա տարիների աշխարհաքաղաքական իրողությունները և ԵՄ-Ռուսաստան հարաբերությունների վատթարացումը նույնպես ազդեցություն է թողնում կուսակցության՝ ԱլԳ շուրջ դիսկուրսի վրա: ԱլԳ ծրագիրը սկսում է արծարծվել ավելի լայն համատեքստում, մասնավորապես՝ ԵՄ անվտանգության և պաշտպանության, ԵՄ էներգետիկ քաղաքականության, հիբրիդային պատերազմների և տեղեկատվական անվտանգության, ԵՄ-Ռուսաստան հարաբերությունների, միջազգային առևտրային հարաբերությունների շուրջ կուսակցության քաղաքական դիրքորոշումներում:

Ուսումնասիրելով ԱլԳ ծրագրի տասնամյա տարելիցի շուրջ կուսակցության գնահատականներն ու ծրագրից հետագա սպասելիքները՝ կարելի է նկատել, որ ԵԺԿ-ն իր գնահատականներում հիմնականում հարում է նույն ԵՄ ինստիտուցիոնալ և փորձագիտական կարծիքին՝ համաբելով Ասոցացման համաձայնագրերի կնքումը Ուկրաինայի, Վրաստանի և Մոլդովայի հետ ԱլԳ-ի ամենամեծ ձեռքբերումներից մեկը:

Ծրագրի զարգացմանը զուգահեռ կուսակցությունն իր դիսկուրսը կենտրոնացնում է ծրագրի բարելավմանն ուղղված գործնական քայլերի շուրջ իր առաջարկների վրա, բայց շեշտը ավելի հաճախակիորեն դրվում է «Ասոցացման եռյակ»-ի վրա: Չնայած որ ԱլԳ-ն հռչակվում է որպես ԵԺԿ-ի հետագա տասնամյակի ռազմավարական առաջնահերթություն, այնուամենայնիվ, կուսակցության դիսկուրսը հետվիլնյուսյան շրջանում արդեն ոչ միայն ծավալվում է բուն ԱլԳ ծրագրի բաղադրիչների և ընթացքի շուրջ, այլ անգամ մինչ ծրագրի տասնամյակը, ուղղակիորեն տարբերակում է Ուկրաինայի, Վրաստանի ու Մոլդովայի հետ հարաբերությունների խորացման անհրաժեշտությունը:

> *Եվրոպայի ժողովրդական կուսակցությունը կարծում է, որ ԵՄ աջակցությունն ու համագործակցությունը՝ օգնելու Ուկրաինային, Մոլդովային և Վրաստանին բարեփոխումների գործընթացներում հաջողության հասնելու և ԱլԳ տարածաշրջանի ճանապարհը դեպի ԵՄ պետք է դառնա ԵՄ հիմնական առաջնահերթություններից մեկը[1]:*

[1] EPP ordinary resolution adopted at the EPP Congress Helsinki, 2018, p. 2. Retrieved from https://www.epp.eu/files/uploads/2018/11/EPP-Ordinary-Resolution_Ucraine-Georgia-Moldova .pdf.

Այսպիսով, կարող ենք պնդել, որ ԱլԳ ծրագրի տասնամյա ընթացքի, ձեռքբերումների և ձախողումների շուրջ ԵԺԿ-ի և ԵՄ ինստիտուցիոնալ ու փորձագիտական շրջանակների կարծիքը մեծավ մասամբ համընկնում են: Այստեղ ուղղակի համեմատականներ կարող ենք անցկացնել ԵՄ-ի ԱլԳ հանդեպ որդեգրած «ավելին ավելիի դիմաց» սկզբունքի և ԵԺԿ դիսկուրսում հաճախակի տեղ գտնող «ավելի շատ օգնություն ավելի շատ ժողովրդավարության համար» սկզբունքի միջև, որը կիրառվում է Արևելյան հարևանության համատեքստում:

Կուսակցության դիսկուրսի ժամանակագրական համեմատականը ցույց է տալիս, որ վերջին տասնամյակում այն ԱլԳ-ի որպես հիմնական բաղադրիչ առանձնացրել է այնպիսի գաղափարներ, ինչպիսիք են՝ «ԵՄ-ի փոխակերպիչ ուժը», «ԵԺԿ-ի երկարամյա և ակտիվ ներգրավվածությունը ԱլԳ գործընթացներում», «եվրոպական ստանդարտներն ու նորմերը և ժողովրդավարեցման գործընթացը», «Ռուսաստանի կողմից անվտանգության և անկայունության սպառնալիքները» և այլն: ԵԺԿ պատգամավորներն իրենց ելույթներում առանձնակի ուշադրություն են դարձրել ծրագրի տնտեսական բաղադրիչին:

Ինչ վերաբերում է Հայաստանին, հետաքրքրական է նկատել, որ 2017թ. հետո կուսակցության դիսկուրսը հիմնականում կենտրոնացած է ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված համաձայնագրի իրականացման տարբեր ասպեկտների շուրջ և մեծամասամբ համապատասխանում է ԵՄ ինստիտուցիոնալ դիրքորոշմանը: ԵԺԿ-ի հետաքրքրվածությունը ԱլԳ-ով չափելի է ոչ միայն կուսակցության՝ ԱլԳ երկրների անդամ/դիտորդ կուսակցությունների հետ պարբերաբար կազմակերպվող հանդիպումների ու գագաթնաժողովների քանակով, այլ կուսակցության՝ ԱլԳ ծրագրին հանրային անդրադարձով: Միաժամանակ, կուսակցության դիսկուրսը թույլ է տալիս եզրակացնել, որ չնայած ԱլԳ-ն ԵԺԿ-ի արտաքին քաղաքական օրակարգի մի մասն է, այնուամենայնիվ, այն չի կարող համարվել կուսակցության համար առաջնային՝ ի տարբերություն այլ արտաքին քաղաքական հարցերի:

Կուսակցության դիսկուրսի դիրքորոշումների հետազոտությունը ցույց է տալիս, որ ԵԺԿ-ն ակտիվորեն անդրադարձ է կատարել ԱլԳ տարածաշրջանային կոնֆլիկտներին: Եթե մնացած երկրների պարագայում շեշտադրվել է տարածքային ամբողջականության հայեցակարգը, ապա ԼՂ հակամարտությունը դիտարկվել է ԵԱՀԿ Մինսկի խմբի բանակցությունների և Հելսինկյան եզրափակիչ ակտի առանցքային սկզբունքների, մասնավորապես՝ ուժի կամ ուժի կիրառման սպառնալիքի բացառման, տարածքային ամբողջականության և ժողովուրդների հավասար իրավունքների և ինքնորոշման շրջանակներում: Տվյալ սկզբունքները նաև

շեշտադրվել են ԵԺԿ պատգամավորների կողմից Եվրախորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում տեղ գտած քննարկումների ընթացքում: Սակայն, ԼՂ հակամարտությունը ԵԺԿ օրակարգում առանձնակի ուշադրության չի արժանացել՝ չհաշված կոնֆլիկտի սրման ժամանակաշրջանում արված արտահայտություններին:

Մենք անհրաժեշտ ենք համարում, որպեսզի ձեռնարկվեն գործնական քայլեր՝ անհապաղ դադարեցնելու ռազմական գործողությունները և զորքերը ետ բերելու մինչ 2016թ. ապրիլի 1-ը զբաղեցրած դիրքերը: Մենք վճռականորեն աջակցում ենք ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ բանակցային գործընթացին[1]:

Մենք շատ անհանգստացած ենք Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող ռազմական գործողություններով: Եկեք ամեն ինչ անենք, որպեսզի հակամարտությունը չվերածվի սովորական պատերազմի: Կոչ ենք անում բոլոր կողմերին պահպանել երկխոսությունը: Երկխոսության միակ այլընտրանքը տարածաշրջանում և դրանից դուրս աղետն է[2]:

Մենք միանշանակ մերժում ենք ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառումը որպես տարածաշրջանում քաղաքական նպատակներին հասնելու միջոց: Մենք ընդգծում ենք միջազգային կանխարգելման մեխանիզմների և ռազմական բախումների միջազգային հետաքննության կենսական անհրաժեշտությունը՝ ներառյալ ագրեսորների դեմ նշանակալի համապատասխան պատժամիջոցները[3]:

Չնայած կուսակցությունն անդրադարձ է կատարել ԼՂ հիմնախնդրին և սահմանային լարվածության որոշ դեպքերին, այնուամենայնիվ, հայտարարություններում հստակ չի նշվել, թե վերոնշյալ իրավիճակներում, որ կողմն է դիմել ագրեսիայի և հասցեական դատապարտում չի տրվել: Բացառություն են կազմել ԵԺԿ որոշ անդամների առանձին ելույթները:

Չենք կարող չնկատել, որ Ուկրաինան և Վրաստանը եղել են ԵԺԿ ուշադրության կենտրոնում, ինչպես արտաքին քաղաքական հարցերի,

[1] EPP Emergency resolution on Nagorno-Karabakh conflict, 2016. Retrieved from https://www.epp.eu/papers/epp-emergency-resolution-on-nagorno-karabakh-conflict/.

[2] **Donald Tusk** [@donaldtuskEPP], Sept. 27, 2020. Retrieved from https://twitter.com/donaldtuskepp/status/1310214793282940928.

[3] EPP statement on the recent hostilities at the Armenian-Azerbaijani border, 2021. Retrieved from https://www.epp.eu/news/epp-statement-on-the-recent-hostilities-at-the-armenian-azerbaijani-border

այնպես էլ ներքաղաքական և բարեփոխումների իրագործման համատեքստում: Վերջին շրջանում ուշադրության կենտրոնում է գտնվել նաև Բելառուսի հետընտրական իրավիճակը:

Կարծում ենք, որ պատահական չէ, որ ԵԺԿ-ն իր դիսկուրսում նաև անդրադարձ է կատարում վերոնշյալ ԱլԳ անդամ երկրների ներքաղաքական իրադարձություններին, ինչպես նաև Հայաստանում տեղի ունեցող քաղաքական զարգացումներին: Հարկ է նշել, որ տվյալ երևույթը նոր է ԵԺԿ դիսկուրսում և ի հայտ է եկել մասնավորապես 2018թ. Թավշյա հեղափոխությունից հետո:

> *ԵԺԿ-ն մտահոգված է Հայաստանում ժողովրդավարության հետընթացի բազմաթիվ դեպքերով:Կոչ ենք անում Հայաստանի իշխանություններին զերծ մնալ ընդդիմության վրա ճնշումներ գործադրելուց*[1]:
> *ԵԺԿ-ն ցավում է, որ Հայաստանում իշխող մեծամասնությունը քվեարկել է սահմանադրական փոփոխությունների առաջարկին, չնայած որ Վենետիկի հանձնաժողովը ընդգծել է, որ այն չի համապատասխանում իր առաջարկություններին*[2]:

Մինչ 2018թ. ԵԺԿ-ն նույնպես Հայաստանի ներքաղաքական և բարեփոխումների օրակարգին անդրադարձել է իր դիսկուրսում, սակայն դա տեղի է ունեցել ԵԺԿ-ՀՀԿ հարաբերությունների զարգացման համատեքստում:

ԵԺԿ-ն իր ողջ փորձառությունը կներդնի և կաջակցի Հայաստանի իշխանություններին և ՀՀԿ-ին այս գործընթացն իրականացնելու համար: Մեր երկու կուսակցությունների համագործակցությունը գնալով կամրապնդվի, դրա վառ ապացույցի ականատեսը կլինեք առաջիկայում[3]:

Տվյալ երևույթը թույլ է տալիս եզրակացնել, որ ԵԺԿ անդամ/դիտորդ կուսակցությունները որոշակի չափով ազդեցություն են ունենում կուսակցության ԱլԳ շուրջ դիսկուրսի և դիրքորոշման վրա: Ազդեցության չափը դժվար է գնահատել, քանի որ ենթադրվում է, որ օգտագործվել են ոչ միայն ֆորմալ, այլ նաև ոչ ֆորմալ ազդեցության ուղիները: Միևնույն ժամանակ, չենք կարող պնդել, որ ԵԺԿ դիսկուրսը 2018թ. հետո Հայաստանի

---

[1] **Donald Tusk** [@donaldtuskEPP], June 17, 2020. Retrieved from https://twitter.com/donaldtuskEPP/status/1273314559063920641?ref_src=twsrc%5Etfw%7Ctwcamp%5Etweetembed%7Ctwterm%5E1273315142592233472%7Ctwgr%5E%7Ctwcon%5Es2_&ref_url=https%3A%2F%2Fwww.tert.am%2Fen%2Fnews%2F2020%2F06%2F18%2FTusk%2F3320761.

[2] EPP [@EPP], June 27, 2020. Retrieved from https://twitter.com/epp/status/1276812261340954624?lang=en

[3] Մեկնարկել է ՀՀԿ առաջին տնտեսական համաժողովը, 2021 https://www.gov.am/am/news/item/9178/.

հարցում դարձել է հակաիշխանական և խտրական: Չնայած որ իշխանությունները 2018թ. հետո որոշ հարցերում արժանացել են ԵԺԿ-ի բացասական գնահատականներին, այնուամենայնիվ Թավշյա հեղափոխությունը և խաղաղ իշխանափոխությունը կուսակցության անդամների կողմից ներկայացվել են դրական լույսի ներքո, ինչպես օրինակ՝ «ռեժիմի ժողովրդավարական փոփոխությունը պետք է շարունակվի և աջակցվի Եվրախորհրդարանի կողմից»[1]:

Նշենք, որ ԱլԳ ծրագիրը հանդիսացել է Եվրախորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի քննարկման առարկա: Քննարկումների ժամանակ մանրամասնորեն անդրադարձ է կատարվել ԱլԳ անդամ երկրների հետ կնքած ասոցացման և համապարփակ և ընդլայնված համագործակցության համաձայնագրերի իմպլեմենտացիային, այդ երկրներում տեղի ունեցած ընտրությունների դիտորդական առաքելություններին, վիզայի ռեժիմի ազատականացման գործընթացին և այլն, ինչպես նաև տեղի են ունեցել ԱլԳ անդամ երկրների կառավարության անդամների հետ հարցուպատասխաններ: Ինչ վերաբերում է Հայաստանի կառավարության ներկայացուցիչների հետ հարցուպատասխանի նիստերին, ԵԺԿ պատգամավորները հետաքրքրություն են դրսևորել տարբեր հարցերի շուրջ, սակայն վերջիններիս ուշադրության հիմնական առարկան Հայաստանի արտաքին հարաբերություններն էին ԵՄ-ի և Ռուսաստանի հետ, Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, ինստիտուցիոնալ բարեփոխումները, Հայաստան – Թուրքիա հարաբերությունները և այլն: Վերոնշյալ համատեքստում հատկապես աչքի է ընկնում Եվրախորհրդարանում Հայաստանի հետ բարեկամության խմբի ԵԺԿ անդամների ակտիվությունը:

Ինչ վերաբերում է Եվրանեսթ ԽՎ-ում կուսակցության դիսկուրսին, ապա ԵԺԿ անդամները հաճախակիորեն շեշտադրում են Ռուսաստանի գործոնը Արևելյան գործընկերության համատեքստում, ԱլԳ անդամ երկրներում բարեփոխումների ընթացքը, ԵՄ-ԱլԳ երկրների առևտրային և էներգետիկ ոլորտներում համագործակցության խորացման հեռանկարները, անդրադարձ կատարում ԱլԳ անդամ երկրների քաղհասարակություններին և այլն: Հետաքրքրական է նկատել, որ կուսակցությունն առանձնակի կարևորում է Եվրոնեսթ ԽՎ գործունեությունը ԱլԳ շրջանակներում ոչ միայն որպես միջկուսակցական կապերի զարգացման հարթակ, այլ նաև որպես ԱլԳ ծրագրի զարգացման խթանիչ: Հարկ է նշել, որ

[1] Lázló Tökés speech, Partnership agreement between the EU and EAEC and Armenia, debate, European Parliament, 3 July, 2018. Retrieved from https://multimedia.europarl.europa.eu/en/partnership-agreement-between-eu-and-eaec-and-armenia-partnership-agreement-between-eu-and-eaec-and_20180703-0900-PLENARY-28_vd.

ԵԺԿ անդամներն ուշադրություն են դարձնում հարթակի դերակատարման բարձրացմանը, հատկապես՝ Արևելյան գործընկերության գագաթնաժողովներից առաջ, երբ կուսակցության անդամներն իրենց դիսկուրսում կարևորում են Եվրոնեսթ ԽՎ-ի կողմից համապատասխան քաղաքական ազդակների հղումը:

ԵԺԿ կուսակցության դիսկուրսի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կուսակցությունն իր քաղաքական մեսիջների մեծամասնությունն ուղղում է ԵՄ որոշումներ կայացնողներին: ԱլԳ-ն հիմնականում արծարծվում է ԵՄ-Ռուսաստան հարաբերությունների, ԵՄ էներգետիկ քաղաքականության, ԵՄ կայունության և անվտանգության, ինչպես նաև ԵՄ-ի՝ որպես ժողովրդավարության խթանման և մարդու իրավունքների պաշտպանության գլոբալ դերակատարի համատեքստում: Կուսակցության դիսկուրսում նկատելի է ԱլԳ անդամ երկրների տարբերակումը, ինչը արտացոլում է ԱլԳ ծրագրի արդյունքներն ու մարտահրավերները: ԱլԳ թեմաների այլ շրջանակներ, ինչպիսիք են՝ ԱլԳ երկրների քաղհասարակությունը, կանանց իրավունքները և այլն, նույնպես տեղ են գտել կուսակցության դիսկուրսում, բայց նվազ ինտենսիվությամբ: Արձանագրել ենք, որ կուսակցության դիսկուրսում հաճախակի տեղ է գտել Ուկրաինայի և Վրաստանի ծրագրային, արտաքին քաղաքական և ներքաղաքական հարցերի շուրջ անդրադարձը: Չնայած որ տարածքային ամբողջականության հայեցակարգը ԵԺԿ ինստիտուցիոնալ դիսկուրսում ինտենսիվացել է ուկրաինյան ճգնաժամից հետո, այնուամենայնիվ, նկատում ենք, որ տվյալ հայեցակարգը ԵԺԿ դիսկուրսում առկա էր նաև մինչ վերոնշյալ ժամանակաշրջանը: Այսպիսով, կուսակցության դիսկուրսում ակտիվորեն շեշտադրվել են ԱլԳ ծրագրի ոչ միայն արժեքային-գաղափարական, այլ նաև աշխարհաքաղաքական գործոնները:

Կարծում ենք, որ ԵԺԿ կապերը ԱլԳ անդամ երկրների գործընկեր կուսակցությունների հետ որոշակի համատեքստերում ազդեցություն են թողել կուսակցության դիսկուրսի վրա, ինչպես օրինակ՝ կուսակցության նկատառումները Հայաստանի ներքաղաքական իրադրությանը, հատկապես 2018 թ. իրադարձություններից հետո: Կուսակցությունը մեկնաբանություններ է արել նաև ԱլԳ մյուս երկրների ներքաղաքական իրադարձությունների շուրջ, սակայն միջկուսակցական համագործակցությունն ու փոխադարձ ազդեցությունը համարում ենք դժվար չափելի գործոն:

Վերադառնալով կուսակցության՝ Հայաստանի շուրջ դիսկուրսին, հարկ է նշել, որ ԵԺԿ-ն անդրադարձել է նաև Հայոց ցեղասպանությանը, հարյուրամյա տարելիցի նախօրյակին հանդես գալով մի բանաձևով[1], որն

[1] EPP Resolution: Armenian Genocide and European values, 2015. Retrieved from https://www.epp.eu/files/uploads/2015/11/The-Armenian-Genocide.pdf.

անդրադառնում է ցեղասպանության ճանաչմանը, ինչպես նաև Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորմանն ու եվրոպականացմանը:

Ընդհանուր առմամբ, կարող ենք եզրակացնել, որ ԱլԳ ծրագիրը ԵԺԿ կուսակցության կողմից գնահատվել է որպես դրական երևույթ, բացառությամբ ծրագրի իրագործման հետ կապված որոշ հարցերի, որոնք դիտարկվել են չեզոք կամ նվազ բացասական:

Сона Мхитарян, **О некоторых особенностях дискурса Европейской народной партии о программе Восточного партнерства** - Европейская народная партия (ЕНП) - один из ключевых элементов политической системы ЕС. Партия также активна за пределами ЕС, в том числе в регионе Восточного партнерства (ВП). В статье исследуется дискурс вышеупомянутой партии об инициативе ВП и проводится контент-анализ дискурсивных проявлений партии о программе ВП. Анализ показывает, что, хотя партия часто ссылалась на вышеупомянутый проект, однако ВП не может рассматриваться как ее главный внешнеполитический приоритет. Инициатива Восточного партнерства рассматривалась партией в контексте политики соседства ЕС, отношений между ЕС и Россией, а также в контексте ЕС как сторонника демократии. Геополитические реалии, а также отношения между ЕНП и аффилированными партиями государств-членов Восточного партнерства повлияли на дискурс партии о Восточном партнерстве.

Sona Mkhitaryan, On some peculiarities of the European People Party's discourse on the Eastern Partnership program - The European People's Party (EPP) is one of the key elements of the EU political system. The party is also active outside the EU, including in the Eastern Partnership (EaP) region. The article examines the discourse of the above-mentioned party on the EaP initiative and realizes a content analysis of the party's discursive manifestations on the EaP program. The analysis shows that although the party has frequently referred to the program, the EaP could not be considered as its main foreign policy priority. The EaP initiative was viewed by the party in the context of the EU Neighborhood policy, EU-Russia relations as well as in the context of the EU as a democracy promoter. Geopolitical realities as well as the relations between the EPP and the affiliated parties of the EaP member states have influenced the latter's discourse on the EaP.

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ՄԱՐԻՆԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Բանալի բառեր - Կրթություն, գիտություն, տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաներ, ազգային անվտանգություն, պետականություն։

Անվտանգային նոր միջավայրի համատեքստում հայ հասարակությունն արդի մարտահրավերներին և սպառնալիքներին նպատակամետ պատասխանելու միտումով խնդիր ունի ընդգծված կարևորելու կրթության հիմնային դերակատարումը պետականության ամրապնդման, անվտանգության ապահովման և ազգի հարատևության կենսական հիմնախնդիրներում։ Գիտելիքներով և պատասխանատվությամբ զինված սերունդը միայն կառողջացնի հասարակությանը՝ բարձրացնելով ժողովրդավարական գիտակցված մասնակցության որակը, ձևավորելով անվտանգության ապահովման կայուն և զարգացող միջավայր, նպաստելով ինքնիշխանության ընդլայնմանը:

Տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների սրընթաց զարգացումը, գլոբալիզացիան, պատերազմները, համավարակը աննախադեպ մարտահրավերներ են նետել ողջ աշխարհին, մասնավորապես հայ հասարակությանը։ Վերջիններիս համարժեք պատասխանելու, դիմակայելու, ինչպես նաև մարտահրավեր նետելու գլխավոր պայմաններից է որակյալ, պատասխանատու և մրցունակ կադրերի պատրաստումը։ Մասնագետներ, որոնք կկարողանան ռազմավարական մոտեցումներով ժամանակին ու իրողություններին համարժեք գործունեություն ծավալել հիմնախնդիրների օպերատիվ լուծման նպատակով, ընդհուպ մինչև կանխատեսել անվտանգ ապագան խաթարող հնարավոր մարտահրավերները՝ հենվելով համընդհանուր, մասնագիտական և հատուկ գիտելիքի վրա:

Այսօր կրթությունը, գիտությունը և տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաները պետք է միանշանակ ընդունվեն որպես պետության զարգացման կարևորագույն ռազմավարական ռեսուրս, քանի որ կրթված մարդիկ Հայաստանի Հանրապետությունում բոլոր ոլորտներում, հատկապես՝ տնտեսական, քաղաքական, սոցիալական և անվտանգային վերափոխումների հաջողության հիմնական նախապայման են։ Այս ռազմավարական մտածողությամբ էլ պետք է առաջնորդվել ազգային անվտանգության ապահովման քաղաքականությունն իրականացնելիս և ռազմավարություններ, հայեցակարգեր մշակելիս։

Պետության զարգացման հիմքում դնելով գիտությունը, կրթությունը և տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաները, անհրաժեշտ է հետապնդել քաղաքացիների ընդհանուր և մասնագիտական կրթության մրցունակության, մատչելիության և շարունակականության միջավայրի ռացիոնալ ապահովման ռազմավարական նպատակ: Տեսաբան Թոֆլերը գտնում է, որ «…գիտելիքն այսօր տեղեկատվություն է՝ օժտված գործնական արժեքավորությամբ և ծառայում է որոշակի արդյունքների ստացմանը: Ուստի գիտելիքների կառավարումը, որոշակի մասնագիտական գործնական փորձով պայմանավորված, շարունակական գործընթաց է, որն սկսվում է նախակրթարանից և ավարտվում մարդու մահվամբ[1]: Սակայն դա այն դեպքում, երբ մարդն ինքը գիտակցորեն կառավարում է իր գործունեությունը: Մարդկության պատմությունն ապացուցում է, որ այդպիսի մարդկանց թիվը քիչ է, ուստի հասարակության զարգացման ապահովման համար, արդյունաբերական դարաշրջանից սկսած մինչ այսօր, գիտելիքի կառավարման հիմնական պատասխանատուն այն բոլոր ինստիտուտներն են, որոնց միջոցով հասարակությունը կենսագործունեություն է իրականացնում»[2]:

Արդի պետության ազգային անվտանգության համակարգը օրգանապես կախված է նաև քաղաքական սոցիալականացման վարքագծի արդյունավետ կազմակերպման ու վերահսկման քաղաքականությունից: Նշյալ փոխկապակցվածությունը բազմաշերտ է, քանի որ հասարակության կյանքի ցանկացած ոլորտ կապված է ազգային անվտանգության հետ մի քանի ուղղություններով՝ այն անվտանգության օբյեկտ է, անվտանգության ապահովման ռեսուրս և միջոց, հիմք և պայման անվտանգային միջավայրի ձևավորման համար:

Գիտակրթական բնագավառում ազգային անվտանգության ապահովման ռազմավարական նպատակները, համաձայն Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության նոր ռազմավարության, հետևյալն են.

Հայաստանը վարում է մտավոր ներուժի հզորացմանն ուղղված պետական քաղաքականություն, ինչը միտված է երկրի անվտանգային համակարգի դիմակայունության բարձրացմանը և երկրի առաջանցիկ զարգացմանը: Գիտական ներուժի բազմակողմանի ներգրավումը կենսագործունեության բոլոր՝ այդ թվում պաշտպանական ոլորտներ, թույլ կտա ապահովել դրա արդյունավետ արդիականացման և զարգացման շարունակականությունը:

---

[1] Կրթության որակի կառավարման գործընթացի գնահատման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում:

[2] **Тоффлер Э.,** Третья волна: Пер. с англ., М.: ООО Изд. АСТ, 2004, с. 87.

Այս համատեքստում մենք կարևորելու ենք պետության հոգածության տակ գտնվող գիտակրթական համակարգի դերը Հայաստանի՝ որպես բարձր տեխնոլոգիական կենտրոնի զարգացման գործում: Գիտակրթական համակարգի վերակառուցումը այլ նպատակներից զատ մեզ թույլ կտա նաև ստեղծել երկակի նշանակության բարձր տեխնոլոգիական հետազոտություններում գերազանցությունը խթանող, ինչպես նաև երկրի տնտեսության մրցունակության բարձրացմանը, անվտանգության ապահովմանը նպաստող համակարգ:

Առանցքային է կրթության և գիտության ոլորտի ռազմավարական առաջնահերթությունների սահմանումը, դրանց օրգանական կապի ապահովումը պետական և մասնավոր կարիքների, ինչպես նաև համաշխարհային զարգացման միտումների հետ: Բարձր տեխնոլոգիական ոլորտում պետական, ինչպես նաև մասնավոր և օտարերկրյա ներդրումների ներգրավման փոխշահավետ մեխանիզմների մշակմամբ պետությունը աջակցելու է բարձր տեխնոլոգիական հայկական արտադրանքի ստեղծմանը և իրացմանը Հայաստանում և արտերկրում[1]:

Անդրադառնալով կրթության խնդրին ազգային անվտանգության ապահովման առաջնահերթությունների համատեքստում, ընդգծենք ՀՀ «Կրթության մասին[2]» օրենքը, ըստ որի կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է: Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը: Այդ գործին իր նպաստն է բերում նաև Հայ Եկեղեցին: Համաձայն այս օրենքի կրթությունը՝ որպես անձի, հասարակության, պետության շահերից բխող դաստիարակության և վերապատրաստման նպատակային գործընթաց, կրթության իրավունքը՝ որպես սահմանադրական հիմնարար[3] և անքակտելի իրավունքներից մեկը, ՀՀ քաղաքացիները կարող են իրացնել բռնվանդակալից և արդյունավետ կերպով անվտանգային միջավայրում: Յու-

[1] Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն, հուլիս, 2020. https://www.primeminister.am/u_files/file/Different/AA-Razmavarutyun-Final.pdf :

[2] ՀՀ «Կրթության մասին» օրենք, հոդված 1 https://www.arlis.am/documentview.aspx?docid=68299:

[3] ՀՀ «Կրթության մասին» օրենք, հոդված 1 https://www.arlis.am/documentview.aspx?docid=68299

րաքանչյուր ոք ունի կրթության իրավունք[1]: Պետությունը խթանում է մշակույթի, կրթության և գիտության զարգացումը: Հայոց լեզուն և մշակութային ժառանգությունը պետության հոգածության և պաշտպանության ներքո են[2]: Քանի որ, փաստ է՝ անվտանգության թուլացած միջավայրը՝ լինի դա բնական աղետների, տնտեսական լճացման, սոցիալական ցնցումների, ներպետական ճգնաժամերի, արտաքին ճնշման, համաճարակային, պատերազմական և այլ հետևանքներով, դժվարացնում է, որոշ հատուկ դեպքերում՝ անհնարին դարձնում կրթության իրավունքի լիակատար և ռազմավարական արդյունավետությամբ իրացումը: Ազգային անվտանգության խնդիրը համակարգային անվտանգության խնդիր է, որտեղ անհատները, պետությունները և բոլոր համակարգերը իրենց դերն ունեն, և …նույնքան կարևոր են, որքան քաղաքական և ռազմական գործոնները[3]: Բնականաբար, անկախ կրիտիկական իրադրություններից կրթական համակարգը պարտավոր է շարունակել գործել, սակայն որոշակի ճնշումներով պայմանավորված բախվում է բազմաթիվ խնդիրների, որոնք ապակառուցողական, հաճախ կործանարար ազդեցություն են ունենում կրթական համակարգի վրա՝ միաժամանակ ազդելով անվտանգային համակարգի վրա:

Ամրագրենք գիտակրթական համակարգի և ազգային անվտանգության ուղիղ համեմատական կապը՝ պայմանավորված այն փաստով, որ ՀՀ ազգային անվտանգությունն ապահովող գլխավոր դերակատարները հենց մարդիկ են: Մարդկային գործոնը վճռական դեր ունի այս գործընթացում: Բայց, սրանից առաջ հարկավոր է ընդգծել անձի, նրա աշխարհայացքի ձևավորման, ինքնության և զարգացման, հասարակության մտավոր, բարոյական, և ընդհանրապես արժեքային համակարգի և անվտանգային միջավայրի գլխավոր պատասխանատուն ընտանիքն ու դպրոցն են: Ամփոփելով՝ պետության անվտանգության մակարդակի ցուցիչ է կրթական համակարգի մակարդակը: Վերջինս հնարավորություն է տալիս ինտելեկտուալ ներուժի համակողմանի զարգացման, մոբիլիզացման և արդիականացման, ընդհուպ մինչև տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների նորարարական զարգացման մեխանիզմների գործարկմանը:

Փաստ է, ՀՀ-ում ազգային անվտանգության ապահովումն ուղղակիորեն կախված է նրանից, թե որքան արդյունավետ կլինի երիտասար-

---

[1] ՀՀ Սահմանադրություն, հոդված 38, 22.12.2015 https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510

[2] ՀՀ Սահմանադրություն, հոդված 15, 22.12.2015 https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510

[3] **Barry Buzan,** People, States and Fear, 248 https://www.cusb.ac.in/images/cusb-files/2020/el/psc/11-Abhay%20Kr-MA-IV%20Sem.pdf

դության քաղաքական սոցիալականացումը, ինչպիսի հիմքերով կվերափոխվի նրանց արժեքային համակարգը, ինչպիսին կլինեն նրանց բարոյականության և քաղաքական իդեալները, սոցիալական արժեքները, ազգային, քաղաքական և քաղաքացիական մշակույթը և, բնականաբար, մասնագիտական պատրաստվածությունը և որակական մակարդակը:

Կրթությունը ծառայում է անվտանգության ապահովմանը բոլոր մակարդակներում՝ անհատ, հասարակություն և պետություն: Առանց գիտակրթական համակարգի զարգացման և որակյալ կադրերի հնարավոր չէ պետության հոգևոր, տեղեկատվական, տնտեսական և ռազմական ընդարձակված օրակարգով ազգային անվտանգության ապահովումը:

Հետպատերազմական, համավարակային ճգնաժամերի պայմաններում ՀՀ ուժը վերականգնելու միակ հնարավոր ճանապարհը երկրի և ընդհնարապես հայության մտավոր ներուժի մոբիլիզացումն է, համախմբումն ու զարգացումը՝ միտված ազգային-պետական շահի գերակայությանը: ՀՀ անվտանգ ներկան և ապագան այժմեական տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման ժամանակաշրջանում բացառապես կախված են **գիտակից և կրթված քաղաքացու պատասխանատվության մակարդակից: Հենց երիտասարդությունն է, որ իրեն նետված մարտահրավերների պայմաններում վերարժևորում է անցյալի և ներկայի մասին ընդհանուր պատկերացումները, ինչպես նաև անվտանգ ռազմավարական ապագայի համար պատասխանատվության զգացումը[1]:**

Կրթական համակարգը անվտանգության համատեքստում լուծում է հիմնականում հետևյալ խնդիրները՝

• յուրաքանչյուր մարդու **զինում է գիտելիքներով, հմտություններով և կարողություններով,** որոնք անհրաժեշտ են անձնական անվտանգությունն ապահովելու համար՝ ձևավորելով անվտանգության մշակույթ: Այս գործընթացում էական է անհատի քաղաքական սոցիալականացման, պատասխանատվության և գրագետ վարքագծի իրացումը՝ իր ֆունկցիոնալ պարտականությունների կատարման ժամանակ՝ հաշվի առնելով հանրային անվտանգության շահերը: Վերոնշյալ նպատակին հասնել հնարավոր է միմիայն համակողմանի վերահսկվող դաստիարակության և կրթության միջոցով: Սոցիալ անվտանգության տեսաբան Փ. Հոֆը պնդում է, որ «մարդկությունը մուտք է գործել նոր դարաշրջան. հին մի-

[1] **Մարգարյան Մ.,** Երիտասարդության քաղաքական սոցիալականացումը՝ որպես ազգային ինքնության արդիականացման գործընթաց. Հոգևոր անվտանգություն, 2018, Երևան https://mmmargaryan.wordpress.com/2018/11/19/%D5%A5%D6%80%D5%AB%D5%BF%D5%A1%D5%BD%D5%A1%D6%80%D5%A4%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D6%84%D5%A1%D5%B2%D5%A1%D6%84%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%BD%D5%B8%D6%81%D5%AB%D5%A1%D5%AC%D5%A1%D5%AF%D5%A1/

ջազգային համակարգերը փլուզվել են, հին կարգախոսները ոչ ուսուցողական են, հին լուծումները՝ ոչ օգտակար»[1]:

• **պատրաստում է մասնագետներ, որոնք պրոֆեսիոնալ զբաղվում են անվտանգության հատուկ բաղադրիչներով և ուղղություններով:** Պարզ է, որ վտանգների, ռիսկերի, սպառնալիքների և մարտահրավերների բացահայտումն ու հետազոտումը, դրանց կանխարգելմանը, չեզոքացմանը, վերացմանն ուղղված միջոցառումների մշակումն ու իրականացումը պահանջում են տարբեր գիտելիքներ և փորձառություն, մոտեցումներ և գործիքակազմ, վերահսկող մարմիններ և պատասխանատու անձինք: Բնական է՝ նույն մասնագետները, պատասխանատու մեկ մարմինը չեն կարող միաժամանակ գնահատել ու հակազդել սեյսմիկ, սանիտարահամաճարակային, ռազմաքաղաքական, քրեական, տնտեսական և այլ իրավիճակներին: Կա անհրաժեշտություն հստակ տարանջատման և գործառնման՝ իրավապահ մարմինների, շրջակա միջավայրի պահպանության, ռազմական, արտակարգ փրկարարական և այլ ծառայությունների աշխատակիցների վերապատրաստումները իրականացնել նեղ ոլորտային հատուկ ծրագրերով, մեթոդներով և արդիականացված ալգորիթմներով՝ համապատասխան արդի լոկալ և գլոբալ մարտահրավերներին: Նպատակահարմար է, որ յուրաքանչյուր գերատեսչություն(գոնե հատուկ ծառայություններ մատուցող) ունենա իր ուսումնական հաստատությունները՝ ոլորտային համապատասխան որակավորմամբ մասնագետների պատրաստման, վերապատրաստման և զարգացման նկատառումով:

• անվտանգության ապահովման ոլորտում **կադրերի պատրաստումն ու վերապատրաստումը կարևոր և արդիական է:** Խոսքը մասնագետների, պաշտոնյաների մասին է, որոնց խնդիրն է կազմակերպել և ապահովել անվտանգության որոշակի օբյեկտի անվտանգ գործունեությունը, լինի դա ՊՈԱԿ, համայնք, թե ողջ պետությունը կամ դրա առանձին ինստիտուտներ: Գ. Լասսուելի պնդմամբ՝ ժողովրդավարական ռեժիմը զարգանում է «հավասարաչափ կրթության» իրականացմամբ[2], որով նա հասկանում է գիտելիքի ձեռքբերումը, ընդհանուր սոցիալական խնդիրների մասին իրազեկությունը, որոնք համարժեք են ինչպես փորձագետի ու քաղաքական առաջնորդի, այնպես էլ շարքային քաղաքացու համար: Ներկայումս ՀՀ-ն չունի ուսումնական և ուղեղային կենտրոնների բավականաչափ ընդլայնված և որակավորված ցանց, որտեղ անվտանգության

[1] **Hough P.,** ''Understanding global security'', second edition. Routledge, Taylor & Francis Goup, London and New York, 2008, p. 1-4.

[2] **Lasswell H. D.,** Th e Structure and Function of Communication in Society / Schramm, W. ve Roberts, D. F. Th e Process and Eff ects of Mass Communication. Urbana: University of Illinois Press, 1971. P. 227.

նախապատրաստումը ներկայիս բարդ և ցանցային զարգացում ունեցող միջավայրում կունենա կիրառական բնույթ և կարճաժամկետ հեռանկարում կնպաստի անվտանգային միջավայրի որակի բարձրացմանը:

Կրթության դերն ու նշանակությունը ազգային անվտանգության համակարգում որոշվում է նաև այն դերակատարմամբ, որ հատուկ մեխանիզմների կիրառմամբ հասարակության, նրա անդամների ազգային, քաղաքական, քաղաքացիական ինքնության պահպանման, վերարտադրման և սերնդե սերունդ փոխանցման գործառույթ է իրականացնում: Սա հատկապես կարևոր է հոգևոր անվտանգության ապահովման գործընթացում՝ հայապահպանության և ազգի հարատևման դիտանկյունից: Հոգևոր անվտանգության խնդիրներով պայմանավորված՝ մարդն արժևորում է իր ինքնությունը՝ այն գիտակցելով որպես ինքնապահպանման, հանրության մեջ գտնվելու, համակեցություն մշակելու, զարգացման գոյաբանությունն ապահովելու, եզրահանության իրավիճակից դուրս գալու և ավանդույթների կերպափոխում ձեռնարկելու գործընթաց[1]: Հենց այս մոտեցմամբ էլ Կ. Յունգը հիմնավորեց մարդու անգիտակցական միտքը, ինչպես նաև նրա մարմինը՝ որպես անցյալի հիշողությունների և հետքերի պահեստարան[2]: Ազգապահպանության, վերարտադրության և սոցիալականացման կարևոր ռազմավարական նշանակության գործում անվիճելի է գիտակրթական համակարգի դերակատարումը, որը ձևավորում է հարգանք և պատասխանատվություն սեփական ինքնության, ազգային արժեհամակարգի, նախնիների, հայրենիքի նկատմամբ: Սա հատկապես պետք է կարևորել գլոբալացման համատեքստում, որտեղ հսկայածավալ հարձակումներ են տեղի ունենում պատմության, մշակույթի, ազգային ինքնության և կենսագործունեության վրա:

Կրթական համակարգի կարևոր գործառույթ է, կրթված, գիտակից, սոցիալականացված և պատասխանատու անհատների ձևավորումը, որոնց ներուժը կիրացվի հայրենիքի զարգացումը, անվտանգ գոյությունը վտանգող սպառնալիքների օպերատիվ հակազդման, չեզոքացման և վերացման հայրենանվեր գործում:

---

[1] **Մարգարյան Մ.,** Երիտասարդության քաղաքական սոցիալականացումը՝ որպես ազգային ինքնության արդիականացման գործընթաց. Հոգեվոր անվտանգություն, 2018, Երևան:
https://mmmargaryan.wordpress.com/2018/11/19/%D5%A5%D6%80%D5%AB%D5%BF%D5%A1%D5%BD%D5%A1%D6%80%D5%A4%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%D6%84%D5%A1%D5%B2%D5%A1%D6%84%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%BD%D5%B8%D6%81%D5%AB%D5%A1%D5%AC%D5%A1%D5%AF%D5%A1/

[2] **К. Г. Юнг.** Архетипы коллективного бессознательного. Перевод А. М. Руткевича, 2014 (http://wanderer.org.ua/book/psy/jung/ob_arhetipah.html)

Այս երկու կարևոր ոլորտների փոխկապակցվածության մասով հարկ ենք համարում նշել, որ կրթական համակարգն ինքնին անվտանգության օբյեկտ է: Ընդարձակելով միտքը, նշենք՝

• կարևոր է ուսումնական հաստատությունում ներգրավված անձանց ֆիզիկական անվտանգությունը: Այսինքն, ուսանողների, դասախոսների, գիտաշխատողների կյանքի և առողջության ապահովման անհրաժեշտ պայմաններ պետք է ապահովված լինեն՝ հրդեհային, հակաահաբեկչական, սեփականության և ունեցվածքի դեմ հանցագործությունից պաշտպանված, ուսումնական և աշխատանքային անվտանգ միջավայր:

• հաջորդ գործոնը՝ ուսուցման գործընթացը, եղանակները և հանրամատչելիությունը՝ բոլոր ուսանողների համար: Բազում են նախադեպերը, երբ ուսուցման գերծանրաբեռնվածությունը, չհամապատասխանելով սովորողի տարիքային կամ ֆիզիոլոգիական վիճակին, հանգեցնում է առողջական խնդիրների: Ընդհանրապես, ողջ աշխարհում կրթական հարացույցը փոփոխվում է, որտեղ յուրահատուկ սկզբունք է ուսանողների առողջության պահպանմանն ու բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացումը: Կրթական գործընթացի օպտիմալացման նոր մոտեցումներ և եղանակներ են առաջ քաշվում:

• կրթական համակարգի կազմակերպումը և գործունեությունը դիտարկվում է որպես սոցիալական հաստատություն, որին ուղղված սպառնալիքներն ունեն տարբեր աղբյուրներ, բնույթ և ձև: Առանձնացնենք գիտակրթական համակարգում առկա մի քանի սպառնալիք՝ հոգևոր ոլորտի ճգնաժամ, գիտության և հիմնարար կրթության հեղինակության անկում, տարաբնույթ փորձերը հիմնովին քանդելու և ձախողելու գիտակրթական համակարգը, գիտակրթական ոլորտի առևտրայնացումը, կոռուպցիոն դրսևորումները և այլ դրույթներ, որոնք հրատապ են դարձնում գիտակրթական ոլորտի արմատական վերափոխման անհրաժեշտությունը:

Կարծում ենք, անհրաժեշտություն կա գիտակրթական համակարգի զարգացման ռազմավարության մշակման, որտեղ դոմինանտ կլինեն ազգային, քաղաքական, քաղաքացիական ինքնության, հոգևոր անվտանգության հիմքով ազգային անվտանգության և տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների զարգացմանը միտված ճկուն արժեհամակարգի տարրերը:

Այսպես, գիտակրթական և անվտանգային համակարգերի փոխկապակցվածության համատեքստում ևս մեկ գործոն ընդգծենք, որ **գիտակրթական համակարգը կարող է նաև իրականացնել դիսֆունկցիոնալ դեր: Կեղծ և ձևական օրակարգերով առաջնորդվող, կամ օտար շահեր սպասարկող գիտահետազոտական կենտրոնները հստակ կրթական համակարգը խաթարող, կործանարար, ապազգային ցուցիչներ են:** Գիտության և

կրթության այսօրինակ արգելակումը, վաղ թե ուշ, հանգեցնում է հասարակության առաջընթացի և անվտանգային միջավայրի թուլացմանը: Սրան զուգահեռ, խնդիր է նաև որոշակի մասնագիտությունների (միջազգայնագետներ, իրավագետներ, քաղաքագետներ, տնտեսագետներ…) լճացումը և դիպլոմավորված մասնագետների մի մասի մասնագետ չլինելու իրողությունը: Արդյունքում, մեր երկրում օրինակ, ունենք համապատասխան մասնագիտական կրթություն ստացած զոդողների, խառատների, դարբինների և այլ մասնագետների հստակ պակաս: Որոշ դեպքերում էլ ունենք ուղեղների արտահոսք, որոնք օգտագործվում են այլ երկրների շահերի համար:

Ամփոփելով, կրթությունը հիմնական և աճող դեր ու նշանակություն ունի անվտանգության ապահովման գործընթացում: Այն միաժամանակ և՛ օբյեկտ է, և՛ ռեսուրս և՛ միջոց ազգի և պետության ապագա բարեկեցության և երկրի անվտանգության հիմքերն ամրացնելու գործում: Ելակետ ընդունելով վերոգրյալը, ընդգծենք՝ կրթական ոլորտի զարգացումը պետք է դառնա ազգային անվտանգության քաղաքականության ամենակարևոր առաջնահերթությունը:

Марине Мовсисян, Роль образования в процессе национальной безопасности - Цель статьи - осветить роль образования в процессе обеспечения национальной безопасности, обосновать взаимосвязь двух систем, выявить существующие и возможные проблемы.

При комплексном изучении вопросов, поднятых в исследовании, использовались общенаучные - диалектические, логические, исторические, а также частные или специальные методы, такие как юридико-сравнительный, аналитический, статистический, системно-структурный.

В результате исследования мы пришли к выводу, что научно-образовательная система является основным объектом государственной политики по укреплению государственности и обеспечению национальной безопасности.

Marine Movsisyan, The role of education in the national security process - The aim of the article is to highlight the role of education in the process of ensuring national security, to substantiate the interconnectedness of the two systems, to identify the existing and possible problems.

During the comprehensive study of the issues raised in the research, general scientific-dialectical, logical, historical, as well as private or special methods were used, such as legal-comparative, analytical, statistical, system-structural methods.

As a result of the study, we have concluded that the scientific-educational system is the main object of the state policy on strengthening the statehood and ensuring national security.

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԾԱՅՐԱՀԵՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՆՐՈՒՅԹՈՒՄ (1990-ԱԿԱՆ ԹԹ.-ԻՑ ՀԵՏՈ)

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Բանալի բառեր - Ադրբեջան, իսլամ, սալաֆիականություն, ջիհադ, Կովկաս, սուննիականություն, շիա, Իրան, Թուրքիա , Սիրիա:

Ներածություն

Կովկասյան տարածաշրջանում իսլամի տարածումը սկզբնավորվեց դեռևս վաղիսլամական ժամանակաշրջանում՝ 7-րդ դարի կեսերից: Կովկասի առանձին հատվածներում այդ գործընթացն ընթացավ տարբեր շրջափուլերով[1]: Արդյունքում Հյուսիսային Կովկասում գերակշռեց սուննիական իսլամը, մասնավորապես դրա հանաֆիական և շաֆիական ուղղությունները: Շաֆիական ուղղությանն են պատկանում չեչենները, ինգուշներն ու դաղստանցիները, իսկ հանաֆիականությունը տարածված է Հյուսիսային Կովկասի կենտրոնական և արևմտյան հատվածներում:

Վերջին տարիներին Կովկասյան տարածաշրջանում նկատվում է սուննի իսլամական արմատական, մասնավորապես ծայրահեղ արմատական տրամադրությունների աճ: Կովկասում իսլամական ծայրահեղ արմատականության դրսևորման պատճառներից են՝ կրոնական համընդհանուր անհանդուրժողականությունը, միջքաղաքակրթական լարվածությունը, մուսուլմանական հանրույթի ներքին կյանքում և արտաքին հարաբերություններում այս կամ այն խնդիրների լուծման համար բռնի գործողությունները և այլն[2]: Այս գործընթացը որոշակի առումով կանգ առավ 20-րդ դարում, սակայն Խորհրդային Միության փլուզումից այն ավելի ընդլայնվեց և նոր թափով շարժվեց առաջ:

Կովկասյան տարածաշրջանում իսլամական արմատականությունը փորձում է ներթափանցել հասարակության կենսագործունեության բոլոր բնագավառներ: Այս պարագայում հատկապես ակտիվ են այն մուսուլմանները, որոնք կյանքի այս կամ այն խնդրի լուծման բանալին փնտրում են կրոնական դոգմաների մեջ և պատրաստ են հասարակական բարքերն ու մուսուլմանական համայնքի վիճակը լավացնելու համար անմիջապես գործի անցնել: Ղուրանին և Սուննային տառացի հետևելու քարոզից զատ՝ իսլամական ծայրահեղ արմատական գաղափարախոսները ցուցաբերում

[1] **Малашенко А. В.,** *“Исламские ориентиры Северного Кавказа”.,* стр. 20-21:

[2] **Գրիգորյան Ս. ,** *«Իսլամական արմատականությունը Կովկասում»* , Երևան, 2017, էջ 7-8:

են սուբյեկտիվ և իրենց շահերից բխող մոտեցումներ այս կամ այն դրույթները մեկնաբանելիս: Դա հնարավորություն է ընձեռում իսլամականներին խարխլել Կովկասում ազդեցիկ դիրքեր ունեցող այսպես կոչված «ավանդական» իսլամի ազդեցիկությունը, կամայականորեն մեկնաբանել սուրբ տեքստերում առկա դրույթները, «արդիականացնել» դրանք, «մաքրազերծել» միստիկական տարրերից և տեղական ավանդույթներից: Բացի դա, իսլամական արմատական գաղափարախոսությունը փորձում է անհատին դուրս բերել հասարակական ինստիտուտների ազդեցությունից, որոնց ավանդական կառուցվածքը, հոգևոր-բարոյական նկարագիրը խորթ են հատկապես փոփոխությունների ձգտող երիտասարդի համար: Իսլամական ծայրահեղ արմատականությունը կազմակերպված, զինված ուժ է, որը ձգտում է «պաշտպանել» իր հետևորդին՝ խոստանալով հնազանդություն, հավասարություն և արդարություն: Այսպիսով, իսլամական ծայրահեղ արմատական գաղափարական հայեցակարգը, անհատի հասարակական-քաղաքական ակտիվության շեշտադրմամբ, համախմբման «արդյունավետ» միջոց է ծառայում անարդարության և անօրինականության դեմ պայքարում: Այս գործընթացը ավելի ակնհայտ դարձավ տարածաշրջանային երկու երկրներում՝ Վրաստանում և Ադրբեջանում: Անկախության շրջանում Ադրբեջանում ակտիվացան սալաֆիական[1] տարբեր ուղղություններ, այդ թվում՝ վահաբականությունը, որը, ձևավորվելով 18-րդ դարում Նեջդում, հետագայում թափանցել է նաև Կովկաս: Հետանկախական շրջանում այն ավելի ակտիվ ձևով Ադրբեջանում սկսեց դրսևորվել 1990-ականների սկզբին հիմնականում Ղարաբաղյան պատերազմի (1991-1994թթ.), ռուս-չեչենական պատերազմների (1994-1996թթ., 1999թ.) արդյունքում, սուննի-սալաֆիական քարոզիչների, Ադրբեջանում հաստատված չեչեն փախստականների, ինչպես նաև Սաուդյան Արաբիայում, Ծոցի տարբեր երկրներում կրթություն ստացած ադրբեջանցի ուսանողների միջոցով: Ադրբեջանի հյուսիսային շրջաններում սուննի իսլամի վահաբական մեկնաբանության ներթափանցմանը նպաստեց Դաղստանի հետ Ադրբեջանի սահմանը, որը տարանցիկ ճանապարհ դարձավ թե՛ վահաբական քարոզիչների, թե՛ այդ գաղափարներով տոգորված «մարտնչող

[1] Սալաֆիականությունը (ալ-Սալաֆ ալ-Սալիհուն-الا صالحون الا سلف) (իսլամական բարեփոխության նոր հոսանք էր, որը ձևավորվեց Եգիպտոսում 19-րդ դարի վերջում, և որի նպատակն էր իսլամի վերադարձը դեպի Մուհամմադ մարգարեի, առաջին չորս խալիֆների և ուղղափառ նախնիների ժամանակաշրջանի իսլամական ավանդույթները (Տե՛ս The Encyclopedia of Islam, New Edition, Under the patronage of the international union of academies, Volume VIII, Leiden, E. J. Brill, 1995, p. 900):

իսլամիզմի» մարտիկների՝ ջիհադականների համար[1]: 1990-ականների առաջին կեսին արաբական ծագում ունեցող իսլամական տարբեր բարեգործական կազմակերպություններ իրենց մասնաճյուղերն են բացում Ադրբեջանի ողջ տարածքով մեկ[2]: Թեև Սալաֆի քարոզիչները պարարտ հող գտան հիմնականում Ադրբեջանի հյուսիսում, որտեղ բնակչությունը ավանդաբար սուննիական իսլամի հետևորդ է, այդ թվում նաև Ռուսաստանի Դաշնության սահմանի երկայնքով բնակվող էթնիկ փոքրամասնությունների (լեզգիներ, ավարներ, ծախուրներ և այլն) շրջանում: Սալաֆիական քարոզի կենտրոններ են ստեղծվում նաև այնպիսի խոշոր քաղաքներում, ինչպիսիք են Բաքուն և Սումգայիթը: 1990-ական թթ. Կովկասում իսլամական գաղափարների տարածման վրա իրենց ազդեցությունն ունեցան նաև որոշ արտակովկասյան գործընթացներ: Մասնավորապես, Կովկասում տարաձայնությունների ավելացմանը նպաստեց 1970-ական թթ. կեսերից սկսված նավթի գների պարբերական աճը (արաբական երկրների կողմից արաբա-իսրայելական պատերազմի ժամանակ նավթային էմբարգոյի կիրառումը պատճառ դարձավ նավթի գների բարձրացման, ինչի հետևանքով ավելացան նավթային երկրների շահույթները): Դրամական մեծ հոսքերը նավթային հսկայական պաշարներ ունեցող Սաուդյան Արաբիային հնարավորություն տվեցին մեծ գումարներ ներդնել ինչպես տարածաշրջանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս՝ իսլամի վահաբական գաղափարների տարածման համար: Բացի այդ, Կովկասում իսլամի դիրքերի ամրապնդման և իսլամական, մասնավորապես արմատական գաղափարների տարածման վրա ազդեցին 1978-1979 թթ. Իրանում իսլամական հեղափոխությունն ու 1979- 1989 թթ. աֆղանական պատերազմը:

Սալաֆիականությունը Ադրբեջանում և ազդեցությունները Սիրիական հակամարտությունում

Տարածաշրջանային աննկայունությունը (Չեչենական պատերազմներ, Ղարաբաղյան հակամարտություն և այլն) պարարտ հող է դարձել իսլամական արմատականության համար՝ զինյալների հավաքագրման և ջիհադական պայքար իրականացնելու առումով: Կովկասը ներկայացնող իսլամականները ներքաշված են ջիհադական ակտիվ պայքարի մեջ ինչպես Կովկասում, այնպես էլ դրա սահմաններից դուրս: Մերձավոր Արևել-

[1] **Փաշայան Ա., Նավասարդյան Ն.,** *«Սուննիականացման միտումներն Ադրբեջանում. կրոնական ինքնության վերափոխումները»*, Հայկական Քաղաքագիտական Հանդես 1(15), Երևան, 2021, էջ 112-113:

[2] **Goyushov A.,** *"Islamic Revival in Azerbaijan, Current Trends in Islamist Ideology"*, vol. 7, 2005, p. 75:

քում կռվող օտարերկրացի իսլամականների զգալի հատվածը սերում է հենց Կովկասյան տարածաշրջանից:

ԽՍՀՄ փլուզումից հետո հատկապես Կովկասյան տարածաշրջանում ազգային-պետական նոր միավորների առաջ գալը նույնպես նպաստեց այս հատվածներում իսլամական, այդ թվում՝ արմատական գաղափարների տարածմանն ու առաջացած հասարակական-քաղաքական վակուումը այդ գաղափարներով լցնելուն: Հիշյալ գործոններից է նաև մուսուլմանական որոշ երկրների կողմից իսլամական արմատական գաղափարների տարածումը, իսկ առանձին դեպքերում՝ իսլամական ծայրահեղ արմատականության ֆինանսավորումն ու աջակցությունը[1]:

Չնայած այն հանգամանքին, որ Ադրբեջանը, համաձայն իր իսկ սահմանադրության, աշխարհիկ պետություն է, երկրի իշխանություններն օգտագործում են իսլամական գործոնը՝ ամրապնդելու սեփական դիրքերը: 1994թ. նախագահ Հ.Ալիևի կատարած ուխտագնացությունը Մեքքա մեծ հնչեղություն ստացավ երկրում: Քաղաքական գործիչները՝ իշխանական, թե ընդդիմադիր, օգտագործում են իսլամական հռետորականությունը: Ադրբեջանում նշվում են բոլոր իսլամական տոները (աշուրա, ուրազա բայրամ, մավլուդ): Հեռուստատեսությամբ և ռադիոյով կան իսլամին նվիրված ժամեր, ազգային հանդիսությունների ժամանակ Ղուրանից հատվածներ են հնչեցվում: Երկրում գործում է շուրջ 1300 մզկիթ: Ադրբեջանում միշտ լուրջ խնդիր է եղել կրոնական կադրերի պատրաստման հարցը: Այս նպատակով 1990-ականների սկզբին Բաքվում հիմնվեց իսլամական համալսարան՝ Սաուդյան Արաբիայի աջակցությամբ: 1992-ից Բաքվի համալսարանում սկսեց գործել իսլամական աստվածաբանության ֆակուլտետ: Ադրբեջանցի ուսանողները կրոնական կրթություն են ստացել հիմնականում Իրանում, Սիրիայում, Սաուդյան Արաբիայում, Եգիպտոսում, Թուրքիայում, Պակիստանում[2]:

Ադրբեջանում վահաբականության ակտիվացմանը, մասնավորապես, սալաֆիականությանը մեծապես նպաստեց 1997թ. քուվեյթցի մի բարերարի մեկենասությամբ և Իսլամական վերածննդի ժառանգության քուվեյթական կազմակերպության անունից Բաքվի Նարիմանով թաղամասում Աբու Բաքր մզկիթի կառուցումը:

2001 թվականի սեպտեմբերի 11-ի իրադարձություններից հետո, ահաբեկչության դեմ գլոբալ պայքարի դրոշի ներքո, ադրբեջանական պետական մեքենան սկսեց կանխարգելիչ գործողություններ ձեռնարկել և սահմանափակել վահաբական քարոզիչների ազդեցությունը ադրբեջա-

[1] **Գրիգորյան Ս. ,** *«Իսլամական արմատականությունը Կովկասում»* , Երևան, 2017, էջ 9-10:
[2] **Ա. Փաշայան,** *«Իսլամն Ադրբեջանում»,* Նորավանք հիմնադրամ, Երևան, 2006թ.:

նական հասարակության վրա: Մասնավորապես, 2008 թ. օգոստոսին փակվեց «Աբու Բաքրի» մզկիթը, այն բանից հետո, երբ այնտեղ ահաբեկչական գործողությունների արդյունքում սպանվեց երկու և վիրավորվեց տասը հոգի, այդ թվում նաև Հաջի Գամետը: Մյուս կողմից, ահաբեկչության դեմ պայքարը Ադրբեջանի կողմից օգտագործվեց ընդդիմադիր քաղաքական շրջանակների նկատմամբ վերահսկողություն սահմանելու համար[1]: Հարկ է նկատի ունենալ, որ իշխանությունները միշտ էլ վտանգ էին տեսնում վահաբականությունից: Հատկապես մտահոգիչ էր այն հանգամանքը, որը վահաբական ուղղվածությամբ առանձին մզկիթներում հավաքագրվում էին զինյալներ՝ հարևան տարածքներում և Մերձավոր Արևելքում հակամարտություններին մասնակցելու համար: Միջազգային հակամարտություններում ադրբեջանցի զինյալների և վարձկանների մասնակցության կրոնական շարժառիթների փաստը դարձավ Ադրբեջանին մտահոգող գլխավոր թեմաներից մեկը՝ արձագանք գտնելով ինչպես ներքին, այնպես էլ միջազգային մամուլում:

Դրա վառ ապացույցն այն էր, որ Ադրբեջանում գործող իսլամական ծայրահեղ արմատական կառույցները մասնակցություն ունեցան նաև Կովկասից դուրս իրականացված այնպիսի հնչեղություն ստացած ահաբեկչական գործողություններին, ինչպիսիք էին 1996 թ.-ին Քենիայում և Տանզանիայում ամերիկյան դեսպանատների պայթեցումները և այլն[2]: Այդ համատեքստում պարզ է դառնում, որ մուսուլմանական աշխարհի որոշ հատվածներում ակտիվ գործող իսլամական արմատական կազմակերպությունները (օրինակ՝ «Իսլամական ջիհադ», «ալ-Կաիդա» և այլն) Ադրբեջանում արդեն ունեին վաղուց գործող իրենց բջիջները:

Հարկ է նշել, որ Ադրբեջանում սուննի սալաֆիական հետևորդների թվի վերաբերյալ գոյություն ունեն հակասական տվյալներ: Առանձին հեղինակներ սալաֆիականների թիվը գնահատում են նույնիսկ մինչև մեկ միլիոն: Մյուս կողմից, Ադրբեջանում սալաֆիականության շրջանակներում կենսունակություն ունեցող ջիհադականության խնդիրները մտահոգության առարկա էին ոչ միայն Ադրբեջանի իշխանությունների, այլև՝ Իրանի և Ռուսաստանի համար: Շիայականության դիրքերի թուլացումը հարված է Ադրբեջանում առաջին հերթին Իրանի քաղաքական դիրքերին[3]: Ադրբեջանի անկախության ձեռքբերումից հետո այս երկրում իրենց

---

[1] **Քոչարյան Հ., Դավթյան Ա.,** *«Իսլամական գործոնը Ադրբեջանում և այդ գործոնի ազդեցությունը ՀՀ անվտանգային շահերի վրա»,* Արևելագիտության հարցեր № 14, էջ 343-345:

[2] **Cohen R., Lysnsky D.,** "*Salafism in Azerbaijan*", նշվ.աշխ, էջ 415:

[3] **Փաշայան Ա., Նավասարդյան Ն.,** *«Սուննիականացման միտումներն Ադրբեջանում. կրոնական ինքնության վերափոխումները»*, Հայկական Քաղաքագիտական Հանդես 1(15), Երևան, 2021, էջ 116:

ազդեցությունը տարածելու համար ի հայտ եկան թուրք-իրանական հակասություններ: Իրանը ֆինանսական լուրջ ռեսուրսներ ներդրեց՝ հօգուտ Ադրբեջանում մզկիթների և կրոնական այլ հաստատությունների շինարարության, ինչպես նաև կադրերի պատրաստման վրա: Ադրբեջանում ազգայնականությունը չեզոքացնելու և շիայական գործոնն ակտիվացնելու Թեհրանի ջանքերն իրենց քաղաքական ենթատեքստն ունեին: Թեհրանին մտահոգում էր Ադրբեջանում ազգայնական տրամադրությունների աճը, ինչը կարող էր խթանել իրանական Ատրպատականում ազգային կամ անջատողական շարժումները:

Սակայն, իրավիճակը լիովին այլ դարձավ տարածարջանում «Արաբական գարուն»[1] կոչված հեղափոխական գործընթացներից հետո: Ադրբեջանցի իսլամականներն անմասն չմնացին իսլամական ծայրահեղ արմատական գործընթացներից՝ իրենց անմիջական մասնակցությունն ունենալով միջազգային զինված հակամարտություններում ջիհադական պայքարին: Ադրբեջանցիները մասնակցել են Սիրիայում, Իրաքում, Աֆղանստանում, Պակիստանում և այլ հատվածներում իրականացվող ջիհադին[2]**:** Մասնավորապես, Սիրիայում կառավարական ուժերի կողքին կռվել են ադրբեջանցի շիաներ, իսկ սիրիական՝ առավելապես սուննիական ընդդիմադիր ճամբարում գտնվող իսլամական խմբավորումների կազմում կային սուննի ադրբեջանցիներ[3]:

Ադրբեջանցիները սկզբնական շրջանում ներգրավված էին «Ջայշ ալ-Մուհաջիրին ուա ալ-Անսար» իսլամական ծայրահեղ արմատական խմբավորման մեջ, հետագայում նրանք ներգրավվեցին իսլամական այլ ծայրահեղ արմատական խմբավորումների կազմում սիրիական կառավարական ուժերի դեմ պայքարում: 2013 թ. կեսերին Սիրիայում նկատվեցին ադրբեջանցիներով համալրված զինյալ խմբեր՝ ադրբեջանցի ջիհադական լիդերներով: Վերջիններս Սիրիայից կոչեր էին հղում իրենց հայրենակիցներին՝ միանալ Մերձավոր Արևելքում իրականացվող ջիհադին: 2013 թ. սկզբից ադրբեջանցիները համախմբված էին «Ջայշ ալ-Մուհաջիրին ուա ալ-Անսար» խմբավորման կազմում գործող «Ադրբեջանական ջամաա»-ի («Ադրբեջանական խմբավորում») մեջ: Վերջինս ղեկավարվում

[1] «Արաբական գարունը» ցույցերի և հանրահավաքների հեղափոխական ալիք Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում, որ սկսվել էր արաբական երկրներում 2010 թվականի դեկտեմբերի 18-ին: Այն սկսվեց Թունիսում, Եգիպտոսում և Եմենում տեղի ունեցած հեղափոխություններից ու շարունակվեց Լիբիայում ու Սիրիայում՝ քաղաքացիական պատերազմի տեսքով:

[2] **Փաշայան Ա.,** *«Իսլամն Ադրբեջանում. անցյալը և ներկան»* , Նորավանք հիմնադրամ, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, 2014, էջ՝ 130-131:

[3] **Գրիգորյան Ս.,** *«Իսլամական պետություն: Ակունքներից մինչև խալիֆայության հռչակում»*, Երևան, 2016թ., էջ 175:

էր Աբու Յահյա ալ-Ազերիի կողմից, որի սպանությունից հետո ադրբեջանցի ջիհադականները բաշխվեցին մի շարք իսլամական խմբավորումների մեջ: ԻՊ-ի կազմում կռվող ադրբեջանցի իսլամականներով համալրված առաջին կառույցներից մեկը «Ջունդուլլահ» խմբավորումն էր, որտեղ ադրբեջանցիներից զատ ներգրավված էին նաև թուրքեր: Խմբավորումը գործում էր սիրիական ալ-Ռակկա նահանգում և ակտիվորեն մասնակցում էր Սիրիայի հյուսիսում քրդաբնակ Քոբանիի վրա իսլամականների հարձակումներին: Մյուս խմբավորումը, որը համալրված էր ադրբեջանցի և թուրք ջիհադականներով, Իրաքում ակտիվ գործող «Խատաբ» խմբավորումն էր (կոչվում է առաջնորդի՝ Խատաբ ալ-Ազերիի անունով): Որոշ ադրբեջանցիներ գործում 177 էին նաև «Աբու Քամիլ» խմբավորման կազմում, որը հիմնականում համալրված էր չեչեններով: Չնայած այն հանգամանքին, որ ադրբեջանցիների զգալի հատվածը ներգրավված էր ԻՊ-ի կազմում գործող իսլամական խմբավորումների կազմում, քիչ չէին ադրբեջանցիները նաև Սիրիայում ակտիվություն ցուցաբերող այլ իսլամական ծայրահեղ արմատական կառույցների, մասնավորապես ՋՆ-ի կազմում[1]:

Ադրբեջանում որպես իսլամական գործոնի ծայրահեղ դրսևորման օրինակներ կարելի է դիտարկել նաև Նարդարանում պարբերաբար տեղի ունեցող բողոքի ցույցերն ու Գանձակում 2018 թ.-ի հուլիսի երեքին տեղի ունեցած մահափորձը քաղաքապետի նկատմամբ: Այս մահափորձից հետո տեղի ունեցած բողոքի ցույցի ընթացքում սպանված երկու ոստիկանների սպանության համար ևս պետությունը մեղադրեց իսլամիստական կազմակերպություններին ու նրանց աջակցող ընդդիմադիր ուժերին՝ նպատակ ունենալով դրան հաջորդող ընտրությունների ժամանակ հավելյալ քվեներ ստանալ: Միաժամանակ, ցույցի վերաբերյալ հայտարարության մեջ իշխանությունը այն բնութագրում էր որպես «ծայրահեղականների հավաք և նրանց կողմից ոստիկանի սպանություն»: Ադրբեջանական իշխանությունները փաստեր էին բերում, որ սպանության մեջ մեղադրվող Սաֆարովը ամիսների ընթացքում վերապատրաստում է անցել Իրանում ու Սիրիայում: «Իսլամական պետություն» կազմակերպության ի հայտ գալուց ի վեր, Ադրբեջանը ջանում է հսկողության տակ պահել Սիրիայից ու Իրաքից ահաբեկիչների հոսքերը: Մի շարք իրավական կարգավորումների բարեփոխումներ 2009-2015 թթ.-ի ընթացքում նպատակ են ունեցել ահաբեկչական սպառնալիքի կանխարգելումն ու դրա հետագա տարածումը հնարավորինս հեշտացնելու: Մասնավորապես, քրեական օրենսգրքում արված հավելման համաձայն՝ Սիրիա մեկնող «օտարերկրյա զինվորների» պատիժը սահմանվել է 15 տարվա ազատազրկում: Նույն օրենսգրքի մեկ այլ փոփո-

[1] **Գրիգորյան Ս.,** *«Իսլամական պետություն: Ակունքներից մինչև խալիֆայության հռչակում»*, Երևան, 2016թ., էջ 176-178:

խության համաձայն՝ կրոնական քարոզչության համար պատիժը սահմանվել է երկու տարի, նախկին մեկ տարվա փոխարեն[1]:

Հարկ է նշել, որ վերջին շրջանում ադրբեջանական հատուկ ծառայությունների կողմից երկրի տարբեր հատվածներում, այդ թվում նաև մայրաքաղաք Բաքվում, իսլամական ծայրահեղական խմբավորումների նկատմամբ հետապնդումները, «ալ-Կաիդա»-ի և այլ իսլամական արմատական կառույցների հետ համագործակցության մեջ մեղադրվող անձանց ձերբակալությունները և իսլամական ուժերի մեջ առաջնորդների ու միասնության բացակայությունը որոշակի ազդեցություն են ունենում Ադրբեջանում իսլամական ծայրահեղ արմատական խմբավորումների գործունեության վրա:

Սակայն Ադրբեջանում առկա խնդիրները, ընդդիմադիր ուժերի նկատմամբ (այդ թվում նաև իսլամական արմատականների) իշխանությունների բռնություններն ու հետապնդումները, էներգակիրների վաճառքից ստացված շահույթի անհամաչափ բաշխումը, հսկայական չափերի հասնող կաշառակերությունը, ցանկացած այլակարծության բռնի ճնշումը, ղարաբաղյան հակամարտության հարցում ալիևյան կլանի վարած անպտուղ քաղաքականությունն ավելի են խորացնում հասարակական ճգնաժամը երկրում, ինչից կարող են օգտվել ադրբեջանցի ծայրահեղ իսլամականները:

Եզրակացություն

Այսպիսով, Ադրբեջանում գոյություն ունեցող ծայրահեղական շարժումները և ընկալումները շարունակում են մնալ բավականին ակտիվ: Այն ավելի մեծ թափ ստացավ Ադրբեջանի անկախությունից հետո ընկած ժամանակահատվածում: Բացի այդ, արտաքին՝ թուրքական և արաբական, կրոնական ներթափանցումների ձևավորման արդյունքում, ինչպես նաև անկախության շրջանին բնորոշ արժեքային կերպափոխման ազդեցությամբ ձևավորվեցին նաև կրոնական նոր ինքնությամբ աչքի ընկնող շրջանակներ: Ակնհայտ է, որ ադրբեջանական ղեկավարությունը առաջնահերթ փորձում էր խթանել այս գործընթացի ակտիվությանը, սակայն, երկրում գոյություն ունեցող ծայրահեղականները սկսեցին կոնկրետ սպառնալիք հանդիսանալ իրենց համար, և սրան հաջորդեցին առաջին ճնշումները նրանց նկատմամբ: Ադրբեջանում շիաների գերակշռությունը ամենևին էլ չխանգարեց երկրում սուննիական ավելի կոնկրետ սալաֆիական շարժումների և սալաֆիների ակտիվացմանը: Ենթադրելի է, որ առաջիկա տարիներին Ադրբեջանում ավելի մեծ թափ կստանան սուննի

[1] **Քոչարյան Հ., Դավթյան Ա.,** *«Իսլամական գործոնը Ադրբեջանում և այդ գործոնի ազդեցությունը ՀՀ անվտանգային շահերի վրա»,* Արևելագիտության հարցեր № 14, էջ 348-349:

մզկիթների կառուցումը, սուննի աստվածաբանության զարգացումը, հասարակության մեջ սուննիական ընկալումների խորացումը: Մյուս կողմից, սալաֆիականությանն Ադրբեջանում առաջիկայում անհրաժեշտ կլինեն ադապտացիոն նոր մեխանիզմներ՝ «թուրքական իսլամի» նկատմամբ հավասարակշռությունը պահելու նպատակով:

Арутюн Матевосян, Выражения Исламского экстрема в сообществе Азербайджана (после 1990 года) - Эта статья посвящена развитию исламских экстремистских движений в Азербайджане, в частности, салафитского движения, с 1990-х годов. Азербайджан - страна с мусульманской идентичностью и светской политической системой, закрепленной в конституции государства. Большинство мусульманского населения Азербайджана - шииты. С момента обретения независимости в научных и аналитических источниках публиковались различные данные о численном соотношении суннитов-шиитов. Однако в последнее время суннитские движения, в частности салафиты, стали более активными. Они участвовали в этих процессах не только в самом Азербайджане, но и в регионе в целом. Эти тенденции представляют угрозу не только для региона, но и для серьезных проблем властей Азербайджана, поскольку они более склонны к переходу к более консервативным силам. В региональном контексте азербайджанцы, вовлеченные в сирийский конфликт, более очевидны, многие из которых продолжают сотрудничать с местными террористическими силами.

Harutyun Matevosyan, Manifestations of Islamic extremism in Azerbaijan (after 1990) - This article focuses on the development of Islamic extreme movements in Azerbaijan, more specifically the Salafist movement, since the 1990s. Azerbaijan is a country with a Muslim identity and a secular political system, which is enshrined in the state constitution. The majority of the Muslim population of Azerbaijan are Shiites. Various data on the numerical proportion of Sunni-Shiites have been published in scientific and analytical sources since independence. Recently, however, Sunni movements, more specifically Salafis, have become more active. They participated in these processes not only in Azerbaijan itself, but in the region in general. These tendencies are a threat not only to the region, but also to serious problems for the Azerbaijani authorities, as they are more likely to move to more conservative forces. In the regional context, the Azeris involved in the Syrian conflict are more obvious, many of whom continue to cooperate against local terrorist forces.

«ԿԱՆԱՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ, ԿԱՆԱՉ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ՝ «GREEN BOND»-ԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ ԵՎ ՀՀ-ՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ՓՈՐՁԸ

ԼՈՒՍԻՆԵ ՄԻՆԱՍՅԱՆ

Բանալի բառեր - Կանաչ ֆինանսավորում, կանաչ պարտատոմսեր Կլիմայի փոփոխություն, կանաչ թողարկողներ, ներդրող, ապագա եկամուտ, ներդրումային ֆոնդեր։

Կլիմայի փոփոխությունը ազդում է բոլորիս վրա, սակայն ակնկալվում է, որ դա ամենից շատ հարվածելու է զարգացող երկրներին: Փոփոխությունների պոտենցիալ ազդեցությունը տեղումների ձևերի, ծովի մակարդակի և եղանակի վրա տեսանելի է արդեն գրեթե բոլորին։

Աղետների հաճախականության վրա դրա հնարավոր ազդեցությունները ռիսկեր են ստեղծում գյուղատնտեսության, սննդի և ջրի պաշարների համար: Վտանգի տակ են դրված բոլոր ձեռքբերումները աղքատության, սովի և հիվանդությունների դեմ պայքարում, ինչպես նաև զարգացող երկրներում մարդկանց կյանքի ու կենսամիջոցների դեմ պայքարում։ Կլիմայի փոփոխությանն անդրադառնալը պահանջում է աննախադեպ գլոբալ համագործակցություն բոլոր երկրների սահմաններից դուրս: Այս առումով անգնահատելի է Համաշխարհային Բանկի(այսուհետ՝ ՀԲ) դերը և փորձը։ ՀԲ փորձագետների խումբն օգնում է աջակցել զարգացող երկրներին և նպաստում գլոբալ խնդիրների լուծմանը՝ միևնույն ժամանակ հարմարեցնելով գործող մոտեցումները զարգացող երկրների գործընկերների տարբեր կարիքներին և պահանջներին: Հատկանշական է նաև գաղափարախոսությունը, որը հիմք դրեց ՀԲ-ի կողմից առաջին անգամ «կանաչ պարտատոմսերի» թողարկմանը, որի նպատակն էր *կայուն զարգացմամբ* ազդել կլիմայի փոփոխությունների վրա, որոնք հատկապես պայմանավորված են մարդկային գործոններով ։

2007 թվականին կլիմայի փոփոխության միջկառավարական հանձնաժողովը՝ ՄԱԿ-ի գործակալությունը (the Intergovernmental Panel for Climate Change- a United Nations agency), գիտական ապացույցներ տրամադրեց կլիմայի փոփոխության և դրա քաղաքական և տնտեսական ազդե-

ցությունների վերաբերյալ, հրապարակվեց զեկույց, որը հստակ կապում էր մարդու գործողությունների հետևանքները գլոբալ տաքացման հետ:

Նշված հայտարարությունը և իհարկե առկա խնդիրները կապված բնական աղետների դեպքերի աճի հետ, շվեդական կենսաթոշակային ֆոնդերի մի խմբի դրդեցին մտածել, թե ինչպե՞ս կարող են իրենց կուտակած խնայողություններն օգտագործել նշված խնդիրները լուծելու համար: Այս ամենում ողջունելի է նաև մասնագիտական ֆոնդերի մասնակցությունը և դերը՝ ուղղված բնապահպանական խնդիրների լուծմանը: Ներդրումային ֆոնդերը կապվեցին իրենց ներդրումային բանկի (Sandinaviska Enskilda Banken AB) հետ, առաջարկելով պարզել և լուծումներ փնտրել, թե ինչպես կարող են օրենսդրական ճանապարհով ապահովել ֆոնդի հավաքագրած միջոցները բնապահպանական խնդիրների լուծման մեջ ներդնելու գործընթացը, իհարկե արդյունքում չկորցնելով եկամուտներ ստանալու վերջիններիս հնարավորությունները: Ի՞նչ տեղի ունեցավ ֆինանսական միջավայրում, ոչ ստանդարտ մտածելակերպը կանգնեցրեց զարգացած աշխարհին և ֆինանսիստներին նոր հայեցակարգի ստեղծման գաղափարախոսության առաջ: Խնդիրը կայանում էր նրանում, որ անհրաժեշտ էր միմյանց կապել ներդրումային ռիսկերը նվազեցնելու և բնապահպանական խնդիրներին ֆինանսավորման միջոցով լուծումներ տալու գաղափարները: SEB-ը այս հարցով դիմեց Համաշխարհային Բանկի մասնագիտական կարծիքին: Ամբողջ աշխարհում բնապահպանական ծրագրերում ներդրումներ կատարելու վերջինիս խորը մասնագիտական գիտելիքների առկայությունը և ներդրումային ֆոնդերի կողմից առաջ քաշվող բնապահպանական գաղափարների ֆինանսավորման առաջարկները ՀԲ–ի համար դարձան ֆինանսական աշխարհում նոր ֆինանսական գործիքի ստեղծման նախադրյալներից: Այսպես հիմք դրվեց առաջին բնապահպանական խնդիրների լուծմանը ծառայող պարտքային գործիքի ստեղծման գաղափարին՝ «Կանաչ պարտատոմսերին»(«Green bond»):

Երբ հետահայաց ենք գցում, լուծումը պարզ է թվում, սակայն իրագործելը բավականին փորձ, ունակություն և ջանք է պահանջել Համաշխարհային բանկից, քանզի ստեղծել այնպիսի բնապահպանական ֆինանսավորում պահանջող նախագծեր, որոնք կֆինանսավորեն այն պետություններին կամ կազմակերպություններին, ովքեր կթողարկեն բնության պաշտպանության համար նախատեսված պարտատոմսեր՝ «Green bond»-եր, այդքան էր դյուրին չէր:

Իհարկե՛ կար խնդիր այս ամենը «հասցնել» ներդրողներին.

Ինչպե՞ս վստահեցնել նրանց, ինչպե՞ս կարող էին ներդրողները վստահ լինել, որ իրենց աջակցած նախագծերը լուծում են կլիմայի խնդիրները: Ո՞վ էր այս գործընթացի մեջ այն բացակայող օղակը, ում

տված ինֆորմացիային կվստահեր ներդրողը: Այս ամենը հարցեր էին, ո-րոնք բերեցին նրան, որ ՀԲ-ն որոշում կայացրեց դիմել Օսլոյի կլիմայի և շրջակա միջավայրի միջազգային հետազոտությունների կենտրոնին՝ CICERO (The Centre for International Climate and Environmental Research)համագործակցության առաջարկով: Կենտրոնի գիտնականները հանդիսանալով առաջատար մասնագետներ կլիմայի փոփոխության հարցերում, իհարկե, կարող էին հանդես գալ այդ օղակի դերում, քանզի այո՛ իրենց խոսքին և հետազոտությունների արդյունքներին առավել քան կվստահեին ներդրողները: Նրանք ունակ էին հավաստի տեղեկատվություն տալ այն մասին, արդյոք նմանատիպ նախագծերը դրական ազդեցություն կունենան շրջակա միջավայրի վրա, թե ոչ:

Այս ամենին հաջորդեցին բազմակողմանի և մասնագիտական և փորձագիտական ծավալուն քննարկումները՝ ներդրումային ֆոնդերի, կենսաթոշակային ֆոնդերի SEB- ի, CICERO- ի և ՀԲ-ի գանձապետարանի միջև:

Քննարկումները բարդ էին նաև այն տեսանկյունից, որ դժվար էր իրականում մասնագիտական առումներով տարբեր «լեզուներով» խոսող անձանց գաղափարները և ծրագրերը կապել միմյանց հետ, ստանալ մոդել և շարժվել դրանով: Ամեն դեպքում դժվար էր հաղթահարել ֆինանսական, զարգացման և գիտության միջև եղած անջրպետը:

Չնայած բարդության և առկա խնդիրներին, այս ամենը տվեց իհարկե իր պտուղները և ստեղծվեցին առաջին «Green bond»-երը՝ ***2008-ի ամռան ամիսներին Համաշխարհային բանկը թողարկեց կանաչ պարտատոմսեր***[1]:

Ներդրողների համար առաջնային է համարվում ներդրումների ապահովվածությունը, կայունությունը և գաղափարախոսությունը, մասնավորապես, ինչպես են իրենց ներդրումները օգնում աշխարհում տեղի ունեցող փոփոխություններին և այդ տեսանկյունից, իրականում «Կանաչ պարտատոմսերը» օգնում են ներդրողներին վերացնել բնապահպանական, սոցիալական կամ կորպորատիվ ռիսկերը, որոնք կարող էին հետագայում էական ազդեցություն ունենալ հենց իրենց իսկ եկամտաբերության վրա:

Ի վերջո Համաշխարհային Բանկի թողարկած կանաչ պարտատոմսերը բարձրացրեցին իրազեկությունը կլիմայի փոփոխության խնդիրների վերաբերյալ և ցույց տվեցին ներդրողների ներուժը՝ ապահով ներդրումների միջոցով աջակցելու կլիմայական լուծումներին՝ այս ամենի մեջ չկորցնելով ֆինանսական եկամտաբերությունը և կանխելու դրանց ապագայում ի հայտ գալու հավանականությունները: Այդ նկատառումներից ելնելով դրվեցին կանաչ պարտատոմսերի թողարկման

[1] http://pubdocs.worldbank.org/en/217301525116707964/Green-Bond-Implementation-Guidelines.pdf

սկզբունքները, իսկ պահանջների համակարգումը ապահովում էր ICMA(International Capital Market Association)՝ կապիտալի շուկայի միջազգային ասոցիացիան :

Կարևորելով սոցիալական արժեքները, որոնք տալիս են տվյալ դասի պարտատոմսերը, կապիտալի շուկայի միջազգային ասոցիացիայի կողմից, որպես շուկայի ստեղծման կարևորագույն բաղադրիչի, մշակվեցին և ներդրվեցին տեղեկատվության թափանցիկությունը ապահովող իրավակարգավորող նորմեր:

Համաշխարհային բանկը «green bond»-երի թողարկման միջոցով ներգրավել է ավելի քան տասներեք միլիարդ դոլարի միջոցներ, թողարկելով քսան տարբեր արժույթներով ավելի քան հարյուր հիսուն կանաչ պարտատոմսեր, առաջարկները ուղղված են եղել և ինստիտուցիոնալ, և անհատական ներդրողներին:

Բազմաթիվ երկրների ընկերություններ և բանկեր այժմ ներառում են կանաչ պարտատոմսերի թողարկողների ցուցակը: Բոլոր թողարկողները պարտավորություն են ստանձնում չափել, հետևել և զեկուցել իրենց ներդրումներին սոցիալական և շրջակա միջավայրի վրա թողած ազդեցությունները: «Fannie Mae» (The Federal National Mortgage Association)-ն իր ծավալով ամենամեծ կանաչ պարտատոմսեր թողարկողն է մեկ տարվա ընթացքում թողարկման ծավալի կտրվածքով[1]:

Զարգացող երկրներից առաջինը Ֆիջիի հանրապետությունն էր, ով թողարկեց առաջին պետական կանաչ պարտատոմսերը: Առհասարակ, կապիտալի միջազգային շուկաներում գործող յուրաքանչյուր բանկ ունի աշխատակազմ, որը մասնագիտացած է բնապահպանական կամ կայուն պարտատոմսերի ֆինանսավորման մեջ: Կանաչ վարկավորման չափանիշները ներառված են վարկերի տրամադրման չափորոշիչների մեջ: Կան շատ մատակարարներ և երրորդ կողմերի ստուգողներ, ներառյալ վարկանիշային ընկերությունները և այլ կազմակերպություններ, որոնք տեղեկատվություն են տրամադրում ներդրողներին և աջակցում թողարկողներին:

Այժմ կարելի է փաստել, որ կապիտալի շուկաները վերաճել են այն շուկայից, որտեղ ներդրողները քիչ բան գիտեին և քիչ էին մտածում այն մասին, թե ինչն է նպաստում իրենց ներդրումներին դեպի շուկա, որտեղ նպատակը ավելի կարևոր է, քան երբևէ: Կանաչ պարտատոմսերի հիմնական նախադրյալը՝ իր նախագծի ընտրության մոդելով, երկրորդ կողմի կարծիքի և ազդեցության հաշվետվությամբ, տարածվում է այլ ոլորտների վրա: Արդյունքում, այժմ կան սոցիալական պարտատոմսեր, կապույտ պարտատոմսեր և այլ պարտատոմսեր, որոնք ներգրավում են ֆինանսավորում, որը նախատեսված է զարգացման հատուկ նպատակի

[1] https://treasury.worldbank.org/en/about/unit/treasury/ibrd/ibrd-green-bonds

համար: Նրանք բոլորը հետևում են կանաչ պարտատոմսերի մոդելին՝ կենտրոնանալով վերջիններիս թողած ազդեցության հաշվետվության վրա: 2008 թվականից ի վեր թողարկվել է ավելի քան 500 միլիարդ ԱՄՆ դոլարի նման պարտատոմսեր:

Ներդրողների կողմից իրենց ներդրումների սոցիալական և բնապահպանական նպատակների նկատմամբ հետաքրքրությունը արտացոլում է պարտատոմսերի շուկայում հիմնարար փոփոխությունները: Կանաչ պարտատոմսերի ներդրողները գիտակցում են իրենց ներդրումների ազդեցությունը և կարևորությունը, ինչպես նաև այն, որ կարիք չկա հրաժարվել շահույթից այդ նպատակներին հասնելու համար: Միևնույն ժամանակ, ներդրողների մոտ առկա է գիտակցումը այն փաստի, որ այսօրվա ներդրումը ապագայում ստացվելիք եկամուտների ապահովումն է, ինչպես նաև տեսանելի մասնակցությունը ներկայիս տնտեսության, պետության, կազմակերպությունների կայուն զարգացման ծրագրերում ու տեսլականներում: Իհարկե, գիտակցումը և համոզմունքը գալիս է այն ժամանակ, երբ ներդրողները կարողանում են տեսնել և համոզվել իրենց ներդրումների արժանահավատության և ազդեցության մեջ: Ներդրողների վստահության ամրապնդման և հետագա ներդրումները խրախուսելու համար, նրանց նույնպես անհրաժեշտ է տրամադրել տվյալներ, որոնք ցույց կտան, թե ինչպես են իրենց ներդրումները ազդել շրջակա միջավայրի, սոցիալական և կառավարման գործոնների վրա, հատկապես այն դեպքերում, երբ ներդրողները ավելի ու ավելի են հասկանում, որ բացի սոցիալական արժեք ստեղծելուց, դրանք նվազեցնում են իրենց սեփական ներդրումների ռիսկը: Այս գործընթացում թողարկողներն են հանդիսանում հիմնական պատասխանատուները, նրանք իրենց իրավասությունների շրջանակներում պետք է համագործակցեն ներդրողների հետ, ցույց տան, թե ինչպես են ներդրումները կանաչ պարտատոմսերում հնարավորություն տալիս ֆինանսական մակարդակում ունենալ կայուն եկամտաբերություն, իսկ սոցիալական և բնապահպանական հատվածներում կայուն զարգացում:

Հիշե՛նք, որ ներդրողների զգայունության չափման մակարդակը, բացահայտվող տեղեկատվությունն է, այն ինֆորմացիան, որը կարող է ազդեցություն ունենալ ողջամիտ ներդրողների որոշումներ կայացնելու վրա: Հետևաբար ինֆորմացիայի ամբողջականությունը և թափանցիկությունը վերահսկող մարմինների կողմից սահմանվող հիմնական չափորոշիչներից մեկն է հանդիսանում: Այդ չափորոշիչները դրված են թողարկողների վրա և վերջիններս են պատասխանատվություն կրում տեղեկատվության արժանահավատության և ամբողջականության համար: Պետք է շեշտել, որ կանաչ պարտատոմսերի շուկան գնալով մեծ թափ է

ստանում և միայն Համաշխարհային բանկը տարեկան 50 մլրդ դոլար կայուն զարգացման պարտատոմսեր է թողարկում զարգացման վարկավորման համար:

Ֆինանսական այս հեղափոխության հիմք հանդիսացող կանաչ պարտատոմսերը մարտահրավեր են նետում ֆինանսական շուկայի այլ գործիքների, հիմքում ունենալով կայուն զարգացման գաղափարախոսությունն ու տեսլականը: Կայուն զարգացման նպատակները (ԿԶՆ) 17 գլոբալ նպատակների հավաքածու է, որոնք 2015 թվականին համաձայնեցվել են 193 երկրների կողմից, և իրենց մեջ ընդգրկում են կրթությունից մինչև առողջության ոլորտները, ինչպես նաև քաղաքների, համայնքների կայուն զարգացումները: Կանաչ ֆինանսավորումը ընդգրկելով ոլորտային ֆինանսավորման մեծ հնարավորություններ, հանդիսանում է ճկուն գործիք ներդրողների և թողարկողների համար, կենտրոնացնելով նրանց կլիմայից բացի այլ ոլորտների վրա:


Հայաստանի Հանրապետությունում առաջին «կանաչ պարտատոմսեր» թողարկողը հանդիսանում է «Ամերիա Բանկ» ՓԲԸ-ն: Վերջինս թողարկել է և փակ տեղաբաշխմամբ տեղաբաշխել եվրոյով կանաչ պարտատոմսեր՝ 50(հիսուն) մլն ԱՄՆ դոլարին համարժեք ծավալով, որը կարելի համարել շրջադարձային ՀՀ ֆինանսական շուկայում: Թողարկումն իրականացվել է Կապիտալի շուկաների միջազգային ասոցիացիայի կանաչ պարտատոմսերի թողարկման սկզբունքներին համաձայն (ԿՊՍ): Ներդրողների համար կարևորագույն կապն ապահովել է կայուն զարգացման թեմայով հետազոտությունների և վերլուծությունների ոլորտում համաշխարհային առաջատար Sustainalytics ընկերությունը, տրամադրելով երկրորդ կողմի կարծիք[1] :

ՀՀ տնտեսության կայուն զարգացման և բնապահպանական խնդիրների լուծման կարևորության տեսանկյունից կարելի է փաստել, որ նշված արժեթղթերի առկայությունը շուկայում և թողարկողների ակտիվ դերակատարությունը կարող է շրջադարձային դառնալ ՀՀ ներդրումային միջավայրի համար :

Աշխարհում պետական կանաչ պարտատոմսերի թողարկումների ծավալը 2021 թվականի մարտի դրությամբ (2016-2021/03 թթ. մլն ԱՄՆ դոլար) ըստ երկրենրի *տես նկար 1.*

[1] https://thogharkogh.cba.am/azdagirindex.shtm

Նկար 1[1]



Ակնկալվում է, որ կլիմայի փոփոխությունը կունենա անբարենպաստ բնապահպանական, տնտեսական և սոցիալական հետևանքներ Հայաստանի համար: Հետազոտություններից մեկի համաձայն, մինչև 2100թ. կլիմայի փոփոխությունը Հայաստանում կհանգեցնի միջին ջերմաստիճանի բարձրացմանը Ցելսիուսի 1.7 աստիճանով և տեղումների քանակի նվազմանը մոտ 10%-ով[2]: Որպես հետևանք, կաճի չորայնությունը, կարագանա անապատացումը, կնվազեն արոտավայրերը, և Սևանա լիճ ջրի հոսքը կնվազի 15%-ով: Արդյունքում, գնահատված է, որ բուսաբուծությունը կնվազի 8-14%-ով, անասնագլխաքանակը՝ 30%-ով: Կլիմայի փոփոխությունը, հավանական է նաև, որ կավելացնի կլիմայի հետ կապված աղետների հաճախականությունն ու պարբերականությունը[3]:

[1] https://www.oecd.org/coronavirus/en/data-insights/increasing-sovereign-green-bond-issuance-helping-to-promote-green-growth

[2] Հայաստանի Կլիմայի փոփոխության տեղեկատվական կենտրոն. Կլիմայի փոփոխության հետևանքները Հայաստանում. (http://www.nature-ic.am/en/consequences). ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության կոնվենցիայի շրջանակում երկրորդ ազգային հաշվետվությունը (2010) մեջբերում է կլիմայի փոփոխության վերաբերյալ մի փոքր տարբերվող տվյալներ (http://www.nature-ic.am/wp-content/uploads/2013/10/SNC_final_eng_01.09.10.pdf):

[3] Հայաստանի Կառավարություն. 2014. Հայաստանի Զարգացման Ռազմավարություն 2025. Երևան (Ապրիլ):

2014-2025 թթ. կառավարության ծրագրի միջնաժամկետ գործողությունների ծրագիրը թվարկում է այն միջոցառումները, որոնք կառավարությունը նախատեսում է իրականացնել տարբեր բնագավառներում: Բնական միջավայրի պաշտպանության միջոցառումները ներառում են՝ բնական պաշարների օգտագործման նկատմամբ պետական հսկողության ուժեղացումը, օդի, ջրի որակի և թափոնների մշակման համար բարձր ստանդարտների սահմանումը, օդի աղտոտվածության նվազեցումը, կեղտաջրերի մաքրման առկա կայանների վերականգնումն ու նորերի կառուցումը, բնական լանդշաֆտի և կենսաբազմազանության պաշտպանությունը, կլիմայի փոփոխության ազդեցության մեղմացումը (ներառյալ՝ վերականգնվող էներգիայի ավելի շատ օգտագործումը) և դրան հարմարվելը: Ծրագիրը սահմանում է, որ կառավարությունն ավելի շատ կօգտագործի պետական-մասնավոր համագործակցությունը բնապահպանամետ տեխնոլոգիաների ներդրման և կանաչ տնտեսության զարգացման համար:

Հատկանշական է, որ ՀՀ-ն իր տարածաշրջանային դիրքի և աշխարհագրական ռելիեֆի շնորհիվ կարող է բարձր արդյունքներ գրանցել ՄԱԿ-ի կայուն զարգացման և կլիմայի փոփոխության Փարիզի համաձայնագրով սահմանված կայուն 17 ոլորտներում: Բանկերի և ներդրումային ֆոնդերի համար այս ոլորտները միջոցների ներդրման և բարձր եկամտաբերություն ապահովող հեռանկարային ոլորտներ կարող են հանդիսանալ:


ՀՀ տնային տնտեսությունների 90 տոկոսից ավելին բնական գազն օգտագործում են, որպես ջեռուցման և սննդի պատրաստման միջոց, իսկ անձնական օգտագործման ավտոմեքենաների 80 տոկոսից ավելին բնական գազն օգտագործում են որպես վառելիք: Միևնույն ժամանակ, համաձայն որոշ կանխատեսումների, բնական գազի համաշխարհային պաշարները ներկայիս սպառման տեմպերի պահպանման պարագայում սպառվելու են գալիք 45-55 տարվա ընթացքում: Այս ամենը կարող է հանգեցնել զգալի ցնցումների, իսկ կանաչ տնտեսության շրջանակներում ներգրավված միջոցները պետության և ընկերությունների կողմից նպատակային և թիրախային օգտագործման դեպքում կկարողանան խուսափել դրանցից:

Դիտարկելով ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ՀՀ դրամով վարկերն ըստ ոլորտների, վերջին 7 տարիների ընթացքում գրանցվել են տարբեր ցուցանիշներ: Հատկանշական է, որ որոշ ոլորտներ, մասնավորապես «Էլեկտրաէներգիայի արտադրություն», «Ջրամատակարարում, թափոնների վերամշակում», «Բնակելի և ոչ բնակելի շինարարություն» ոլորտներում գրանցվել են անկումներ, իսկ «Բու-


սաբուծություն», «Անտառային տնտեսություն և փայտամշակում» որոշակի աճ (տես՝ գրաֆիկ 1,2,3,4,5,6[1]):

Աշխարհը գնում է դեպի կանաչ ապագա, դեպի կանաչ ֆինանսավորում: Ֆինանսների աշխարհում նոր գործիքների ստեղծումը և աճը գալիս է ապագայի մարտահրավերներից: Աշխարհը ստեղծում է նոր այլընտրանքային ֆինանսավորման ուղղություններ, միջոցների հսկա վերաբաշխումներ են իրականացվում և զարգացած և զարգացող երկրներում, իսկ ՀՀ-ի համար այն կարող է կապիտալ ներդրումների ներգրավման լավագույն տարբերակներից հանդիսանալ: Կանաչ վարկավորման և կանաչ ֆինանսավորման ռազմավարության գրագետ մշակումը և ներդրումը պետության կողմից իր ետևից կբերի երկրի «վառելիքային և էնեգետիկ» անկախության նոր դարաշրջանի: Այս ամենում, որպես շուկայի ուղղակի մասնակից և ռեսուրսների վերաբաշխող, անգնահատելի են ներդրումային ֆոնդերի դերը:

Գրաֆիկ 1




Գրաֆիկ 2




[1] https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx


Գրաֆիկ 3




Գրաֆիկ 4



Գրաֆիկ 5



Գրաֆիկ 6



Лусине Минасян, «Путь зеленого финансирования, зеленые облигации, развитие« зеленых облигаций»и опыт инвестирования в Армении» - Статья посвящена зеленым облигациям, их типам, функциям и значению на финансовых рынках и в экономике в целом. Зеленые облигации, лежащие в основе этой финансовой революции, бросают вызов другим инструментам финансового рынка, основанным на идеологии и видении устойчивого развития. Цели в области устойчивого развития (ЦУР) представляют собой набор из 17 глобальных целей, согласованных в 2015 году 193 странами, которые охватывают все, от образования до здравоохранения и устойчивого развития городов и сообществ. Зеленое финансирование с его широкими возможностями секторального финансирования является гибким инструментом для инвесторов и эмитентов с акцентом на другие области, помимо климата.

Lusine Minasyan, "Green Financing Roads, Green Bonds, Development of" Green Bonds "and General Investment in Armenia»– The article and the experience of investing in Armenia" is about green bonds, their types, functions and importance in financial markets and the economy in the whole. The green bonds that are at the heart of this financial revolution are challenging other financial market instruments based on ideology and a vision of sustainable development. The Sustainable Development Goals (SDGs) are a set of 17 global goals agreed in 2015 by 193 countries that cover everything from education to health, to sustainable development of cities and communities. Green finance, with its broad sectoral finance opportunities, is a flexible tool for investors and issuers, with a focus on areas other than climate.

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐՇԱԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Բանալի բառեր - Պետական գնումներ, միջազգային փորձ, անցումային տնտեսություն, արդարություն, մրցակցություն, «Յունսիտրալ», զարգացող երկրներ, մրցույթ, էֆեկտիվություն:

Պետական գնումներն ուսումնասիրող ցանկացած մեկի համար առաջնային խնդիրներից մեկը տարբեր երկրներում պետական գնումների փորձի ուսումնասիրությունն ու վերլուծությունն է: Պետության համար այս հարցը նույնպես առաջնային է, քանի որ վերջինս մշտապես հետաքրքրված է գնումների գործընթացի էֆեկտիվությամբ և ժամանակակից մոտեցումներով:

Պետությունը՝ դա մեկ մեծ մեխանիզմ է: Դրա անխափան աշխատանքի համար լավ մշակված սեփական կարիքների բավարարման միջոցներ են անհրաժեշտ, որը լիարժեք գործելու հնարավորություններ կստեղծի: Այդ միջոցը պետք է նվազագույնի հասցնի այս ճանապարհին առաջ եկող ռիսկերը, ինչպես նաև թույլ կտա մաքսիմալ խնայողություն ապահովելով բավարարել սեփական կարիքները:[1]

Պետական գնումների պրակտիկայում ամենից հաճախ հանդիպող խնդիրը մարդկային գործոնի նվազագույնին հասցնելու միտումն է: Մարդկային գործոնի հետևանքով է առաջ գալիս կոռուպցիան և ոչ բարեխիղճ մոտեցումը:

ՀՀ-ում գործող, ինչպես նաև արտասահմանյան համարյա թե բոլոր երկներում իրականացվող պետական գնումների հիմնական չափանիշներն են.

1. թափանցիկությունը (transparency)՝ գնումների մասին բաց և հասանելի տեղեկավություն,

2. հաշվետվողականությունը և ընթացակարգերի պահպանումը (accountability and duprocess)՝ ընթացակարգերի հստակ պահպանում պետական և հասարակական հսկողության ներքո,

3. բաց և էֆեկտիվ մրցակցություն (open and effective competition)՝ կողմնապահության բացառում,

[1] **В. П. Тукмаков**, "Сравнение системы государственных закупок в РФ и США", Самарский государственный экономический институт.

4. արդարություն (fairness)՝ գնումների բոլոր մասնակիցների համար հավասար պայմաններ։[1]

Պետական գնումների օրենսդրական կարգավորումները տարբեր երկրներում մշակված են տվյալ երկրի տնտեսական կյանքին ու առանձնահատկություններին հատուկ ձևերով։ Այս կամ այն երկրում պետական գնումների համակարգը ձևավորված է տնտեսական նախասիրությունների, կարևորությունների, առանձնահատկությունների, նրբությունների հիման վրա։ Կարգավորումները իրականացվում են բազային չափանիշների հիման վրա՝ պետության կամ պետական որևէ մարմնի կողմից ընդունված օրենքների կամ ենթաօրենսդրական իրավական ակտերի ընդունմամբ։ Այնուամենայնիվ, դրանք ընդհանրական չափանիշներ ունեն, որոնք սահմանված են միջազգային մի շարք փաստաթղթերում։ Դրանցից են, օրինակ՝ Եվրամիության, Միջազգային առևտրային կազմակերպության, Միացյալ ազգերի կազմակերպության, Ասիա-խաղաղօվկիանոսյան տնտեսական համագործակցության կազմակերպության և այլ կազմակերպությունների կողմից ընդունված, որոշ դեպքերում պարտադիր բնույթ կրող փաստաթղթերով։

Պետական գնումները համակարգող, թերևս ամենահիմնաքարային փաստաթուղթը, որը շատ երկրների պետական գնումների հիմքում է՝ համարվում է «Յունսիտրալ»-ը՝ «Ապրանքների, (աշխատանքներ) և ծառայությունների գնումների մասին», որն ընդունվել է ՄԱԿ-ի 27-րդ նստաշրջանում՝ 1994 թվականին։

Վերոնշյալ օրենքը մշակվել է Միավորված ազգերի կազմակերպության կողմից՝ որպես պետական պատվերների տեղադրման ժամանակակից և արդյունավետ շուկայական մոդելի կառուցման տարբերակ և նախատեսված է հիմնականում անցումային տնտեսություն ունեցող Արևելյան Եվրոպայի, ինչպես նաև զարգացող երկրների համար։[2]

Տիպային օրենք համարվող «Յունիստրալը» բաղկացած է 57 հոդվածից, որոնք խմբավորված են թվով 6 գլուխներում՝ «ընդհանուր դրույթներ», «գնման ձևերը և դրանց իրականացման կարգը», «գնման ընթացակարգերը», «գնումների հիմնական ձևը», «ընթացակարգեր, որոնք կիրառելի են այլընտրանքային գնումներ կատարելիս» և «բողոքարկում»։

ՀՀ-ում գոծող գնումների մասին օրենքը ուսումնասիրելիս կարելի է վերոնշյալ փաստաթղթի բոլոր գլուխների հետ համապատասխանություն

---

[1] **Светлана Белова ,** ´´Госзакупки за рубежом: общее и особенное´´, «ИТ-бизнес», Регулярный выпуск №6 (299), 31 марта 2008 года, ссылка:'' https://www.crn.ru/numbers/reg-numbers/detail.php?ID=18960 ''.

[2] **Андрей ХРАМКИН**, директор Института госзакупок РАГС, ´´Международный опыт построения системы госзакупок´´, ссылка: ´´ https://bujet.ru/article/46008.php ´´

գտնել: Անգամ առաջին հայացքից ակնհայտ է, որ ՀՀ պետական գնումների մոդելը կառուցված է հենց այս տիպային փաստաթղթի հիման վրա: Սա նախատեսված է այն երկրների համար, որոնք գնումների ոլորտում ձգտում են խնայողության, էֆեկտիվության, մրցակցության խրախուսման, ազատ տնտեսական հարաբերությունների, պետություն - մասնավոր դաշտ համագործակցության և թափանցիկության:

«Յունիստրալում» բաց է թողնված միայն ռազմական բնույթ կրող գնումների կարգավորումը: Ենթադրելի է, որ այս քայլը պայմանավորված է գաղտնիության պահպանմամբ և, ըստ էության, հակասում է մնացած գնումներին վերաբերող հիմնական առանձնահատկություններին (այն է՝ թափանցիկություն, մրցակցության բարելավում, բողոքարկման և վեճերի կարգավորում): Վերջին առանձնահատկությունները, ռազմական սպառազինության ձեռքբերման դեպքում մի փոքր անընդունելի են: Այնուամենայնիվ, այս կարգավորումը թողնված է կամայական պետության նախասիրություններին:

«Յունիստրալը», որպես տիպային փաստաթուղթ իր դերը կատարել է Ռուսաստանի Դաշնությունում, Ղազախստանում, Ղրղզստանում, ՀՀ-ում, ԱՊՀ և Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում: Դրա հիմնական դրույթները պահպանված են բազմաթիվ երկրներում:

Զարգացած երկրներում պետական գնումները և պատվերների տեղադրումը հիմնված են ընդհանուր ընդունված մեթոդների վրա՝ մրցակցային ընթացակարգեր (բաց, փակ, երկփուլ, ընտրովի), գնումներ՝ բանակցությունների հիման վրա մի քանի պոտենցիալ մատակարարների հետ, գնումներ՝ կանոնավոր մանրածախ ցանցում (գնումների հարցումների մեթոդ), գնումներ մեկ անձից:[1]

Երկրորդ կարևորագույն միջազգային փաստաթուղթը պետական գնումների մասին բազմակողմ համաձայնագիրն է, որն ընդունվել է 1994 թվականին՝ Ուրուգվայի բազմակողմ առևտրային բանակցությունների արդյունքում: Այն Առևտրի և սակագների մասին ընդհանուր համաձայնագրի (GATT) տարրերից է և կնքված է Առևտրի համաշխարհային կազմակերպությանը (ԱՀԿ) անդամակցող երկրների շրջանակներում: Պետական գնումների մասին համաձայնագրի ստորագրումը ԱՀԿ-ին երկրի անդամակցության նախապայման չէ, սակայն վերջին տասնամյակում սույն փաստաթղթի ստորագրման կայուն միտում է նկատվում՝ ԱՀԿ առաջատար երկրների (ԱՄՆ, ԵՄ երկրներ, Կանադա, Իսրայել, Ճապոնիա,

[1] **Светлана Белова ,** ´´Госзакупки за рубежом: общее и особенное´´, «ИТ-бизнес», Регулярный выпуск №6 (299), 31 марта 2008 года, ссылка:'' https://www.crn.ru/numbers/reg-numbers /detail.php?ID=18960 ''.

Շվեյցարիա) և հայցորդ երկրների միջև երկկողմ բանակցությունների ընթացքում:[1]

Փաստաթղթի հիմնական էությունը կայանում է նրանում, որ փաստաթուղթը ստորագրած երկրներում գործունեություն ծավալող մատակարարները լիովին հավասար կերպով կարող են մասնակցել այդ բոլոր երկրների կողմից հայտարարված գնման ընթացակարգերին: Այս փաստաթուղթը ստորագրված է նաև ՀՀ կողմից:

Շատ երկրներ, չնայած իրենց ունեցած ավանդական կանոններին՝ նախապատվություն են տալիս միջազգային նորմերին: Այսպիսով ամենատարածված գնման ձևը ամբողջ աշխարհում համարվում է մրցույթը:

Գերմանիայում պետությունը գնումներ կատարելիս հանդես է գալիս մասնավոր սեկտորի յուրաքանչյուր ներկայացուցչի համար գործող լիովին հավասար պայմաններում և կրում է նույն իրավունքներն ու պարտականությունները: Այստեղ պետությունը տնտեսական և շուկայական մշտական դիտարկումներ է իրականացնում, գտնում է շուկայական փոփոխությունները և ձգտում է իր գնումները համապատասխանեցնել ժամանակի պահանջներին: Իհարկե, ՀՀ-ում իրականացվող պետական գնումների մասին նույնպես կարելի է նույն պնդումները կատարել, սակայն այս ոլորտին ծանոթ մարդիկ անպայմանորեն կսկսեն պատմել պատվիրատուի կողմից ցածր նախահաշվային գների և հնացած տեխպահանջների սահմանման իրենց ունեցած բացասական տպավորությունների մասին:

Պետական գնումների միջազգային փորձն ուսումնասիրելիս առաջնային է ԱՄՆ փորձը: ԱՄՆ-ի դաշնային գնումների մասին առաջին օրենքն ընդունվել է 1792 թվականին: Այդ ժամանակից ի վեր ԱՄՆ օրենսդրությունը վերածվել է դաշնային պայմանագրային համակարգի ժամանակակից ձևի: ԱՄՆ-ի պետական գնումների մեխանիզմը հիմնված է մի շարք օրենքների և կանոնակարգերի վրա, որոնք կոչվում են Դաշնային գնումների կանոններ (FAR): ԱՄՆ պետական գնումների գործունեության ընդհանուր համակարգումն իրականացվում է Գնումների դաշնային քաղաքականության գրասենյակի կողմից, որը ստեղծվել է 1974 թվականին որպես կառավարման և բյուջեի դեպարտամենտի խորհրդատվական մարմին, իսկ 1988 թվականին դարձել է անկախ մշտական պետական մարմին: Վերջինս կենտրոնացված կարգով իրականացնում է պետական գնումների ընդհանուր համակարգումը՝ ներառյալ մեկ և միասնական գնումների պլանի կազմումը, ինչը չի կարելի ասել օրինակ ՌԴ կամ ՀՀ պետական գնումների մասին: Ի հակադրություն ԱՄՆ գնումների, ՀՀ-ում

[1] **Андрей ХРАМКИН,** директор Института госзакупок РАГС, ´´Международный опыт построения системы госзакупок´´, ссылка: ´´ https://bujet.ru/article/46008.php ´´.

և ՌԴ-ում գնումների համակարգումն իրականացվում է ամեն պետական մարմնի կողմից՝ իր մասով, ինչպես նաև գոյություն ունի անցանկալի մատակարարների ընդհանրական ցուցակ, որը վարվում է կենտրոնացված կարգով: ԱՄՆ - ում մատակարարները պետք է նախապես գրանցված լինեն, որպես պետության կարիքները ապահովող մատակարար և ունենան համապատասխան թույլտվություն, իսկ ՀՀ-ում, ՌԴ-ում կամ նմանատիպ այլ երկրներում գնումներին մասնակցելու համար անհրաժեշտ է պարզապես գրանցվել էլեկտրոնային համակարգում, լինել ֆիզիկական անձ, անհատ ձեռնարկատեր, ցանկացած ձևի իրավաբանական անձ և անգամ պետությանը կամ համայնքին պատկանող որևէ կազմակերպություն: Համաձայնել է պետք, որ այս ամենը խառնաշփոթ է ստեղծում և նպաստում գնումների համակարգի որոշակի անվերահսկելիության: Մատակարարների հիմնական նպատակը այսպիսով դառնում է ոչ թե պետությանը հարիր ձևով մատակարարելը, այլ պարզապես ստանձնած պայմանագրային պարտավորությունները ինչ-որ կերպ կատարելը, շահույթ ստանալը և հնարավորինս երկար ժամանակ սև ցուցակից խուսափելը: Իսկ երբ բանը հասնում է սև ցուցակին, ապա պարզապես նոր կազմակերպություն բացելը չափազանց հեշտ է:

Հատկանշական է նաև, որ Գնումների դաշնային քաղաքականության գրասենյակի կողմից սահմանված ընդհանուր կանոնները չեն տարածվում բոլոր նահանգների վրա: Կանոնները ընդհանարցնելու փորձեր արվել են, սակայն դրանք այդպես էլ չեն կրել ընդհանրական բնույթ:

Մեծ Բրիտանիայի գանձապետարանի ներքո ստեղծվել է «Գնումների կենտրոնական կազմակերպությունը» որպես կենտրոնական մեթոդաբանական և վերահսկող մարմին: Կառավարությունում գործում է նաև գնումների ռազմավարության վարչություն: Յուրաքանչյուր նախարարություն ունի պայմանագրային աշխատանքների բաժին: Գանձապետարանը միջոցները տնօրինելու իրավասությունը պատվիրակում է նախարարություններին, մինչդեռ ծախսերը համակարգվում են նախարարության պատասխանատու գանձապետարանի պաշտոնատար անձի կողմից: Գանձապետարանի ներկայացուցիչը (Ֆինանսական տեսուչը) ապահովում է, որ ծախսերը համապատասխանեն բյուջետային հատկացումներին, իսկ յուրաքանչյուր պայմանագիր պետք է հաստատվի իր կողմից:

Պետական գնումների միջազգային փորձը ուսումնասիրելիս մի բան է ակնհայտ դառնում. բոլոր երկրների համար լիովին ինտեգրվող որևէ ամբողջական գնումների մոդել գոյություն չունի: Տարբեր երկրների գնումների իրականացման եղանակներն ու մոտեցումները հիմնականում նմանատիպ են, սակայն այս ինստիտուտի հանդեպ գոյություն ունեցող պետական մոտեցումները՝ կախված խնդիրներից և նպատակներից,

տարբեր են: Մի դեպքում առաջնային է պետական կարիքը, մյուս դեպքում առաջնահերթություն է տրվում մատակարարներին: Եզրահանգումը մեկն է. յուրաքանչյուր երկիր պետք է ստեղծի իրեն տնտեսապես հարմար պետական գնումների համակարգ:

Аршак Нерсисян, **Институциональная система государственных закупок в разных странах. Анализ международного опыта** - Целью данной статьи является анализ системы государственных закупок Армении в контексте международного опыта. В этой статье представлен обзор стран с относительно развитыми системами закупок, чтобы дать некоторые сравнительные данные. Рассмотрены некоторые ключевые краеугольные камни международных государственных закупок, на основе которых многие страны разработали свои собственные системы государственных закупок. Высказывается мнение, что, продолжая изучать международный опыт, каждая страна должна развивать более экономически жизнеспособную систему государственных закупок.

Arshak Nersisyan, **Institutional system of public procurement in different countries. Analysis of international experience** - The purpose of this article is to analyze Armenian public procurement system in the context of international experience. This article provides an overview of countries with relatively developed procurement systems to provide some comparative insights. There are covered some key cornerstones of international public procurement, based on on which many countries have developed their own public procurement systems. There is developed a view that, while continuing to study international experience, each country should develop a more economically viable public procurement system.

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՏՐԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ԳԵՎՈՐԳ ՂԱԼԱՉՅԱՆ

Բանալի բառեր – Արհեստական բանականություն, բացատրելիություն, տվյալների կառավարում, մեքենայական ուսուցում, փոփոխականի կարևորություն

Ներածություն

Եվրոպական հանձնաժողովի կողմից 2020 թվականի փետրվարին հրապարակված արհեստական բանականության (AI) մասին փաստաթղթում[1] նշվում է արհեստական բանականության բացատրելիության իրավական պարտավորությունների տեսակների և դրանց անհրաժեշտության մասին: Այդ պարտականությունները պետք է դրվեն նախագծման, արտադրության, շուկայում տեղաբաշխման, ինքնավար համակարգերի օգտագործման մեջ ներգրավված կազմակերպությունների վրա՝ որպես արհեստական բանականությունը կարգավորող սխեմայի մաս: Եվրոպական հանձնաժողովը արհեստական բանականության համակարգերի համար նշել է յոթ հիմնական պահանջների կարևորությունը, որոնք սահմանվել և նկարագրվել են Բարձր մակարդակի փորձագիտական խմբի (HLEG) կողմից 2019 թվականի ապրիլին՝ հրապարակված «Վստահելի արհեստական բանականություն» ուղեցույցում[2]: Ի լրումն այնպիսի պահանջներին, ինչպիսիք են մարդկանց կողմից վերահսկողությունը, տեխնիկական կայունությունն ու անվտանգությունը, գաղտնիությունն ու տվյալների կառավարումը, բազմազանությունը, խտրականության բացառումը և արդարությունը, հասարակության և շրջակա միջավայրի բարեկեցությունը և հաշվետվողականությունը, թափանցիկությունը արհեստական բանականության վստահության համար հիմնական պայմանն է:

Հետևաբար, 2020 թվականի հուլիսի 17-ին Եվրոպական հանձնաժողովը հրապարակեց Բարձր մակարդակի փորձագիտական խմբի կողմից

[1] **European Commission**, White Paper On Artificial Intelligence - A European approach to excellence and trust, առկա է՝ https://ec.europa.eu/info/sites/default/files/commission-white-paper-artificial-intelligence-feb2020_en.pdf

[2] Independent **High-Level Expert Group** on Artificial Intelligence set up By the European Commission, Ethics Guidelines For Trustworthy AI, առկա է՝ https://www.aepd.es/sites/default/files/2019-12/ai-ethics-guidelines.pdf

մշակված «Վստահելի արհեստական բանականություն ստուգաթերթ»-ը[1] (ALTAI), որի նպատակն է աջակցել արհեստական բանականության համակարգերի ստեղծողներին և արհեստական բանականություն իրականացնող կազմակերպություններին ռիսկի բացահայտման, հուսալիության գնահատման և ստեղծված արհեստական բանականության համակարգերի եվրոպական արժեքներին համապատասխանության հարցերում: Ինքնավար համակարգի հիմնական հատկանիշներից մեկը, որն այն դարձնում է վստահելի, թափանցիկությունն է, որը ներառում է երեք տարր՝

1. հետևողականություն
2. բացատրելիություն
3. բաց հաղորդակցություն արհեստական բանականության համակարգի սահմանափակումների վերաբերյալ:

Փաստաթղթում ընդգծվում է բացատրելիության դերը ինքնավար համակարգերում, որոնք պետք է լինեն արհեստական բանականության զարգացման եվրոպական մոտեցմանը համահունչ:

Թափանցիկություն և բացատրելիություն

Տարբեր տեսակի հրապարակումներում՝ ներառյալ գիտական հոդվածներում, բացատրելիությունը սահմանվում է որպես թափանցիկության տարր[2], նրանից առանձին չափանիշ կամ որպես թափանցիկության հետ փոխադարձաբար օգտագործվող տերմին, սակայն, թափանցիկությունն ավելի լայն հասկացություն է, որը իր մեջ ներառում է նաև բացատրելիությունը՝ որպես արհեստական բանականության համակարգի թափանցիկության տարրերից մեկը: Այս տեսանկյունից թափանցիկությունը պետք է բաղկացած լինի առնվազն երկու հիմնական տարրերից.

1. մուտք դեպի արհեստական բանականության մոդելի շահագործման վերաբերյալ հուսալի տեղեկատվություն, ներառյալ ուսուցման ընթացակարգի, վերապատրաստման տվյալների, մեքենայական ուսուցման ալգորիթմների, արհեստական բանականության համակարգի ստուգման և հաստատման մեթոդների մասին տեղեկատվություն.

2. տարբեր լսարանների (սովորական քաղաքացուց մինչև փորձագետ) չափորոշված հուսալի բացատրության հասանելիություն, որն ընդգրկում է ինչպես արհեստական բանականության համակարգի տեխնիկական գործընթացները, այնպես էլ արհեստական բանականության

---

[1] Independent **High-Level Expert Group** on Artificial Intelligence set up By the European Commission, The Assessment List For Trustworthy Artificial Intelligence (ALTAI), առկա է՝ https://ec.europa.eu/newsroom/dae/document.cfm?doc_id=68342

[2] **D. Baehrens, T. Schroeter, S. Harmeling, M. Kawanabe, K. Hansen, and K.-R. Muller.** How to explain individual classification decisions. Journal of Machine Learning Research, 11, 2010

համակարգի կողմից ընդունված որոշումների կամ կանխատեսումների հիմնավորումը:

Թափանցիկության այս բացատրությունը պետք է կիրառվի արհեստական բանականության իրականացման բոլոր փուլերի համար՝ սկսած նախագծման փուլից, մշակում, անհատականացում (գնորդի կարիքներին հարմարեցում), շահագործում, մինչև արհեստական բանականություն օգտագործող համակարգերի արդյունավետության պարբերական վավերացում, որը պետք է ներառի ինչպես կանոնավոր թեստեր, այնպես էլ պարբերաբար արտաքին աուդիտ: Թափանցիկության համատեքստում արհեստական բանականության իրավական պահանջների նպատակն ու շրջանակը կարող են տարբերվել՝ կախված շահառուի տեսակից՝ և՛ որպես արհեստական բանականության համակարգի օպերատոր, և՛ դրա վերջնական օգտագործող: Հետևաբար պետք է հաշվի առնել թափանցիկության մակարդակների և մատչելի բացատրության տարբերակման հնարավորությունները՝ կախված նրանից, թե տվյալ ստացողը դասակարգվում է շահագրգիռ կողմերի խմբերից մեկում.

1. փորձագետներ, ովքեր արհեստական բանականության օգտվողներ են (օրինակ՝ իրավաբաններ, բժիշկներ, բնապահպաններ),
2. գործադիր և վերահսկող մարմիններ, կարգավորողներ,
3. վերջնական օգտագործողներ, որոնց վրա ազդում են արհեստական բանականության կողմից ընդունված որոշումները (օրինակ՝ դատավարության կողմերը և մասնակիցները, հիվանդները, աշխատանքի դիմորդները),
4. տվյալագետներ, ծրագրավորողներ, արհեստական բանականության նախագծողներ,
5. արհեստական բանականության համակարգեր օգտագործող կազմակերպությունների ղեկավար անձնակազմ (օրինակ՝ բանկում կամ ապահովագրական ընկերությունում),
6. գաղտնիության և/կամ էթիկայի մասնագետներ:

Ստացողների տարբեր խմբերի համար թափանցիկության տարբեր մակարդակների որոշմանը պետք է նախորդի տվյալ արհեստական բանականության համակարգի կողմից բխող ռիսկի գնահատումը, որը ընկալվում է որպես արհեստական բանականության ազդեցություն ինչպես ամբողջ հասարակության, այնպես էլ անհատների վրա (ոչ միայն ֆիզիկական անձանց, այլև տարբեր տեսակի կազմակերպությունների և ձեռնարկությունների): Ազդեցության գնահատումը պետք է պատասխանի նաև այն հարցին, թե որն է արհեստական բանականության համակարգում ինքնավարության ընդունելի մակարդակը, և որն է դրա որոշումների կամ կանխատեսումների բացատրության նվազագույն մակարդակը:

Այսպիսով, ռիսկի տարբեր մակարդակները՝ պահանջում են թափանցիկության տարբեր մակարդակներ. օրինակ՝ քրեական գործերով նախնական կալանքի ժամանակ օգտագործվող արհեստական բանականությունը, զգալիորեն ավելի մեծ ռիսկ է պարունակում, քան արհեստական բանականության համակարգը, որն աջակցում է առցանց փոքր պահանջների վեճերի լուծմանը:

Տեղեկատվության հասանելիություն

Առանց համակարգի և դրա կողմից օգտագործվող տվյալների մասին տեղեկատվության հասանելիության, անհնար է արհեստական բանականության նկատմամբ վստահություն ձևավորել, իսկ երկարաժամկետ հեռանկարում արհեստական բանականությունը ավելի լայնորեն օգտագործել բիզնես գործընթացներում, ներառյալ կանխատեսող գործընթացներում և ավտոմատացված կամ մասնակի ավտոմատացված որոշումներում: Հետևաբար փաստաթղթերի հետ կապված իրավական պարտավորությունները պետք է դրվեն ինքնավար համակարգերի նախագծողների, արտադրողների և օպերատորների վրա, ներառյալ.

1. արհեստական բանականության նախագծման և ստեղծման մեջ օգտագործվող մեթոդները,
2. տվյալների կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը՝ հաշվի առնելով տվյալների առկայության, ամբողջականության և անվտանգության պահանջները,
3. կիրառվող ստանդարտները (տեխնիկական, իրավական, էթիկական) և տրված վկայագրերը,
4. կառավարման մոդել, որը հանձնարարում է պարտականություններ արհեստական բանականություն օգտագործող կազմակերպությանը,
5. արհեստական բանականության համակարգի ստուգման և վերահաստատման համար օգտագործվող մեթոդները[1]:

Համակարգի թափանցիկությունն ու բացատրելիությունն ապահովելու համար անհրաժեշտ պահանջ է նաև արհեստական բանականության օգտագործման յուրաքանչյուր փուլում տվյալների և դրանց վերամշակման գործընթացները բացահայտելու ունակությունը, ներառյալ մեքենայական ուսուցման ալգորիթմները: Բացատրելիության համատեքստում հատկապես կարևոր է արձանագրել և պահպանել արհեստական բանականության համակարգի որոշումները՝ օգտագործված բոլոր տվյալների և ալգորիթմների հետ միասին, որպեսզի որոշ ժամանակ անց ապահովվի տվյալ որոշմանը հանգեցրած տեղեկությունները վերլուծելու հնարավորությունը:

[1] **M. E. Kaminski et al,** Multi-layered explanations from algorithmic impact assessments in the GDPR, https://dl.acm.org/doi/10.1145/3351095.3372875

Հաղորդակցությունը թափանցիկության կարևոր տարր է և համակարգը հենց սկզբնական փուլից պետք է օգտագործողին տեղեկացնի, որ նա փոխազդում է արհեստական բանականության հետ: Հաղորդակցությունը, անկասկած, պետք է ներառի նաև այնպիսի տեղեկատվություն, ինչպիսին է արհեստական բանականության համակարգի ինքնավարության մակարդակը: Անկախ վերը նշվածից, երբ արհեստական բանականության համակարգում կան անձնական տվյալներ, միշտ պետք է ընթացակարգ լինի տվյալների սուբյեկտի կողմից իր տվյալներին հասանելիության և նրա իրավունքների իրականացման համար, ներառելով ցանկացած սահմանափակում, որը կարող է առաջանալ հատուկ կանոնակարգերի հիման վրա (Հոդված 12-22)[1]:

Բացատրելի արհեստական բանականություն

Արհեստական բանականության բացատրելիությունը վերաբերում է օգտագործողին անհրաժեշտ տեղեկատվության տրամադրմանը՝ հասկանալու համար, թե ինչպես է վարվում ինքնավար համակարգը որոշակի պայմաններում: Այս համատեքստում հարկավոր է նշել, որ օրինականորեն պահանջվող բացատրելիության մակարդակը սահմանելիս, անհրաժեշտ է միաժամանակ սահմանել.

1. շահագրգիռ կողմերի խմբերը, որոնց պետք է տրամադրվի որոշակի տեղեկատվություն,
2. տեղեկատվության տեսակները, որոնք կարող են բացահայտվել կոնկրետ շահագրգիռ կողմերի կողմից,
3. հանգամանքները, որոնց դեպքում կպահանջվի նման բացատրելիություն:

Բացատրելիության չափանիշներ ստեղծելիս պետք է ուշադրություն դարձնել, որ արհեստական բանականության համակարգի վերջնական օգտագործողները կարող են չընկալել որոշակի արդյունքի հավանականությունը այնպես, ինչպես կանխատեսում է այն արհեստական բանականությունը: Հաշվի առնելով, որ մարդիկ հաճախ առաջնորդվում են ինտուիցիայով և նախկին փորձով, ինչպես նաև նախապաշարմունքներով, նրանց ակնկալիքները կարող են էապես տարբերվել խորը նեյրոնային ցանցերում մեքենայական ուսուցման վրա հիմնված պատճառաբանության արդյունքից: Հետևաբար, և՛ բիզնեսի ուղեցույցները, և՛ գրականությունը ցույց են տալիս, որ այն բացատրությունը, որը պետք է ակնկալել արհեստական բանականությունից, պետք է ներառի[2].

[1] EU General Data Protection Regulation (GDPR) https://gdpr-info.eu/art-5-gdpr/

[2] **C. Dwork, M. Hardt, T. Pitassi, O. Reingold, and R. Zemel**. Fairness through awareness. In Proceedings of the 3rd innovations in theoretical computer science conference. ACM, 2012, 214–226

1. որոշումների կայացման գործընթացի մատչելի և ոչ տեխնիկական բացատրություն, այսինքն՝ նշելով այն պատճառները, որոնք հանգեցրել են տվյալ որոշմանը,

2. պատասխանատվության հստակեցում, այսինքն՝ ով է ներգրավված եղել արհեստական բանականության համակարգի մշակման, իրականացման, կառավարման և շահագործման մեջ,

3. տվյալների բացատրություն, օրինակ՝ ինչ տվյալներ են օգտագործվել որոշման մեջ և ինչպես, ինչ տվյալներ են օգտագործվել արհեստական բանականության համակարգի ուսուցման և ստուգման համար, և արդյոք տվյալները հավաստի են,

4. անվտանգության բացատրություն, այսինքն՝ արհեստական բանականության համակարգի ճշգրտության, հուսալիության և անվտանգության ապացույց,

5. բացատրությունը այն ազդեցության, որը արհեստական բանականության համակարգը և դրա որոշումների կիրառումը ունի կամ կարող է ունենալ անհատի կամ, ավելի լայն, որոշակի սոցիալական խմբի վրա,

6. արդյունքի հիմնավորումը, որը նշանակում է, որ կարևոր է ոչ միայն բացատրել, թե ինչու է կայացվել տվյալ որոշումը, այլ նաև հիմնավորել, որ արհեստական բանականության գործողության արդյունքը օբյեկտիվ է և արդար:

Այսպիսով, կարելի է ձևակերպել պայմաններ, որոնց կատարումը թույլ կտա եզրակացնել, որ տվյալ արհեստական բանականությունը համարժեք բացատրելի է.

1. ներկայացված բացատրությունը պետք է համապատասխանի առկա ընդհանուր գիտելիքներին և արժեքներին. ամենահավանական բացատրությունը միշտ չէ, որ լավագույնն է, մասնավորապես հավանականության վրա հիմնված վիճակագրական ընդհանրացումները դիտվում են որպես ոչ համոզի,

2. արհեստական բանականությունը պետք է ներկայացնի այլընտրանքային արդյունք, որը ցույց կտա, թե ինչպես է ստացված արդյունքը (կանխատեսման կամ որոշման տեսքով) տարբերվում այլ հնարավոր արդյունքներից,

3. բացատրությունը տրվում է ժամանակին, գերադասելի է տվյալ պահին, սակայն թույլատրվում է նաև բացատրություններ տալ որոշման կայացումից հետո ողջամիտ ժամկետում, այն պայմանով, որ անձը հնարավորություն կունենա օգտվել իր իրավունքներից, օրինակ՝ արհեստական բանականության որոշումը բողոքարկելու իրավունք,

4. բացատրությունը ներկայացնում է այն համատեքստը, որում գործում է արհեստական բանականությունը, ներառյալ, մոդելի ուսուցման համար օգտագործվող տվյալների մասին տեղեկատվություն,

5. բացատրությունը ցույց է տալիս, երբ տվյալ դեպքը տարբերվող է և շատ է տարբերվում մոդելի վերապատրաստման համար օգտագործվող տվյալների,

6. անբավարար գիտելիքների կամ տվյալների առկայության դեպքում արհեստական բանականության համակարգը պետք է ծանուցում ներկայացնի տվյալ փաստի մասին:

Բացատրության ներկայացումը պակաս կարևոր չէ, քան բուն բացատրության բովանդակությունը: Բացատրությունը պետք է ներկայացվի հասկանալի ձևով՝ գրավոր կամ տեսողական, հարմարեցված շահագրգիռ կողմի գիտելիքների մակարդակին: Հիմնավորման ներկայացման ամենապարզ ձևը դրա վիզուալացումն է՝ ընդգծելով մուտքային և ելքային տվյալների միջև կապը: Ավելի առաջադեմ մոտեցում է վարկածների ստուգումը, որտեղ լավ ձևավորված փաստարկը ստուգվում է մուտքային տվյալների ելքային որոշման դեմ: Այնուամենայնիվ, թվում է, որ ոչ մասնագետ օգտագործողի համար բացատրություն ներկայացնելու լավագույն միջոցը կլինի օգտագործել բնական լեզուն՝ և՛ բանավոր, և՛ գրավոր հաղորդակցության միջոցով, և բացատրել, թե տվյալների որ հատկանիշներն ու ալգորիթմական գործառույթները հանգեցրին որոշմանը: Այնուամենայնիվ, նման լուծումը, հավանաբար, բացատրության տեխնիկապես ամենաբարդ ձևն է:

Որպես կանոն, արհեստական բանականության համակարգը պետք է բացատրելի լինի դեռ նախագծմամբ, այսինքն՝ բացատրություններ տա իր գործունեության մասին՝ ձեռնարկված գործողություններին և որոշումներին զուգահեռ: Թվում է, թե արհեստական բանականության համակարգերը «post-hoc» բացատրությամբ պետք է ընդունելի համարվեն: Այնուամենայնիվ, նման համակարգերը պետք է ցույց տան անմեկնելի մոդելը բացատրելի մոդելի փոխակերպելու տեխնիկա, բացի բուն որոշումը բացատրելուց[1]:

Հավանաբար շատ դեպքերում անհրաժեշտ չէ ամբողջությամբ բացատրել, թե ինչպես է աշխատում արհեստական բանականությունը: Այն վճռորոշ կլինի մարդու կյանքի վրա էական ազդեցություն ունեցող որոշումների դեպքում, օրինակ՝ հավանաբար այն արհեստական բանականությունը, որը Սպիտակ գրքում նկարագրվում է որպես բարձր ռիսկային

[1] **Information Commissioner's Office**, Explaining decisions made with AI , առկա է՝ https://ico.org.uk/for-organisations/guide-to-data-protection/key-dp-themes/explainingdecisionsmade-with-ai/

արհեստական բանականություն (օրինակ՝ առողջապահություն, դատական համակարգ, տրանսպորտ, էներգետիկա):

Геворг Калачян, Обьяснение искусственного развития и правовые требования для его применения - В этой статье мы обсуждаем, каковы юридические требования и перспективы объяснимого ИИ. В качестве примера мы анализируем некоторые положения официальных документов Европейского комитета, а также независимых отчетов. Далее мы представляем заинтересованные стороны, процедуру подачи заявки и этапы инфраструктуры, которые следуют за проектированием таких систем.

Gevorg Ghalachyan, Artificial intelligence explainability and legal requirements for its application - In this article we discuss what the legal requirements and prospects are for explainable AI are. As an example, we analyze some points of whitepapers from European Committee, as well as independent reports. Furtherly we present its stakeholders, application procedure and infrastructure stages that follow the designing of such systems.

ՇԱՀԱԴՐԴՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԽԱԼԱԹՅԱՆ

Բանալի բառեր - կենցաղային և տեխնոգեն թափոններ, թափոնների կառավարում, շահադրդում, հարկային արտոնություններ:

Մարդու կենսագործունեությունը անհնար է պատկերացնել առանց թափոնների ձևավորման, լինեն դրանք տեխնոգեն, թե կենցաղային: Որքան էլ որ մարդկությունը ձգտում է անթափոն տեխնոլոգիաների կիրառմանը, կամ կենցաղային անթափոն կենսակերպի կազմակերպմանը, միևնույն է, թափոններ առաջանում են, որոնք իրենց վնասակար ներգործությունն են թողնում շրջակա միջավայրի վրա: Տեսաբանները տարբեր սահմանումներն են առաջադրում թափոնները բնութագրելիս, որոնք իրենց ընդհանուր բնութագրիչներով ամփոփ ներկայացվում են գործող օրենդրությունում, համաձայն որի՝ թափոնները արտադրության կամ սպառման ընթացքում գոյացած հումքի, նյութերի, արգասիքներ են, այլ արտադրանքի կամ մթերքի մնացորդներ, ինչպես նաև ապրանքներ (արտադրանք), որոնք կորցրել են իրենց սկզբնական սպառողական հատկությունները:[1]

Ներկայացված սահմանումից բխում է, որ շրջակա միջավայրին վնաս հասցնող ձևավորված թափոնները վերջնականորեն չպետք է դիտարկվեն որպես բացասական վերջնարդյունքներ, քանի որ հնարավորություններ կան դրանց կամ ամբողջական վերացման, կամ էլ հետագա օգտագործելիության փոխակերպման համար: Այս առումով, կարևորվում է թափոնների գործածության կազմակերպումը, որը գործողությունների համախումբ է, ուղղված է դրանց գոյացման կանխարգելմանը, հավաքմանը, փոխադրմանը, պահմանը, մշակմանը, վերամշակմանը, օգտահանմանը, հեռացմանը, վնասազերծմանը և թաղմանը: Ընդ որում, թափոնների գործածության ոլորտում ՀՀ-ում մշակված է պետական քաղաքականություն, որի հիմնական սկզբունքներն են՝

ա) մարդու առողջության և շրջակա միջավայրի պահպանությունը թափոնների բացասական ներգործությունից,

բ) նյութահումքային և էներգետիկ ռեսուրսների բանական օգտագործման ապահովումը,

[1] Թափոնների մասին ՀՀ օրենքը, 2004 թ., հոդված 4

գ) թափոնների գործածության վերաբերյալ հասարակության էկոլոգիական, տնտեսական և սոցիալական շահերի զուգակցումը:[1]

Բացի այդ, թափոնների գոյացման և դրանց վտանգավորության նվազեցման շրջանակում պետական քաղաքականության մակարդակով մշակված հիմնական միջոցներն են.

- անթափոն և սակավաթափոն տեխնոլոգիաների ներդրման նպատակով գիտատեխնիկական նորագույն նվաճումների օգտագործումը,
- թափոնների քանակի նվազեցման նպատակով նյութահումքային ռեսուրսների համալիր օգտագործումը,
- հումքային արժեք ունեցող թափոնների առավելագույն սպառումը ուղղակի, կրկնակի կամ այլընտրանքային օգտագործումով,
- օգտահանման համար ոչ պիտանի թափոնների անվտանգ հեռացման ապահովումը՝ թափոնների վնասազերծման և ոչնչացման համապատասխան տեխնոլոգիաների, էկոլոգիապես անվտանգ մեթոդների և միջոցների մշակմամբ,
- թափոնների գործածության ոլորտում տեղեկատվության մատչելիության ապահովումը,
- տնտեսական խթանման մեխանիզմների սահմանումը:[2]

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, Հայաստանի Հանրապետությունում թափոնների գործածության տնտեսական խթանումը սահմանափակվում է միայն հարկային գործիքակազմով: Սահմանելով բնապահպանական հարկեր, պետությունը փորձում է որոշակիորեն կանխել թափոնների առաջացումը: Սակայն, կարծում ենք, որ միայն հարկային կանխարգելիչ գործիքակազմով դեռևս բավարար արդյունավետություն չի ապահովվում թափոնների վնասազերծման տնտեսական խթանման համար:

Այսպես, ՀՀ-ում վճարված բնապահպանական հարկերի շարժընթացի վիճակագրությունը ցույց է տալիս, որ այդ հարկատեսակների գծով վերջին տարիներին առանձնապես կտրուկ աճ չի նկատվում (տես աղյուսակ 1), այն դեպքում, երբ այդ նույն ժամանակահատվածում ՀՀ կազմակերպություններում թափոնների առաջացումը անընդհատ աճ է արձանագրում (տես աղյուսակ 2): Ավելին, ձևավորված թափոնների օգտագործումը տատանվում է 0,4-1.2%-ի սահմաններում, որը վկայում է մեր հանրապետությունում թափոնների գործածության ցածր մակարդակի մասին:

[1] Թափոնների մասին ՀՀ օրենքը, 2004 թ., հոդված 6

[2] Նույն տեղը:

Աղյուսակ 1. ՀՀ-ում վճարված բնապահպանական հարկերի շարժընթացը (մլն դրամ)[1]

Հարկային ուղղություններ	2016	2017	2018	2019	2020
Անշարժ աղբյուրներից մթնոլորտային արտանետումների համար	218.5	375.7	417.4	80.1	95.4
Աղտոտիչ նյութերը ջրային օբյեկտներ և կոյուղի թափելու համար	201.5	181.0	203.3	224.6	237.5
Թափոնների տեղադրման համար	84.1	72.6	100.5	122.3	102.3
Շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար	538.9	458.0	712.0	735.0	696.2

Աղյուսակ 2. ՀՀ կազմակերպություններում թափոնների առաջացումն ու վնասազերծումը (1000 տ)[2]

Ցուցանիշներ	2016	2017	2018	2019	2020
Առաջացել է	55 161.4	59 622.4	67 146.2	67 418.0	73 389.2
Օգտագործվել է	630.1	269.8	1 603.6	722.0	903.1
Վնասազերծվել է	0.6	0.7	1.7	0.9	0.7

Այս առումով հատկանշական է միջազգային փորձի ուսումնասիրումը, երբ թափոնների գործածության հարկային կարգավորիչները չեն սահմանափակվում միայն կանխարգելիչ ուղղություններով, և դրանց զուգահեռ գործում են նաև շահադրդիչ ուղղություններ:[3] Մեր հանրապետության հարկային օրենսգիրքը թափոնների արդյունավետ կառավարման առումով շահադրդիչ ուղղություններ չի նախատեսում ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձանց գծով:[4] Այսպես, շահութահարկի գծով ներկայացվող հաշվարկներում հաշվի չեն առնվում այն գործառույթները, որոնք կազմակերպությունների կողմից ուղղորդվում են թափոնների հետագա վերամշակմանը: Նույնը կարելի է ասել կենցաղային թափոնների գծով, որոնց տեսակավորման, վերամշակման կայաններ


[1] Հայաստանի վիճակագրական տեղեկագիրք, 2021 թ., էջ 246:

[2] Նույն տեղում:

[3] От отходов на улицах до глубокой сортировки: мировой опыт борьбы с мусором, https://tass.ru/spec/mirovoi_musor

[4] ՀՀ հարկային օրենսգիրք, 2016 թ., գլուխ 25, գլուխ 26:

հանձման պարագայում ազգաբնակչությանը որևէ հարկային արտոնություն չի տրվում: Այս առումով, առաջարկում ենք թափոնների կառավարման համակարգում հարկային կարգավորիչների սխեմա, որտեղ կանխարգելիչ գործառույթներին զուգահեռ, հստակեցված կգործեն նաև հարկերի խթանիչ գործառույթներ (տես գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Թափոնների կառավարման համակարգում հարկային կարգավորիչների առաջարկվող սխեման[1]

Մասնավորապես, թափոնաստեղծ կազմակերպությունների գծով առաջարկում ենք շահութահարկի դրույքաչափի 1,5%-ով նվազեցում, եթե հաշվետու ժամանակաշրջանում նրանց կողմից տեխնոգեն թափոնների վերամշակման ծավալները գերազանցեն իրացման շրջանառության 5%-ը: Կենցաղային թափոնների գծով հարկային խթանիչ նույն գործառույթի կիրառումն ենք առաջարկում նաև ազգաբնակչության համար, սահմանելով եկամտային հարկի դրույքաչափի նվազեցման արտոնություններ, երբ անհատի կողմից տեսակավորված կենցաղային աղբի սահմանված չափաքանակով հանձնումներ կիրականացվեն աղբի վերամշակման կայաններ:

Եզրակացություն

Թափոնների կառավարման համակարգում միայն կանխարգելիչ գործառույթների կիրառումը բավարար չէ և անհրաժեշտություն է դրան զուգահեռ՝ շահադրդիչ գործառույթների կիրառումը: Ընդ որում, այն ա-

[1] Կազմել է հեղինակը:

ռավելապես նպատակահարմար է իրականացնել պետության կողմից ֆիզիկական և իրավաբանական անձնաց հարկային արտոնությունների տրամադրմամբ: Երբ թափոններից ձևավորվող սոցիալ-տնտեսական վնասների նվազեցումները առաջանցիկ բնույթ են կրում թափոնների գործածությամբ պայմանավորված հարկային մուտքերի կրճատումներից, ապա թափոնների կառավարման համակարգում արձանագրվում է շահադրդման գործառույթների արդյունավետություն:

Арутюн Халатян. Проблемы получения прибыли в системе обращения с отходами - В системе управления с отходами недостаточно использования только превентивных функций, необходимо параллельно использовать функции мотивации. Причем в статье подчеркивается, что ее наиболее целесообразно реализовать, предоставив налоговые льготы физическим и юридическим лицам. Когда сокращение социально-экономических потерь в результате отходов превышает над сокращением налоговых поступлений из-за использования отходов, эффективность функций мотивациии регистрируется в системе управления отходами.

Harutyun Khalatyan. Problems of motivation in the waste management system - In the waste management system only the use of preventive functions is not enough; it is necessary to use the functions of motivation in parallel. Moreover, the article states, that it is most expedient to implement it by providing tax privileges to individuals and legal entities. When the reductions in the socio-economic losses resulting from waste take precedence over the reductions in tax revenues due to waste use, the efficiency of the utilization functions is recorded in the waste management system.

ՕՊՏԻՄԱԼ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱՐԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Բանալի բառեր - հարկային հաշվառում, ֆինանսական հաշվառում, հարկվող շահույթ, հարկվող ժամանակավոր տարբերություններ, նվազեցվող ժամանակավոր տարբերություններ, հետաձգված հարկային ակտիվ, հետաձգված հարկային պարտավորություն, շահութահարկեր, եկամուտներ, ծախսեր:

Հաշվապահական հաշվառման և հարկային հաշվառման միջև անհամապատասխանություններ առաջանում են ՖՀՄՍ-ի համաձայն ֆինանսական հաշվառման և ՀՀ հարկային օրենսգրքով նախատեսված մոտեցումների տարբերության պատճառով: Հոդվածը պարունակում է տեղեկություններ նման անհամապատասխանությունների տեսակների, դրանց պատճառների և հաշվառման վերաբերյալ: Անդրադարձել ենք նաև այս խնդրի կարգավորման վերջին փոփոխություններին:

Ինչպես գիտենք, միջին կազմակերպությունը և փոքր կազմակերպությունը հաշվապահական հաշվառումը վարելու և ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու համար իրենց հայեցողությամբ կարող են կիրառել հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպության և խոշոր կազմակերպության հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերը, որոնք ներառում են՝ սույն օրենքը, «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» օրենքը, ամբողջական ՖՀՄՍ-ները և հայեցակարգային հիմունքները, ամբողջական ՖՀՄՍ-ների հիման վրա մշակված՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունների և խոշոր կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման օրինակելի հաշվային պլանը և օրինակելի հաշվային պլանի կիրառման հրահանգը, ինչպես նաև ցուցադրական ֆինանսական հաշվետվությունները, հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ իրավական ակտեր:

Հաշվապահական հաշվառումը՝ կազմակերպության ակտիվների, սեփական կապիտալի, պարտավորությունների վիճակի ու շարժի, ինչպես նաև եկամուտների և ծախսերի վերաբերյալ դրամական արտահայտությամբ տեղեկատվության հավաքման, գրանցման և ընդհանրացման

համակարգ՝ գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների համընդհանուր և փաստաթղթային հաշվառման միջոցով.

ՀՀ-ում հարկային հարաբերությունները կարգավորվում են ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ վավերացված միջազգային պայմանագրերով, Օրենսգրքով, վճարների վերաբերյալ ՀՀ օրենքներով, դրանց հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասով սահմանված իրավական ակտերով, որոնցից տարբերվող այլ իրավական ակտերով չեն կարող կարգավորվել հարկային հարաբերություններ, բացառությամբ, 1) Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի, 2) «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, 3) Հայաստանի Հանրապետության քրեական և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքերի, 4) «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, 5) «Հարկային ծառայության մասին» և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, 6) «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

Ֆինանսական և հարկային հաշվառումները կարգավորվում են հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված սկզբունքների և կանոնների հիման վրա, որոնց արդյունքում էլ առաջանում են ֆինանսական և հարկային հաշվառումների տարբերություններ:

Օրինակ, ֆինանսական հաշվառման նպատակով հաշվողական և համակարգչային տեխնիկայի, ամորտիզացիոն նվազագույն ժամկետը գնահատվել է՝ 3 տարի, իսկ հարկային հաշվառման նպատակով ելնելով հարկային օրենսգրքի պահանջներից՝ 1 տարի: Հետևաբար, ակտիվի հաշվեկշռային արժեքը տարբերվում է այդ ակտիվի հարկային բազայից:

Ակտիվի հարկային բազան այն գումարն է, որը հարկային նպատակով նվազեցվելու է ցանկացած հարկվող տնտեսական օգուտներից, որոնք ստանալու է կազմակերպությունը ակտիվի հաշվեկշռային արժեքը փոխհատուցելիս: Եթե այդ տնտեսական օգուտները հարկվող չեն լինելու, ապա ակտիվի հարկային բազան հավասար է իր հաշվեկշռային արժեքին:

Օրինակ, առևտրական դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքը՝ 2000000 դրամ է: Դրա հետ կապված հասույթը արդեն իսկ ներառվել է հարկվող շահույթի (հարկային վնասի) մեջ: Առևտրական դեբիտորական պարտքի հարկային բազան 2000000 դրամ է, իսկ եթե ՀՀ կառավա-

րության 2017թ. հոկտեմբերի 05-ի թիվ 1373Ն որոշմամբ սահմանված կարգով, կազմակերպության կողմից հաշվետու ժամանակաշրջանում ձևավորված և հարկային նպատակներով նվազեցված պահուստաֆոնդի գումարը կազմում է՝ 500000 (2000000x25%) դրամ, ապա հաշվետու ժամանակաշրջանի վերջում առևտրական դեբիտորական պարտքերի հարկային բազան կկազմի՝ 1500000 դրամ (2000000-500000):

Պարտավորության հարկային բազան դրա հաշվեկշռային արժեքն է՝ հանած ցանկացած գումար, որը կապված այդ պարտավորության հետ, հետագա ժամանակաշրջաններում հարկային նպատակներով նվազեցվելու է: Կանխավճարի ձևով ստացված հասույթի դեպքում առաջացող պարտավորության հարկային բազան դրա հաշվեկշռային արժեքն է՝ հանած հասույթի ցանկացած գումար, որը ապագա ժամանակաշրջաններում հարկման ենթակա չի լինելու:

Ֆինանսական և հարկային հաշվառումների տարբերությունները լինում են՝ **ժամանակավոր և մշտական:**

Ժամանակավոր տարբերություն կարող է առաջանալ ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչման պահին, օրինակ՝ եթե ակտիվի սկզբնական արժեքն ամբողջությամբ կամ մասամբ չի նվազեցվելու հարկային նպատակների համար: Այսպիսի ժամանակավոր տարբերության հաշվառման մեթոդը կախված է այն գործարքի բնույթից, որը հանգեցրել է ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչմանը:

Որոշ Ժամանակավոր տարբերություններ առաջանում են, երբ եկամուտը կամ ծախսը հաշվապահական շահույթում ներառվում է մեկ ժամանակաշրջանում, իսկ հարկվող շահույթում՝ այլ ժամանակաշրջանում: Այդպիսի Ժամանակավոր տարբերությունները հաճախ անվանվում են <u>ժամանակային</u>: Ստորև բերվում են այդ տեսակի ժամանակավոր տարբերությունների օրինակներ, որոնք հարկվող ժամանակավոր տարբերություններ են և, հետևաբար, հանգեցնում են հետաձգված հարկային պարտավորությունների՝

ա) տոկոսային հասույթը ներառվում է հաշվապահական շահույթի մեջ ժամանակային համամասնության հիմունքով, սակայն որոշ իրավակարգերում կարող է հարկվող շահույթի մեջ ներառվել դրամական միջոցի ստացման ժամանակ: Այդպիսի հասույթի գծով ֆինանսական հաշվետվությունում ճանաչված դեբիտորական պարտքի հարկային բազան հավասար է զրոյի, քանի որ մինչև դրամական միջոցի ստանալը հասույթը չի ազդում հարկվող շահույթի վրա,

բ) հարկվող շահույթի (հարկային վնասի) որոշման համար կիրառվող ամորտիզացիան կարող է տարբերվել հաշվապահական շահույթի որոշման ժամանակ կիրառվողից: Ժամանակավոր տարբերությունը ակ-

տիվի հաշվեկշռային արժեքի և դրա հարկային բազայի տարբերությունն է, որը ակտիվի սկզբնական արժեքն է՝ հանած այդ ակտիվի հետ կապված բոլոր նվազեցումները, որոնք հարկային նպատակով թույլատրված են ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների հարկվող շահույթը որոշելիս: Հարկվող ժամանակավոր տարբերություն է առաջանում և հանգեցնում հետաձգված հարկային պարտավորության այն դեպքում, երբ հարկային ամորտիզացիան արագացված է (եթե հարկային ամորտիզացիան ավելի դանդաղ է, քան հաշվապահականը, ապա առաջանում է նվազեցվող ժամանակավոր տարբերություն և հանգեցնում հետաձգված հարկային ակտիվի առաջացման),

գ) հաշվապահական շահույթը որոշելիս մշակման ծախսումները կարող են կապիտալացվել և ամորտիզացվել ապագա ժամանակաշրջանների ընթացքում, սակայն հարկվող շահույթը որոշելիս դրանք կարող են նվազեցվել դրանց կատարման ժամանակաշրջանում: Այդպիսի մշակման ծախսումների հարկային բազան զրո է, քանի որ դրանք արդեն իսկ նվազեցվել են հարկվող շահույթից: Ժամանակավոր տարբերությունը մշակման ծախսումների հաշվեկշռային արժեքի և հարկային բազայի (որը հավասար է զրոյի) միջև տարբերությունն է:

Ժամանակավոր տարբերությունները ակտիվի կամ պարտավորության ֆինանսական կարգավիճակի մասին հաշվետվությունում ճանաչված հաշվեկշռային արժեքի և դրա հարկային բազայի միջև եղած տարբերություններն են:

Ժամանակավոր տարբերությունները կարող են լինել կամ՝

